Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

U.C.
1199

1999

ՀԱՂՈՐԴԱՄԷՐ

N° 31

A. F. [illegible]

S. M.

Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ
զարիւն իմ, յիս բնակեսցէ եւ
ես ի նմա: Յովհ. Զ. 57.

ԱՂՕԹՔ
ՀԱՂՈՐԴԱՄԷՐ
ՀՈԳՒՈՅ

Յ. ՄԿՐՏՉԻ ԲԱԿԱՆԻ
ԱՍԱՑԵԱԼ

Ի Ս. ՂԱԶԱՐ
Ի ՎԱՆՍ ՄԽԻԹԱՐԱՅ
1865

ՅԻՇԱՏԱԿ

ԱՂԱՅԵԿԵԱՆ ՏՈՀՄԻՆ

2Ф-1202

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1199-

ԿԱՏԱՐԻՆԷ՝ ՀԵԶ ՀԱՐՍՆՈՒՀԻ,
ԶՈՐ ԱՆԴՐԱՆԿԱՒԴ ԵՌԱՄՍԵԱՅ
ԿՈՐԶԵԱՑ ԴԱՄԲԱՆԸՆ ԴԺՊԸՀԻ
ՑԱՂԱՑԵԿԵԱՆՑ՝ ԱՆԽԸՆԱՑ ,
ԱՅՍ ԱՌ ՅԻՍՈՒՍ ՔԵԶ ՅԱՄԱՅՐ ՅՈՒՇ
Ի ԿԵՆԱԿՑԷԴ՝ ԴԱՌՆ ԵՒ ԱՆՈՒՇ։

Ա.ԶԴ

Հեղինակ գրոցս* Յովհաննէս Մկրտիչ մականունՆ Բականի երեց իտալացի, որ երկեմաւ յառաջ ննջեաց 'ի Տէր առաքինակրօն վարուց համբաւով, ծանուցանէ՝ 'ի խնդրոյ այլոյ ուրումն աստուածասէր երիցակցի յօրինեալ զմատեանըս խոկմանց և աղօթից 'ի պատրաստութիւն և 'ի գոհու-

* Հաղորդաւէր անուանեալ առ 'ի մէնջ՝ 'ի հեղինակէն կոչի Հոգի ջերմեռանդն առ ամենասուրբ հաղորդութիւն. L'Anima divota della Santissima Eucaristia.

թիւն որոց խորհրդոյն ընդունելութեան. Ջան եղեալ ամենայն հաւատացելոց առնել պատկան և ընդունակ, և ոչ քահանայից միայն, որպէս խնդրողն թելադրէր: Պատուականութեան մատենկանըս՝ երաշխաւորեսցէ և տըպագիրն, յորմէ փոխեցաւ 'ի հայ բարբառ, զի քսաներորդ երկրորդ էր լեալ (յամին 1855) յետ առաջնոյն 'ի լոյս ընծայման: Մեզ՝ յորդորագոյն ևս մերազնեայց հոգեսիրաց փափագելով առնել զսոփերս աստուածախօս, հանոյ թուեցաւ զաղօթանսն միայն թարգմանել և գյուշան ինչ համառօտս, թողեալ զխոկմունսն՝ որ ըստ միոյ միոյ աւուրց ամսոյ, որպէս և աղօթքդ. յորս և տրարաք Յաւելուած 'ի Սրբոց և 'ի մերոց պաշտաման գրոց,

և 'ի հարց, սակաւ ինչ և յօտարաց հոգեկիր արանց. Նուիրելով համանգամայն 'ի փառս և 'ի գոհութիւն տնօրինողի անճառելւոյս այսմ խորհըրդեան, մարդացելոյն ինքեան և գոհեցելոյ վասն մեր տեառն Յիսուսի Քրիստոսի. յօգուտ հանուրց հրաւիրելոց 'ի գերունակ սեղանս նորին. 'ի յիշատակ սատարողացն 'ի տպագրութիւն, և 'ի հանգիստ հոգւոյ մերձաւորի նոցին ։

ԱՂՕԹՔ
ՀԱՂՈՐԴԱՍԷՐ
ՀՈԳՒՈՅ

Ա.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Աստուած իմ, Աստուած իմ, ճշմարիտ և միակ սիրելի հոգւոյ իմոյ․ և զի՞նչ այլ առնել էր քեզ առ յորդորել զիս 'ի սէր քո։ Ո՛վ սէր անբաւ, սէր անհաս, սէր անսահման։ Աստուած տայ ինձ զինքն բովանդակ․ Աստուած . . . Ո՛վ Աստուած իմ, սիրեմ զքեզ առաւել քան զամենայն ինչ․ սիրեմ զքեզ առաւել քան զիս, առաւել քան զկեանս իմ․ և սիրեմ զքեզ առ 'ի

հաճոյս կամաց քոց, քանզի կամիս ընդ սէր իմ։

Ի բաց կացէք 'ի հոգւոյ իմմէ բաղձանք երկրաւորք, և տեղի արարէք սիրոյ Աստուծոյ իմոյ։ Եւ քանզի կամիս, ո՛վ տենչալիդ Յիսուս, յայսմ առաւօտու տալ ըզքեզ ինձ բովանդակ, արժան է և ինձ տալ զանձն իմ քեզ բովանդակ։ Ահաւասիկ մատուցանեմ քեզ բոլորովիմբ առանց ինչ խորելոյ. քեզ նուիրեմ զզգայութիւնս իմ և զզօրութիւնս, զբաղձանս և զկիրս և զամենայն անձն իմ։ Յայտ յանդիման երկնի և երկրի հռչակ հարկանեմ, եթէ յայսմհետէ կամիմ վասն քո միայն կեալ, գործել, խօսել և շնչել, միայն վասն քո, 'ի քեզ և քև։ Կամէի զի սիրտ իմ ողջոյն խանդաղատեալ հալէր սիրով քով։ Ո՜ տայր թէ վառէին 'ի նմա եռանդագին բորբոքք՝ որովք տոչորէր գորովալիր սիրտ Մարիամու մօր քոյ, յորժամ գգուէրն զքեզ որդիաբար 'ի գիրկս իւր։ Ո՜ տայր ինձ տեսանել զքեզ սիրեցեալ յամենե-

յուն. ո՜ տայր ինձ առնել զքեզ սիրելի ամենայն արարածոց, և տալ սիրել այնչափ՝ որչափ և արժանիդ ես: Արդ տուր ինձ, ո՜վ բարերար Յիսուս, լինել ինձ մինչև իսպառ պատարագ բոլորանուէր քոյումդ սիրոյ:

Քանի՜ ցաւէ ինձ, ո՜վ փրկիչ իմ սիրելի, ընդ արհամարհանս՝ որովք երբեմն զքեզ արհամարհեցի: Դու զկեանս իսկ ետուր վասն իմ, իսկ ես այնքան յաճախ ընդ վայր հարի զշնորհս քո և զսէր: Ո՜վ ապերախտիս և ապաշնորհիս. մեղայ Աստուած իմ, և ցաւիմ 'ի բոլոր սրտէ ընդ արհամարհանս՝ որով անարգաբար խոտեցի զքեզ: Յուսամ զի ներեցես ինձ. այլ եթէ տակաւին չիցես ներեալ, թող ինձ արդ, մինչ չև իցեմ մատուցեալ ընդունել զքեզ 'ի սուրբ հաղորդութեանս: Ընկալ զիս գթութեամբ 'ի շնորհս քո, քանզի կամիս գալ ընդ հուպ և օթևանել յիս:

Ահաւասիկ, Յիսուս իմ, մատչիմ ճաշակել յամենասուրբ մարմնոյդ:

Ո՛վ Տէր, ո՞ լցեմ ես և ո՞ դու․ դու Տէր անսահման բարութեանց, իսկ ես որդն մի զազիր և աղտեղեալ անթիւ մեղօք, որովք յաճախ հալածեցի զքեզ 'ի հոգւոյ իմմէ։ Եւ արդ զիա՞րդ, յանդգնեցայ՞ց մատչել առ քեզ և ընդունել զքեզ 'ի սուրբ հաղորդութեանս։ Սերովբէք՝ չեն բաւական սուրբք առաջի քո, իսկ ես հող և մոխիր, ժահր և ոճիր, ես ի՞բր կարացից բառնալ զքեզ 'ի լեզուիս, ընդունել 'ի սիրտ իմ՝ և դդուել 'ի գիրկս։ Ես՝ որ վասն յանցանաց իմոց խայտառ անարժանս եմ կալոյ անգամ առաջի երեսաց աստուածութեան քո․ և միայն արժանի խորասոյզ լինելոյ 'ի դժոխս, տարամերժեալ յաւիտեան յերեսաց քոց։ Ո՛վ Աստուած իմ, մեծ է յոյժ անարժանութիւն իմ․ բայց քանզի կոչես զիս բարութեամբ քով՝ ընդունել զքեզ, ահաւասիկ գամ խոնարհեալ և ամօթապարտ ընդ այնքան զզուանս՝ զոր ետու քեզ, այլ և լիովին վստահ 'ի գթութիւն քո և 'ի սէր՝ զոր ունիս առ

խս․ Ե՛կ արդ, ո՜վ բարերար Յիսուս, ե՛կ 'ի հոգիս՝ որ ցանկայ քեզ։ Տոչորեա, ո՜վ հուր ծախիչ, զամենայն զոր և տեսանես յիս անվայել առաջի աչաց քոց, զամենայն՝ որ կարասցէ խափան լինել շնորհաց քոց և սիրոյ։ Տուր ինձ զմաքրութիւն և զանարատութիւն որով մարթ իցէ կալ յանդիման սրբոյ պատարագին․ տուր ինձ մտանալ զամենայն որ ինչ անպատեհ է սիրոյ քում սրբոյ։ Ո՛վ երանեալ կոյս և մայր իմ Մարիամ, դու տուր ինձ զորդիդ․ 'ի քոց ձեռաց ցանկամ ընդունել զնա։ Ահա նմա թէ ծառայ քո եմ ես, զի առաւել սիրով գիրկս արկցէ զինև, և տացէ ինձ զշնորհս իւր։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Յիսուս Քրիստոս արդ իսկ եկն 'ի սիրտ իմ, դեռ ևս 'ի ներքս 'ի յիս կայ․ այժմիկ ետ ինձ զբովանդակ զանձն իւր։ Բարէ, քանի՞ գորովա-

կան և եռանդագին շնորհս արժա
նիցէ ինձ մատուցանել. Աստուած
իմ, վասն անչափ մարդասիրու
թեան և ողորմութեան քո։ Ո՛
Տէր, երկիր պագից քեզ և անկայ
առ ոտս քո. գիրկս արկից քեզ և
շնորհս մատուցից, զի արժանի ա
րարեր գալ և այց առնել այսմ
ւոյ արարածոյ հէքի որպիսի եմս.
հաճեաց ընդունել զնուէրս դուզ
նաքեայ զոր ընծայեմ քեզ, զկա
մաց իմոց և զազատութեան և զա
մենայն կենաց իմոց. յօրէ յայսմա
նէ և առ յապա ոչ ևս այլ կամիմ
լինել ինձ, այլ քո. քո իսկ եմ բո
վանդակ։

Սիրեմ զքեզ, գորովագութ Յի
սուս. և քանզի սիրեմ՝ պահեցից
հաստատութեամբ զսուրբ պա
տուիրանս քո 'ի սրտի իմում. քան
զի սիրեմ զքեզ, կացից 'ի սուգ ան
մխիթար վասն յանցանաց իմոց՝ ո
րովք վշտացուցի զքեզ. քանզի սի
րեմ զքեզ՝ փառեցայց ըղձիւք փո
խարէն առնելոյ զխաչս իմոյ ա
քեզ, որչափ և բաւեցից։ Եկեսցէ

որդ հակառակութիւնք, վտանգք, չտակրութիւնք, և սով և սուր և հալածանք. զամենայն հրաւիրեմ, ամենայնի ձայն տամ. և ո՞ր յարարածոց կարասցէ անջատել զիս 'ի բարւոյն իմմէ, կամ խափանել զիս 'ի սիրելոյ զնա: Բայց միայն դու լեր իմ վահան, ո՛վ տենչալիդ իմ Յիսուս, և պատսպարան, և ոչ երկեայց յայլմէ իմեքէ: Չերկնչիմ 'ի վշտաց կենցաղոյս. չարչարեցայց վասն քո. և ոչ իսկ 'ի մահուանէ զանգիտեմ ես, քանզի մեռայց 'ի քեզ և վասն քո. շահ է ինձ և կեալ և մեռանել, միայն թէ 'ի կեանս և 'ի մահու՝ փառաւորեցից զքեզ և կացից իսպառ 'ի սրբարար շնորհս քո:

Նուարդ, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, որ եկիր 'ի սիրտս իմ բժշկել զսա յախտից իւրոց, աղաչեմ զքեզ, զերծո՛ զիս 'ի բռնութենէ ունակացեալ ախտիցն՝ զորս դու գիտես: Մերժեա յինէն զայնոսիկ, ո՛վ սիրելիդ իմ, վանեա և հալեա 'ի սրտէ իմմէ. և փոխանակ նոցին արկ բաղ-

ZUUՌ-Арм. ССР
им. А. Мясникяна

մաբեղուն սերմանս առաքինութեան : Զերկրաւոր բարիս՝ ոչ խնդրեմ ՛ի քէն, ոչ պատիւ, ոչ հաճոյս և ոչ մեծութիւնս. այլ ՛ի ձեռն արդեանց չարչարանաց քոց՝ խնդրեմ ցաւ սաստիկ ՛ի վերայ մեղաց իմոց : Տուր ինձ զլոյս քո՝ առ ՛ի ճանաչել զունայնութիւն կենցաղոյս, և զպատութիւն՝ սիրելի լինելոյ քեզ յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ : Զերծո զիս յամենայն երկրաւոր բաղձանաց, և պնդեա զիս բոլորովիմբ ՛ի սէր քո սուրբ. քանզի կամք իմ յայսմհետէ ո՛չ այլ ինչ խնդրեն՝ բայց զոր դու կամիս : Տուր ինձ համբերութիւն և համակամութիւն ՛ի հիւանդութիւնս, յաղքատութեան և յամենայն ՛ի հակառակսն կամաց իմոց : Տուր ինձ հեզութեամբ տանել զբամբասողացն և նախատողաց զիս : Մի՛ թողուր երկրաւորաց դրդուեցուցանել զիս ՛ի մտաց իմոց և դրժել սիրոյ քում սրբոյ : Ած ՛ի կատարումն զգործ՝ զոր սկսարդ յիս, սրբելով զիս օր ըստ օրէ յառաւելութիւն կատա-

րելութեան: Դիր պահապան բերանոյ իմոյ՝ ընդ որ մտերդ, որպէս զի մի՛ ելցէ 'ի նմանէ բան բամբասանաց, լկտութեան, բարկութեան, ամբարտաւանութեան և ստութեան: Զգուշացո՛ յաղագս և 'ի հետազօտ հայեցուածոց զաչս իմ, որոց շնորհեցեր տեսանել զքեզ խոնարհեալ 'ի տեսակ հացին. և տուր 'ի ժամէս աստի և անդր՝ լալ ինձ դառնապէս զյանցանս՝ զոր յանցեայ քում մեծվայելչութեան: Օրհնեա զսիրտ իմ՝ յորում բնակիս, և ստացիր զսա շնորհիւ քով յաւիտեան: Մի՛ տար թոյլ, ո՛վ Տէր, անջատել ինձ երբէք 'ի քէն. «Ո՛վ քաղցր և բարերար Յիսուս, մի՛ թողուր քեցիլ ինձ 'ի քէն»: Տուր ինձ շնորհս զի յիշեցից հանապազօր անմոռաց զպարգևս բարեացդ, միշտ պատուական համարեցայց զպատուիրանս քո, և եղէց միշտ նմանող օրինակիդ. կեալ 'ի քեզ և մեռանել վասն քո, և թագաւորել ընդ քեզ յաւիտեանս 'ի սուրբ 'ի սէր քո:

ԻՂՁՔ

Ո՛վ քաղցր սիրտ Յիսուսի, տուր ինձ առաւել քան զառաւել սիրել զքեզ։

Ո՞ իցեմ ես, ո՛վ Տէր, զի սիրես զիս և կամիս թէ սիրեցից զքեզ։

Թագաւորեա, արքայ երկնաւոր ՚ի սրտի իմում և վարեա զնա ըստ հաճոյից քոց։

ՑՈՒՇՔ

Գոյ ամենայնի վախճան։

Ոչ է մարթ և աշխարհի լինել բարեկամ և Յիսուսի։

Եթէ ոք կամի զանձն փրկել, օրինակեսցէ յանձին իւրում զՅիսուս Քրիստոս։

Բ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ հոգի իմ, գայ առ քեզ Աստուածն այն՝ զոր բազում անգամ թշնամանեցեր։ Ո՜հ, քանի՜ դառն է ինձ, Աստուած իմ, յիշատակս այս։ Ես արարած չնչին, և զիա՞րդ յանդգնեցայ արհամարհել զքեզ... զքեզ՝ հայր իմ. զքեզ՝ բարերարդ իմ. զքեզ գերագոյն բարութիւնդ իմ, բարեկամ իմ և ցանկալի փեսայ հոգւոյս։ Ո՜հ, ընդէ՞ր ոչ այս յիշատակ ընդմտանէ 'ի խորս սրտիս, ընդէ՞ր ոչ վիրաւորէ զայն, ընդէ՞ր ոչ տանջէ. ընդէ՞ր ոչ մեռանիմ ես, կամ գոնեա նուաղիմ 'ի ցաւոց։ Ո՜հ սիրտ անզգայ, սիրտ ապերախտ, սիրտ սառնեղէն, հի՞մ ոչ սարսես, զմէ՞ ոչ լուծանիս 'ի ցաւոց։

Ցաւէ ինձ, Աստուած իմ, զի ոչ սիրեցի զքեզ. Նա մանաւանդ և փոխանակ սիրելոյ՝ Թիկունս դարձուցի քեզ անարգաբար, ընդ վայր հարեալ զշնորհս քո և զմտերմութիւն: Ատեամ զնախատինսն՝ զմեծ և զփոքր՝ որովք զքեզ նախատ արարի, և դնեմ 'ի սրտի զմեռանելն առաւել քան զդառնալ անդրէն 'ի նոյնս: Եւ ոչ այսչափ միայն, այլ և մի՛ ևս մեղանչել քեզ, այլ սիրել զքեզ և ծառայել քեզ հաւատարմութեամբ: Ո՛վ սիրելիդ Յիսուս, և ո՞վ իցեմ ես՝ զի դու ինքնին կոչես զիս ընդունել զքեզ, և ցանկաս զի ընկալայց զքեզ: Ո՛վ սէր անբաւ, սէր անհասանելի, սէր անչափ: Աստուած կամի տալ ինձ զինքն ողջոյն. Աստուած .... հոգի իմ, հաւատա՞ս այսմիկ. զի՞նչ խորհիս, զի՞նչ գործես. զի՞նչ ասես: Ո՛վ Աստուած սիրոյ, ով անբաւելիդ, միայն առիթ ամենայն սիրոյ. սիրեմ ըզքեզ յամենայն սրտէ, սիրեմ զքեզ առաւել քան զկեանս գլխովին: Մայր գեղեցիկ սիրոյ, սրբուհի Մա-

րիամ, դու լե՛ր ինձ ձեռնտու առ 'ի սիրել զԱստուածն զայն, զոր այնքան ցանկաս տեսանել սիրեցեալ:

Ո՛վ փրկիչ իմ ամենասիրելի, քանի՜ ափափայս յանձն առեր հատանել անցանել, առ 'ի գալ և միանալ ընդ իս 'ի ձեռն ամենասուրբ խորհրդոյս: Յանձն առեր թողուլ զաստուածութիւնդ՝ զի լինիցիս մարդ, զանբաւութիւնդ՝ զի լինիցիս տղայ, զտէրութիւնդ՝ զի լինիցիս ծառայ, զծոց հօրն յաւիտենականի՝ զի իջցես 'ի ծոց կուսի. զերկինս՝ զի իջցես 'ի մսուր, զաթոռն փառաց՝ զի ընկալցիս զխաչ դատաստանի. նա և այսօր կամեցար իջանել յաթոռոյ երկնից՝ 'ի սիրտ իմ:

Տե՛ս հոգի իմ, զի սիրելին քո Յիսուս՝ այնու բորբոքեալ սիրով որով սիրեաց զքեզ 'ի խաչին և մեռաւ վասն քո, նովին և այժմ ծածկեալ կայ ընդ տեսակաւ ամենասուրբ խորհրդոյն, և զի՞նչ գործէ: Որպէս կղկալ կաթոգի սիրով, և ցանկացեալ սիրոյ փոխարինի, 'ի ներքոյ նշխարին իբրև 'ի ներքոյ վանդա-

կաց՝ հայի և ոչ տեսանի. դիտէ ըզ-
քեզ՝ որ երթաս 'ի ճաշակել զաս-
տուածային մարմին իւր. նկատէ
զոր խորհիս, զոր սիրես, որում
փափաքես, զոր խնդրես, և զոր
հանդերձիս մատուցանել ընծայ:
Հապա հոգիդ իմ, պատրաստեաց
ընդունել զՅիսուս, և աստ նմա
նախ հաւատով. Արդ ուրեմն փըր-
կիչ սիրելի, յետ սակաւու միոյ
հանդերձեա՞լ ես գալ առ իս: Ո՜վ
Աստուած ծածկեալ և անծանօթ 'ի
մեծէ բազմութենէ մարդկան. հա-
ւատամ ես 'ի քեզ, խոստովանիմ
զքեզ և երկիր պագանեմ քեզ յա-
մենասուրբ խորհրդեանս յայսմ, որ-
պէս Տեառն իմոյ և փրկչի. և յայսմ
խոստովանութեան ճշմարտութե՟ս
տաց և զկեանս՝ եթէ պահանջի-
ցիմ: Եկ 'ի լնուլ զիս շնորհօք քովք
և 'ի միանալ ընդ իս ամենեւին: Ո՜վ,
քանիօն ակնկալութեամբ արժան
իցէ ինձ հանդիպել սիրալիր այցե-
լութեան քում: — Սրբուհի կոյս և
մայր իմ Մարիամ, ահա մատչիմ
ընդունել զՈրդին քո: Տա՛յր ինձ ոք

զսխրան և զսէր՝ որով դուն հաղոր-
դէիր։ Տուր ինձ յայսմ առաւօ-
տուս զՅիսուս քո՝ զոր օրինակ ե-
տուրդ հովուաց և մոգուցն սրբոց՝
յայրին Բեթղեհեմի։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ահա եկն Աստուած այց առնել ինձ. եկն փրկիչն իմ բնակել ՚ի հոգւոջ իմում։ Արդ իմն Յիսուս ՚ի յիս է. եկն Յիսուս՝ իմ լինել, և զիս իւր առնել։ Արդ իմ է Յիսուս բոլորովին, և ես Յիսուսի եմ ամենևին։ Ո՜վ շնորհք անբաւ, ո՜վ գթութիւն անբաւ, ո՜վ սէր անբաւ։ Աստուած միանայ ընդ իս և իմ լինի բոլորովին. Աստուածն այն՝ յորմէ այնքան ապստամբեցի, և այնքան յաճախ թշնամանս եդի նմա անարգաբար։ Ո՜վ բարութիւն, ո՜վ քաղցրութիւն Տեառն իմոյ... ո՜վ խստութեան և ապերախտութեան սրտի իմոյ։ Եւ արդ հոգի իմ, այսպէս միացեալ ընդ Յի-

սուսկ , զի՞ գործիցես ։ Զաւէս ինչ դիմա · ո՞չ խօսիս ընդ Աստուծոյդ՝ որ ՚ի քեզ կայ ։ Օ՜ն առեալ կենդանացո՛ կանգնեա՛ զհաւատս քո, խորհեաց՝ զի հրեշտակք շուրջ կան ըզքեւ, և պաշտեն զԱստուածն՝ որ ՚ի սրտի քում է ։ Պաշտեա՛ և դու ՚ի քեզ զՏէրն քո · գումարեա՛ զմիտս քո ՚ի քեզ և հալածեա՛ ՚ի բաց զամենայն խորհուրդ օտար · հաւաքեա՛ միացո՛ զիղձս քո · մերձեցիր առ Աստուածն քո, և ասա նմա · Ո՜վ սիրելիդ իմ Յիսուս, գանձ իմ, բարութիւն իմ անբաւ, ամենայն ինչ իմ · բարեաւ եկցէ գալուստդ յաղքատիկ յարկ հոգւոյ իմոյ ։ Ո՜վ Տէր իմ; ո՞ւր կաս · ՚ի սի՞րտ անարգագոյն քան զգոմն ուր ծնար · լի ցանկութեամբք, անձնասիրութեամբք և անկարգ ախորժակօք ։ Եւ զի՞արդ եկիր բնակել ՚ի սմա ։ — Սրբուհի Մարիամ, սերովբէք , սուրբք երկնից , որք սեռն սիրով սիրէք զԱստուած , տուք ինձ մասնակից լինել ըղձից ձերոց , զի միացայց և ես այժմ ընդ Տեառն իմում , որ անբաւազօր գը-

թուլթեամբն եկեալ է յաղքատին հոգւոյ իմում:

«Սիրելին իմ ինձ և ես նմա»: Եթէ գայր ոք թագաւոր այց առնել հովուի 'ի հանգրուանի նորա, զինչ այլ մատուցանէր սա, բայց զբովանդակ իսկ զչիւղ իւր ամենայնիւ որ 'ի նմայն: Եւ քանզի դու թագաւոր երկնաւոր, եկիր այց առնել գձուձ տաղաւարի հոգւոյս իմոյ, մատուցանեմ և տամ քեզ զտուն իմ և զիս բոլորովին, զազատութիւն իմ և զկամս: Դու զքեզ ինձ ետուր բոլոր, և ես զանձն իմ քեզ տամ բովանդակ. այլ ոչ ևս յօրէ յայսմանէ և անդր՝ կամիմ իմ լինել, այլ քո միայն և քո բոլորովին: Քեզ լիցին զգայութիւնքս իմ, զի ծառայեսցեն ինձ՝ միայն առ 'ի հաճոյ քեզ լինել: Եւ ո՞ր հաճոյք մեծագոյն քան զայս կայցէ ինձ*, զի հաճոյ եղէց քեզ՝ Աստուածդ ամենասիրելի և ամենա-

* Ասէր զայս սուրբն Պետրոս Ալկանդարացի:

քաղցր։ Քեզ տամ միանգամայն
զամենայն զզօրութիւնս իմ, և կա-
միմ զի ամենայն քո լիցի։ Ոչ կա-
միմ յուշել մտացս յայլ ինչ ծա-
ռայել, բայց 'ի յիշել զգթութիւնս
քո և զսէր. միտք իմ մի՛ յայլ ինչ
պարապեսցին՝ բայց 'ի խորհել ըզ-
քէն, որ միշտ զօգուտն իմ խորհիս.
կամք իմ ծառայեսցեն ինձ միայն
առ 'ի սիրել զքեզ, Աստուած իմ,
ամենայն ինչ իմ, և առ 'ի կամել
զայն միայն՝ զոր դուն կամիս։ Ահա-
ւասիկ քեզ մատուցանեմ և քեզ
պատարագեմ՝ ցանկալիդ իմ փըր-
կիչ, յայսմ առաւօտու՝ զոր ինչ
և ունիմս և եմս. զխորհուրդս,
զիղձս, զյօժարութիւնս և զհաճոյս
իմ, զախորժակս իմ, զազատութիւն
իմ. միով բանիւ յանձն առնեմ 'ի
ձեռս քո զմարմին իմ և զհոգիս ող-
ջոյն։ Ընկալ, ո՛վ անբաւ մեծվայել-
չութիւն, զբոլորանուէր պատա-
րագ ապերախտ մեղաւորիս՝ որոյ
չեղև ոք նման յերկրի, և որ այժմ
կամի քո լինել և միայն քո։ Արա՛
ընդ իս, ո՛վ Տէր, և հրամայեա՛ որ

զինչ և հաճոյ իցէ քեզ։ Եկ, ո՜վ սէր աստուածային, և կիզեալ ծախեա՛ յիս զամենայն որ ինչ ոչն է հաճոյ սրբութեան աչաց քոց· զի յայսմ հետէ և առ յապա քո եղէց, և կեցից միայն առ 'ի կատարել՝ ոչ զպատուիրեալսն ևեթ առ 'ի քէն, այլ և զամենայն զկամս քո սուրբ, և առ 'ի գուն գործել հանապազ 'ի լրումն դոցին։ — Սրբուհի Մարիամ, մատո՛ քոյին ձեռամբ առ ամենասուրբ Երրորդութիւնն՝ ըզնուէրս իմ զայս, և ընկալ ինձ առ 'ի նմանէ զշնորհս՝ հաւատարիմ կալոյ 'ի նմին մինչև ցմահ։

ԻՂՁՔ

Բորբոքեա՛ զիս, Տէր, սիրով քով սրբով։

Տէր, մի՛ հեռացուսցէ զքեզ յինէն հոտ մեղաց իմոց։

Եւ զո՞ այլ բաց 'ի քէն սիրիցեմ ես կեանք իմ, գանձ իմ, ամենայն ինչ իմ։

ՅՈՒՇՔ

Թատր է աշխարհս՝ որ վաղվաղ կերպարանափոխ լինի ։

Որք միանգամ բարեպաշտութեամբ կեան 'ի Քրիստոս՝ տանին հալածանաց ։

Առ 'ի լինել սուրբ՝ արժան է յարգել և գործել զայն՝ զոր աշխարհս անգոսնէ և մերժէ, և անգոսնել և խորշիլ յայնմանէ՝ զոր աշխարհ սիրէ և առնէ ։

Գ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Սիրելի՛դ Յիսուս, որպիսի՜ այս քո մարդասիրութիւն, գալ առ իս խոտանս արարածոց։ Ո՛վ սքանչելեացս։ Աստուծոյ իջանել յերկնից և ծածկել զմեծվայելչութիւն իւր ընդ գծուծ ծածկութիւ տեսակաց սակաւիկ մի հացի և գինւոյ։ Ո՛հ, եթէ՛ զի ճշմարիտ է, Տէր, զի սիրեցեր միշտ զմարդիկ և առաւել ևս սիրեցեր 'ի մերձենալ ելից կենաց քոց։ Ճանաչեմ, Աստուած իմ, զի դու արժանի ես ամենայն սիրոյ, և վասն այնորիկ հարեալ սիրով քով՝ ըղձամ ըղձիւք մեծաւ սիրել զքեզ և առնել զկամս քո. այլ ոչ եմ բաւական առ այդ՝ եթէ

ոչ օգնեսցես ինձ ։ Ո՜վ Տէր, ծանո՛
ամենայն աշխարհի զզօրութիւն քո
մեծ և զգթութիւնդ քո անբաւ ։
Տուր ինձ որ երբեմն բուռն ապըս-
տամբ էի 'ի քէն, լինել արդ սիրող
բուռն ։ Դու լցո՛ որ ինչ յիս թերին
է, որպէս զի կարող եղէց սիրել
զքեզ յոյժ յոյժ. բե՛ր գոնեայ այն-
քան՝ որքան մեղայ քեզ ։ Սիրեմ
զքեզ, տենչալիդ Յիսուս ։ Այլ մինչ-
չև իցէ հանգուցեալ քո 'ի ներքս
'ի սրտիս, փակեա՛ զդրունս նորա՝
զի մի՛ մտցէ անդ այլ արարած՝ մաս-
նակից լինել սիրոյ, զոր պարտիմս
և կամիմ նուիրել քեզ բոլորովիմբ ։
Դու միայն, փրկիչ իմ սիրելի, դու
տիրեա՛ ինձ, դու միայն ժառան-
գեա՛ զիս. և թէ երբէք ստունկա-
նեցից քեզ, պատժեա զիս խստիւ.
որպէս զի զգուշացայց յայսմհետէ
առնել միշտ զհաճոյս կամաց քոց ։
Տուր ինձ մի՛ ցանկալ, և մի՛ խնդրել
այլ բերկրութիւն՝ բայց յուրախ
առնելոյ զքեզ, յայց ելանելոյ քեզ
յաճախ 'ի վերայ սեղանոյն, յամե-
լոյ անդ առ քեզ, և ընդունել ըզ-

քեզ 'ի հաղորդութեանս սրբում : Որոց կամք իցեն խնդրեսցեն այլ բարութիւնս. իսկ ինձ մի՛ լիցի սիրել կամ ցանկալ այլում իմիք՝ բայց քեզ միայնոյ, Յիսուս իմ, որ միակ գանձ ես սրտիս :

Մաքրեա զիս, Տէր իմ սիրելի, հրով անթերի զղջման՝ 'ի փոքունց անգամ արատոց. սրբեա՛ զսիրտ իմ յամենայն բծէ. Նորոգեա՛ 'ի հոգւոջ իմում զանմեղութիւնն զայն՝ որով կարող եղէց միշտ ընդունել զքեզ սրբութեամբ մինչև ցմահ իմ : Եւ զի առնուցուս յանձն առաւել քան զառաւել ներել ինձ զամենայն յանցուածս իմ, այժմէն դնեմ 'ի ձեռս քո զընաւ զնախատինս, զոր և ընկալայց յընկերէ իմմէ. և աղաչեմ զքեզ, զի մի՛ յիշեսցես զնոսին, որպէս ցանկամ զի և ոչ զիմսն յիշեսցես. Նա մանաւանդ տո՛ւր նախատչաց իմոց բարիս՝ ըստ չարեացն զոր հասուցին ինձ, կամ կամեցան հասուցանել: Սիրեմ և խոստանամ սիրել միշտ զընկերս իմ իբրև զանձն իմ, և փափաքել նոցին զա-

մենայն բարիս՝ զոր վասն իմ փա-
փաքեմ։

Ո՛վ, որպիսեա՛ց բարեաց արժան է ինձ ակն ունել յայցելութենէ քումմէ, փրկիչ իմ սիրելի․ ո՛րքան պարգևաց յուսալ, զմտաւ ածելով զանբաւ բարութիւն քո և մարդասիրութիւն, և ղեկաւորութիւն յիս աղբերդ ամենայն բարութեանց։ Քաջալերեա՛ց արդ հոգի իմ, զի որքան և մեծ իցեն աղէտք քո՝ բաւական է Յիսուս որ գայ առ քեզ՝ թափել յայնցանէ, և ընուլ զքեզ 'ի գանձուց ողորմութեան իւրոյ։ Տուող ամենայն բարութեանց, Յիսուս իմ գթած, մատչիմ առ քեզ ապաւինեալ յողորմութիւն քո բոլորովին։ Տառապանք իմ, հիւանդութիւնք, տկարութիւնք, վաստակք իմ և ամենայն պէտք իմ՝ յայտնի են առաջի աչաց քոց, և այս շատ է ինձ։ Ակն ունիմ զի ողորմութիւն քո խանդաղատեսցի 'ի վերայ աղէտից իմոց, և առատութիւն շնորհաց քոց մարդասիրեսցի առողջացուցանել զիս, մաքրել զիս

և սրբել ։ Ո՛վ սիրելի և սիրեցեալդ բարի, որչափ և տայցես ինձ շնորհս և նպաստս, սակայն ոչ այնքան՝ որ-քան տասդ այժմիկ, զքեզ ինքն տալով չափ ։

Ե՛կ, սիրեցեալդ իմ Յիսուս, 'ի կերակրել զիս յանարատ մարմնոյ քումմէ, լցուցանել զիս աստուա-ծային շնչովդ, և գործել զիս բո-վանդակ քոյ ։ Փափաքեմ քեզ՝ որ-պէս հիւանդ առ բժիշկ, որպէս տը-ղայ առ ծնողն, որպէս ստրուկ առ ազատիչ իւր ։

Ամենասիրելի մայր իմ, ընկալ ինձ շնորհս յորդւոյ քումմէ, զեր-ծուցանել զիս 'ի հաղբից կրից ի-մոց, ձգել զիս արտաքս 'ի խաւարէ անգիտութեան իմոյ, և բժշկել յախտից իմոց ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Երկրպագելի մեծվայելչութիւն Տեառն իմոյ, որոյ յանդիման երկինք լռիւ իւրով և երկիրս ոչ ինչ է· զի՞նչ լիցէ ինձ մարթ առնել առաջի քո, բայց եթէ խոնարհեցուցանել զիս 'ի խորս հեզութեան և անարժանութեան իմոյ, և մատուցանել քեզ երկրպագութիւնս և պատարագս որք տուանին քեզ 'ի հրեշտակաց, 'ի սրբոց, և յամենայն արարածոց· և ընդ նոսին խոստովան լինել, զի դու միայն ես Աստուած, միայն տէր, միայն բարձրեալ 'ի վերայ ամենայն արարածոց· որում միայն արժանի է պատիւ, փառք, փրկութիւն և օրհնութիւն՝ յաւիտեանս յաւիտենից։ Զո՛հ սրբազան, երկրպագեմ քեզ 'ի յիս իսկ 'ի ներքս։ Քանի՛ պարտապան եմ քեզ, փրկիչ սիրելի, վասն յայց ելանելոյ քո առ արարածս տնանկ։ Ոչ բաւէ ինձ մի սիրտ՝ 'ի գովել ըզ-

քեզ. ոչ բաւէ մի լեզու՝ առ 'ի հրաչակել զգթութիւն քո։ Ոչ ևս կամիմ յայսմհետէ կեալ ինձ, այլ փափագեմ զի դու ինքն, Յիսուս, կեցցես 'ի սրտի իմում։ Դու իմ ես բոլորովին, և ես կամիմ լինել քո ամենևին, մինչև յաւիտեանս։ Մի՛ լիցի ինձ երբէք, փրկիչ սիրելի, մոռանալ զգթութիւնս քո և զողորմութիւն։

Մի՛ տար թոյլ, սիրելիդ իմ Յիսուս, զի միւսանգամ դրաւիցի հոգիս իմ 'ի թշնամեաց իմոց և քոց, յետ սրբելոյս քովին խորհրդական այցելութեամբ։ Ազատեա զիս յամենայնէ՝ որ կարող իցէ արկանել զիս միւսանգամ յայսպիսի անհնարին չարիս։ Հաստատեա՛ 'ի սրտի իմում զբնակութիւն քո, և մի՛ հեռանար անտի։ Գիտեմ զի յոյժ անարգ է յարկս այս առ քև. այլ քո իսկ անձն յարդարէ զնա ազնիւ և շքեղ։ Վասն հաճութեան քո՝ որով ախորժես խօսել ընդ որդիս մարդկան, վասն փափաքանացդ՝ որով բորբոքիս 'ի սրբել զսիրտս ա-

մենայն, վասն պատուոյ և փառաց՝ որ գալստեամբ քո յիս՝ ներգործի առ քեզ և առ Հայր քո և առ Հոգին սուրբ, և առ ամենայն երկնայնոցն դասս, լու՛ր աղօթից իմոց, և ունկն դիր աղաչանացս։

Մինչև ցայժմ թողի զանձն իմ ընդ իշխանութեամբ ամօթալի կրից, մուտս տուեալ հրապուրանաց թշնամեաց իմոց, այլ յորմէհետէ եկիր 'ի ներքս 'ի յիս, մի՛ ևս լիցի այնպէս։ Մի՛ ևս լուայց հեշտութեանց մարմնոյ, այլ արկից զնա ընդ հնազանդութեամբ հոգւոյ, յարատև մեռուցմամբ ամենայն զգայարանաց իմոց։ Ընդ աղբս համարեցայց զամենայն շուք աշխարհի, և արիաբար խուլ եղէց առ ամենայն զորոյ, զի կեցից ցանկ կեանս ըստ աստուածայնին վարդապետութեան քում։ Ի բաց ընկեցից մտադիւր զամենայն դիւական պատրանս, զի քեզ միայնոյ եղէց հնազանդ, որ ես միակ աղբիւր ամենայն բարեաց երկրայնոց և երկնայնոց։ Ո՛վ ամենասիրելիդ Յիսուս, որ կաս 'ի

գոգ սրտի իմոյ, առաջի քո և առ 'ի սէր քո գնեմ զուխտս զայսոսիկ, և աղաչեմ զքեզ՝ զի հաճեսցիս աճեցուցանել զսոսին և զօրացուցանել շնորհօք քովք. և հաղորդութիւնս այս լիցի ինձ իբրև կնիք՝ առնել զայն անլուծանելի յաւիտեան։ Այո՛, առաւել լաւ իցէ ինձ մեռանել, Աստուած իմ, շնչել զհոգիս աստ առաջի քո, քան թէ վերստին թշնամանել զքեզ և լքանել։ Մեռանել, Տէր, քան յոռանալ։

Ո՛րքան զամօթի հարկանիմ, Տէր, առաջի անչափ լաւութեանդ քո՝ վասն իմոյ թշուառութեանս և անարժանութեան։ Ո՞չ այն ես դու, Աստուած իմ, որ առ 'ի մարմնանալ՝ խնդրեցեր անարատ ծոց կուսի, և առ 'ի հաղորդել ընդ առաքելոցն՝ ընտրեցեր վերնատուն մի մեծ և զարդարեալ։ Ո՞չ այն ես դու, որ կամեցար կտաւս մաքուրս առ 'ի պատանս յետ մահուդ, և գերեզման նոր 'ի դիրս մարմնոյդ։ Ի՞բր արդ չափաւորիս հոգւով իմով՝ որ աղտեղագոյն է քան զմսուրն յոր

ծնար, անարգագոյն քան զխաչն՝ յորոյ վերայ մեռար։ Վասն զի բազում անգամ բնակարան եղև սա անբանական կրից, և օթևան դիւաց՝ ոխերիմ թշնամեացն քոց։ Ո՛հ, ամաչեմ, Տէր, և խորասուզիմ յամօթոյ՝ զմտաւ ածելով ըզգերագոյն մարդասիրութիւնդ քո։ Ո՛հ, երանի թէ չէր իմ երբէք մեղուցեալ. ո՛ տայր ինձ սրբել զանցեալ անօրէնութիւնս իմ արեամբ իմով։ Աւաղ, Տէր, գարշիմ և անիծանեմ զանցեալ անմտութիւն իմ, որով պղծեցի մեղօք զսիրտ՝ զոր դու այնքան սիրես։ Այլ արդ ուր դու ես Տէր, անդ աղքատութիւն ինքնին փոխարկի՚ ի փարթամութի, թշուառութիւնն յառատութիւն, դժոխքն յարքայութիւն։ Ցոյց ուրեմն զզօրութիւն քո բարեգութ ՚ի վերայ հոգւոյ իմոյ, որ արդ պարըսպեալ, զգեցեալ, նաև խնկակից իմն եղեալ է ընդ մարդացելոյ աստուածութեան քում։ Որպէս տէր ամենիշխան, բարձ ՚ի նմանէ զամենայն որ անհաճոյ է քեզ, և լից զնա

ամենայն հաճոյիւք քովք։ Արժա֊
ծեա, Տէր, զշիջեալն, առողջացո
զհիւանդն, զօրացո զտկարն, ջեռո
զցրտացեալն, ուղղեա զցամա֊
քեալն, պարաբերեա զխոպանա֊
ցեալն։

Մնայ և այլ իմն շնորհ խնդրել
ինձ՚ի քէն, սիրելիդ Յիսուս. զմար֊
դասէր ներողութիւնդ քո՝ վասն
դաղջութեանս իմոյ՝ որով ընկալայ
զքեզ յայսմ՚ի սուրբ հաղորդու֊
թեան։ Ո՜հ, ո՛րքան զբօսան միտք
իմ և ցնդեցայ՚ի պատրաստելս
իմսում և՚ի գոհանալ։ Ներեա ինձ,
սիրելիդ Յիսուս, այլ և շնորհեա
ինձ արժանապէս ընդունել զքեզ
յայսմհետէ։

ԻՂՁՔ

Տուր ինձ, Տէր, զսէր քո սուրբ,
հանդերձ շնորհօքդ, և եղէց հա֊
րուստ։

Ո՜ տայր ինձ կիզուլ բոլորովին
վասն քո, որ ծախեցարդ ամենևին
վասն իմ։

Ընկալ քեզ Տէր, զկամս իմ, և արա ընդ իս որպէս և կամիս ։

ՅՈՒՇԿ

Ամենայն վայրկեան կենաց մեր քայլափոխ է առ յաւիտենակա֊նութիւն ։

Գիտութիւն սրբոց վերածի յեր֊կուս յայսոսիկ խնդիրս․ Առնել և կրել շատ վասն սիրոյն Աստուծոյ ։

Որքան առաւել ոք մանկացուցէ զանձն յաշխարհիս յայսմիկ, այնքան և առաւել վայելեսցէ 'ի հանդեր֊ձելումն ։

Դ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ Աստուած ծածկեալ և անծանօթ առ ՚ի բազմութենէ մարդկան, հաւատամ և ճանաչեմ զքեզ ՚ի սուրբ խորհրդեանս յայսմիկ՝ իմ տէր և փրկիչ. պաշտեմ զքեզ ՚ի խորոց սրտէ ընդ դասս երանելոյն երկնից և ընդ արդարս երկրի, և փափագեմ ունել իմացուածս արժանաւորս քում առաջակայութեան: Տեսանեմ զնուաստ երևոյթ ևեթ հացի, բայց գիտեմ զայն մեծագոյն արգասիս անհուն բարութեան քո. և զի դաս այնու քօղի ծածկել զպայծառութիւն քո առ ՚ի փարատել զամենայն ահ երկիւղի, յոր հարկանէաք արդեօք յե-

րեւէն յայտնապէս մեծվայելչու-
թեան քում, և առ 'ի հաստատել և
ևս զմեզ 'ի վստահութիւն և 'ի սէր
քո։ Աստուած մեծ, վայելուչ և
փառաւորեալ, և ո՞ իցեմ ես՝ զի
արժանի համարեցիս արկանել զաչս
յիս, և այնքան ողորմութեամբ և
գթութեամբ հաճեցցիս գալ բնա-
կել յաղքատին հոգւոջս իմում։
Զի՞րդ, ես աղկաղկ որդն գետնա-
սող, այր մեղաւոր, որ փոխանակ
այնքանեաց ձրից գթութեան քո՝
ապերախտութիւնս նենգ և թշնա-
մանեաց ետու տրիտուրս, ես . . .
մատչիցիմ 'ի սեղան հրեշտակաց
և պարարիցիմ անարատ մարմնով
քով։ Ո՞չ. ո՛չ, մի՛, չեմ արժանի
այդքանեաց պատուոյ։ Այլ արժան
է ինձ տարածել զանձն իմ առաջի
քո, ո՛վ Թագաւոր երկնից, և ող-
բալ զմեղս իմ և խորասոյզ լինել
յանդունդս հեքութեան իմոյ։ Զի
նթէ պատկառեալ 'ի սիրալիր և 'ի
հարկեցուցիչ հրաւիրանացդ, զոր
դու ինքն առնես ինձ յաճախակի,
գալ 'ի սեղան քո, 'ի բաց խորշի-

ցիմ, ո՞չ և այն 'ի մեծ արհամարհանս քեզ լինիցի։

Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ ճշմարիտ, և միակ բաղձալի հոգւոյս. և զի՞նչ այլ հնար էր քեզ առնել առ 'ի զարթուցանել զսիրտ իմ ցրտացեալ՝ 'ի սիրել զքեզ։ Եւ չիցէ՞ ինչ շատ առ 'ի գրաւել զսէր իմ բովանդակ, զի Աստուած իմ ես դու, արարիչ իմ, հայր իմ և փրկիչ իմ։ Եւ առ իմէ՞ կամեցար մեռանել վասն իմ, պատարագեալ 'ի վերայ խաչին։ Աւ ի՞նչ սահմանեցեր զխորհուրդս զայս, որով և ցանկ պատարագիս։ Ո՛հ, գիտեմ սիրելիդ իմ Յիսուս, գիտեմ զվա՛սն էրն. զի ըստ չափ իսկ սիրես զիս, վասն այսորիկ և ստէպ պատարագիս։ Ո՛վ անհամեմատ սիրոյս, ո՛վ անհասանելի և ճշմարիտ մարդասիրութեանն Աստուծոյ։ Օ՛ն, 'ի բաց ելէք 'ի սրտէ իմմէ ցանկութիւնք երկրաւորք, զի առեալ զձեզ, գարշիմ 'ի ձէնջ. տուք տեղի սիրոյ Յիսուսին իմոյ, որում յայսմ և 'ի սոյն վայրկենի նուիրեմ զսիրտ իմ

բովանդակ։ Սերովբէք երկնայինք, ամենասրբուհի Մարիամ, շնորհեցէք և ինձ սիրտ ըստ սրտի ձերում, զի աստի և առ յապա տոչորեցայց և ես բոլորովին վասն Յիսուսին իմոյ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Օրհնեա անձն իմ՝ զԱստուած քո. և դուք զօրութիւնք իմ ներքինք՝ զարթիք ճանաչել և պաշտել զտէր ձեր, որ էն ընդ ձեզ, և մի՛ դադարէք բնաւ յօրհնելոյ զանուն նորա։ Բա՛բէ, Աստուած բովանդակ իմ լինիցի։ Արարիչն երկնի և երկրի, Թագաւորն տիեզերաց՝ միաւորեսցի՞ ընդ այսպիսում եղկելի արարածոյ։ Որպիսի՛ մարդասիրութիւն, որպիսի՛ բարութիւն։ Եւ ո՞ր գոհութիւնք բաւիցեն ՚ի փոխարէն շնորհացդ մեծամեծաց. գոհանամ զքէն, Յիսուս իմ, վասն դոցին, որչափ ինչ գիտեմ և որչափ ինչ կարող իցեմ, և հրաւէր կարդամ

հրեշտակաց և ամենայն ընտրելոց երկնից և երկրի, և ամենայն արարածոց տիեզերաց՝ գալ ընդ իս 'ի գոհութիւն քեզ։

Այլ ո՞ւր արդեօք գտանիցիս դու, ո՛վ մեծդ Թագաւոր փառաց։ — Ի սրտի իմում, որ կարի իսկ անարգ է քան զմսուրն՝ յորում ծընար, Թափուր յառաքինութեանց և լի աղտիւք։ Ո՛վ, քանի՜ մեծ եղև գԹութիւն քո և մարդասիրութիւն գալստեամբդ յայսպիսի բնակարան աղքատին։ Քանի՜ մեծ խռովութիւն է ինձ՝ տեսանելն զիս այսքանեաց շնորհաց ընկալուչ յԱստուծոյդ, զոր այնչափ Թշնամանեցի և անարգեցի մեղօք իմովք։

Յայսմհետէ գարշիմ և զզուիմ 'ի գործեցելոցս չարեաց, և յամենայնէ որ յիս ոչ իցէ հաճոյ յաչս քո։ Շատ իսկ անիրաւեցայ առ քեզ, ո՛վ բարութիւն անբաւելի, Թողեալ զքեզ ապերախտութեամբ, առ 'ի դառնալ յարարածս փանաքիս, որոց ապականեալ զկիրս իմ քարշեցին 'ի կորուստ։ Արդ հրա-

ժարիմ յամենայնէ, ով Յիսուս իմ, առ ՚ի միանալ ընդ քեզ վերջնովին, և լինել միշտ ընդ քեզ բոլորովիմբ: Հրաժարիմ ՚ի դաւաճանող ընտելութեանց աշխարհի, զի քում միայնոյ սուրբ բարեկամութեան գտայց արժանի: Հրաժարիմ ՚ի խաբեպատիր ճոխութեանց աշխարհի՝ առ ՚ի լինել ստուգիւ ճոխութեամբ շնորհաց քոց: Հրաժարիմ յընդունայն պատուոյ աշխարհիս, զի հասից փառաց քում որդեգրութեան և հետևողութեան: Հրաժարիմ և յամենայն գրգանաց և յերազական հաճոյից աշխարհիս, առ ՚ի գտնել զամենայն մխիթարութիւն իմ ՚ի քեզ, և ժառանգել ըզքեզ միայն՝ զճշմարիտ և միակ բարիդ, և ժառանգել միշտ:

Այլ զի՞ է ինձ այս, Յիսուս, զի չունիմ այժմէն իսկ սէրտ եռանդուն և քոյումդ նման, առ ՚ի սիրել զքեզ և կեալ արժանապէս ընդ քեզ: Սուրբ հրեշտակք, քաղաքացիք երկնից և երկրի, եկայք այսր ՚ի պատիւ երեսաց ողջային

ձերոյ, և հայցեցէք վասն իմ կիրս արժանաւորս նմին ։ Ամենասիրելիդ իմ Յիսուս, Ճշմարիտ լոյս աչաց իմոց, հրճուանք սրտի իմոյ, գաւազան զօրութեան իմոյ, գանձ իմ, կեանք իմ, Ճշմարիտ՝ անբաւ և միակ բարիդ իմ։ Այո, սիրեմ ըզքեզ, և ցանկամ սիրել և ես ամենայն հոգւով և ամենայն զօրութեամբ իմով ։ Սիրեմ զքեզ, և փափագեմ աստասանին ՚ի սմին իսկ վայրկենի բոլորովմամբ սիրոյս լնուլ ըզթերի ժամանակացն՝ յորս անփոյթ արարի զսիրով քով ։ Արդ կամիմ ունել սիրտ՝ որ համօրէն սէր իցէ առ քեզ, զքեւ համայն զբաղեալ, և մի ես այլ սիրեսցէ զարարածս, բայց որչափ ինչ կարգեցանն առ ՚ի քէն ։ Ո՛վ սուրբ հնոց երկնային սիրոյ, հալորդ արա և զիս բոլորովմամբ քո, շուրջ պարուրեա զսիրտ իմ աստուածային բոցով քով. ծախեալ սպառեա զամենայն որ ինչ սէր աշխարհական և անձնական. տուր ինձ կիզուլ՝ նուաղիլ ՚ի քաղցրութենէ հրոյ սիրոյ քո, մինչև

չմնալոյ յիս ոչ մտաց և ոչ սրտի, և ոչ կենաց՝ բայց միայն որ վասն քո իցէ. և ոչ շատացեալ սիրելովս զքեզ՝ ձգնեցայց ձգել առ քեզ և զախորժս այլոց, և որչափ կարող իցեմ առնել զքեզ սիրելի բազմաց:

Կատարեա, սիրելիդ Յիսուս, ըղխորհուրդն ողորմութե՟՝ որոյ աղագաւ արժան համարեցար իջանել ՚ի գերագոյն գահոյից փառացդ՝ յիջեւանս յայս ողորմելի: Աստուած իմ՛ սիրելի, որ ոչ շատ համարիս տալ ինձ զքեզ բովանդակ, այլ և յաւելուս իսկ ՚ի վերայ գանձս և շնորհս՝ զոր ընդ քեզ ածես. դու որ ՚ի ժամանակի մահկանացու կենացդ յերկրի՝ զկոյրս լուսաւորեցեր, զբորոտս սրբեցեր, զհիւանդս առողջացուցեր, զմեղաւորս՝ սուրբս արարեր, ազդեա և յիս նովին զօրութեամբ՝ որ պատրաստ է ցանկ ՚ի բարերարել այնոցիկ՝ որ կենդանի հաւատով դիմեն առ քեզ: Ահաւասիկ առ ոտս քո, Աստուած իմ, անկեալ դնի կոյր մի թշուառ, լուսաւորեա զսա. ահաւասիկ բո-

րոս ամենազազիր բորոտութեամբ մեղաց, որպէս զսա. ահաւասիկ հիւանդ ջեռեալ 'ի բազմապատիկ ախտս հոգւորս, առողջացո զսա. ահաւասիկ մեղաւոր մեղօք մեծամեծօք, սուրբ արա զսա: Եւ զի ոչ ինչ տկարանայ քոյին անբաւ ողորմութեանդ, ամենայնի ակն ունիմ 'ի սիրոյ քումմէ: Տուր ինձ, Տէր բարի, շնորհս՝ լալոյ զմեղս իմ, կատարելոյ զպարտս վիճակի իմոյ, համբերուբ̄ և հպատակութեամբ տանելոյ տաժանակիր կենացս. սիրելոյ զքեզ զամենայն աւուրս մինչև ցշունչ վախճանիս, զոր և ըղձամ լինել շունչ սիրոյ՝ որով հասից առ սէր քո կատարեալ յերկինս: — Կոյս ամենասուրբ, հրեշտակք Աստուծոյ, ընտրեալքդ երկնից, շնորհ ունիմ ըղձէնջ զի կայցէք աստէն: Գոհացարուք և դուք զփրկչէն իմմէ վասն իմ, յաղագս մեծի պարգևիս՝ զոր հաճեցաւ առնել հոգւոյ իմոյ: Հայցեցէք վասն իմ շնորհս, հաճոյ գտանել միշտ առաջի Աստուծոյ, և կեալ այնպէս զի և 'ի ժամու մա-

հուան իմոյ գտից դարձեալ առ 'ի նմանէ զայդ այցելութիւն՝ որ կարեւոր յոյժ ինձ իցէ, և 'ի ձեռն նորին զօրութեան՝ եկից ընդ ձեզ բարձր առնել յաւիտեան զողորմութիւնս նորա յարքայութեան:

ԻՂՁՔ

Տէր, զի՞նչ կամիս զի արարից:

Ընկալ, Տէր, զկամս իմ, քեզ նուիրեմ:

Տուր ինձ, Տէր, զսէր քո, և արա ընդ իս որպէս և կամիս:

ՅՈՒՇՔ

Որ սիրէ զերկիր՝ երկրաւոր է. որ զերկինս սիրէ՝ երկնաւոր:

Անհնար է՝ որում նախանձախնդիր իցէ երկրաւոր պատուոյ՝ լինել այր հոգեւոր:

Սուրբք՝ ճգնին զի իցեն, և ոչ զի երեւեսցին:

Ե

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛րպէս զի մեծ է գթութիւն քո առ իս, Աստուած իմ։ Ոչ շատացեալ՝ ստեղծուլ զիս գեր ՚ի վերոյ բազմաց, որք գուցէ և ծառայէին քեզ լաւագոյն քան զիս, փրկեցեր զիս գնով բովանդակ արեանդ քո, անտես արարեալ զապերախտութիւնս իմ. պահեցեր զիս և յետ այնքանեաց մեղանացս՝ որովք պարտական գտայ դժոխոց։ Լցուցեր զիս բարութեամբք քովք, թէպէտ և ես մեծապէս զեղծայ նոքօք։ Նա և յայսմ իսկ առաւօտուս հաճիս կերակրել զիս մարմնով քով և արբուցանել արեամբ քով։ Ոչ շատ համարեալ զլինելդ հաւասար ինձ

ծննդեամբ, և օրինակ՝ կենօքդ,
առաջնորդ՝ վարդապետութեամբ
քով, փրկութիւն իմ՝ մահուամբ
քով, վարձք իմ՝ փառօք քովք, կա-
միս և կերակուր ինձ լինել սրբով
հաղորդութեամբս։ Ո՛վ Յիսուս սի-
րելի, և չիցես դու տէր միահեծան
երկնի և երկրի։ Զիա՞րդ արդ կամի-
ցիս այժմ իջանել 'ի գահոյից փա-
ռաց քոց, և ծածկել զքեզ ընդ
դոյզն տեսակաւ հացի, որպէս զի
օթեվանեսցիս յիս։

Յորժամ զմտաւ ածեմ, ո՛վ սի-
րեցեալդ Յիսուս, թէ զինչ ոք ի-
ցեմ ես և զինչ դու, այնպէս շփո-
թեալ ալմկիմ, զի և ոչ զաչս 'ի վեր
ամբառնալ համարձակիմ, թող թէ
մերձենալ 'ի սեղան քո։ Ոչինչ մի
եմ ես, իսկ դու՝ ամենայն ինչ. ես
թշուառութիւն ինքն, իսկ դու կա-
տարելութիւն գլխովին։ Եւ արդ
զինչ նմանութիւն կայցէ ընդ իս և
ընդ քեզ։ Այլ քանզի մահ յաւի-
տենական սպառնայ այնմ՝ որ ոչն
ճաշակիցէ 'ի մարմնոյ քումմէ և արբ-
ցէ յարենէդ, և խոստանաս զամե-

նայն բարի որոց ընդունին զքեզ, վասն այնորիկ և ես խոստովան եղեալ զանբաւականութիւնս իմ ընդ հարկաւորապետին՝ մատչիմ ընդունել զքեզ, առ 'ի կատարել զհաճոյս կամաց քոց, առ 'ի դարման պիտոյից իմոց, և 'ի նորոգութիւն հոգւոյ իմոյ, զի կարացից ասել ընդ առաքելոյն. «Այսուհետև ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս» :

Ե՛կ արդ, ե՛կ, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, 'ի հոգիս իմ, որ փափագէն քեզ ամենայն յօժարութեամբ. որպէս փափագէ եղջերու հասանել յաղբերս ջուրց 'ի յագուրդ ծարաւոյն, այնպէս փափագիմ յօդիլ ընդ քեզ. և յուսամ աներկբայ՝ զի 'ի գալստեան քում յիս՝ հաստատեսցի 'ի հոգւոջ իմում սուրբ արքայութիւն շնորհաց քոց. և այս լիցի ինձ 'ի գրաւական մտանելոյ յաւուր միում յարքայութիւն փառաց քոց, և ժառանգել զայն ընդ հրեշտակս և ընդ սուրբս քո :

« Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն

իմ առ քեզ Աստուած » ։ Ե՛կ արդ, ո՛վ հաց ամենապատուականն և գերագոյն քան զմանանայն, զոր անձրևեցեր ժողովրդեան քում յանապատին. եկ յագեցուցանել զիս շնորհօք քովք, զի քև կշտապինդ կարացից ընդ Եղիայի գնալ անվաստակ ընդ լեառն սուրբ, առանց դադարելոյ զճանապարհայն ։ Տուր ինձ գտանել 'ի քեզ զամենայն ճաշակ, զամենայն քաղցրութիւն, զի մի՛ այլոյ իմիք ցանկանայցեմ այսուհետև բայց 'ի քէն ։ Եւ զի մի՛ գլասցէ շնորհ քո խոչ ընդ ոտն մտից զեղանելոյ յիս, կանխեա՛ դու և բարձ յինէն զամենայն, որ միանգամ՝ ոչն է քեզ հաճոյ ։ Թող ինձ զմեղս իմ զոր գործեցի յամենայն կեանս իմ. սուրբ արա զիս նա և 'ի Թեթևագոյն մեղաց, որպէս և կամեցարդ լուանալ ձեռօք քովք զոտս առաքելոցդ, յառաջ քան զմուծանել զնոսա 'ի խնջոյս մարմնոյ քո անարատի ։ Տուր և ինձ ընդունել զքեզ անստգիւտ խղճիւ, սուրբ սրտիւ և բորբոքեալ սիրով, որպէս ընկա-

լանն զքեզ յերկրի այնոքիկ՝ որք այժմ փառաւորեն զքեզ յարքայութեան քում։ Թոյլ արա ինձ մատուցանել քեզ զսուրբ պատրաստութիւն մարտիրոսաց, զխոստովանողաց և կուսանաց՝ 'ի մատչելն յայս սեղան, առ 'ի լնուլ զթերին իմոյս. նա ևս և զսրբուհւոյ կուսին Մարիամու՝ 'ի յղանալն զքեզ յարգանդի. այլ և զքոյդ իսկ յօժարութիւն՝ 'ի կարգելդ զայս խորհուրդ սքանչելի 'ի վերնատան անդ 'ի զարմացումն երկնից առ հասարակ։

Ի քոց գրկաց, ով կոյս սրբամաքուր, ընկալաւ Սիմէոն զմանկիկն Յիսուս 'ի գիրկս իւր. 'ի քոյոց ձեռաց փափագեմ և ես ընդունել զնա յայսմ առաւօտուս։ Վասն որոյ և յառաջ քան զմատուցանելդ զնա ինձ, մատո՛ Հօրն երկնաւորի, որպէս զոհ քաւութեան, վասն բազում մեղաց իմոց, և որպէս պատարագ ընդունելի՝ փոխանակ այնքան կարեաց հոգւոյ իմոյ։ Ապա տուր ինձ զնա, և 'ի տալդ առա

նմա, զի եմ և ես մի 'ի քոց պաշտօնասիրաց, որպէս զի կատարեալ միացի ընդ իս և լցուսցէ զիս շնորհօք ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ծերունին Սիմէոն 'ի գգուելն 'ի գիրկս իւր զմանկացեալդ զՅիսուս ջերմաջերմ ըղձիւք և բերկրապատար հրճուանօք բացեալ զբերան իւր յերգս օրհնութեան ասէր․ «Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում 'ի խաղաղութիւն․ զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց »․ արդ առաքեա առ իս Տէր իմ զմահ, զոր ընդունիմ կատարեալ․ զի 'ի տեսանելս աչօք իմովք զփրկիչդ աշխարհի և 'ի փարիլ զնովաւ, լցան ամենայն բաղձանք իմ առաւելեան հանդերձ ։ Եւ դու, ո՛վ հոգիդ իմ, որ յայժմ առաւօտու գեղեցիկ հանդիպեալ բաղդի, բարձեր 'ի վերայ լեզուիդ զՅիսուս Քրիստոս և 'ի ծոց քո ժո-

զովեցեր , զի՞նչ ասիցես , յի՞նչ միտս
կայցես ։ Ո՞ւր ջերմաջերմ և հրա-
ւառ յափշտակութիւնք սրտի քո ։
Ո՛հ Յիսուս սիրուն , քանի՛ երջանիկ
է ինձ այս վայրկեան ։ Բազում նա-
հապետք և մարգարէք ժտեցին
տեսանել զքեզ'ի յաւիտենից յայս-
միկ , և ոչ եղեն լսելի . և ես անար-
ժան մեղաւորս , պարտապանս բիւր
դժոխոց , տապանակ եղէ այժմիկ
Աստուածութեան քում ։ Սիրելին
իմ ընդ իս , կարեմ գոչել ընդ հար-
սին սրբոյ , և ես ընդ նմա . « Եղ-
բօրորդին իմ ինձ՝ և ես նմա » ։ Գտի
հուսկ ուրեմն զխնդրելին սիրոյ ի-
մոյ , զաղբիւր ամենայն սփոփանաց
իմոց , զգանձ սրտի իմոյ , զտարփա-
լին աչացս , զբերկրութիւն ոգւոյս ,
զսկիզբն և զվախճան կենաց իմոց ,
զքաղցրիկն Յիսուս ։ Ոչ ևս նախան-
ձիմ ընդ հովիւսն և ընդ մոգս եր-
կրպագուս քո'ի տաղաւարի անդ .
բարեբաստիկ ևս եմ քան զնոսա .
զի ոչ միայն աչօք տեսի զքեզ և լե-
զուաւս ընկալայ , այլ փառաւո-
րեալ և յաղթական որպէս եադ ընդ

այժմ Հօր, ունիմ զքեզ ճշմարտապէս 'ի հոգւոջ իմում։

Հրեշտակք երկնաւորք՝ պաշտօնեայք մշտնջենաւորք, որ կայք առ գահոյիւք յաւիտենականին, եկայք ցնծութեամբ շուրջ զսրտիւ իմով, սպասաւորել արքային ձերոյ. փառաւորեցէք զնա ընդ իմ երկնային ձեր նուագօք՝ որ երանութիւն է ձեր, յանզրաւական յուրախութիւնս արքայութեան։

Արծարծեա 'ի սրտի իմում, ով սիրելի Յիսուս, զգեղեցիկ բոց սիրոյ քո սրբոյ, այնր սիրոյ՝ յոր վասն իջեր յերկնից, և զոր ցանկանալով ցանկաս տեսանել վառեալ 'ի սիրտս ամենեցուն. այնր անբաւ սիրոյ, որ ած ձգեաց զքեզ 'ի մահ 'ի վերայ խաչին վասն մեր. և ես քեզ կալ մնալ ընդ մեզ, որպէս զորրուալ ինչ ընդ գձուձ տեսակաւս մերով։ Ո՛հ, ո՛ տայր ինձ, ով Տէր, վառիլ բոցբոքիլ վասն քո. ո՛ տայր ինձ՝ այժմեանս եռանդեամբ ջնջել զանցեալ զապերախտութիւնս իմ. սիրել՝ որչափ վշտացուցին զքեզ, և

որչափ արժանն է։ Ո՜վ հուր աս-
տուածային, որ լուսաւոր առնես
զմիտս, զսիրտս վառես, զհոգիս նորո-
գես, զկիրս ձգես առ քեզ և զկամս
միաւորես. տուր ինձ յարգեանց ի-
րացս իմանալ զգալուստ քո յիս։
Լուսաւորեա զիս լուսով քով, տա-
պացո ջերմութեամբ քով, սրբեա
զօրութեամբ քով, և կազդուրեա
ամենակարողութեամբ, զի մարթա-
ցայց ախոյանաբար ընդդէմ կալ
թշնամեաց իմոց։ Մի թողուր ինձ,
ով Տէր, լինել տակաւին հեղգ և
ցուրտ առ սէր քո սուրբ, յետ օ-
թելոյ քո յիս, Աստուածդ սիրոյ,
որ եսդ իսկ ինքն սէր գլխովին։ Եւ
ո՞վ կարասցէ բնաւ յետ այսորիկ
մեկնել զիս 'ի քէն։ Թող հալածա-
կան վարեսցէ զիս աշխարհ համօ-
րէն, թող 'ի վեր վազեսցեն դժոխք
'ի վերայ իմ. ոչ աքսոր, ոչ աղէտք,
ոչ բանդ, ոչ սուր և ոչ անուն չար,
նա և ոչ մահ ինքնին կարիցեն յայմ-
հետել և ոչ միով իւիք օրինակաւ
օտարացուցանել զիս 'ի քէն։

ԻՂՁՔ

Աստուած իմ, հրաժարեմ յամենայն երկրաւոր ախորժակաց՝ առ 'ի հաճոյ լինելոյ քեզ։

Ո՛վ Յիսուս, որ ոչն սիրէ զքեզ՝ նա և ճանաչէ իսկ ոչ զքեզ։

Ի բաց արա յինէն, Տէր, զարգելսն՝ որք խափան լինին ինձ 'ի սիրելոյ զքեզ բոլորով սրտիւ։

ՅՈՒՇՔ

Որ զտուեալն շնորհ բարւոք 'ի կիր արկանէ, առաւելագոյն ևս գտցէ առ 'ի յԱստուծոյ։

Բառնայ Աստուած զշնորհս յայնմանէ, որ չարաչարն վարիցի նոքօք։

Խլութեան առ ձայնն երկնաւոր՝ յաջորդէ լռութիւն ահաւոր, և զանցառութեան զաստուածայինն լուսոյն՝ գիշեր ահագին։

Զ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ գառն անարատ, պատարագեալ վասն մեր 'ի վերայ խաչին, յիշեա զի եմ և ես մի հոգւոցն՝ զորս փրկեցեր այնչափ ցաւօք և մահուամբ քով: Արա, Տէր իմ, լինել ինձ քո բոլորովին, որպէս դուն կամիս լինել իմ բոլորովին յայսմ առաւօտու, 'ի ձեռն ամենասուրբ հաղորդութեանս: Քեզ ընծայեմ զանձն իմ ամենևին, որպէս զի արասցես ընդ իս որ ինչ և հաճոյ իցէ քեզ: Քեզ ընծայեմ զկամս իմ. շղթայեա զնա քաղցր կապանօք սիրոյ քո, որպէս զի լիցի միշտ ստրուկ ամենասուրբ կամաց քոց: Չկամիմ՝ այլ ևս կեալ առ 'ի լնուլ

զբաղմանս իմ, այլ միայն առ 'ի հա-ճել զկամս բարութեան քո: Ջըն-ջեա յինէն զամենայն որ քեզն ան-հաճոյ իցէ, և տուր ինձ շնորհս չխորհել այլ ինչ քան զհաճոյս քո: Սիրեմ զքեզ, ով անձկալի փրկիչդ իմ, 'ի բոլոր սրտէ. և վիշտ է ինձ զի ոչ կարեմ սիրել զքեզ ըստ քո արժանւոյդ: Եկ, Տէր իմ սիրելի, 'ի հոգիս յայս՝ որ փափաքէ քեզ: Մի, մի զարհուրեցուսցէ զիս թը-շուառութիւն իմ, և մի կասեցուսցէ 'ի մերձենալոյ առ քեզ. նա մանա-ւանդ այս իսկ լիցի ինձ քաջալեր մատչելոյ և ընդունելոյ զքեզ, զի փրկեսցես զիս յայնմանէ շնորհօք քովք: Օրհնեմ զքեզ, սիրելիդ իմ Յիսուս, շնորհ ունիմ քեզ, սիրեմ զքեզ: Այո, սիրեմ զքեզ ամենայն զօրութեամբ հոգւոյս և ամենայն գորովանօք սրտիս: Տուր ինձ, Տէր, կալ մնալ 'ի սէր քո ճշմարտապէս 'ի կեանս յայսմիկ և յամենայն յաւիտեանս:

Յորժամ 'ի յուշ ինձ անկանին այնքան թշնամանք զոր հասուցի

քեզ, ով սիրելի Յիսուս, շառագունանք և տարակուսութիւն պատեն զիս։ Ո՛հ, արդարև մեղայ յերկինս և առաջի քո։ Մեղայ, և մեղայ կարի յոյժ չարաչար և ապառումն։ Չեմ արժանի կոչել որդի քո. անարժան եմ որդի անուանելոյ. չէ ինձ փոքր եթէ գրեսցես զիս ՚ի թիւ նուաստագունից ծառայից քոց։ Այլ դու ընդ հակառակն պատրաստես ինձ կոչումն մեծապայծառ. հրաման տաս հրեշտակացն քոց երգել երգս բարետաւիղս և տօնել զվայրկեանս զայս երջանիկ վասն իմ, յորում գամս ընդունել զքեզ ՚ի ծոց իմ. ահա բանաս դու զվէրս սրտի քո առ ՚ի բնակութիւն ինձ։ Ո՛վ ամենաքաղցր փրկիչ իմ, Յիսուս իմ սիրելի. ընդէ՞ր ոչ անկանիմ առ ոտս քո նուաղեալ ՚ի ցաւոց՝ վասն թշնամանաց իմ առ քեզ. վասն է՞ր մինչև էր իմ ժպրհեալ՝ չեհար զիս մահն։ Ո՛հ, և կարի շատ արհամարհեցի զքեզ, Աստուած իմ սիրելի, կարի շատ անգոսնեցի զքեզ. յայսմ հե-

տէ կամիմ մեռանել քան դարձեալ
ընդ վայր հարկանել զքեզ: Այլ
քաջ գիտես դու, Տէր, և ես ինք-
նին գիտեմ 'ի տարաբաղդ փորձոյ,
թէ քանի՛ սակաւ արժան լիցէ ինձ
վստահ լինել յառաջադրութիւնս
իմ յայսոսիկ: Այլա դու քոյին հզօր
շնորհօք ամրացո զնոսին, և մի՛ տար
թոյլ զեղծանել ինձ երբէք զգաց-
մամբք մարմնոյ և կամ կարողու-
թեամբք հոգւոյ՝ առ 'ի թշնամանե-
լոյ զքեզ. ա՛ռ յինէն զինչս, զառող-
ջութիւն, զկեանս, և մի՛ թողուր
ինձ մեղանչել միւսանգամ: Ո՛հ, մի՛
լիցի ինձ երբէք դառնալ վերստին
'ի նախատել զքեզ, ո՛վ բարութիւնդ
իմ սիրելի: Արբեա զիս բոցով ե-
ւանդնալից սիրոյդ, վառեա և բոր-
բոքեա զիս սիրով քով սրբով, այն-
պէս զի մի՛ երբէք մեկնեցայց 'ի քէն
յաւիտեանս: Ո՛վ ամենաքաղցր
միութիւն. ո՛վ խանդաղատանք Յի-
սուսիդ իմոյ. ո՛վ Նրբութիւն սի-
րոյ. ո՛վ սրբութիւն գերափառ.
ո՛վ մեղր ամենահաճ. ո՛վ կերա-
կուր զուարթացուցիչ. ո՛վ սիրե-

լի կենդրոն ամենայն ըղձից իմոց · ով ամենասիրելի Յիսուս · ահա արդէն իսկ տեսանեմ զքեզ զի դաս ընդ աւաղ իմ, շուրջ պատեալ յանթիւ դասուց հրեշտակաց, առ 'ի մեծարել զիս ամենատարփիկ այցելութեամբդ ։

Այլ զի՞ գործես, Յիսուս իմ, Աստուած իմ, ամենայնդ իմ · ոհ, չեմ բաւական եթէ մտցես յանշուք սենեակ սրտիս ։ Գէթ ասա մի ևեթ բան՝ որով արժանացայց այնմ, որպէս և պարտն է ։ Ոչ, Տէր, ոչ եմ արժանի առ այսքան մեծագին երախտիս · բայց և այսուիկ իսկ ոչ անգիտանամ զի անսահման է բարութիւն քո ։ Չեմ արժանի հիւրընկալել զքեզ յանմաքուր հոգւոջ իմում · այլ սակայն յուսամ ընդունել առ 'ի քէն զշնորհս զայս · քանզի դու ինքն ասացեր եթէ հաճոյ է քեզ բնակել 'ի մէջ որդւոց մարդկան ։ Արդ եկ, ով Տէր իմ սիրելի, և որոյ վասն զասդ առ իս՝ ներգործեա զայն ։ Թշուառ ոմն եմ ես · այլ բարութիւն քո չտայ քեզ տե-

սանել զթշուառութիւնս իմ։ Եւ 'ի հոգւի իմ և սրբեա զնա. տիրեա սրտի իմոյ և մաքրեա զնա. մուտ 'ի մարմին իմ և պահեա զնա, և մի՛ մեկներ զիս երբէք 'ի սիրոյ քում-մէ։ Ծախեա, ո՛վ բարի Յիսուս, զոր ինչ տեսանես յիս հակառակ սիրոյ քո սրբոյ. վայելչացո՛ զհոգի իմ, զի լիցի առ փոքր մի արժանի ընդունելոյ և օթևանելոյ զքեզ։

Ո՛վ մայր փրկչին իմոյ, որ առաջին յամենայն արարածոց ընկալար զնա 'ի կուսական քում արգանդի, գթա յիս յողորմելի մեղաւորս. աղաչեա վասն իմ ընդունել ինձ ջերմ սիրով զԱստուածորդին, փարել զնովաւ կատարեալ տարփմամբ, և լինել հոգւոյս մի յայնց հոգւոց՝ որք ըստ սրտի Նորա իցեն, միշտ կազմք և պատրաստք 'ի կատարումն կամաց Նորին սրբոց։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՜վ անհասանելի մեծվայելչութիւն Աստուծոյ իմոյ, որոյ առաջի պատկառեալ դողան սերովբէքն սրբամաքուրք. խոնարհեալ երկիր պագանեմ քեզ որ կաս առաջի իմ ընդ տեսակաւ սրբոյ խորհըրդոյն: Յարդարեմ քեզ 'ի գահոյս զսիրտ իմ, յորում Թագաւորեսցես իբրև ինքնիշխան տէր մինչև 'ի կէտ մահուս: Երկրպագեմ քեզ 'ի բոլոր սրտէ, ո՜վ Յիսուս իմ. և զքեզ միայն ճանաչեմ արժանի ընդունելոյ զամենայն երկրպագութիւն, քանզի դու միայն ես սուրբ, դու միայն տէր, դու միայն բարձրեալ 'ի վերայ ամենայն էից: Երկրպագեմ ամենասուրբ հոգւոյ քում, զոր յանձն արարեր 'ի վերայ խաչին 'ի ձեռս Հօր քո յաւիտենականի, և որով արդ միացար սերտիւ ընդ հոգւոյս իմում: Հոգի Քրիստոսի սրբեա զիս: — Ամենասուրբ

գլուխ Յիսուսի իմոյ, պահարան ա֊
մենայն գանձուց իմաստութեան
Հօր, որ առ սէր իմ ծեծեալ եղեր
եղեգամբ և պսակեալ փշովք, մաք֊
րեա այժմ զխորհուրդս մտաց ի֊
մոց, որպէս զի լիցին զօրհանապազ
ուղղեալք առ քեզ: — Ամենա֊
սուրբ աչք Յիսուսի իմոյ, որ միով
ևեթ ակնարկութեամբ ուղղեցէք
զխստագոյն սիրտս, դիք արդ սանձ
վայրապար խուզախնդրուեց իմոց՝
որ արկանեն զիս 'ի բազում վտանգս,
և նայեցարուք գթասիրապէս 'ի թը֊
շուառութի հոգւոյ իմոյ՝ առ 'ի բժըշ֊
կել զնա յամենայն հիւանդութէց·
որպէս զի յայսմ հետէ 'ի տեսա֊
նելս զաշխարհ՝ արհամարհեցից ըղ֊
պերձութիւնս նորին, ակնկառոյց
լինելով յերկինս՝ ցանկացայց ժա֊
ռանգել զնա, և պշուցեալ 'ի քեզ՝
գաղափարեցից յիս զօրինակ քո: —
Աստուածային լսելիք Յիսուսին ի֊
մոյ, մշտաբացք 'ի լուր պաղատա֊
նաց հիքացելոց, ունկն դիք աղաչա֊
նաց անարժանագունիս մեղաւո֊
րաց· մի տայք թոյլ իմոցս ական֊

ջաց՝ լսել բանս հրապուրանաց, բամբասանաց և ունայնութեան. այլ տուք ինձ հանապազ լսել զգովեստ Յիսուսի՝ առ 'ի հռչակել զնա. զԹերութիւնս իմ՝ առ ուղղել զնոսին. զխորհրդակցութիւնս Յիսուսի՝ առ 'ի կատարել զնոսա:

Աստուածային լեզու Յիսուսի իմոյ, որ հրամայեցեր հողմոց լռու լինել, հիւանդաց՝ գտանել զառողջութիւն, մեռելոց՝ յառնել, և հնազանդեցան քեզ վաղվաղակի, հրամայեա կրից իմոց զի մի՛ ևս այլ ապստամբեսցին ընդդէմ հոգւոյս. ասա մարմնոյս՝ սանձել զկտողուցս իւր. աշխարհի՝ մի՛ կախարդել զիս չքով իւրով. սատանայի՝ մի՛ ևս այլ փորձել զմուտս սրտի իմոյ: — Ոտք աստուածայնոյ Յիսուսիդ իմոյ, որ այնչափ աշխատ եղէք առ 'ի գիւտ մեղաւորաց, առաջնորդեցէք գնացից իմոց, զի մի՛ երբէք խոտորեսցին 'ի ճանապարհէ աստուածային պատուիրանաց: — Ամենասուրբ ձեռք Յիսուսի իմոյ, որ առ սեր իմ կապեալ եղէք շղթայիւք և ծակեալ

բուեռօք, պնդեցէք զիս գործա-
պէս առ աստուածային ծոցումն, զի
մի հեռացայց բնաւ անտի: — Ամե-
նասուրբ մարմին Յիսուսի իմոյ, առ
սէր իմ ձաղկեալ, խաչեալ, մե-
ռեալ և թաղեալ, և այժմ նստեալ
փառօք ընդ աջմէ Աստուծոյ Հօր՝
աղաչեմ զքեզ սրբեա զամենայն ըզ-
գայարանս իմ, որպէս զի եղիցին
յայսմ հետէ մի մի գործիք փառաց
քոց: Մարմին Քրիստոսի, փրկեա
զիս: — Պատուական արիւն Յի-
սուսի իմոյ, արբո զիս քո սիրովդ,
որպէս զի պատրաստ եղէց մեռա-
նել քան եթէ մեղանչել քեզ՝ որով
և իցէ օրինակաւ: Արիւն Քրիստո-
սի, արբո զիս: — Ամենասուրբ ջուր
հոսեալ 'ի կողէ Յիսուսին իմոյ,
լուա, աղաչեմ զքեզ, զհոգի իմ և
'ի փոքունց անգամ արատոց, որ-
պէս զի գտից ուր ուրեմն զանմե-
ղութիւնն՝ զոր կորուսի մեղօքս ի-
մովք: Ջուր կողին Քրիստոսի, սըր-
բեա զիս: — Ո՛վ բարի Յիսուս, որ
իջեր յերկնից յայցելութիւն իմ՝
ամենասուրբ հաղորդութե͞ս լուր

մարդասիրապէս աղօթից իմոց։ Ո՛վ բարի Յիսուս, ունկն դիր ինձ։ Ի վէրս քո, ո՛վ Տէր, որք են տեղիք ապաւինի իմոյ, ծածկեա զիս, որպէս զի կելով 'ի նոսին զամենայն աւուրս կենաց իմոց՝ մի՛ ևս մեկնեցայց 'ի քէն 'ի յաւիտեանս, այլ եղէց անդ յապահովի 'ի յարձակմանէ թշնամւոյ իմոյ. և կոչեցեալ առ 'ի քէն 'ի ժամու մահուան՝ գտից զանձն իմ միացեալ ընդ քեզ, և այսպէս անցից անվտանգ յերկրէ աստի թշուառութեանց՝ յարքայութիւնն երանաւէտ, յօրհնել ըզքեզ, 'ի վայելել զքեզ ընդ հրեշտակաց և ընդ սրբոց, ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից։

Բա՛րէ, ո՛վ փրկիչ իմ՝ բովանդակեալ ընդ տեսակաւ սրբոյ խորհըրդոյն և տարփաւոր իմ երկնային, քանի՜ սիրելի և գողտրիկ լիցին հնարիմացութիւնք սիրոյ քո առ 'ի սիրել 'ի հոգւոց։ Դու մարդ եղեալ ոչ շատացար մեռանել ընդ իմ, այլ կամեցար թողուլ մեզ զքեզ ինքն յամենասուրբ հաղորդութեան առ

'ի կենակցութիւն, առ 'ի մնունդ, առ 'ի գրաւական արքայութեան. և որ մեծն է, կամեցար յառաւօտուս յայսմիկ յայց ելանել տառապեալ հոգւոյս իմում: Ասա ինձ, զի՞նչ ևս այլ կարես հնարել առ 'ի սիրելի առնելոյ զքեզ: Ո՛վ անձկալիդ անվախճան, երբե՞ք ուրեմն սկիզբն արարից ճշմարտապէս հատուցանել զորխտուր այնքանեաց ճարտարութեանց սիրոյ: Տէր, չկամիմ ես կեալ՝ բայց 'ի սիրել զքեզ միայն: Զի՞նչ օգուտ են ինձ կեանքս այս, եթէ ոչ ծախեցից զայն 'ի սիրել զքեզ և 'ի հաճել զկամս քո, փըրկիչ սիրելի, որ ետուր բովանդակ զկեանս քո վասն իմ: Եւ զո՞ սիրեցից եթէ ոչ զքեզ, որ ես ամենևին գեղեցիկ, ամենևին բարի, ամենևին սիրելի: Կեցցէ հոգի իմ 'ի սիրել միայն զքեզ. հալեսցի սիրով 'ի յիշել միայն զքեզ, ո՜վ տարփաւոր երկնային՝ 'ի լսել միայն զանուանս մարի, զխաչի, և զխորհրդոյ սըրբութեան, բոլորովին վառեսցի սա ըղձիւք առնելոյ մեծ ինչ վասն քո,

ո՜վ իմ Յիսուս, որ արարեր մեծամեծս, և տարար բազում անցից վասն իմ:

ԻՂՁՔ

Լուա՛, Տէր, զհոգի իմ յամենայն արատոյ:

Դու միայն շատ ես ինձ, ո՜վ Յիսուս իմ, չցանկամ այլոյ իմիք:

Եղո՜ւկ որ ոչն սիրէ զքեզ, ո՜վ Աստուած սիրոյ:

ՅՈՒՇՔ

Որ ինչ ոչ է 'ի պէտս յաւիտենականութեան՝ ունայնութիւն է:

Չիք այլ ինչ յանկագոյն առ 'ի զարթուցանել'ի մեզ զսէրն Աստուծոյ՝ քան զփայտ սրբոյ խաչին:

Սիրողացն զԱստուած՝ դառնն իբրև զքաղցր է, և քաղցրն՝ իբրև զդառն:

Է

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ անձն իմ, միանգամ և եթ հաղորդել արժանապէս ընդ Քրիստոսի՝ բաւական է 'ի փրկել զքեզ․ արդ տես զի այնպէս իցէ հաղորդութիւնս այս քո ։ Գուն գործեցից ես, Տէր, և դու զօրացո զջանս իմ։ Տուր ինձ տանել առ սեղանն սուրբ՝ սիրտ թաթաւուն կենդանի հաւատով, հաստատուն յուսով և սեռն սիրով, զորոց սուրբք ետուն մեզ լուսաւոր օրինակս ։

Վա՜յ ինձ, զի բազում անգամ յանցեալ ժամանակին թշնամանեցի զքեզ․ և արդ որո՞վ դիմօք և համարձակութեամբ մատեայց ընդունել զքեզ 'ի սրբում հաղորդու-

թեանս ։ Ընդունե՛լ ՚ի սիրտ իմ զՅի-
սուս. . .։ Ե՛ս թշուառս մեղաւոր.
Ե՛ս արարած չնչին. Ե՛ս եղէց բա-
ժանորդ բաղդի շնորհելո՛յ սրբոյ կու-
սին Մարիամու, մինչ ամփոփէրն ՚ի
ծոց իւր զտարփալին Յիսուս. Ե՛ս,
որ սիրեմ կոչիլ որդի նորա, և չու-
նիմ ինչ փոյթ յանձին նմանել լա-
ւութեանցն ։ Ո՛վ Աստուած իմ,
չունիմ ընծայ պատուական փոխա-
րէն քեզ, զի ես իսկ գլխովին անար-
ժան եմ. բայց զի այս են կամք քո
յանդիման լինել ինձ սրբոյ սեղա-
նոյս, այո՛ հնազանդեցայց ։ Այլ
մինչև մերձեցեալ ընդունել զքեզ,
անկանիմ առ ոտս քո խոնարհու-
թեամբ, և հարեալ յաղնիւ ՚ի սի-
րոյդ՝ ողբամ և ատեամ դառնապէս
զբազմութիւն մեղաց իմոց՝ որովք
զքեզ ընդ վայր հարի ։

Տե՛ս արդ, սիրտ իմ, ընդ ո՞ւմ կա-
մեցար խոտորնակս գնալ. ընդ ո՞ւմ
հարար մեղօքդ. տե՛ս զո՞ անարգե-
ցեր, զո՞ ընդ վայր հարեր, զո՞ այդպէս
զզուեցեր ։ — Յիսուս է նա՝ որ արկ
զիրկս զպարանոցաւդ և ժողովեաց

զքեզ 'ի ծոց իւր, և եթող քեզ ըղ-
ձիւաս քո՝ խակ և խակ 'ի լինել քում
յանդիման զղջացեալ անձամբ:....
Յիսուսն այն խանդաղակաթ սիրով,
որ կամի գալ և այց առնել քեզ
յայսմ առաւօտու, միանալ ընդ
քեզ և ձոխացուցանել շնորհօք իւ-
րովք: Ո՛վ սիրելիդ Յիսուս, արտա-
սուեցի այպաքէն և ատեցի զմեղս
իմ. այլ յորժամ զմտաւ ածեմ զի
զսիրելիդ իմ զայդ դառնացուցի մե-
ղօքս իմովք, քաջ 'ի վերայ հասա-
նեմ զի չև ևս է իմ ատեցեալ և լա-
ցեալ զմեղս՝ որպէս արժանն էր:

Շատ խակ անդունեցի զքեզ 'ի կեա-
նըս իմ, ո՛վ քաղցր Յիսուս. յայսմ
հետէ և առ յապա կամիմ քո լի-
նել և քո բոլորովին: Քաւ լիցի ինձ
միւսանգամ պարծել ընդ ախտն,
զորս ըղձիւք արդ խնդրէի լուանալ
արեան արտասուօք: Այլ և խոս-
տանամ քեզ փոխանակ կրիցն չա-
րաց՝ զորոց զհետ անկայ, կրթիլ 'ի
ներհական նոցին յառաքինութիւնս:
Դարձուցից զաչս իմ 'ի հրապուրա-
կան տեսլեանց՝ որք ընդ առաջ իմ

ելցեն. փակեցից զունկն իմ յամե-
նայն բանէ սատերիւրելոյ. միտ եդից
խնամով կատարման պարտուց պաշ-
տաման իմոյ. սանձեցից զշարժմունս
ցասման՝ պատկառ կացից զգուշու-
թեամբ օրինաց համեստութեան,
խոնարհութեան, կարեկցութեան
և համբերութեան. առաքինու-
թիւնքս այսոքիկ մի՛ ևս համարես-
ցին ինձ օտարոտիք ինձ՝ որպէս յա-
ռաջն երբեմն: Ընտրեցի նուիրել
զանձն իմ բոլորովին առ սէր քո և
վասն քո միայն կեալ: Օրս այս լի-
ցի սկիզբն երջանիկ ժամուն՝ յանձն
առնելոյ զիս գլխովին 'ի ձեռս քո:
Ո՛հ, ընդէ՞ր ոչ սկիզբն արարի 'ի վա-
ղուց սիրել զքեզ: Ո՜վ թէ կայծ մի
'ի կենդանարար սիրոյդ թափ ան-
ցանէր ընդ սիրտ իմ, քանի՜ դիւր և
հեշտ լինէր ինձ ընթանալ ընդ փշա-
լից և դժուարին ճանապարհս ար-
դարութեան:

Աւադիկ քեզ անձն իմ, մեծն այն
և դաղտնի հնարքդ՝ ընկճելոյ զկիրս և
վարժելոյ 'ի հրահանգս ներհակացն
նոցին առաքինութեանց, թէպէտ

և գտցին առ այն խոչք և խութք ։ Հնարքդ այդ գաղտնիք՝ են սիրել զՅիսուս և սիրել խանդակաթ ։ Սիրեա արդ ո՛վ հոգի իմ, սիրեա զԱստուածն քո ։ — Այո՛, սիրեմ զքեզ Տէր, և սիրեմ 'ի վեր քան զամենայն, և առաւել քան զիս ։ Եւ ո՞ տայր ինձ սիրել զքեզ եռանդեամբն՝ որով սիրեն հոգիք ընտրեալք յարքայութեան և գերագոյնք 'ի սերովբէից ։ Յուսա՛մ, ով հոգի իմ, ընդունել 'ի Յիսուսէ զամենայն շնորհս, մինչդեռ նա բովանդակ սիրովն եկաւորի 'ի քեզ ։ Աղերսքս օժանդակեալք բարեխօսութեամբ Կուսին՝ սրբոյ մի՛ լիցին արհամարհք ։ Այո՛, Տէր բարեգութ, թէպէտ և մեծ է յոյժ նուաստութիւն իմ և հէքութիւն, տակաւին յուսամ թէ լսես աղաչանացս ։ Եւ յոյսս այս ձեպէ զփափագ՝ վաղվաղ ընդունելոյ ըզքեզ 'ի ծոց իմ ։ Հա՛պա, փութացի վայրկեանն այն տենչալի ․ և քանզի ոչ կարեմ այժմիկ ընդունել ըզքեզ յերկինս 'ի մեծի վայելչութեան փառաց քոց , փափաքեմ

ընդունել յերկրի՝ 'ի սքանչելիս ողորմութեանց քոց ընդ տեսակաւ խորհրդոյն ։ Փութացո՛, ով քաղցր Յիսուս, զվայրկեանն զայն՝ որում անձկամս փափագանօք ։ Բորբոքեա՛ զիս առաւել քան զառաւել զկենդանի և զարդիւնական առաքինութիւնս, որովք արժան իցէ ինձ ընդունել զքեզ ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Հաւատամ Տէր, զի միացար ընդ հոգւոյ իմում ճշմարտապէս․ լի մխիթարութեամբ փարիմ զքեւ 'ի ներքս 'ի ծոցիս, և գոհանամ զքէն վասն այսր անբաւ քո ողորմութեան ։ Այլ զիա՞րդ յանձն առեր, Տէր, միանալ ընդ հոգւոյ՝ որ լին է անձնասիրութեամբ, գաղջ 'ի սէր քո սուրբ, յեռնեալ 'ի մեռելութենէ և յուրացութենէ անձին ։ Գիտես իսկ զի սիրող եմ ես հաճոյից, հեշտութեանց, և փառաց․ ճանաչես Տէր զխոտորնակ կամս

իմ, որով չկարեմ տանել և փոքու իսկ դժկամակութեան և բանի միոյ ձանձրութեան և սակաւիկ մի վըշտաց։ Զի՞րդ ապա, ո՛վ քաղցր Յիսուս, այնքան խոնարհեցուցանես զքեզ՝ առ 'ի միանալ ընդ անարժի և խոտանի միոջ։ Մինթէ չէ՞ր քեզ բաւական այց առնել ինձ լուսովդ երկնայնով՝ և առաջնորդել ընդ ճանապարհ փրկութե․ և զի՞նչ պէտք էին խոնարհել ցայս վայր և անձամբ յայց ինձ ելանել։ Ո՛վ Յիսուս, չունիմ բան և ոչ իմացումն բաւական՝ առ 'ի բացայայտել զանչափութիւն մարդասիրութեան քո։ Ընդգրկեմ զքեզ՝ ո՛վ ցանկալի գանձըդ իմ, ճանաչելով զքեզ իմ գերագոյն Տէր, իմ առաջին պատճառ, վախճան իմ վերջին, իմ գերագոյն և միակ բարի․ և խոնարհութեամբ երկիր պագանեմ քեզ։ Ո՛հ, երանի թէ հնար էր ինձ պաշտել զքեզ այնու զգացմամբ, այնու սրտիւ և այնու անձկաւ, որովք մայր քո Մարիամ պաշտեաց զքեզ յերկրի և արդ 'ի յերկինս․ ո՛հ, երանի թէ

հնար էր ինձ մեռանել զմահ նո-
րին, ծախելով զկեանս 'ի բոլորո-
քեաւ սիրոյդ :

Կատարեա՛, ով Յիսուս, զփրկա-
ւէտ կամս քո, որոյ աղագաւ եկիր
միանալ ընդ հոգւոյս իմոյ. ետուր
ինձ երբեմն լոյս և զօրութիւն թողլոյ
զկորստականն ճանապարհ. տուր
և այժմ լոյս և շնորհս ճանաչե-
լոյ և հետևելոյ հաստատուն մտօք
'ի ճանապարհս փրկութեան: Յի-
սուս սիրելի՝ որ ոչ զլացար տալ ինձ
'ի սնունդ հոգւոր՝ զմարմին քո, մի՛
զրկեր զիս 'ի շնորհաց աստի, զոր
հայցեմս, յաղթող լինելոյ կրից ի-
մոց և կալոյ միշտ քեզ հաւատա-
րիմ: Տո՛ւր ինձ առ սէր քո հրա-
ժարել յամենայն սփոփանաց, և
սփոփանս համարել միայն զհա-
ճոյսն քո, ո՛վ Աստուած իմ և ա-
մենայն ինչ իմ: Տուր ինձ, Տէր,
զշնորհս զայս անբաւ՝ ըստ անբաւ
բարութեան և անխաբ խոստման
քում, չթողուլ երբէք զնա որ կա-
մովին զանձն իւր թողուցու 'ի ձեռս
քո՝ առաջնորդել առ 'ի քեն յա-

մենայնի ։ Շնորհեա ինձ զայս վասն արժանեաց պատուական արեան քոյ , փրկարարի և կենդանարարին արեան՝ հոսեցելոյ առ 'ի քէն առատապէս 'ի փրկութիւն ամենեցուն , և յանուշարար հրձուանս հաւատացելոց ։

Փութացիր յօգնութիւն , ով մայր Մարիամ , միջնորդեա և լեր իմ պաշտպան և օժանդակ պաղատանաց իմոց՝ քոյին բարեխօսութ̄բդ ։ Գթա՛ , գթա՛ 'ի վերայ թշուառականի որդւոյս քոյ և մի՛ զանց առնէր զմայրենի խնամօքդ ։ Այո՛ , խընամ արկ զինև , ով սուրբ Կոյս , զի մի՛ ևս գտայց որպէս ցարդս՝ անարժան քեզ որդի ։ Ջան եղից այսուհետև ընդօրինակել յիս զառաքինութիւնս քո , մանաւանդ զխոնարհութիւնդ և զմաքրութիւն , զորս այնքան մեծարեցեր և սիրեցեր ։ Ո՛վ օգոստափառուհի և մայր Յիսուսի , ընկալ յինէն զփոքրոգինըւէր գովութեանց և օրհնութեանց ։ Խնդրեա վասն իմ զմաքրութիւն սրտի և մտաց , զի եղէց միշտ անա-

բատ 'ի խորհուրդս և յախորժակս : Եւ 'ի ձեռն բարեխօսութեան քո հզօրի՝ յաւերժացո՛ յիս զպտուղ սրբոյ խորհրդոյս, որոց արդ հաղորդ եղէ· տուր ինձ լինել նմանող քում ըղդաստութեան՝ որպէս զի հետևելով քո շաւղացդ յերկրի՝ արժանի գտայց և յերկինս ընդ քեզ գովել և բարձրացուցանել զանձառ զանբաւելի և զանսպառ մարդասիրութիւն որդւոյ քո : Դու որ միայն գտար անարատ 'ի մեղաց, պահեա՛ զիս յաւթէ նոցին դժնդակէ, և վառեա՛ զիս սիրովն երկնայնով, սեռն և սերտ փարիլ ընդ Յիսուսի, և մնալ անքակ յաւիտեան :

ԻՂՁՔ

Քաղցր է ինձ, Տէր, յիշել զանսահման երանութիւն քո :

Ո՛ տայր թէ ամենեքեան սիրէին զքեզ՝ որպէս արժանիդ ես :

Ո՛վ պատուական արիւն Քրիստոսի, 'ի քեն ակն ունիմ զմեղաց թողութիւն :

ՅՈՒՇՔ

Մեռացուք ՚ի ժամանակի յորժամ սակաւ խորհեսցուք զմահուանէ :

Չմեծարէ Աստուած զնա՝ որ մեծարանս անձին խնդրէ :

Որքան մեծամեծ շնորհաց պէտս ունիցի հոգին, այնքան առաւել փութայ Կոյսն սուրբ յօգնութիւն ․ շատ է թէ խոնարհութեամբ ոք առ նա դիմեսցէ :

Ը

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Սթափեաց, անձն իմ, և ար-
ծարծեա զհաւատս, որ ուսուցա-
նեն քեզ. եթէ Աստուած քո մար-
դացեալ կայ յամենասուրբ խոր-
հըրդեանն: Յիսուս ինքն՝ որ ծնաւ
աղքատաբար 'ի մսուրն Բեթղեհեմի,
նոյն՝ որ յարեաւ որպէս զյաղթող,
այն՝ որ բազմի արդ փառաւորեալ
ընդ աջմէ Հօր, նոյն ինքն բնակէ և
'ի սրբագործեալ նշխարհս: Ո՛վ
հաւատք, զի՞նչ այլ ևս ասել: Աս-
տուած հանդերձեալ է գալ բնակել
'ի սրտի իմում և լինել ինձ 'ի կե-
րակուր. Աստուած ինքն:

Յիսուս իմ, ճշմարտութիւն ան-
սխալ, քանզի դու զայդ ասացեր,

հաւատամ և ես՝ զի կաս հոգւով, մարմնով և աստուածութեամբ 'ի սրբանուէր Նշխարիս: Հաւատամ զի հաղորդութեամբս այսու ընդունիմ զնոյն Ինքն զՅիսուս՝ որ մարմնացաւն, ծնաւ, մեռաւ և յարեաւ. և ընդունիմ զՀայր և զսուրբ Հոգի՝ որք անբաժան են 'ի Յիսուսէ 'ի խորհրդեանս յայսմիկ:

Անձն իմ, զի՞ գործես, զի՞ խորհիս: Փոքր միւս ևս և ահա գայցէ Տէր 'ի քեզ: Ո՛վ Տէր, խոնարհեցուցանեմ զանձն իմ և երկիր պագանեմ քեզ: Ամենասրբուհի կոյս, հրեշտակք արքայութեան, հոգիք՝ որք սիրէք զՏէր, երկիր պագէք ընդ իս՝ իմոյ Յիսուսի, լցէք զթերին իմ. հայցեցէք վասն իմ ջերմաջերմ հաւատս և մեծարանս խորինս, մինչդեռ մատչիմս ընդունել զՅիսուս Քրիստոս:

Զի՞նչ այլ պակասիցէ քեզ, անձն իմ, յայց քեզ ելանելով Աստուծոյ ինքնին: Գայ աւադիկ նա 'ի լուսաւորել զքեզ, 'ի միանալ սիրտ ընդ սրտի ընդ քեզ, և տալ քեզ

գրաւական աներկբայ՝ զփառացն՝ որ հանդերձեալ մնան քեզ յարքայութեան։ Հա՛պա, լայնեա՛ զսիրտ քո, աճեցո՛ 'ի քեզ զյոյսդ․ գիտեա՛ զի այնքան ստասցիս՝ որքան յուսասցիս։ Ամենահնար է Յիսուս քո, և կարող 'ի շնորհել քեզ զամենայն բարութիւնս, և չեն ինչ նմա պէտք՝ բայց բանալոյ զձեռնն։ Յիսուս հայր քո է․ սիրէ զքեզ զսէր անչափ, և կամի առատացուցանել 'ի քեզ ըզշնորհս իւր։ Հաւատարիմ է Յ՟ս քո, որ խոստացաւ լսել աղաչանաց քոց, և պարտական կացոյց զինքն իւրոց բանից․ պարտի քեզ զշնորհս իւր։ Արդ եթէ կամք իցեն քեզ մեծանալոյ՝ մի՛ այլ ինչ գործիցես՝ բայց 'ի խնդիր ելանել շնորհացդ այդոցիկ և ակն ունել ջերմին հաւատով։

Բա՛բէ, զի՞ գործես՝ Յիսուս բարերար, զի՞ գործես։ Մինթէ ո՞չ ճանաչիցես զնա․ ո՞չ յիշես զի ես այն եմ՝ որ բազում անգամ մատնեցի զքեզ, որ բազում անգամ հայհոյեցի զքեզ, և 'ի խաչ եւս հանի։ Ո՛հ, չյիշել ոչ կարես։ Նա զիա՞րդ ու-

րեմն քաջալերիս փակել 'ի սրտի իմում, որ այնքան անգութ և անողորմն գտաւ 'ի վերայ քո։ Ո՛հ, քաջ 'ի միտ առնում արդ, զի կամիս՝ թէ ուր առաւել եղեն յանցանքն՝ անդ յաճախեսցեն և շնորհքըն։ Ո՛վ ողորմութիւն անքաւելի. քանի՛ այլագոյն է այս 'ի խնջոյից՝ զոր հանդերձեաց հայրն՝ որդւոյն անառակի վերադարձելոյ։ Ոչ եզինն պարարակի աստանօր մարմին. այլ քո իսկ մարմին, զոր տաս ինձ 'ի կերակուր. արիւն քո անգին՝ տուեալ յարբուցմն ինձ։ Ի սեղանդ քո աստուածային հրաւիրես զիս՝ որում կայր մնայր սեղանակից լինել դիւաց, և ճաշակել զլեղի վիշապաց և զթոյն իժից անբուժելիս։ Ո՛հ, 'ի բաց գնա յինէն, Տէր. ոչ, չեմ արժանի եթէ մտանես 'ի սիրտ իմ. շատ է թէ և հաշտ ակամբ հայեսցիս միանգամ յիս 'ի մեղաւորս, որ անարժան է և ամբառնալոյ անգամ զաչս 'ի յերկինս։

Այլ աստուածային բարութեան քում չիք սահման և ոչ ասել շատ։

Արդ աւասիկ ճանաչեմ քաջ զմե-
ծութիւն մեղանաց իմոց: Եւ զիա՞րդ
իշխեցի դառնացուցանել զԱծդ ա-
մենաբարի. և զիա՞րդ ոչ մեռայ ես
'ի ցաւոց՝ յառաջնումն անդ յանց-
մանս: Իցի՛ւ թէ չէր ծագեալ ա-
ւուրն՝ յորում մեղայ քեզ. ընդէ՞ր
եղև ինձ գալ յաշխարհ՝ եթէ այս-
պէս անարգելոց էր իմ զքեզ: Ո՛հ,
մի՛ ծագեսցէ ինձ ա՛յլ օր հանդոյն
նմին. մի՛ գտցէ զիս կենդանի ժամն
այն և վայրկեան՝ յորում թէ հան-
դերձեալ իցէ իմ մեղանչել քեզ:

Որպիսի՛ նրբութիւն է սիրոյդ,
սիրելիդ իմ Յիսուս, կամել գալ 'ի
սիրտ իմ՝ սրբովս այս խորհրդով:
Ի՞ւ այլով իւիք յայտնել էր քեզ
զսէրդ որ առ իս, բայց եթէ կա-
լովդ հանապազ առաջի իմ, լինե-
լով ինձ 'ի կերակուր, և միանա-
լով բովանդակ ընդ իս. տալով ինձ
զամենայն, մինչև կարել ինձ ասել
արդարև՝ եթէ իմ է Յիսուս բոլո-
րովիմբ: Եւ արդ քանզի տաս դու
զքեզ ամենևիմբ ինձ, հարկ իսկ է և
ինձ տալ զանձն իմ բովանդակ քեզ:

Այլ ես որդն եմ աղկաղկ, և դու Աստուած անպարագիր մեծվայելչութեամբ: Եւ երբ լիցէ զի տեսից զանձն իմ քո եղեալ գլխովին՝ գործով և ոչ բանիւ լոկով: Հնար է քեզ այս, Տէր. յաւել ինձ զապաւինութիւն յորդորենս արեանդ քո, առ 'ի ձեռս բերել զշնորհս զայս՝ տեսանելոյ զիս՝ մինչև լիցեմ մեռեալ՝ բովանդակ քո եղեալ և մի՛ բնաւ ինձ: Ամենեցուն աղաչանաց լսես դու, Տէր. լո՛ւր և այժմ զպաղատանս ծառայիս քո՝ որ կամի սիրել զքեզ ճշմարտապէս: Կամիմ, այո՛, սիրել զքեզ յամենայն զօրութենէ իմմէ, և կալ հպատակ և անպատճառ՝ յամենայնի զոր և կամիցիս: Կամիմ ծառայել քեզ սերտ սիրով, միայն 'ի հաճոյս քո, միայն առ փափաք խանդակաթ եղելումդ յիմ սէր: Տրխատուր ինձ եղիցի սիրելն իմ զքեզ և հալիլ իսպառ անչէջ բոցով քո սուրբ սիրոյդ: Բարձ յինէն և զազատութի և զյօժարութի, զամենայն զգործս իմ, և զանձն գլխովին, և տուր փոխարէն զշնորհս քո և

զսէր ։ Տէր , սիրեմ զքեզ , խնդրեմ , փափաքեմ , և զքեզ միայն կամիմ · Լեր իմ զօրաւիգն և վահան և տեղի ապաւինի ։ Եւ ես նուիրեմ զանձն իմ կալ մնալ 'ի սէր քո իսպառ , յանձն առեալ զամենայն տառապանս և զվիշտս՝ զորս կամք իցեն քեզ առաքել յիս յամենայն կեանս իմ ։ Քո եմ և եղէց միշտ քո · և ոչ իմիք ցանկամ՝ բայց ընդունել ըզքեզ և միանալ անձկագոյնս ընդ քեզ ։ Հա՛յր յաւիտենական , նուիրեմ քեզ զչարչարանս Որդւոյ քո 'ի փրկութիւն իմ և համօրէն աշխարհի ։ Մի՛ հայիր 'ի մեղս իմ, այլ 'ի սէր Որդւոյ քոյ սիրելւոյ որ առ մեզ , որ և ձգեացն զնա և ետ նմա թողուլ մեզ բովանդակ զիւր զանձն՝ յաստուածային յայսմ խորհըրդեան՝ առ 'ի հաղորդել ընդ հոգւոյ մերոց ։ Վասն այսր սիրոյ , Աստուած իմ, գթա՛ յիս այժմիկ՝ մինչդեռ մատչիմս ընդունել զՅիսուս 'ի սիրտս իմ ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛րպէս, զիա՛րդ այս. դու Թագաւոր փառաց՝ ՚ի տո՛ւն իմ։ Դո՛ւ, որում չեն արժանի խորանք երկնից։ Դո՛ւ, որոյ առաջի չեն բաւական սուրբք՝ հրեշտակք անգամ։ Դո՛ւ յիմում սրտի։ Ի սիրտ՝ որ երբեմն որջ էր անօրէնութեան, և բնակարան աղտեղի՝ անողոքելի ոսոխացդ՝ մեղաց և սատանայի։ Տէր հզօր, արդարև մեծ յողորմութեան. և զի՞նչ այլ այսուհետև ոչ յուսալ ՚ի քէն՝ մինչ զանձինդ ուղղոյն ինձ պարգևեցեր։ Եկիր՝ ունելով ՚ի ձեռին ըզգանձս շնորհաց, տի՛նա բովանդակ իսկ զաղբիւրն շնորհաց բերեր ինձ։ Տո՛ւր ինձ, Տէր, զսէր քո, որում առաւել քան այլում ամենայնի ըղձամ և կարօտիմ. տո՛ւր դարձեալ և շնորհս յարատևութեան ՚ի սուրբ ՚ի սէր քոյին մինչև ցմահ։ Ո՛հ, առաքեա զամենայն ինչ. այլ մի տար ինձ թոյլ մեղանչել քեզ

վերստին և բաժանիլ 'ի քէն ։ Զայս խնդրեմ 'ի քէն վասն անգին արեան քո, վասն աստուածային մահուանդ քո ։ Կամիմ մեռանել զամենայն մահ որ հաճոյ իցէ քեզ՝ քան դառնացուցանել զքեզ ։

Ի ձեռս քո յանձն առնեմ, Տէր, զամենայն ազատութիւն իմ, զյիշողութիւն, զմիտս և զկամս իմ ։ Զոր ինչ և ունիմս՝ 'ի քէն է ամենայն, և քեզ մատուցանեմ զամենայն, և յանձն առնեմ վարչութեան կամաց քոց սրբոց ։ Տուր ինձ զսէր քո սուրբ հանդերձ մտերմութեամբք, և ահա շատ է ինձ ճոխութիւնս այս և չփափաքեմ այլում ։ Արդէն իսկ տեսանեմ զկամս աստուածային առատութեանդ 'ի վերայ իմ. բայց և ընու զիս երկիւղիւ՝ վասն յաւելլոյ յիս պարտս 'ի փոխարէն նմին. միանգամայն և 'ի յուշ գայ ինձ այնքան չարաչար կիրառութիւնք քոց պարգևաց՝ զորս շռայլեցի 'ի թշնամանս քեզ և 'ի կորուստ անձին իմոյ ։ Զայն զոր երբեմն գործեցի՝ կարեմ ապաքէն

գործել և յայսմ հետէ, նաև չարագոյն ես, եթէ ոչ դու քոյին խընամօքդ օժանդակեալ՝ հասցես ինձ 'ի թիկունս։ Եւ արդ, Տէր իմ, կալ զիս անսասան. եղիցին աչք քո 'ի վերայ իմ, և ձեռն քո հովանի դըլխոյ իմոյ, զի մի՛ անկայց վերստին յայս օրինակ ունակութիւնս գարշելիս։

Եւ զլանայցես ինձ ինչ՝ որ զանձնդ իսկ ողջոյն ետուր։ Ոչ ուրեք մտանես դու առանց լցուցանելոյ զայն մեծամեծ բարեօք։ Մտեր 'ի տուն Պետրոսի՝ և բժշկեցեր զկինն ջերմացեալ. 'ի տուն Ղազարու՝ և յարութիւն պարգևեցեր նմա. 'ի տուն Մատթէի՝ և արարեր զնա առաքեալ։ Կատարեա՛ և արդ զկամս ողորմութեանդ, որով մտեր 'ի սիրտ իմ, և շնորհեա՛ ինձ զամենայն՝ որոց պէտս ունիցիմ։ Ոչ խնդրեմ 'ի քէն շնորհս ժամանակեայս, զառողջութիւն, զյաջողութիւնս և զմեծութիւնս. այլ 'ի հաճոյս կամաց քոց իսպառ յանձն առնեմ զանձն իմ. և հայցեմ միայն շնորհս հոգևորս,

որովք արժան էիցէ ստանալ զկեանս յաւիտենականս ։ Խորտակեա՛, Տէր, զկապանս չարաչար ունակութեացս · փարատեա՛ բժիշկդ աստուածային՝ զմահացու տենդ ունայնութեանց, զցանկութիւն և զհպարտութիւն · և զամօթալի մերկութիւնս յամենայն առաքինութեանց՝ որ անարժան կացուցանէ զիս սիրոյ քում, ծածկեա՛ զայն՝ սուրբդ սրբոց ։ Շնորհեա ինձ, Տէր, լոյս պայծառ, ճանաչել զունայնութիւն կենցաղոյս, և զյարգ սիրելոյ զքեզ · տո՛ւր ինձ ցաւ դառնակսկիծ փոխանակ վըշտացն՝ որովք զքեզ դառնացուցի, և կամս հաստատունս՝ չմեղանչելոյ քեզ յայսմ հետէ և առ յապա ։ Զգեցո՛ ինձ, Տէր, աղաչեմ զքեզ, զգութ սիրոյ՝ որ սեփական նշանակ է աշակերտաց քոց · զխոնարհութիւն, առանց որոյ չեն քեզ հաճոյ և եռանդագին աղօթք · զմաքրութիւն, առանց որոյ երդուար չհանգչել երբէք հոգւովդ ՚ի սիրտս մարդկան ։ Նա մանաւանդ փոփոխեա՛ զսիրտ իմ, թափեա՛ ՚ի նմա-

նէ զամենայն տենչ երկրաւոր, և տուր ինձ սիրտ ամենևիմբ ըստ հաճութեան կամաց քոց, որ ոչ խընդրիցէ և ոչ փափագիցէ՝ բայց միայն կամաց քոց և սիրոյդ. «Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած»: Այլ ՚ի վեր քան զամենայն տուր ինձ սիրել զքեզ, և յարատևել ՚ի նոյն ՚ի սէր սուրբ՝ մինչև ցմահ իմ: Եւ յահաւոր յայնմ վայրկենի՝ Նորոգեա, Տէր, յոգւոջ իմում զայցելութիւն քո՝ խորհրդոյն սրբով, որպէս զի զօրացեալ աստուածային մարմնովդ՝ կարող եղէց քաջապէս ՚ի դիմի հարկանել ամենայն ոսոխաց փըրկութեան հոգւոյս, և յաղթող լինելով յարձակմանց նոցին՝ թռանել ՚ի փառս քո և կալ ՚ի նմին անմեկնելի: Չեմ արժանի շնորհացս այսոցիկ, անարժան իսկ ելով միոյ անգամ աչացդ յիս նայելոյ, այլ դու արժանի ես, Յիսուս, որ խոստացար լսել մեզ՝ քանիցս և խնդրեսցուք յանուն քո: Դու ստեղծեր զիս, դու փրկեցեր, դու կերակրեցեր մարմնով քով. և արդ սուրբ արա

զիս և մի՛ թողուր կորնչիլ իսպառ:

Ի քեզ ապաստան արարի զամենայն զյոյս իմ, զի որ յուսայ 'ի քեզ՝ մի՛ երբէք յամօթ լիցի. « Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան»: Մի՛ ամփոփեր, Տէր, յիս միայն զառուրս օրհնութեանց քոց. այլ բարեհաճեցիր օրհնել և զայնոսիկ՝ որք յանձն եղեն ինձ յաղօթս. զծնողս իմ և զազգականս, զբարեկամս, և զայնոսիկ մանաւանդ՝ որոց եղէ առիթ մեղաց և գայթակղութեան: Օրհնեա՛ զեկեղեցի քո և բարձրացո՛ զնա՝ նկուն արարեալ զթշնամիս նորա, ընդարձակեա՛ զտէրութիւն նորա, և լցո՛ գթով, գիտութեամբ և նախանձու՝ զպաշտօնեայս նորա: Օրհնեա՛ զամենայն զկարօտեալս, և տո՛ւր ողորմութեամբ քով՝ համբերութիւն աղքատաց, մխիթարութիւն վշտացելոց, զօրութիւն փորձանաւորաց, յաղթութիւն օրհասականաց, զեղջ մեղաւորաց, եռանդն ապաշխարողաց, յարատեւութիւն արդարոց, և շնորհս դարձի ամենեցուն՝ որք

ոչն ճանաչէն զքեզ արդ և հայ-
հոյենն: Յիշեա՛, յիշեա՛ և զտառա-
պեալ հոգիս քաւարանին, որք մե-
կուսի առ՚ի քէն՝ որ եսդ միայն և
գերագոյն վայելք նոցին, տագնա-
պին ՚ի դառնագառն բանդին չարա-
լլուկ կտտանօք. և յարեաց աղա-
չեմ՝ ՚ի նպաստ նոցին՝ զարդիւնս
չարչարանաց քոց և մահուան:

Ամենասրբուհի կոյս Մարիամ,
հրեշտակդ իմ պահապան, ամե-
նայն սուրբք երկնից, բարեխօս լե-
րուք և հայեցէք զՏէր՝ լսել զա-
ղերս տենչանացս, և լսել ձայնի
խնդրուածաց իմոց:

ԻՂՁԲ

Կամիմ, Տէր, մեռանել՝ քան վշ-
տացուցանել զքեզ վերստին:

Մի՛ թողուր, Տէր, զի յետ այս-
քան շնորհաց՝ վերստին մեղայց ընդ-
դէմ քո:

Տուր ինձ, Տէր, ճանաչել զամե-
նասուրբ կամս քո:

ՅՈՒՇՔ

Ստուերաց լինի բերեն զնմանութիւն կեանք մարդոյ, որ խոյս տան, անրջոց՝ որ անհետանան, և կայծականց՝ որ արագ արագ շիջանին։

Առանց մեծամեծ վաստակոց՝ անհնար է ստանալ զմեծամեծ վարձս երկնից։

Որ խնդրէ ուղղութեամբ սրտի զայն՝ զոր Աստուած կամի, նա ունի զամենայն զոր և կամին։

Թ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ Աստուած ծածկեալ և քօղարկեալ առ սէր իմ. երկիր պագանեմ քեզ և հիանամ ընդ մեծահրաշ սքանչելիս քումդ իմաստութեան, կարողութեան և բարութեան, ՚ի խնամարկել յարարածս յայս եղկելի։ Հաւատամ աներկբայ՝ զի ընդունելով զնշխարն զայն սրբագործեալ, ընկալայց զիմ զՅիսուս, զԱստուածն այն՝ որ յառաւելութենէ սիրոյն եղև մարդ, և յանձն իւր եբարձ զկարիս իմ. մեռաւ ՚ի վերայ խաչին՝ առ ՚ի ջնջել զմեղս իմ իւրով արեամբ. համբարձաւ յերկինս՝ առ ՚ի պատրաստել անդանօր աթոռ փառաց և վան

իմ։ Հաւատամ այսմ, և ամենայնի՝ զոր միանգամայն ուսուցանէ սուրբ եկեղեցի վասն քո․ քանզի դու ինքն յայտնեցեր նմա, Աստուած իմ, ճշմարտութիւն անսխալ։ Խնդամ ընդ բաղդ իմ գեղեցիկ՝ մասնակից գոլոյ այդպիսեաց գերագոյն խորհրդոց․ վասն որոյ և երջանիկ համարէի տալ և զկեանս իմ, որպէս արարին բիւրք բիւրուց մարտիրոսաց․ որոց ակն ունիմ և ես զօրութեամբ սրբոյ հաղորդութեանս այսորիկ՝ մասնակից լինել յերկինս ։

Ընկալ քեզ 'ի հաճոյս, ո՛վ Տէր, զընծայս՝ զոր արարածս փոքրոգի մատուցանէ քեզ, անձամբ զանձն նուիրելով։ Դու ետուր ինձ զքեզ բովանդակ յայսմ հաղորդութեան սիրոյ․ արժան է և իրաւ և ինձ մատուցանել զանձն իմ քեզ բովանդակ ։ Այո, Աստուած իմ և Տէր իմ ամենազօր, նուիրեմ քեզ այսօր զամենայն զխորհուրդս իմ, զամենայն զկամս և զամենայն զկեանս իմ, զիս ինքն բոլորովին։ Միացի դուզնաքեայ զոհս իմ ընդ անբաւազօրն

պատարագել՝ զոր դու ինքնին մատուցեր 'ի վերայ խաչին, և զոր մատուցանես զօրհանապազ պատարագելով 'ի վերայ սեղանոցս: Արդ ընկալ զայս վասն արդեանց չարչարանաց քոց, և տուր ինձ շնորհս կրկնելոյ զայս՝ զամենայն աւուրս կենաց իմոց, և մեռանել՝ համօրէն անձինս պատարագելով 'ի սէր քո: Փափագեմ, Տէր իմ, շնորհաց՝ պարգևելոց առ բազմութիւն վկայիցն՝ մեռանելոյ վասն սիրոյ քո. այլ՝ եթէ առաւել է քան զարժանաւորութիւն իմ այսքան պարգև, գոնեա շնորհեա ինձ՝ նուիրել քեզ զկեանս իմ ամենայն հաճոյիւք իւրովք, և ընդունել յօժարութեամբ զմահ՝ զոր և հաճեսցիս առաքել ինձ:

Ո՜վ քո բարութեանդ, սիրելիդ Յիսուս. ծածկես զանձն ընդ սըրբազան նշխարաւս զի մտցես 'ի ներքս յիս և առասցիս զսիրտս իմ: Արդ բորբոքեա և զիս անձկանօք ընդունել զքեզ, և բարեհաճեցիր մնալ ընդ իս միացեալ: Ե՛կ, ո՛վ տենչա-

լիդ իմ, եւ 'ի հոգիս՝ որ ցանկայ քեզ, և լեր Աստուած սրտի իմոյ և կամաց իմոց: Հրաժարեմ յամենայնէ առ սէր քո, ո՛վ փրկիչ սիրելի, 'ի բերկրութեանց, 'ի հաճոյից և 'ի սեփական կամաց. Թողում զամենայն վասն քո, ո՛վ մեծդ Աստուած սիրոյ: Հա՛պա Թագաւորեա 'ի սրտի իմում և յաղթանակեա 'ի վերայ իմ: Ջնջեա և սրբեա յիս զամենայն որ ինչ իմ իցէ, և ոչ հաճոյ առաջի աչաց քոց:

Փափագեալ տարփամ գտանել զքեզ 'ի գիրկս, ո՛վ գերագոյնդ իմ բարի: Քանի՜ մեծ հրճուանք են այս սրտիս՝ զի արժանի համարիս գալ և բնակիլ 'ի հոգւոջ իմում: Ո՛վ ցնծութիւն, ո՛վ խնդութիւն անթարգմանելի. ո՛վ մխիթարութիւն մեծ քան զամենայն մխիթարութիւնս աշխարհի: . . . Արդ հա՛պա մի՛ ևս յամենար, ո՛վ ուրախութիւն սրտի իմոյ, որ հաւաչէ առ քեզ. եկ ճոխացուցանել շնորհօք քովք զհոգիս զայս անանկ, որ միայն քեզ անձկանօք: Ե՛կ, ո՛վ հաց հրեշտա-

կաց, կազդուրեա զիս. ով մանանայ երկնային՝ զօրացո զիս. ով հայր բարութեանց, լուսաւորեա զիս. ով փեսայ խանդաղակաթ՝ սփոփեա զիս. ով Աստուած սիրոյ, վառեա զիս բոլորովին սիրով սրբով:

Ընդարձակեա՛ց հոգի իմ, զի Յիսուս քո կարող է տալ քեզ զամենայն բարի, նա սիրեաց զքեզ յոյժ: Յուսա՛ և ակն կալ մեծամեծաց 'ի Տեառնէդ՝ որ շարժեալ 'ի սիրոյ և ինքնին իսկ սէր բովանդակ՝ գայ առ քեզ: Այո, սիրելիդ իմ Յիսուս, յոյս իմ, վստահ եմ 'ի բարութիւն քո, զի 'ի պարգևելդ ինձ զքեզ յայսմ առաւօտու, արծարծեսցես 'ի տառապեալ հոգւոյս զչքնաղ բոց մաքուր սիրոյդ, և ազդեսցես յիս իղձ կենդանի հաճոյ լինելոյ քեզ. քանզի յայսմ հետէ զայն միայն կամիմ զոր դուդ կամիս: Թէպէտ և անզօր իցեմ և հիւանդ, թէպէտ և վէրք սրտիս բազումք և հնացեալք, սակայն և այնպէս յուսամ բուժիլ յամենայնէ: Եթէ անուն քո այնքան հզօր էր 'ի լեզուս առա-

քերոց առ 'ի հալածել զդևս, խաղաղել զմըրրիկս, և զմեռեալս յարուցանել 'ի նոր կեանս, առ ի՞նչ ոչ բաւեսցէ մարմին քո իսկական՝ 'ի վերայ լեզուի իմոյ: Այո՛, հաւատամ և յուսամ՝ զի նա նուաճեսցէ զկիրսն բռնացեալս յոգւոջ իմում, նա ցածուսցէ զանկարգ ալիս ախորժանաց՝ որ խռովենն զիս, և բորբոքեսցէ յիս զսէր քո սուրբ:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Որպէս զի մեծ է բարութիւն քո, ո՛վ գորովագութ Յիսուս, առ իմ նման արարածս եղկելի: Ցանկայի ունել սիրտս և լեզուս իբրև զտարերս օդոյ և զաւազ ծովու և զաստեղս երկնից բազմութեամբ, և զամենայն վարել 'ի սէր քո, յօրհնութիւն և 'ի բարեբանութիւն, ո՛վ հայր ողորմութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց: Բայց զի զայդ ոչ կարեմ, ապա թոյլ արա, զի անխօս շրթամբք իւրեանց

օրհնեսցեն զքեզ և փառաւորես-
ցեն ընդ իմ՝ ամենայն արարածք տիե-
զերաց, զորս դու հպատակս կար-
գեցեր կամաց մերոց։ Արդ գովե-
ցէք փոխանակ իմ՝ զիմ և զձեր
զհասարակացն Աստուած. դուք,
ով երկինք, ձգուածք ամենաբաւա-
կանութեան նորին. դուք աստեղք՝
լուսաւորեալք ՚ի նշուլից նորա, և
դուք մոլորականքդ անուանեալք և
իմաստութեամբ նորին ուղղեալք.
և դուք յեղանակք տարւոյ՝ կա-
նոնեալք ՚ի մարդասէր խնամոց նո-
րին։ Օրհնեա՛ զնա ծով դու, որ
պատկեր ես արձակածաւալ ան-
բաւութեան նորա։ Եւ դուք լե-
րինք՝ գովեցէք զնա, զորոյ յանդի-
ման աւնէք զյաւիտենականու-
թիւն, և բերէք զնմանութիւն հաս-
տատուն պնդութեանն՝ զոր ար-
ժան էր հոգւոյ իմոյ ստանալ յա-
ռաջադրութիւնս իւր։ Օրհնեցէք
զնա հովիք, որք բերէք զօրինակ
սրբոց ներշնչմանցն՝ որով բազում
անգամ նա արար ինձ այց։ Օրհնե-
ցէք զնա անձրևք և ցօղք, որ նմա-

նութիւն էք շնորհացն՝ զորս առա-
տապէս տեղաց 'ի վերայ իմ։ Օրհնե-
ցէք զնա եղեամն և կարկուտ, որք
յանդիմանէք զպղտութիւն սրտի
իմոյ 'ի սպասու նորին։ Օրհնեցէք
զնա հուր և բոց, որք օրինակէք
զեռանդն՝ զոր ցարդ զգացի ոչ, և
զոր արդ բաղձամս յոյժ ստանալ։
Օրհնեցէք զնա ծաղկունք մարգաց,
որք վաղանցիկ թօթափմամբդ հրա-
հանգէք զիս՝ 'ի բաց քեցել զսիրտ
իմ 'ի մնոտի բարեաց աշխարհիս։
Օրհնեցէք զնա և դուք ամենայն
դալարիք դաշտաց, որք օրինակաւ
ձերով կրթէք զիս զօր ամենայն ա-
ճել յառաքինութիւնս։ Ո՛ տայր
ինձ հոգիացուցանել և սրբել զա-
մենայն արարածս տիեզերաց յօրհ-
նութիւն քո՝ ճանաչմամբ, հաստա-
տութեամբ և արժանապէս։ Այլ
քանզի ոչ է ինձ առ այդ հնար՝ ըն-
կալ Տէր, աղաչեմ զքեզ, փոխանակ
անբաւականութեանս իմոյ՝ զօրհ-
նութիւնս և զգոհութիւնս զոր մա-
տուցին, մատուցանեն և մատուցա-
ցեն քեզ անդադար հոգիք երկնի-

ղածաց յայսմ աշխարհի , սուրբք և սիրեցեալք յարքայութեան անդ :

Ո՛հ Տէր իմ, ընդէ՞ր եղև ինձ կորուսանել զայնչափ ամսն՝ յորս ոչ սիրեցի զքեզ. ո՛վ ամք թշուառութեան իմոյ, նզովեմ զձեզ. սքանչանամ ընդ քեզ՝ ո՛վ անչափ համբերութիւն Աստուծոյ իմոյ , զի կացեր մնացեր ինձ զայնքան ամսն, ինձ ապերախտիս առ սէր քո : Տէր , ո՛չ ևս այլ կամիմ հակառակ կալ ազնիւ սրտիդ : Պարտ և արժան է ինձ նուիրել քեզ գոնեայ զժամանակն՝ թէ շատ և թէ սակաւ՝ որ մնայցէ ինձ 'ի կենցաղումս : Յուսամ, Յիսուս, օգնութեամբ քով, քեզ լինել ամենևին: Դու որ այնքան օժանդակեցերդ ինձ մինչդեռ հեռացեալ փախչէի և առ ոչ ինչ համարէի զսէր քո սուրբ , ո՛րքան ևս առաւել լիցիս ձեռնտու 'ի դառնալս իմում և 'ի գիրկս արկանել քեզ : Տուր ինձ ապա շնորհս սիրելոյ զքեզ , Աստուած իմ , որ արժանիդ ես անբաւ սիրոյ : Սիրեմ զքեզ 'ի բոլոր սրտէ իմմէ , սիրեմ առա-

ւել քան զամենայն, առաւել քան զիս, և առաւել քան զկեանս իմ։ Ցաւէ ինձ յոյժ զի դառնացուցի զքեզ՝ բարութիւն անսահման, նե-րեա ինձ. և 'ի ներելդ տուր և ինձ շնորհս սիրելոյ զքեզ յոյժ, մինչև 'ի վախճան կենացս, և յամենայն 'ի հանդերձեալ յաւիտենականութեան։ Ցոյց ինձ բաւականութեամբ քով՝ ո՛վ Աստուած ամենակալ, զըս-քանչելիս զայս յաշխարհի, թէ անձն ապաշնորհ ինձ հանդունակ՝ դառնայ և մատնէ 'ի թիւ մեծափափագ սիրողացն քոց։ Արա՛ զայս վասն քոց արդեանց, ո՛վ Յիսուս։ Զայդ փափագիմ, և զայս գնեմ 'ի սրտի գործել յամենայն 'ի կեանս իմ։ Դու որ ազդեսդ յիս իղձս այսպիսիս՝ շնորհեա և զօրութիւն կատարման։ Մի՛ տար, ո՛վ Տէր իմ սիրելի, երևել յաշխարհի այսպիսում նորամուտ ամբարշտութեան և քրիս-տոնէի ապերախտութեան, որպէս թէ ինձ՝ յետ այնքան շնորհագիւտ առ'ի քէն լինելոյ, մանաւանդ յայսմ առաւօտուս, և յետ այնքանեաց

պարգևաց՝ դարձեալ Թողուլ լքա-
նել զքեզ, և քո 'ի բաց մեկնիլ 'ի
հոգւոյ աստի իմմէ: Այլ հնար է
հանդիպել ինձ այսմ բազում ան-
գամ. և որպէս հալածեցի զքեզ յա-
ռաջին ժամանակին, մարթ է հա-
լածել և առ յապայն: Արդ տուր
ինձ, ով սիրելի փրկիչ իմ, մեռա-
նել՝ քան թէ զկորուստ զայդ մեծ
յանձն առնուլ: Ահա փարիմ զքև,
ով քաղցրագութ Յիսուս, գգուեմ
զքեզ յաղքատին սրտիս. տուր
ինձ սիրել զքեզ հանապազ, և միշտ
սիրիլ 'ի քէն: Այո՛, փրկիչ ամե-
նասիրելի, ես սիրեցից զքեզ միշտ
և դու սիրեսցես զիս հանապազ:
Ակն ունիմ զի սիրեսցուք զմի-
մեանս, ով Աստուած հոգւոյ իմոյ՝
յաւիտենականութեամբ չափ:

ԻՂՁՔ

Տէր, տուր ինձ զօրութիւն կա-
տարել զկամս քո սուրբ:

Գերի քո եմ ես, ով Տէր բարե-
րար, և ոչ ևս զդէմ կալայց սրտիդ
գորովոյ:

Շնորհեա ինձ, Տէր, լինել ողջակէզ կատարեալ՝ սիրոյ քո սրբոյ ։

ՅՈՒՇՔ

Կեանք մարդոյ անցք են յարգանդէ 'ի գերեզման ։

Ոչ ոք պսակեսցի՝ եթէ ոչ մարտընչիցի ըստ օրինի ։

Այնչափ ինչ շահեսցիս հոգւով՝ որչափ բուռն արասցես ախորժակացդ թիւրելոց ։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Համարձակեցի՞ս ուրեմն հոգիդ իմ՝ ընդունել 'ի սիրտ քո զԱստուածն ամենայն մաքրութեանց և սրբութեանց: Դո՞ւ անձն իմ՝ որ խորխորատ ես ախտից, ապաշնորհութեան և մեղաց: Ո՞չ յիշեցես քանիցս ապերախտ գտար առ նա. քանի՛ դառնագոյն և ցաւագին եղեր Յիսուսի՝ քան զլեառնն Գողգոթա: Այնքան նուագս Յիսուս 'ի ձեռաց քոց խաչեցաւ՝ որքան դառնացուցեր զնա չարաչար ապիրատութեամբդ:

Սիրելի Յիսուս, ես մեղօք իմովք պսակեցի զքեզ 'ի փուշ. ես բևեռեցի զքեզ 'ի վերայ խաչին, ես ար-

բուցի քեզ զլեղին, եւ բացի զկողս
քո, եւ սպանի զքեզ։ Ո՛չ, ո՛չ ես
եմ արժանի կենաց, թող թէ զքեզ
ընդունել. 'ի դէպ է երկրի կլանել
զիս, կայծականց երկնից՝ տեղալ 'ի
վերայ իմ, և ամենայն արարածոց՝
հակառակել ինձ։ Այլ ո՛վ Տէր, որ-
պէ՛ս զի բարի ես դու։ Զի թէպէտ
ես բազում անգամ հեղի զարիւն
քո, անարգեցի զանուն քո և զտէ-
րութիւն, այլ դու ոչ միայն նե-
րես ինձ, այլ և փութաս կանխես
քան զիս՝ խնդրել զհաշտութիւն.
և առ մի ևեթ զեղջ, առ մի ևեթ
արտասուս սրտիս, թողուս զամե-
նայն մեղս իմ, ընդունիս զիս 'ի շը-
նորհս երեսաց քոց, և առնես զիս
քեզ դարձեալ որդի և բարեկամ։
Այս է լինել Աստուած։ Ո՜հ, ցան-
կայի մեռանել ցաւօք՝ փոխանակ
զի վշտացուցի զԱստուածդ բարու-
թեանց։ Ցաւէ՛ ինձ բարութիւնդ
անբաւելի, զի դառնացուցի զքեզ։
Թող ինձ Տէր իմ, զի ոչ հոգամ ինչ
զինէն, այլ միայն զի դու Աստուած
իմ պատուեսցիս և փառաւորես-

ցիս լիս, և մի՛ ևս վշտացուցից ես զքեզ։ Սրբեա՛ Յիսուս զհոգիս իմ՝ արեամբ քով, և արա արժանի լինել օթևան քում մեծութեան։

Սրբուհի Մարիամ, ընկալ վասն իմ զշնորհս ճշմարիտ ապաշխարութեան։

Յիսուս իմ և յոյս իմ, ապաւինեալ ՚ի խոստմունս քո, ՚ի զօրութիւն արեանն՝ զոր հեղեր վասն իմ, յուսամ զի յընդունել իմ ըզքեզ՝ մաքրեսցես զհոգիս իմ և վառեսցես սիրով երկնայնով. այնպէս զի կեցից և մեռայց՝ զքեզ միայն սիրելով անբա՛ւդ բարութիւն։ Այո՛, Աստուած սիրոյ, Աստուած ամենայն յուսոյ իմոյ, սրբիչ հոգւոյ՝ սրբեա՛ զիս։

Ահա, Տէր Յիսուս, ահա եկն ժամն՝ յորում հանդերձեալ ես լինել ընդ իշխանութեամբ անձին մեղաւորի. ժուժեա՛, Տէր իմ, և համբեր վասն անբաւ ողորմութեան քո։ Տէր, եթէ ես չեմ արժանի ընդունել և սիրել զքեզ, այլ դու արժանի ես ընդունելութեան իմոյ

և սիրոյ։ Բազմեցո՛ զիս յերկնաւոր կոչունս քո․ արա արժանի անչափ բարութեանցդ․ պարգևեա՛ ինձ որ ինչ պակասէ յինէն, և արա՛ զիս քո բոլորովին։

Ահաւասիկ, հոգի իմ, վայրկեանն այն և ժամն երջանիկ, յորում ընկալցիս զսիրելին քո զՅիսուս։ Ահա Թագաւորն Թագաւորաց, ահա տէրն տերանց․ ահա հայրն, ահա բարեկամն, ահա փեսայն․ ահա ցնծութիւնն արքայութեան, ահա արքայութիւնն երկնից․ ահա նոյն ինքն Աստուած, ահա միասնական ամենասուրբ Երրորդութիւնն՝ 'ի խորհրդեանս սրբում․ «Ահա փեսայ գայ, ելէք ընդ առաջ նորա»։ Այլ զիա՞րդ կաս դու սառուցեալ հոգիդ իմ, և ոչ վառեալ բորբոքիցիս փափաքանօք ճաշակելոյ զմարմինն զայն սուրբ։ Ո՛հ, մինչդեռ յորդութիւն աստուածային գթութեանց բորբոքի զքեզ սիրով, զիա՞րդ կաս մնաս դու սառնակարոյց։ Եթէ մի նուագ և եթ հանդերձեալ էիր հաղորդել, քանի՛ եռանդեամբ արդեօք

հաղորդէիր։ Եւ զի այժմ անբաւ բարութիւնն այն՝ մերձ կայ առ 'ի կատարումն խնդրուածոյ քոյ, զի՞րդ կաս դու այդպէս գաղջ և ցրուամիտ ընդունել զայդքան զմեծ Աստուած։ Հոգիք խանդակաթք բորբոքէին փափաքանօք, և ընթանային որպէս զեղջերուս ծարաւեալս՝ առ աղբիւրն այն աստուածային։ Հա՛պա, հոգի իմ, զարթիր, և վառեա 'ի քեզ զեռանդն ջերմաջերմ ընդունելոյ զՅիսուս։ Հառաչեա՛ առ բարութիւնն այն գերագոյն, փափաքեա՛ց նմա, կոչեա՛ զնա արտասուօք, հառաչմամբ և սրտիւ վառելով 'ի սէր սուրբ։

Ե՛կ, ո՛վ կերակուրդ աստուածային՝ սնուցանել զհոգի իմ՝ որ փափաքէն քեզ. ե՛կ հնոց ողորմութեանց՝ 'ի բորբոքել զիս. ե՛կ հուր սիրոյ՝ 'ի բոցակիզել զիս. ե՛կ հովիւդ երկնային՝ առաջնորդել ինձ. ե՛կ հայր իմ, փեսայդ իմ, գանձ իմ, կեանք իմ, խաղաղութիւն իմ։ Ե՛կ միակ վախճան կենաց իմոց. ե՛կ լոյսդ հոգւոց, ե՛կ զովացումն սըր-

տից, մխիթարիչ վշտացելոց. Ե՛կ ակնկալութիւն ամենայն ազգաց, ցանկացեալդ 'ի նահապետաց, փափաքեալդ 'ի յաւիտենից ժամանակաց, ուրախութիւն հրեշտակաց, ցնծութիւն երկնից, երանութիւն սրբոց: Ե՛կ արքայութիւն իմ, զի քեզ փափաքեմ, քեզ տածամ. Ե՛կ որ հարերդ զիս սիրով, Ե՛կ և մի՛ յամենար. զի ահա նուաղիմ, ահա ոչ ևս հանդուրժեմ կեալ առանց քո: Ահա աղաչեմ և ժտիմ 'ի քեն, Ե՛կ, Ե՛կ Յիսուս:

Ամենասուրբ Կոյս, ահա մերձենամ ընդունել զՅիսուս քո և զիմ: Որպէս 'ի ձեռանէ քումմէ ընկալայց զնա. տուր ցիս զնա զոր օրինակ ետուրդ հովուացն և մոգուցն և Սիմէոնի. պատրաստեա՛ զիս ընդունել զնա սիրով. տուր ինձ զնա փութով. և աղաչեա՛ զնա զի լցէ զիս աննման շնորհօք, քո՛ իսկ 'ի միասին օրհնելով զիս:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ահա լցաւ ցանկութիւն իմ, ահա յագեցան իղձք իմ· արդ եկն Աստուած իմ այց առնել ինձ· արդ կայ Յիսուս 'ի յիս· ես Յիսուսի եմ բոլորովին, և Յիսուս իմ է ամենևին: Ո՜վ բարութիւն անբաւ: Աստուած 'ի բերանի, 'ի ծոցի, 'ի սրտի անպիտան և անարժան արարածոյս: Հոգի իմ, զի՞նչ խորհիցիս: Ահա ստացար զոր այնքան խնդրէիրդ· ահա բոլոր միացեալ ընդ Յիսուսի, և գրեթէ թէ փոխակերպեցար 'ի Յիսուս· դու և Յիսուս հարթ հաւասար եղեալ: Ո՜վ սքանչելի միաւորութեանս:

Հոգի իմ, կեցո՛ւ այդպէս սերտիւ միացեալ ընդ Յիսուսի, և չասիցես ինչ նմա, և ո՞չ խօսիցիս ընդ Աստուծոյն քո՝ որ կայ 'ի ներքս 'ի քեզ, 'ի սրտի քում: Հա՛պա, ամփոփեա՛ զմիտս քո 'ի քեզ, միացո՛ զբաղձանս հոգւոյդ· գրկեա՛ սիրով

'ի սրտիդ զՅիսուսն քո, պաշտեմ զնա, և ասեմ. Բարեաւ լիցի գալուստդ՝ սիրելիդ իմ Յիսուս՝ 'ի տուն հոգւոյս իմոյ: Ո՛հ, քանի՛ ժամանակք են յորմէհետէ մնայի ժամուս այսմիկ: Այլ ո՛հ, զի՛արդ ցաւէ ինձ տեսանել զքեզ յայսպիսի սիրտ ապառում և սառուցեալ քան ըզգոմն՝ յորում ծնար, ցաւաբեր քան զԳողգոթա. զի ոչ մի՝ այլ հարիւր և հազար նուագ՝ նորոգեցի զչարչարանս և զմահ քո՝ մեղօքս իմովք: Տէր, զի՞նչ գտանես 'ի յիս, բաց 'ի մեղաց և 'ի յօժարութենէ առ արարածս անցաւորս. և ո՞րպէս, ով Տէր, եկիր բնակել յիս: Կամիմ և ես ասել քեզ ընդ սրբոյն Պետրոսի. «Ի բաց գնա յինէն՝ Տէր, զի այր մեղաւոր եմ ես». Ել յինէն աստուածայինդ մեծվայելչութիւն, Ել 'ի հոգւոյ աստի մեղաւորէ՝ յանարժանէ 'ի բնակութիւն Աստուծոյ. Երթ հանգչել 'ի հոգիսն սուրբս և եռանդունս, որք վառ 'ի վառ սիրով ընդունին զքեզ: Այլ ոչ, ով բարութիւն սիրելի, ո՛չ, մի՛ լիցի քեզ

երբեք մեկնիլ յինէն. զի թէ գամ մի հեռանաս յինէն՝ կորնչիմ ես։ Ո՛վ յոյս իմ Աստուած, ոչ թողից զքեզ. բարութիւնդ իմ ցանկալի, ընդգրկեալ զքեզ 'ի սրտի իմում, և փարեալ զքև՝ կամիմ կեալ և մեռանել։ Ո՛վ սրբուհի Մարիամ, ով հրեշտակք, ով սուրբ հոգիք որք սիրէք զԱստուած, տուք ինձ 'ի սիրոյ ձերմէ, զի կացից արժանապէս ընդ Յիսուսի։

Երրորդութիւն երկրպագելի, գոհանամ զքէն բոլորով սրտիւ, զի ետուր ինձ զՅիսուս։ Ո՛վ Աստուած իմ, զի՞նչ հատուցից քեզ փոխանակ այսպիսեաց բարեաց։ Ո՞րպէս բաւական եղէց գոհանալ զքէն։ Ամենասուրբ Երրորդութիւն, գոհանամ զքէն 'ի ձեռն Յիսուսի, և Յիսուս ընդ իմ գոհանայ զքէն։ Արդ այսպէս կշտասպինդ լինի սիրտ իմ, և հաճի մեծվայելչութիւն քո այսպիսեօք գոհութեամբք։ Ցանկալի՛դ իմ սիրեցեալ, քեզ միայն տացին գոհութիւնք, փառք և պատիւ յամենայն ազգաց մինչև յաւիտեանս. Եղիցի։

Սիրեցեալդ իմ Յիսուս, արժան է և իրաւ, զի տաց քեզ զանձն իմ բովանդակ. յորմէ հետէ եղերդ իմ բոլորովին, կամիմ և ես քո լինել բոլորովին: Քեզ լիցին աչք իմ սըր-բեալք առ 'ի քէն. քեզ լիցին ա-կանջք իմ քո սրբեալք. քեզ լիցին ախորժակք իմ քո սրբեալք: Դու սրբեցեր զամենայն զգայարանս իմ, քեզ լիցի ամենայն, և զուարձա-ցին յօրէնս քո միայն: Դու սրբե-ցեր զուշ մտաց իմոց՝ քեզ լիցի, և զքեզ միշտ յիշեսցէ: Դու սրբեցեր զխորհուրդս իմ, քեզ լիցին և ըզ-քէն միշտ խոկասցին: Դու սրբե-ցեր զկամս իմ, քեզ լիցի և զքեզ միայն սիրեսցէ: Քեզ մատուցա-նեմ յամենայն սրտէ պատարագ մշտնջենաւոր զհոգիս իմ և զմար-մին, զմիտս և զզօրութիւնս իմ, զոր միանգամ ունիմս և կարեմ: Կի-զեա՛, ծախեա՛, ընջեա՛ յիս, ո՛վ հուր աստուածային, ո՛վ սէր ամենա-բաւ, զամենայն՝ որ ոչն իցէ քոյ:

ԻՂՁՔ

Տուր ինձ, ով Տէր, զսէրն՝ զոր խնդրես յինէն։

Մի տար ինձ, ով Տէր, զանց առնել և ոչ զմիով իւիք որ քեզ հաճոյ իցէ։

Ինձ միայն հաճութիւն իցէ առնել զկամս քո։

ՅՈՒՇՔ

Ամենայն ոք զայն ժողովեսցէ 'ի մահուան իւրում, զոր և սերմանեացն 'ի կեանս իւր։

Ոչ երբէք լքեալ եղև ճշմարիտ պաշտօնատար Մարիամու։

Սուրբք երկիւղիւ խօսին զԱստուծոյ, արհամարհանօք՝ զանձանց, և գթութեամբ՝ զայլոց։

ԺԱ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ գառն անարատ, որ արածես 'ի մէջ սպիտակ շուշանաց, և ուրախ լինիս բնակելով 'ի հոգիս մաքուրս և պայծառս, ընդէ՞ր կամիցիս գալ և օթևանել 'ի սիրտ իմ, ուր ոչ այլ ինչ բուսանի բայց միայն փուշ և տատասկ: Վա՜յ ինձ, քանի՜ զանազանութիւն ընդ իս և ընդ քեզ: Դու լոյս ամենապայծառ և ես խաւար աղջամղջին. և որո՞վ կենակցութեամբ հնար իցէ ինձ միանալ ընդ քեզ: Զիա՞րդ յանդգնեցայց ընթանալ առ սեղանն սուրբ և ընդունել զքեզ 'ի հոգիս իմ: Ո՛վ ամենագութ փրկիչ, տեսեալ զմեծ զանարժանութիւն իմ՝ ամաչեմ

մտել յերկնային ընթրիս քո : Այլ այս ճանաչումն բարութեան քո և ողորմութեան՝ քաջալերեալ յորդորէ զիս յօժարաբար ընդունել ըզքեզ : Այո՛, Տէր սիրելի, այնպէս մեծ է բարութիւն քո, զի թէպէտ և պաշարեցայց 'ի բազմապատիկ աղետից և տագնապեցիմ յուժգին փորձանաց, մատչիմ առ քեզ՝ գտանել զքո կարևոր և զհզօր օգնականութիւն : Այնպէս վստահ եմ 'ի բարութիւն քո՝ զի արհամարհել զքեզ համարիմ զ'ի բացն կալ առ 'ի քէն : Որքան ես ինձէն անարժան իցեմ, այնքան փառաւորիս դու ընդունելով զիս 'ի հաղորդութիւն երկնային սեղանոյդ, յորմէ ակն ունիմ գտանել զդարման ցաւոց իմոց :

Ահաւասիկ, սիրելիդ իմ Յիսուս, հանդերձեալ կամ ընդունել զքեզ : Գամ առ քեզ որպէս հիւանդ, ո՛վ բժիշկդ երկնային. որպէս մեղաւոր՝ ծունր դնեմ առաջի քո, ո՛վ Աստուած բարութեանց, զի քև մաքրեցայց. որպէս որդի անառակ՝ ան-

կանխիմ յոտս քո, Հայր ամենասի-
րելի, զի փարեսցիս զինև· որպէս
աղքատ՝ ընթանամ առ քեզ, ով
աղբիւր ամենայն բարեաց, զի քև
ճոխացայց։ Յիշեա, ով սիրելիդ Յի-
սուս՝ զբարիսն զոր արարեր Մագ-
դաղենացւոյն· ոչ մերժեցեր զնա 'ի
քէն, թէպէտ և մեղաւոր էր, այլ
և ընկալար խիստ գթածաբար, եղեր
նմա պաշտպան, և արժանի արա-
րեր զնա համբուրի ոտից քոց սըր-
բոց։ Ահա, ով գթած Յիսուս, Նոր
քեզ աւիթ փառաց, զի դարշելի
ոք մեղաւոր՝ որպէս եսս եմ, մեր-
ձենայ ընդունել զքեզ 'ի ծոց իւր։
Եւ եթէ ոչ բղխիցեն աչք իմ դառն
արտասուս բաւականս 'ի լուանալ
զոտս քո, այլ դու շատ խիստ հեղեր
արիւն 'ի բաւականութիւն լուանա-
լոյ ոչ միայն զիմս, այլ և զբոլոր
աշխարհի զմեղս։ Ո՛վ սիրելիդ իմ
Յիսուս, եթէ ոչ ներեցեր մինչև
ցարդ մեղաց իմոց, ներեա ինձ այժ-
միկ, մինչչև իցէ իմ մատուցեալ
ընդունել զքեզ· և ողորմութիւն
քո կանգնեսցէ 'ի վերայ իմ յաղ-
թանակ նոր։

Հոգի իմ, զի՞ գործես, զի՞ խօսիս ։ Մուտ աղէ 'ի ներքս 'ի քեզ, և սիրեա զԱստուածն քո՝ որ վասն սիրոյ գայ առ քեզ ։ Այո՛, Յիսուս սիրելի, սիրեմ զքեզ, և բաց 'ի քէն զայլ ոք ոչ կամիմ սիրել ։ Դու, Յիսուս, դու լեր իմ բովանդակ ախորժ սիրոյ ։ իշխեա 'ի վերայ բովանդակ կամաց իմոց, և տուացիր զիս զկամին ։ Առ սէր քո զոր ունիմս, ընծայեմ քեզ զմիտս, զի խորհեսցի միշտ զողորմութիւնս քո ։ ընծայեմ քեզ զմարմին իմ, զի օգնեսցէ ինձ առնել զհաճոյս քո ։ ընծայեմ քեզ զհոգի իմ, զի քեզ լիցի բովանդակ ։ Ո՛ տէր, ո՛վ անընչալից հոգւոյ իմոյ, թէ ամենեքեան իսկ ճանաչէին զգորով սիրոյ քո՝ զոր ունիս առ նոսա, զի ամենեքեան կէին միայն առ 'ի սիրել զքեզ, 'ի պատուել, 'ի կատարել զկամս հաճոյից քոց՝ որում արժանիք են ։ Կեցից ես գոնեա սպառացեալ ընդ գեղեցկութիւն քո անբաւ ։ Ուխտս դնեմ առ սէր քո զանց առնել զամենայնիւ որ անհաճոյ իցէ քեզ, թէպէտ և հա-

սանիցէ վիշտս մեծամեծս կրել, նա և 'ի կենաց անկանել: Երանի էր ինձ եթէ կորուսեալ զամենայն՝ շահէի զքեզ, Աստուած իմ, զանձ իմ, սէր իմ, և ամենայն ինչ իմ:

Ո՛վ արժանաւոր մայր Յիսուսի իմոյ և կոյս մշտամաքուր Մարիամ. ողջոյն տամ քեզ խորին խոնարհութեամբ, և աղաչեմ զքեզ զի տացես ինձ շնորհս՝ ընդունելոյ սրբութեամբ յայսմ առաւօտու զմարմին քո Յիսուս՝ 'ի հոգիս իմ: Աղքատութիւն քո, խոնարհութիւն և սէր՝ լուսցեն զբազում թերութիւնս իմ, և յարգասաւորութենէ քումմէ՝ ընկալայց արդիւնս աստուածէս: Ո՛վ ամենափրկելի միջնորդ հաշտութեան, այնպէս զիս ընդ Յիսուսի՝ սեւն և սէրտ կապանօք սիրոյ. և որպէս քոյին գործակցութեամբ հաճեցաւ հաղորդել զանձն այցէց տկարութեան բնութեանս՝ այնպէս միջնորդութեամբ քով արասցէ զիս հաղորդ մարմնոյ, արդեանց, առաքինութեանց, չարչարանաց, մահուան, և ապա յաւիտենական փառաց իւրոց:

Վասն այսորիկ մատո նմա զքո արժանաւորութիւնդ, ո՛վ ամենագութ մայր իմ, և զփոյթեռանդն սպաս հանդերձանաց՝ զոր 'ի ժամու մարդանալոյ Նորին յարգանդ քո՝ հարեր, և յընդունելդ զնա 'ի սեղանի ամենասուրբ հաղորդութեան: Իսկ ես առ ընդունել ըզսուրբ խորհուրդն առաւել ևս բորբոքեալ եռանդուն խոնարհութբ̅, վստահութեամբ և սիրով, այնպէս համարեցայց, սիրեցեալ մայր իմ, որպէս թէ ընդունելոց իցեմ զպատարագեալն Յիսուս զքո և զիմ՝ 'ի քոյոց իսկ 'ի ձեռաց: Ո՛վ ամենաքաղցր մայր, շնչեա յիս մեծ ակնածութիւն, և եռանդն ջերաջերմ սիրոյ՝ 'ի մատչել իմում առ հաղորդութիւնս, որպէս զի և քաջ օգտեցայց յայնմանէ:

Սուրբ հրեշտակ՝ պահապան իմ հաւատարիմ, որ առընթեր կալով տեսցես զիս ընդունել զհացն հրեշտակաց, տա՛ր զիս 'ի սեղանն, և ընկալ ինձ զշնորհս առ ընդունելոյ զկերակուրն զայն երկնային կենաց՝

վայելուչ ամբծութեամբ , փափա-
քանօք և սիրով:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛վ ամենասիրելի Յիսուս , Աս-
տուած իմ, և ողորմութիւն իմ.
Ճշմարի՞տ ուրեմն իցէ զի դու Թա-
գաւորդ երկնից՝ հաճեցար իջանել
յայցելութիւն Թշուառացեալ հո-
գւոյ իմոյ , և մտանել 'ի սիրտս աղ-
տեղի , առնել ընդ իս զմեծ զայս
սէր բարեկամութեան՝ մինչև լինել
ինձ նոյն ընդ քեզ : Ո՛վ մարդասի-
րութիւն , վայելուչ քումդ ևեթ
բարութեան. ո՛վ առատաձեռնու-
թիւն անզուգական. միթէ չէ՞ր քեզ
բաւական Աստուած իմ, կրել այն-
քան չարչարանս և մահ վասն սի-
րոյ իմոյ : Եւ ո՞ եմ ես՝ զի և 'ի վե-
րայ այդորիկ կամիցիս տալ զանձն
քո ինձ՝ 'ի կերակուր, որպէս զի 'ի
ձեռն հաղորդութեանս այսորիկ՝
մասնակից եղէց ամենայն գանձուց

և ամենայն արդեանց զոր ստացարդ՝ տալով զանձն 'ի չարչարանս խաչի և մահու: Ո՛վ գանձ պատուական, բարձի թողլի եղեալ առ յինէն, արժանիդ ամենայն յարգանաց և ամենարթուն պահպանութեան:

Ամենողորմ փրկիչ հոգւոյ իմոյ, որո՞վ այլով բարեաւ կարէիր ճոխացուցանել զիս, քան մեծաւս այսու՝ զոր շնորհեցերդ յամենասուրբ հաղորդութեանս: Ի ծնընդեանդ՝ եղեր ինձ եղբայր, 'ի մահուդ՝ փրկութիւն և փառք աննիազ, իսկ հաստատութե՟ խորհրդոյ հաղորդութեանս՝ զանձն քո ետուր 'ի սնունդ հոգւոյ իմոյ: Ի խորհըրդեանս յայսմիկ արդարև գտանիս դու ճշմարիտ Աստուած և ճշմարիտ մարդ, ամենևին կատարեալ: Ո՛վ, որպէս զի մեծ է սա քան զայլ ամենայն պարգևս քո:

Յիսուս գթած, գալստեամբ քո յաշխարհ բերեր ինձ զկեանս շնորհաց, իսկ այժմիկ գալով 'ի հոգիս՝ ածես զառիթն կենաց: Ո՛վ կերակուր աստուածային, որով որդիք

մարդկան լինին որդիք Աստուծոյ · ով հայր անուշարար, որ հաստատես զսիրտ և ուրախ առնես զհոգի, որով ցանկութիւնք սանձին, մահանայ սէր անձին, նուաճին կամք ինքնակամք, և մտադիւր հը-պատակին աստուածայնոցն կամաց:

Որպիսիս հատուցից քեզ շնորհս այժմ, ով բարի Յիսուս, վասն գերահրաշ և անզուգական բարութեանդ քո: Եթէ շնորհակալութե՟ արժան իցէ զուգահաւասար գտանիլ շնորհին ընդունելոյ՝ ո՞րքան պահանջիցիմ ես երախտիս 'ի կըշիռ պարգևացն զոր ընկալայ · կամ որո՞ց փոխարինաց ակն ունիցիս յինէն, Տէր, որ հէգս եմ և թշուառքան զամենայն արարածս:

Եթէ ունէի զամենայն լեզուս մարդկան, և ամենայն օժանդակէր ինձ գոհանալ զքէն, ոչ բաւէին արժանապէս օրհնել զքեզ վասն այսքանեաց մեծամեծս բարեաց: Եւ զիա՞րդ ես միայն կարացից հատուցանել քեզ զպատշաճ երախտիս

վասն մեծահրաշ շնորհիս, զի կամե-
ցարդ լայց եղանել ինձ և տալ ըզ-
քեզ ինձ՝ փանաքի արարածոյս։

Ի մտանել երանուհւոյ Կուսին
'ի տուն Եղիսաբեթի, լցեալ սորա
Հոգւով սրբով և հիացեալ մեծա-
զարմանալեօք՝ աղաղակեաց. « Եւ
ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր
Տեառն իմոյ առ իս »։ Եւ արդ զի՞նչ
պարտ իցէ ինձ ասել Թշուառակա-
նիս և լցելոյս մեղօք, գիտելով չափ
զի դու, Աստուած իմ, բարեհաճե-
ցար մտանել յիմ հոգիս։ Քանի՜ ա-
ռաւել զարմացմամբ քան զԵղիսա-
բեթ անկ էր ինձ մեծաձայնել։ Եւ
ո՞ր իմ արժանիք, զի այսքանեաւ
պատուեցայ պարգևօք. զի ոչ լոկ
Աստուածամայր արժանի համարե-
ցաւ գալ յանարգ բնակարան հո-
գւոյս իմոյ, այլ և Աստուած ինք-
նին։ Յիսուս իմ, Աստուած իմ, քա-
նի՛ հոգիք իցեն այժմ յաշխարհի
աստ բարեպաշտք քան զիս, որոց
անհերկբայապէս եռանդագինս ևս
ընկալեալ էր զքեզ. սակայն և
այնպէս ոչ նոցա արարեր զշնորհս

զոյս մեծ, զոր ընկալայ քեւ 'ի ժամուս յայսմիկ: Ո՜վ առանձինն շնորհաց սիրոյ Յիսուսին իմոյ առ իս:

Եւ արդ ո՛վ գերագոյն Տէր, Թագաւոր Թագաւորաց, տէր ամենայն արարածոց. դու Աստուածդ փառաւորեալ անսահման, դու հաճեցար խոնարհել ոչ միայն առ 'ի գալ 'ի հոգիս ընկեցիկ և անարգ, այլ և հաստատել զբնակութիւն քո անդ. փոխարկել զնա 'ի քեզ, և առնել քեզ նման՝ 'ի ձեռն այսպիսւոյ ըսքանչելի միաւորութեան, զոր համարձակիմ նմանեցուցանել քում աստուածայնոյ միաւորութե̃ ընդ Աստուծոյ Հօր:

Ո՜վ սիրելի Յիսուս, մի՛ հեռանար յինէն, աղաչեմ զքեզ, այլ կաց ընդ իս որպէս զի ընկալայց 'ի քէն զօրհնութիւն քո՝ որ սրբեսցէ զհոգիս և զզօրութիւնս նորին. ըզսիրտ իմ՝ և զջերմութիւնս սիրոյ նորին. զմարմին իմ՝ և զկիրս նորին. և այնպէս սկիզբն արարից կեալ նորոգեալ կենօք: Արա դարձեալ, ո՛վ սիրելի Յիսուս, անհետանալ յի-

նէն բովանդակ սիրոյ աշխարհի, զի սէր քո միայն Թագաւորեսցէ 'ի սրտի իմում. զի զքեզ միայն սիրեցից. և քեզ միայնոյ փափագեցայց, և զքէն միայն խորհեցայց, 'ի քեզ միայն հաստատեցից զյոյս իմ և զփափագ. 'ի քեզ միայն, և վասն քո կեցից, և համօրէն քո եղէց միայն, և արժանացայց ժառանգել զքեզ իսպառ, ո՛վ բարութիւն անբաւ, որ կեաս և Թագաւորես յաւիտեանս:

ԽՂՃՔ

Ո՛ տայր ինձ սիրել զքեզ միշտ, ո՛վ սիրելի Յիսուս:

Երանի՜ ինձ եթէ կորուսից զամենայն՝ զի շահեցայց զքեզ, Աստուած իմ և ամենայն ինչ:

Ո՛վ բորբոքեալ սիրտ Յիսուսի, բորբոքեա զսիրտ իմ գծուծ:

ՑՈՒՆՏՔ

Վաղ քան զոր հաւատամքս՝ անկցուք 'ի ձեռս Յիսուսի դատաւորին։

Բարիք աշխարհի կարեն շլացուցանել զմեզ՝ այլ յագեցուցանել ոչ։

Վա՜յ այնմիկ, որ սիրէ զառողջութիւն առաւել քան զսրբութիւն։

ԺԲ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Եւ ո՞ իցեմ ես, սիրելի Յիսուս, զի եկից յառաւօտուս՝ ընդունել զքեզ 'ի ծոց իմ. և ո՞ իցես դու որ հաճիս գալ և բնակել 'ի հոգւոջ իմում: Անսահման է մեծութիւն քո, անչափ իմաստութիւնդ և անթերի բարութիւնդ: Ամենակարող 'ի զօրութե՜ քում, սքանչելի 'ի խորհուրդս, ահաւոր 'ի դատաստանս, և անսահման կատարելութեամբ յամենայն 'ի յատուկսն քո: Իսկ ես ընդ հակառակն՝ անօթ ապականութեան, ծրար որդանց և զանգուած իմն ադխտութեան և չարութեան: Արարած եմ հէգ և տառապեալ յամենայնի, կոյր 'ի խոր-

հուրդս, ունայն 'ի գործս, գարշ և պիղծ յախորժակս, լի հպարտութեամբ և անձնահաճութեամբ:...

Ո՜հ, ո՞ լիցիմ ես, Տէր իմ՝ առ քև, որոյ առաջի՝ աստեղք խաւարին, դողան գունդք հրեշտակաց, և գերագոյն իսկ սերովբէք համարին զանձինս որդունս ոմանս աղկաղկս: Զիա՞րդ ուրեմն համարձակեցայց ես անարգս յանարգաց՝ մերձենալ առ քեզ, որ Աստուածդ ես այնքանոյ մեծվայելչութեան: Զիա՞րդ յանդգնեցայց ընդունել յիս զքեզ յայսմ առաւօտուս, որ չեմն իսկ արժանի այլոյ իմիք՝ բայց իսպառ խոտելոյ առ 'ի քէն: Ո՜հ, մի՛, մի՛ 'ի բացեայ առներ զիս, Յիսուս գթած, մի՛ 'ի բացեայ առներ զիս 'ի քէն, և մի՛ բարկանար ինձ, թէ յառաւօտուս յայսմիկ իշխիցեմ յանդիման լինել քեզ: Արդարև մեծ է անարժանութիւնս իմ, այլ քո մեծագոյն ևս է բարութիւն: Եւ զինչ առնել իցէ ինձ 'ի հիւանդութեանս, բայց եթէ մերձենալ առ քեզ, և ընդունել 'ի քէն զշնորհս առողջու-

թեան։ Յուշ քեզ, տէր Յիսուս, զի մինչ էիրն 'ի մահացու կեանս յայս, ոչ թէ միայն թողուիր հիւանդաց դիմել առ քեզ, այլ և բըժշկէիր ևս ամենակարող զօրութեամբ։ Բորոտք մերձենային առ քեզ, և կարկառմամբ ձեռինդ բարերարի 'ի վերայ նոցա՝ անդէն սըրբէին․ բերեալ լինէին առ քեզ կոյրք և խուլք և անդամալոյծք և այսահարք, և դու և ոչ առ մի ոք 'ի նոցանէ ո՛չ զլացար զօգնութիւն և զշնորհս։ Եւ արդ առ ո՞ ընթացայց ես 'ի կարօտութեանս իմում, ամենաբարիդ Յիսուս, եթէ ոչ առ քեզ՝ առ որում գտանի առողջութիւն և դարման ամենայն ախտից։ Ո՛հ, ո՛չ, ոչ ևս համարեցայց անիրաւութիւն՝ զմերձենալս առ քեզ յընդունել յամենասուրբ հաղորդութեանս․ նա մանաւանդ հաւատամ տալ քեզ պատճառս առաւել ևս նշանաւոր առնելոյ զիս զմեծութիւն ողորմութեան քո՝ բժշկելովդ զիս յախտից ցաւոց իմոց։ Զոր օրինակ խաւարն 'ի ծնէ կուրին առաւել իմն

փայլեցոյց զփառս քո, նոյն և իմս վիճակ Թշուառական՝ ցուցցէ Թէ քանի ողորմած լիցես. զի այդպիսի ունելով մեծուԹիւն՝ և ոչ անարժան համարիս հայել գԹով յարարած մի խոտան և անպիտան՝ որպիսի եմս։ Եւ արդ, Յիսուս սիրելի, արժանաւորեա ընդունել զհոգիս իմ՝ սիրով յերկնային քո սեղան։ Խնդրեմ 'ի քէն զշնորհս զայս յանուն անպարփմանալի սիրոյդ՝ որով յանձն առեր կրել զայնքան վիշտս, և տանել դժնդակ տանջանաց, որովք և հուսկ աւանդեցեր իսկ զհոգիդ՝ դառնակսկիծ օրհասիւ՝ 'ի խաչին։ Յիսուս սիրելի, լո՛ւր աղօԹից իմոց, և ընկալ զիս մարդասիրապէս 'ի նուիրելս իմում և 'ի տալ քեզ բոլորովին զանձն իմ։

Ո՛վ ամենասիրելի միածին Հօր յաւիտենականի, ճանաչեմ զքեզ արժանի գերագոյն սիրոյ, և ցանկամ սիրել զքեզ՝ Թէ ոչ որչափ արժանիդ ես, գոնեա որչափ լիցէ յիս կարողուԹիւն։ Ես ինքնին իսկ գիտեմ զի մատնչի և ապստամբի ինձ

նմանոյ՝ արժան էր իսպառ մերժել յերեսաց քոց, այլ տեսանեմ զի և յայսր վերայ հաճոյ է քեզ սէր իմ. լսեմ զի ասես. « Որդեակ իմ, տուր ինձ զսիրտ քո, որպէս ետու ես քեզ զիմս »: Ո՛հ, սիրելի Յիսուս, քանզի հաճիս սիրել յինէն, ահաւասիկ կամ պատրաստ 'ի կատարել զկամս քո սուրբ. տամ զանձն իմ քեզ, քեզ նուիրեմ բոլորովին: Սիրեմ զքեզ, Աստուածդ իմ սիրելի, և զքեզ ընտրեմ Թագաւոր և տէր՝ աղքատիկ սրտիս իմոյ: Գիտեմ զի ցուրտ է սա և գարշելի, այլ եթէ ընկալցիս միայն, ահա 'ի նոյն և փոփոխես իսկ: Մի՛, մի՛ ևս լիցի ինձ կեալ ըստ առաջին գնացից իմոց, լինել ապերախտ և անփոյթ 'ի սիրել զքեզ, որ սիրեաց զիս անչափապէս, և արժանի ես անբաւ սիրոյ: Ահա քեզ, ո՛վ հոգի իմ, փեսայն քո. ահաւասիկ մերձենայ առ քեզ. ե՛լ, ե՛լ փութով ընդ առաջ նորա: Ո՛վ բաղդ երանաւէտ, ո՛վ օր յիշատակաց. ո՛վ անճառ իմ բարութիւն, ո՛վ կեանք

կենաց իմոց։... Ահաւասիկ կամ առաջի քո, փեսայդ իմ խանդակաթ։... Գալուստ քո բարեաւ... մուտ սիրելի Յիսուս, մուտ յաղքատիկ հոգիս իմ, որ պատրաստեալ իսկ է այնպէս իմն անդագոյնս արկանել զքեւ գիրկս, մինչեւ չթողուլ զքեզ իսպառ։

Սիրելի պաշտպանքդ իմ եւ բարեխօսք, հայցեցէք վասն իմ հզօր պաղատանօք զշնորհս կարեւորս, զի սրբութեամբ ընկալայց յիս զՅիսուսն իմ, զիմ զամենայն ինչ։ Հայցեցէք ինձ զնոյն մաքրութիւն, զնոյն մեծարանս, զնոյն եռանդն, զնոյն առաքինութիւն, զնոյն արժանաւորութիւն, զնոյն պատրաստութիւն, որով դուքդ մերձենայիք յընդունելութիւն Նորին Յիսուսի խորհրդաբարն ծածկեցելոյ. որպէս զի եւ ես ընկալայց զօգուտն զոր շահեցայք դուք 'ի վայելս յաւիտենից երանութեանց։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Զի՞նչ քեզ հրաշափառագոյն, ով հոգիդ իմ, քան զհաղորդութիւնս զայս: Ո՛վ առիթ անճառ բերկրութեան, աղբիւր քաղցրաբուղխ գըգուանաց, վտակ առաքինութեանց, մահ ախտից, դեղ փրկութեան, կազդուրումն հոգւոց, հուր սիրոյ, սեղան արքայական, ճաշակ ամենայն երանութեանց, հաց կենացն յաւիտենից, յագուրդ արքայութեան: Եւ արդ զի՞նչ ինչ առնել իցէ ինձ, սիրեցեալ Յիսուս. զո՞ր գոհութիւնս կարիցեմ մատուցանել քեզ ընդ այսպիսւոյ հիասքանչս շնորհի: Ո՛հ, որքան առաւել զմըտաւ ածեմ Տէր՝ զմեծութիւն բարեացդ՝ զոր արարեր ընդ իս այսօր, այնքան և առաւել գտանեմ առիթս երախտագիտութեան, և յայնմանէ տեսանեմ զիս անբաւական՝ ի հատուցումն պարտեացս: Ո՛վ որպիսի՜ սիրով արժան էր ինձ սիրել զքեզ

փոխանակ սիրոյն մեծի զոր ցուցեր ինձ այսօր ։ Զի եթէ դու՝ գոլով որ եսդ, սիրես զիս այդչափ, ես արարածս անպիտան՝ ի՞բր ոչ սիրիցեմ զքեզ, զամենափարթամ, զամենընտիր և զամենասիրելի փեսայդ հոգւոյս իմոյ ։ Յետ ընդունելի լինելոյ յերկնային քո սեղանդ և յաստուածային սիրալիր գրկախառնութիւնս, յետ վայելելոյ յայսպիսեաց ամենահամ քաղցրութեանց, և պարտական լինելոյ այսքանեաց քոց բարերարութեանց, և կապելոյ հզօր կապանօք ամենամաքուր սիրոյ, յետ այսոցիկ ամենայնի, ո՞վ անուշակ Յիսուս, կարիցե՞մ ես տակաւին կեալ բարեկամութեամբ ընդ աշխարհի, որ ըստ քոյին իսկ պատգամաց՝ ձգնի ապստամբեցուցանել զիս առ 'ի քէն ։ Ո՛հ, ահա հրաժարիմ ես յամենայն փափկութեանց և 'ի հեշտութեանց նորին, վասն քոյոյ միայնոյ սիրոյ ։ Յայսմհետէ չիք ինձ մասն ընդ աշխարհի ․ մի՛ ևս ինձ հեշտութիւնք անվայելք, ո՛չ ևս պերճութիւնք յաւիտենիս, ոչ

և ընդունայն ամբարհաւաճութիւնք։ Ի բաց կացցեն յինէն խապառ խաբուսիկ և նենգապատիր հաճոյքն այնոքիկ. Յիսուս, դու եղիցիս ինձ միայն և միակ բարի. դու միայն ինձ գանձ, դու երանութիւն իմ բովանդակ։

Այլ սակայն քաջ ճանաչեմ ես, ով Յիսուս, զտկարութիւն իմ և զյողդողդումն կամացս. վասն այնորիկ և իրաւամբ երկնչիմ, գուցէ դառնայցեմ յառաջին մեղս իմ, եթէ ոչ դու օգնեսցես ինձ։ Ո՛վ ամենագութ Յիսուս, չամբարձեր դու զոք երբէք 'ի պատիւ՝ առանց պարգևելոյ նմա և զկարևոր շնորհսն կալոյ սրբութեամբ 'ի նմին։ Մտանելով յամենամաքուր ծոց անարատ Կուսին, բարձրացուցեր զնա յանհամեմատն պատիւ մայրութեան քո. և զի քաջիկ զայն պահպանեսցէ՝ պարգևեցեր նմա և շնորհս գերազանցս։ Մտեալ յաշխարհս յայս կենցաղավարել ընդ մարդկան՝ աղնուացուցեր զնոսա քոյով առընթերակայութեամբ, և լուսաւորե-

ցեր շնորհօք, զի ծանիցեն զընկա-
լեալն առ 'ի քէն պատիւ և պահի-
ցեն զնոյն։ Եւ արդ 'ի պատուել
քում այսօր զաղքատիկ հոգիս իմ,
միթէ իցէ՞ ինձ օրէն երկբայել ա-
ռանց անխրաւելոյ առ քեզ՝ եթէ
և սրբեցես զնա զօրութեամբ քով,
առ 'ի կարող լինելոյ կալ միշտ հա-
ւատարիմ առ սէրն քո։ Որպիսի՞
օրհնութեան չիցէ ինձ արժան ակն
ունել առ 'ի քէն, ո՛վ ամենակարող
և գորովալիր Յիսուս, որ 'ի ձեռն
խորհրդեանն՝ սակաւիկ ինչ յա-
ռաջ մտեր յօրինել քեզ բնակա-
րան 'ի տառապեալ հոգւոջ իմում։
Եւ արդ քանզի հաճեցար ծանու-
ցանել ինձ 'ի ձեռն խորհրդական
սեղանոյս, եթէ հայր ես բարի հո-
գւոյ իմոյ, զի հայեցար 'ի սա որ-
պէս 'ի դուստր սիրով սիրեցեալ
առ 'ի քէն, տուր ինձ շնորհս փոխա-
րինի այնքանոյ բարութեանդ՝ առ
'ի սիրել զքեզ այնպէս բուռն և կա-
թոգին սիրով, մինչև հալեսցի սիրտ
իմ 'ի զօրութենէ սիրոյ անտի։ Տուր
ինձ և հոգի և սիրտ որդւոյ հարա-

զատի· այսինքն է հոգի հնազանդու-
թեան, ակնածութեան, սիրոյ և
վստահութեան· որպէս զի յամե-
նայն պէտս իմ դիմեցից փութով
առ քեզ՝ առ գորովալի և ամենակա-
րող հայրդ իմ:

Եւ քանզի հաճեցար, ով գանձ
բաղձալի, ցուցանել հոգւոյ իմոյ
զսէր փեսայի և վարել ընդ իս որ-
պէս ընդ ցանկալւոյ հարսին, զօ-
րութեամբ խորհրդոյ հաղորդու-
թեանս, աղաչեմ զքեզ լնուլ զսիրտ
իմ այնպիսի իմն բուռն սիրով՝ զի
և ոչ մի ինչ մի՛ կարասցէ մեկնել
զիս 'ի քէն: Աղէ, ամենաատենչիկ
փեսայդ հոգւոյ իմոյ, կարկառ ըզ-
բարերար բազուկս քո, և այնպէս
պնդեա՛ց զիս առ քեզ, զի մի՛ 'ի
կեանս և մի՛ 'ի մահու ոչ անջատե-
ցայց 'ի քէն: Յուշ քեզ լիցի, գանձդ
իմ բաղձալի, զի քաջ իսկ 'ի դէպ
յաղագս այսպիսւոյ միաւորութե՟
կարգեցեր զխորհուրդ սեղանոյս:
Եւ արդ միաւորեա զիս ընդ քեզ
այնպիսաւ սերտ միաւորութեամբ՝
զի մի՛ անջատեցայց 'ի յաւիտեան:

ԻՂՁՔ

Անիծեալ արարածք, որ գոլացայք զսէրն՝ զոր պարտ էր ինձ հատուցանել առ Աստուած։

Ո՛ որ վասն իմ պատարագեցար՝ Յիսուս, քեզ նուիրեմ զկամս իմ։

Աստուած իմ, Երբ մեռայց ես առ ամենայն ինչ, առ 'ի կեալ 'ի քեզ եւեթ։

ՅՈՒՇՔ

Որ խնամով ոք ընդ միտ ածցէ զդժոխս՝ որում պարտական եղէ, անտրտունջ կրէ զամենայն վիշտս կենցաղոյս։

Աշխարհ՝ յամենայն ժամանակի թշուառացոյց զբաղում, այլ ոչ երբէք երջանկացոյց ուրէք զոք։

Որ կամիցի ճաշակել զճշմարիտ անդորրութիւն՝ հարկ է նմա ճընշել անխտիր զկիրս իւր։

ԺԳ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Որպէս զի մեծ են գթութիւնք քո Աստուած իմ, առ իս՝ առ ստեղծուածս փանաքի։ Մի թէ ո՞չ դու ինքնին ասացեր, թէ արժան է տան բնակութեան քում սուրբ լինել. «Տան քում վայել է սրբութիւն». և արդ զիա՞րդ կամիցիս յայսմ առաւօտու գալ և բնակել յաղքատին հոգւոյ իմում։ Ո՞ւր 'ի սմա մաքրութիւնն և սրբութիւն. ո՞ւր սպասք առաքինութեանցն՝ ընդ որս հաճիս քաղցրութեամբ. մի՛ թէ չիցե՞մ ես թերուզիւղ և լի սխալանօք։ Ընդէ՞ր ուրեմն եկանես ինձ յայց։

Սիրելիդ Յիսուս, այնչափ է գըթութիւն քո և բարերարութիւն և

ողորմութիւն, զի և ոչ մի լեզու մարդկեղէն կամ հրեշտակային ոչ կարէ՝ թէպէտ և ընդ աղօտ՝ զգերահրաշ շնորհս քո պարզաբանել: Ընդէ՞ր արդ ոչ բեկանի սիրտ իմ ցաւօք՝ վասն արհամարհելոյն զքեզ. ընդէ՞ր ոչ մեռանիմ ես յանձկութենէ սրտիս, որ անչափս անիրաւեցայ առ քեզ, որ եսդ ինձ բարութիւն և գանձ և ամենայն ինչ իմ:

Ո՛վ սիրեցեալ փրկիչ, զի՞ր համարս կարիցեմ տալ յաղագս անցելոց ամաց իմոց, եթէ ձգեցայց այժմիկ յատեան դատաստանի քո: Անսա ինձ աղաչեմ սակաւիկ մի ևս՝ և մի՛ մտաներ վաղվաղակի 'ի դատաստան ընդ ծառայի քում: Յաւել փոքր մի ես 'ի կեանս իմ, զի լացից զապերախտութիւնս իմ՝ որով մինչև ցայսօր վարեցայ ընդ քեզ, և ջնջեցից արտասուօք դառնութեան զաղտ հոգւոյ իմոյ: Յետ այնքանեաց փրկութիւնաւէտ շնորհաց քոց՝ պարտ և արժան էր ինձ լուծանել 'ի բոց և 'ի հուր սիրոյ քո, և ամենևին ջինջ և սուրբ եղա-

նիլ. այլ ես ահա խոտորնակս գնալով՝ որ աւուր յաւելլի մեղս ՚ի վերայ մեղաց, մինչև մոռանալ զքեզ և զսուրբ սէր քո խաչառ: Յիս Տէր, գթա, մի՛ թողուր զիս, զի կամիմ զգաստանալ այսուհետև: Հարեալ է սիրտ իմ դառնակսկիծ տանջանօք՝ փոխանակ զի թշնամանեցի ըզքեզ: Չերկնչիմ յայսմհետէ ՚ի խոթութեանց, յաղետից և ՚ի վշտաց, այլ ՚ի մեղաց և եթ զարհուրիմ, որք ընդ վայր հարկանեն զտէրն իմ, զԱստուած սրտի իմոյ, զգերագոյն սիրելին իմ, զհայր և զփեսայ հոգւոյս իմոյ. ՚ի մեղաց անտի, որ բովանդակութիւն է չարութեանն, ապերախտութեան և եղերանց, ՚ի մեղաց՝ որ հրէշք են զարհուրելիք և բուն և սոսկ չարիք: Ո՛ տէր, արդ ստուգութեամբ եղի ՚ի մտի՝ մի՛ ևս այլ թշնամանել զքեզ. նա մանաւանդ և զվնաս անցելոցն՝ ընդնուլ սիրով: Այո՛, Աստուած իմ, դուն եղից հանապազ սիրել զքեզ մտադիւր, եռանդագին և բորբոքեալ սիրով՝ որչափ դուցէ ինձ հնար:

« Տէր խոնարհեցո՛ զերկինս և էջ»․ բա՛ց Տէր զդրունս երկնից, և փութացո զժամն՝ յորում տացի ինձ երկիր պագանել մեծի վայելչութեան քում խոնարհելոյ 'ի բարձանց աթոռոյ փառաց քոց 'ի սիրտս իմ։ Փափագեմ ես ժամուն այնմիկ առաւել քան զմի 'ի յեղջերուաց յաղբիւրս ջրոյ կենդանւոյ։ Ե՛կ Տէր ուրեմն 'ի ծոց իմ, և հան 'ի բաց 'ի սրտէ իմմէ զկիրս բունացեալս 'ի նըմա․ փարատեա 'ի մտաց իմոց զխաւար տգիտութեան՝ որ պատի զնովաւ․ զգեցո զհոգի իմ և զարդարեա 'ի հանդերձ առաքինութեան․ հեղ 'ի սիրտ իմ զշնորհս քո և զօրհնութիւն։ Յիշեա՛ Տէր և զպէտս կարեաց ազգականաց իմոց, զեկեղեցւոյ, զպետութեանց աշխարհի, զբարեկամացս և զչարակամաց, և զշուառացեալ մեղաւորաց, և զտառապելոց հոգւոց քաւարանին։ Տուր նոցա ձեռն օգնութեան, որպէս զի դարձցեն և նոքա փառաւորել զքեզ յերկինս, և մատուցանել շնորհս ընդ այնքանեաց քոյոց երախտեաց՝

զորս շնորհես մեզ 'ի կեանս յաւ-
տենին : Փափաքեմ քեզ, ո՜վ սիրելի Յիսուս, և առ քեզ հառաչեմ մեծաւ յուսով լսելի լինել աղաչանաց իմոց. այլ տուեալ ես փափաքեմ և անձկամ յօդիլ ընդ քեզ, և ունել զքեզ մերձ սրտի իմոյ : « Տէր, խոնարհեցո զերկինս և էջ : Պատրաստ է աթոռ քո » :

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Գոհանամ զքէն Տէր, զի յայց ելեր հոգւոյ իմոյ աղքատի. գոհանամ զքէն, զի ոչ խորշեցար 'ի գալոյ առ սնեղծուածս մեծամեղ, ապերախտ և դրժող : Ո՛վ, ընդէ՞ր ոչ հատուցի ես զկշիռ փոխարինի այնքանեաց ընտիր ընտիր բարեաց Աստուծոյ իմոյ, ընդէ՞ր և փոխանակ այնոցիկ՝ նախատինս նմա եդի : Ընդէ՞ր և արդ իսկ ոչ բորբոքիմ ըղձիւք վառելովք 'ի շնորհակալիս Յիսուսի իմոյ : Թոյլ տուր ինձ ուրեմն զիրկս արկանել Աստուծոյ իմոյ,

և մատչիլ յաղէրս առաջի քո, զի խօսեսցիս ընդ սրտի իմոյ, զոր սըրբեմ քեզ յայսմհետէ։ Այլաբէն չեմ արժանի զի խօսեսցիս ընդ իս, որ յաճախ խուլ եղէ առ ձայն քո հրաւիրակ՝ 'ի մատչել առ սէր քո սուրբ. այլ եթէ խցցես դու զականջս քո՝ առ 'ի չլսել աղաչանաց իմոց, զի՞նչ լինիցի ինձ այնուհետև։ Առ ո՞ դիմեցից 'ի դարման պիտոյից իմոց. յո՞վ դարձայց 'ի դիւտ դեղոյ ախտից իմոց։ Անկցի՛ գութ քո զինև. մի՛ թողուր զիս, սիրելդ Յիսուս, ապա թէ ոչ՝ կորնչիմ ես։ Արդարև բազում անգամ դառնացուցի զքեզ յանձանս, այլ արդէն զղջացեալ սարջացեալ է իմ ընդ այն, և այժմ վերստին աղաչաւեմ։ Յիս ուրեմն, զթա, խօսեաց ընդ հոգւոյ իմոյ և ասա, զի՞նչ կամիս յինէն, զի ցանկամ տալ քեզ զամենայն։ Երանի՛ թէ ցանկ սիրեալ էր իմ զքեզ, ո՛վ Աստուած իմ և սէր։ Եղո՛ւկ զիս, որ 'ի զուր ծախեցի զամս բազումս, գնալով յօժարութեամբ զհետ ունայնութեանց և պատրա-

նաց։ Այլ արիւն քո և խոստմունք, ով սիրելիդ իմ Յիսուս, յուսադիր ինձ լինին՝ եթէ չիցէ անմարթ 'ի յաւաջիկայումս ընուլ զթողութիւն անցելոցն ամաց, մտադրութեամբ սիրելով զքեզ և ջանալով հաճելի քեզ զիս ընծայել։ Սիրեմ զքեզ ով Աստուած իմ և փրկիչ, և ոչ այլում իմիք փափագէ սիրտ իմ, բայց միայն սիրելոյ զքեզ և մեռանել իսկ վասն սիրոյ քո, որպէս մեռար դու վասն սիրոյ իմոյ։ «Մեռայց սիրով առ սէր քո, որ մեռար սիրով սիրոյ իմոյ» *: Դու Յիսուս իմ, ետուր ինձ զքեզ բովանդակ, և ես տամ զիս քեզ բոլորովին։ Յիշեա՛, Տէր, զարդիւնս դառնակսկիծ չարչարանաց քոց, և զօրութեամբ նոցին պահեա զիս 'ի մեղաց։ Տանջեա՛ զիս աստէն տանջանօք մեծամեծօք՝ վասն բազում անօրէնութեանց իմոց, որովք զքեզ թշնամանեցի. այլ պահեա՛ զիս 'ի յաւիտենիցն տանջանաց։ Յուսամ սիրե-

* Բանք Ս. Փրանկիսկոսի Ասիզացւոյ։

ցեալ Յիսուս, զի ոչ ես կրեցից զա-
մօթ անկանելոյ 'ի շնորհաց քոց, և
լինել խապառ անջատեալ 'ի քէն.
«Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամա-
չեցից յաւիտեան»:

Տուր ինձ, ո՛վ Աստուած ամե-
նակալ, սիրել զքեզ յոյժ: Երանի՛
էր ինձ եթէ կորուսանէի զամենայն՝
առ 'ի գտանել զքեզ ևեթ և զսէր
քո սուրբ: Տուր ինձ մաշել զկեանս
իմ ողջոյն 'ի սէր քո, որոյ վասն ե-
տուրդ իսկ ինձ: Պատժեալ պա-
տուհասեա՛ զիս որպէս և կամիս,
այլ մի՛ զրկեր 'ի սիրոյ սրբոյ քումմէ:
Իցի՛ւ թէ մեռանէի և ես վասն քո,
որպէս մեռար դու վասն իմ: Ո՛
տայր զի իմով մահուամբս ամենե-
քեան սիրէին զքեզ: Ո՛վ անբաւ
բարութիւն, արժանի անհուն սի-
րոյ, սիրեմ զքեզ և մեծարեմ 'ի
վեր քան զամենայն ինչ: Ո՛վ յոյս
իմ Մարիամ, յաւել ինձ զվստա-
հութիւն 'ի քեզ, զի հանապազ դի-
մեցից առ քեզ, քև՝ և քոյին բարե-
խօսութեամբ եղէց սուրբ: Յայս
յոյս հաստատեալ կամ:

ԻՂՁՔ

Զի՞նչ այլ մարթ էր առնել քեզ Աստուած իմ, առ 'ի հարկեցուցանել զիս 'ի սէր քո ։

Շնորհ ունիմ զքէն Աստուած իմ, վասն գթութեան քո, որով ցարդ սպասեալ մնաս զի ապաշխարեցից ։

Նայեաց յիս, Մարիամ, գթած աչօք, և լեր ինձ մայր գորովական ։

ՅՈՒՇՔ

Մահ մեղաւորաց չար է, իսկ արդարոցն՝ պատուական ։

Ճշմարիտ սիրողն Աստուծոյ՝ ոչ ինչ գործէ, ոչ ինչ թողու առ ականէ մարդկան ։

Անհնար է սիրոյն Աստուծոյ դատարկ գոլ, այլ լի է գործովք սրբովք ։

ԺԴ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Քանի՜ մեծ եղև, անձկալիդ Յիսուս, սէր քո՝ մինչև էր քո մեկնեալ յաշխարհէ աստի երթալ առ Հայր, 'ի պատրաստելն մեզ կերակուր՝ յորում բովանդակին ամենայն գգուանք և քաղցրութիւնք: Արդարև զքանչելի եղև գործ սիրոյ քո 'ի զգենուլն զթշուառական մարմինս մեր, և 'ի ներքոյ արկանել ըզքեզ ազգի ազգի վշտաց, ըկանեաց և տանջանաց. այլ հրաշափառագոյն ևս է այս, որով լինիս մեզ կերակուր և ըմպելի. քանզի միոյն առեր զմարդկութիւն մեր, միւսանս այսու՝ պարգևես մեզ զնոյն ինքն զաստուածութիւն քո: Այսպէս

հեղուս 'ի գիրկս մեր զանթուելի զանձս շնորհաց քոց, որպէս զի յաղթահարեալք 'ի կաթոգին սիրոյ քումմէ՝ նուիրեսցուք քեզ բոլորովին զանձինս մեր և քո լիցուք բովանդակ:

Եւ արդ սիրեմ զքեզ՝ միակ հըզօրիչդ իմ 'ի վայրի աքսորանացս այսոցիկ, միակ յոյսդ իմ, միակ երջանկութիւնդ իմ, միակ բարիդ իմ: Սիրեմ զքեզ 'ի բոլոր սըրտէ և 'ի բովանդակ մտաց և յամենայն զօրութենէ իմմէ. և ցանկայի թէ առ ամենայն վայրկեան առաւելոյր յիս եռանդն 'ի սիրել զքեզ: Այսմ ցանկամ հանապազ. առ այս եղանեն 'ի սրտէ իմմէ հառաչանք և հեծութիւնք: Ի հաղորդել քո ընդ հոգւոյս իմում սիրով սրբութեան, այնպէս կապեալ կաշկանդես զսիրտ իմ և զմիտս, մինչև քեզ միայնոյ բաղձալ ինձ և զքեն միայն խորհել: Ո՛վ հուր աստուածային միտավառ, ծաւալեա՛ց զինև, և այնպէս բորբոքեա զիս՝ որպէս զի եղէց հանապազ զոհ սիրոյ քո:

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ականակիտ ջրոց, այնպէս փափաքէ հոգի իմ առ քեզ, ով անձկալիդ Յիսուս և սէր իմ անուշակ. փափաքէ մերձենալ առ քեզ, միանալ ընդ քեզ, և քաղել 'ի վերայ քոց դեղ ամենայն ցաւոց իւրոց, և զօրութիւն՝ ելանելոյ 'ի լեառն տեառն: Ծարաւիմ արեան քում, արեանդ պատուականի՝ զոր հեղեր վասն իմ և խառնեցեր ինձ ըմպելի: Եւ արդ գթա յիս, ով սիրելի Յիսուս. տուր ինձ զկերակուրն զայն արքայութեան, որպէս զի քաղաքավարեալ մարմնով յաշխարհիս՝ թագաւորեցից հոգւով յերկինս. տուր ինձ զգինին զայն մնուցիչ կուսութեան, որպէս զի կացցէ մնացէ սուրբ ընդ հոգւոյս իմում, որպէս շուշան 'ի մէջ աղտեղութեանց աշխարհի:

Ո՛հ, երանի՛ թէ իմ էին ջերմեռանդն յօժարութիւնք և հրաբորբոք տենչանք ամենայն սրբոց, և այնոքիմբք մատչէի առ աղբիւրդ կենաց, աղբիւր իմաստութեան, աղբիւր յաւիտենական լուսոյ, հեղեղ

անձառ հեշտութեան ։ Կամ թէ բաղձալով հեծէր հոգի իմ անդադար վասն քո, ով հաց հրեշտակաց, կազդուրիչ հոգւոց սրբոց ։ Ո՛հ, եկ ով սիրելի Յիսուս, եկ մխիթարել զհոգիս զայս՝ որ հառաչէ առ քեզ ։ Դու իմ միակ ցնծութիւն, խաղաղութիւն իմ, սփոփանք իմ և գանձ իմ, յորում հանգիցեն միտք իմ և սիրտ․ բաց 'ի քէն չցանկամ այլ իմիք, և ամենայն ինչ խոստան է յաչս իմ՝ քաւ 'ի քէն, ով Աստուած իմ, քաղցրութիւն իմ, բարիդ իմ և միակ կենդրոն սրտի իմոյ ։

Փառաւորեալ մայր Աստուծոյ Մարիամ կոյս, օժանդակեա ինձ 'ի մեծի պահուս, յորում հասանէ ինձ ընդունել զմարմին և զպատուական արիւն որդւոյ քո ։ Ո՛հ, մի հեռացուսցէ զքեզ յինէն, մայր գթութեանց, ժանտահոտութիւն մեղաց իմոց․ մի մերժեր զիս յերեսաց քոց վասն այնքաննեաց թշնամանացն՝ զորս եդի քեզ․ յիշեա զի որդին քո ոչ մեռաւ միայն վասն

իմ, այլ և եթող զանձն իւր կերակուր հոգւոյ իմում։ Մա՛յր սիրելի, լի շնորհօք, լի երկնաւոր ցօղով և սիրատարփ, խանդաղատեա 'ի վերայ թշուառական ստեղծուածոյս այսորիկ։ Զարդարեա զհոգի իմ ուղղութեամբք քովք, որպէս զի արժանի եղէց յանդիման լինել Յիսուսի և ընդունել զնա 'ի ծոց իմ։ Յուշ լիցի քեզ սէրն այն՝ որով բանն աստուածային եղև որդի քո, որպէս զի լիցիս մայր մեր։ Բա՛ց զառատահեղ ձեռն քո, և լցո զիս երկնաւոր օրհնութեամբք։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՜ քաղցր գրգանացս զոր զգամ 'ի միանալս ընդ քեզ, ո՛վ սիրելի Յիսուս, և 'ի գրկապատելս իմ զքեզ։ Ո՛վ, զիա՞րդ անմտութեամբ դանդաչէի հեռի 'ի քէն, յորժամ 'ի խնդիր լինէի անձկանօք խաղաղութեան և մխիթարութեան։ Եղո՜ւկ զիս, զի յանցեալսն նախամեծար

քան զքեզ արարի զհողեղէն բարեկամս. վայ էր ինձ եթէ 'ի պատիժ յիմարութեան իմոյ և ապերախտութեան՝ զլանայիր յինէն զամենաքաղցր ճաշակ զուարճութեանս այսորիկ, որով զմայլիմ արդ 'ի կալ իմում ընդ քեզ և 'ի կրել 'ի ծոցի իմում: Գոհանամ զքէն, ով սիրելի Յիսուս, որ հատուցեր ինձ բարի փոխանակ չարի, ծայրայեղ գթութեամբդ ոգորելով ընդ խստութե̃ սրտի իմոյ: Կամէի շնորհս ունել ըստ քոց արժանեաց և տալ զկշիռ փոխարինի մեծի բարերարութե̃՝ զոր արարեր ընդ իս գալստեամբդ քո յայցելութիւն եղկելի հոգւոյս իմում: Այլ զի՞նչ տաց ընաւ տրիտուր ընդ մեծի պարգևիս մարդասիրութեան քո. զո՞ր գովութիւն, զո՞ր օրհնութիւնս, զո՞ր յարգութիւն: Ո՛հ, թէպէտ և ունիցիմ միտս և սիրտ հաւասար հրեշտակաց, տակաւին անհնար է ինձ հասու լինել մտօք և նուիրել քեզ ինչ մի արժանաւոր. քանզի անհամեմատ բարութիւն քո և սէր քո ան-

ճառ՝ 'ի տալ զքեզ կերակուր ստեղծուածի միոյ անարգի և արհամարհի որպէս եմս, 'ի վեր են քան զամենայն միտս սահմանաւորս և քան զամենայն կարողութիւն:

Ցանկամ երկնից, ով փրկիչ իմ, այլ կեամ տակաւին յերկրի՝ հիքաբար նշաւակ փորձութեանց, վտանգից, թշնամեաց. և յայսքան պաշարեալ վարանմանց՝ պէտս ունիմ ապաւինի, հովանի լինել ինձ և պահել 'ի յարձակմանց թշնամեաց: Այլ ո՞ւր գտից զփախստարանս զայս՝ եթէ ոչ 'ի վէրս քո: Եկից ուրեմն առ վէրսն այնոսիկ՝ թաքուցանել զիս անդէն յամենայն կարօտութիւնս և 'ի տառապանս իմ: Եւ իցէ՞ թէ ոչ հանգեայց յապահովի 'ի գրկատարած ծոցի անուշակ հօրն իմոյ, որ ինքն նախ առաջին հրաւիրէ զիս և քաջալերէ հաստատել 'ի նմա զամենայն զյոյս իմ, որ փարատէ զերկիւղ իմ, որ լնու զիս անպարտելի զօրութեամբ, և ինքն միայն արժէ զամենայն անխաբ պաշտպանութիւնս: Տուր, Տէր, զի

մի՛ մեկնեցայց երբէք 'ի սենեկէ անտի զոր ընտրեցի ինձ, և զի անդէն յանձն արարից քեզ և աւանդեցից զշունչ իմ վերջին:

Մարթ է, ո՛վ սիրելի Յիսուս, եթէ դարձեալ մեղօք հեռացայց 'ի քէն. առաւել քան յայլմէ ամենայնէ յաղխտից աստի երկնչիմ ես: Ո՛հ, մի՛, մի՛ երբէք այնպէս անհաւատարիմ գտայց քեզ՝ որպէս թէ անջատիլ ինձ 'ի քէն: Աւ ի՞նչ իցէ ինձ բաժանիլ 'ի քէն. զի՞նչ օգուտ են ինձ ամենայն գանձք և ամենայն պատիւք աշխարհի: Ո՛վ ընդունայն մեծութիւնք, ո՛վ ստապատիր երջանկութիւն, արհամարհեմ զձեզ. զարհուրանօք հայիմ 'ի ձեզ. չիք ձեր այլ ինչ շնորհ վասն իմ՝ բայց մատնել զիս և զրկել մշտնջենապէս 'ի միայնոյ բարւոյ անտի՝ զոր ցանկամս ստանալ 'ի յաւիտեան: Ընկալ, Տէր, զխոնարհ պաղատանս իմ, և տուր՝ զի մի՛ ևս անկայց յոյսապխտի աղէտ մեծ բաժանելոյ առ 'ի քէն: Ճանապարհորդ եմ յաշխարհիս յայսմիկ, և դարա-

Նախկաղ նաև ինձ թշնամին յաչաղկոտ, չարասէր և խաբեբայ, որ երբև զառիւծ մոլեգին շրջի անդադար զինև՝ յարձակիլ 'ի վերայ հոգւոյ իմոյ և գէշ գէշ պատառել զնա: Այլ զինչ ձեռնհաս իցէ առնել ինձ, եթէ դու հսկիցես յիմ պաշտպանութիւն: Տէր, զայս աղաղակեմ 'ի գթութենէ քումմէ. այսմ ակն ունիմ 'ի բարութենէդ քումմէ: Խորհուրդ ներկայութեան քո՝ լիցի ինձ վահան. և զի մի երբէք 'ի բացեայ առնիցիս յինէն. այս խորհուրդ տացէ ինձ ամենայն ուրեք մեծ զօրութիւն հոգւոյ՝ առ 'ի կարդալ զքեզ և լինել լսելի: Յաւել, Տէր, զհաւատս իմ. աճեցո զյոյս իմ. զօրացո զսէր իմ. և ես խնդագին խաղ արարից զհակառակորդն՝ որ 'ի նանիր ջանայցէ կործանել զիս յանդիման յաղթութեան աչաց քոց:

ԻՂՁՔ

Տուր, Տէր, զի շատ սիրեցից զքեզ, և զամենայն նկուն արարից առ 'ի հաճելոյ զքեզ:

Դարձո լինձ 'ի մոռացօնս զամենայն, ով Յիսուս, զի յիշեցից զքեզ և զսէր քո սուրբ:

Յիսուս իմ, երբ սկսայց սիրել զքեզ այնպէս՝ որպէս կամիս:

ՑՈՒՇՔ

Որ չէ մշտատև՝ է սոսկ ունայնութիւն:

Զբօսանք աշխարհիս այսորիկ լնուն զսիրտ առժամանակեայ գոհութեամբ, և ապա թողուն 'ի նմա զցաւ և զանձկութիւն:

Ճշմարիտ սիրողն Աստուծոյ՝ սակաւս խօսի, շատ վաստակէ, բազում կրէ:

ԺԵ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ, քանի՜ գեղեցիկ է բաղդ իմ յառաւօտուս յայսմիկ. մատչել ինձ յընդունել'ի ծոց իմ զքաղցրիկն Յիսուս, որ ազդէն յիս զբերկրանս արքայութեան: Ո՛հ տէր, և իցէ՞մ արժանի այսքանոյ պատուոյ և անպատումն գրգանաց: Ես որ միշտ ապստամբ եղէ'ի քոց շնորհաց, անհաւատարիմ առ սէր քո. որ քան զառաքեալսն վատասիրտ գտայ 'ի Թողուլ զքեզ, և ապիրատ քան ըզՀրէայսն՝ որք անարգագոյն համարեցան զքեզ քան զԲարաբբա՝ 'ի ժամանակի չարչարանացդ: Եւ ժուժայցե՞մ արդ անթաց աչօք յիշել զայս ամենայն. և այնքան անզգա՞յ

լցէ սիրտ իմ, ով Տէր, զի և ոչ դո-րովլիցի 'ի ցաւագին տեսլենէ սատի Աստուծոյ սիրելւոյ` կոչկոձելոյ աղ-գի ազգի նեղութեամբք: Եւ դու, ով Յիսուս իմ, ոչ անարժան հա-մարիս պատուել քոյին ներկայու-թեամբ զսիրտս անզգայ: Ո՛վ բարի Յիսուս, զղջամ և ամաչեմ ընդ ցըր-տութիւն իմ: Ճանաչեմ զի այնպէս արժան էր ինձ սորջանալ ուժգին և դառնապէս` վասն թշնամանելոյն իմ զքեզ, մինչև լուծանել ինձ յար-տասուս: Ո՛վ Յիսուս, եթէ չունիմ և արդ զարտասուս Պետրոսի, սա-կայն զգամ զցաւս նորին. եթէ ոչ արտասուեցեմ զմեղս իմ հանգոյն Պետրոսի, սակայն լամ և ատեամ զնոսին յօժար կամօք: Մաքրեա, ով քաղցրիկ Յիսուս, մաքրեա ա-րեամբ քով` զամենայն աղտեղու-թիւս իմ, յառաջ քան զմերձենալս ընդունել զքեզ 'ի հոգի իմ: « Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա բանիւ, և բժշկեսցի հոգիս իմ »: Չեմ ես ար-ժանի ընդունել զքեզ. բայց դու

բժիշկ երկնաւոր, քաջ իսկ կարես
բուժել բանիւ լոկով զամենայն վէրս
իմ. արդ էկ և բժշկեա զիս: «Մո-
լորեցայ ես որպէս ոչխար կորու-
սեալ»: Ահաւասիկ ով փրկիչ իմ,
ոչխարն՝ որ կամաւ խոյս տուեալ 'ի
քէն կորեաւ, այլ դու այն հովիւն
ես քաջ՝ որ ետուր զանձնդ 'ի կե-
ցուցանել զիս. արդ խնդրեա ով
սիրեցեալ փրկիչ իմ և կեցո զիս.
խնդրեա՛ զիս և բարձ 'ի յուս քո,
մինչդեռ եդեալս եմ 'ի մտի ըստ
կարի խմում ծառայել քեզ և սի-
րել: Սիրեմ զքեզ, ով Յիսուս իմ,
առաւել քան զամենայն ինչ, և փա-
փաքեմ ընդունել զքեզ՝ զի առա-
ւել ևս սիրեցից: Տուր ցիս զքեզ
բոլորովին, և ես տամ զիս քեզ:
Կոչես 'ի սէր քո. ահաւասիկ և ես
թողեալ զամենայն՝ գամ առ քեզ,
կեանքդ իմ: Հրաժարիմ յամենայն
փափկութեանց կենցաղոյս, քան-
զի կամիս արժանի առնել զիս յա-
ռաւօտուս յայսմիկ ճաշակելոյ զսր-
բազան մարմին քո: Դու լիցիս միշտ
իմ միակ բարի, սէր իմ միակ: Ոչ

իմիք ցանկամ յաշխարհիս՝ բայց 'ի սիրոյ քո, ո՛վ քաղցր Յիսուս: Չունիմ ինչ տալ քեզ այլ եթէ իմ էին ամենայն թագաւորութիւնք աշխարհի, միայն վասն սիրոյ քո հրաժարէի յամենայնէն. առաւել փափագեմ յօդիլ ընդ քեզ սիրով, քան եթէ տէր լինել ամենայն աշխարհի: Թողում քեզ զամենայն և զոր գիտեմ և զոր կարեմ, և ընծայեմ քեզ զսէր իմ բովանդակ:

Հայր երկնաւոր, նուիրեմ քեզ զչարչարանս Որդւոյ քո՝ վասն փըրկութեան իմոյ և բովանդակ աշխարհի: Մի՛ հայիր 'ի յանցանս իմ, այլ 'ի սէր Որդւոյ քո սիրելւոյ որ առ մեզ, որով և հաստատեաց զայս խորհուրդ սիրոյ առ 'ի միանալ ընդ մեզ: Վասն այսպիսւոյ սիրոյ՝ Աստուած իմ, գթա՛ 'ի մեզ:

Յանձն առնեմ 'ի քեզ, Աստուած իմ՝ զքահանայապետ եկեղեցւոյ քո, զաւաջնորդս, զհարս խոստովանութեան, զքարոզիչս, և զվարդապետս. տո՛ւր նոցա նախանձ և եռանդն՝ աճեցուցանել զփառս քո և

'ի փրկել զհոգիս ։ Ի քեզ յանձն առնեմ և զծնողս իմ, զբարեկամս, և զթշնամիս, և զօրհասականս՝ որք միան յետ սակաւու միոյ փոխիլ յաստեաց․ զհոգիս ննջեցելոց՝ և զամենայն հաւատացեալս․ որպէս զի կեցցեն 'ի շնորհս քո ։ Տո՛ւր նոցա, Տէր, յարատեւութիւն և եռանդն 'ի սէր քո սուրբ․ տո՛ւր լոյս և զգաստութիւն անհաւատից, զի և նոքա ծանիցեն զքեզ և սիրեսցեն ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛վ բարութիւն անբաւելի, ո՛վ սէր անբաւ․ Աստուած տուաւ ինձ բոլորովիմբ և իմ եղև ։ Հոգի իմ, ժողովեա զամենայն իղձս քո և փարեաց զՅիսուսիւ, որ աւագիկ սպասէ միանալ ընդ քեզ և սիրել առ 'ի քէն ։ Փրկիչ իմ սիրելի, աշաւասիկ կամ ես առաջի քո․ գանձ իմ և կեանք, ահա մատչիմ առ քեզ ։ Ո՛հ, մի՛ մերժեր զիս ։ Եղուկ ինձ, զի առ-

տաքսեցի երբեմն զքեզ 'ի սրտէ սատի իմմէ, և անջատեցայ 'ի քէն. բայց յայսմհետէ առաւել կամիմ բիւր անգամ կորուսանել զանձն իմ՝ քան զքեզ կորուսանել, զծայր բարեաց իմոց: Մի՛ յիշեր, Տէր, զանգիտութիւնս իմ զառաջինս, և թող ինձ. զղջ է ինձ 'ի բոլոր սըրտէ, և կամիմ մեռանել առ ցաւոց:

Հրամայես ինձ սիրել զքեզ. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ»: Ո՛վ Տէր, ո՞վ իցեմ ես զի կամիս սիրել յինէն. այլ զի զայդ կամիս, ահաւասիկ ես՝ քո բոլորովին: Դու մեռար վասն իմ և ետուր ինձ կերակուր զմարմին քո. թողում և ես զամենայն, հրաժարիմ յամենայնէ, զի զքեզ միայն սիրեցից: Եւ զո՞ այլ ոք արժան իցէ ինձ սիրել, եթէ ոչ զքեզ՝ գեղեցկութիւնդ անբաւ, բարութիւն անհուն և արժանի անսպառ սիրոյ: «Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս կամ 'ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրի: . . . Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւի-

տեան»: Մինթէ կարիցեմ գտանել յերկինս կամ յերկրի՝ բարի մեծ քան զքեզ, կամ անձն՝ որ սիրիցէ զիս առաւել քան զքեզ: «Եկեսցէ արքայութիւն քո»: Ո՜հ Յիսուս, եկ յայսմ առաւօտու ստանալ ըզ-սիրտս իմ. ստացի՛ր զայն բովանդակ և հալածեա՛ 'ի նմանէ զամենայն սէր՝ որ ոչն իցէ վասն քո. ընկալ զսիրտս իմ, զի քո է բովանդակ: Եւ զի կաց-ցէ մնասցէ միշտ քեզ, հակեցից ես ուշի ուշով մերժել ջնջել զամենայն ախորժակ երկրաւոր: Թող հրա-ւիրեսցեն աշխարհայինք վայելել զզբօսանս և զհաճոյս իւրեանց, ես ոչ մատուցից ունկն. ինձ գրգանք և բերկրանք իցեն ծառայելն քեզ և սիրել զքեզ, և ցնծալ ընդ քեզ ըղ-ձիւք սրբովք: Եթէ երբեք շքեղու-թիւն փառաց և պատուոյ աշխար-հիս՝ խտղտել փորձեսցէ զաչս իմ, ես զմտաւ ածեալ զունայնութիւն կենցաղոյս իրաց՝ զդէմ կալայց յար-ձակմանց թշնամւոյն: Եթէ ինչ մի փորձեսցէ կորզել յինէն զփափագս՝ զպատշաճեալն առ քեզ, մերժե-

ցից վանեցից յանձնէ առ 'ի պահելոյ անարատ զսուրբ մաքրութիւնդ քո ։ Չցանկամ, չխնդրեմ զայնոսիկ՝ որոց աշխարհայինքն ըղձականք ըղձեա լինին․ բաղձամ և խնդրեմ ըզքեզ միայն, Աստուած իմ․ չփափագեմ չտուփամ այլում իմիք, քեզ միայնոյ ընծայեալ է սիրտս ողջոյն։ Տուր ինձ զսէր քո և զշնորհս՝ և շատ է ինձ այս մեծութիւն․ տո՛ւր ինձ սիրել զքեզ և սիրիլ առ 'ի քէն, և այս շատ է ինձ․ չկամիմ չցանկամ այլում իմիք․ զքեզ միայն ընտրեմ բաժին իմ և մեծութիւն իմ, Աստուած սրտի իմոյ, Աստուած բաժին իմ յաւիտեան։ Դու լիցիս ինձ բիւրիցս առաւել սիրելի քան զամենայն բարի, քան զամենայն արարած, քան զանձն իմ։

Բայց գիտես Տէր՝ զիմ տկարութիւն․ գիտես թէ որպէս մատնեղէ քեզ երբեմն՝ և յետ այնքանեաց խոստմանց իմոց․ արդ օգնեա ինձ և մի՛ թողուր ինձ անջատել երբէք 'ի սիրոյ քումմէ սրբոյ։ Տուր ինձ գըտանել 'ի քեզ զուսուցիչ՝ որ փա-

բառնեսցէ զմեղս ապիրատութեան իմոյ. զխորհրդակից՝ որ լուծցէ զտարակոյս իմ՝ զօրութիւն՝ որ պնդեսցէ զիս 'ի տկարութեան իմում. բժիշկ՝ որ բուժեսցէ զախտս հոգւոյ իմոյ։ Դու միայն և միշտ եղիցիս քաղցր, սիրելի և գորովական առիթ փափագանաց աղքատ սրտիս։

Յանձն առնեմ քեզ, ով տէր, զհոգիս ծնողաց իմոց, զբարերարաց, ծանօթից, թշնամեաց, և զայնոցիկ՝ որք յիմ պատճառս կան 'ի քաւարանի. զհոգիս վարդապետաց, և մանաւանդ զնոցա՝ որք առաւել նախանձաւորք եղեն փառաց քոց և սրբութեան հոգւոց՝ փրկելոց անգին արեամբ Որդւոյ քո միածնի։ Յանձն առնեմ դարձեալ զհոգիս նոցա՝ որք միշտ ջերմեռանդն սըրտիւք խոկան 'ի չարչարանս Յիսուսի Քրիստոսի, 'ի սրբազան խորհուրդ գոհութեանս, և 'ի մայրն քո սուրբ. այլ և զհոգիս որոց սաստկագոյնս արդ վշտանեան, և որք մերձագոյնք են 'ի մուտս արքայութեան երկնից։

ԻՂՁՔ

Ո՞ հատուսցէ քեզ, Տէր, ընդ ամենայնի՝ զոր արարեր և կրեցեր վասն իմ:

Ո՛վ կամք Աստուծոյ, դու ես սէր իմ:

Տէր, զիս աստէն արա պատուհասակոծ՝ որպէս հայր գթած, զի մի անդ խոշտանգեսցես որպէս խիստ դատաւոր:

ՅՈՒՇՔ

Սիրտ ամպարշտին՝ ծով է մըրրկեալ:

Շիթ մի շնորհաց պատուական է քան զամենայն բարիս աշխարհի:

Որ ճաշակէ զսէրն Աստուծոյ՝ այլ ինչ ոչ ախորժէ:

ԺԶ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Բա՛րէ, զի՞նչ բարի տեսանես յիս, ո՛վ սիրելիդ Յիսուս, զի տենչաս կենակցիլ ընդ իս: Ո՛հ, որքան և խուզեցից և որոնեցից յանձին իմում՝ չգտից ինչ ՚ի նմա արժանի քեզ: Նա մանաւանդ որքան խորասուզիմ յայս խոկումն՝ առաւել սարսեալ դողամ. զի ո՛չ այլ ինչ յանդիման լինին մտաց իմոց՝ բայց Թերութիւնք և մեղք, որք զինեն ՚ի վերայ իմ զարդար զցասումն քո, և արկանեն զիս իսպառ յերեսաց քոց: Ո՛հ, չեմ, չեմ արժանի, Աստուած իմ, ընդունել զքեզ, վասն անչափ անօրէնութեանցն՝ զոր գործեցի ընդդէմ քո: Այլ զի ցանկաս դու մը-

տանել սրբով խորհրդեամբս այ֊
սուլիկ՝ 'ի սիրտ իմ, սրբեա՛ զսա՝ յա֊
ւաջ քան զմուտ քո, և բորբոքեա՛
զսէր քո սուրբ 'ի սմին ։

Որպիսի՛ անլուր հնարք ճարտա֊
րութեան սիրոյ ։ Յիսուս Քրիստոս
ցանկայ կեալ ընդ իս ընդելաբար և
լինել ինձ 'ի կերակուր և ըմպելի ։
Բա՛րբէ · դիտիցես, անձն իմ, եթէ
ո՞վ է Յիսուսդ այդ՝ որ կամի շնոր֊
հել քեզ առատապէս զգերագոյնն
բարեաց ։ Աստուած է նա · հրաշա֊
լի գեղեցկութիւնն այն, որում ե֊
թէ 'ի մի վայր գայցեն հարիւր ա֊
րեգակունք՝ ոչ ինչ հաւասարեսցեն
աննման գեղոյ երեսաց նորին ։ . . .
Որ ետես միայն զթաթ ձեռին նո֊
րա, հիացեալ յապուշ կրթեցաւ
ընդ երկայն աւուրս ընդ այն տե֊
սիլ ։ Որ լուաւ միանգամ զբարբառ
նորա, վկայեաց զի բաւական էր 'ի
ձգել յինքն զամենայն սիրտ՝ բա֊
նիւ լոկով ։ Որ ետես զժմիտ նորին,
ասաց լինել բաւական 'ի խաղաղել
զամենայն սիրտս՝ ժպտելովն մի֊
այն ։ . . . Աստուած, բնակեալ 'ի

թագաւորութիւն վեհագոյն՝ զոր ոչ ոք կարող է տեսանել կամ ըմբռնել մտօք. — Աստուած, որոյ իւր է Հայրն մեծվայելչութեց, որ միով ակնարկութեամբն՝ սասանեցուցանէ զանդարամետս. — Աստուած, որ ունի զմայրն օգոստափառ, զոր տեսեալ ուրուք՝ լաւ համարեցաւ այնուհետև կեալ կոյր աչօք՝ քան թէ բացօք. — Աստուած, որ ունի զիւրեաւ անթիւ և անհամար պաշտօնեայս, յորոց մէն մեծագոյն է քան զամենայն թագաւորս մեծամեծս որք յերկրի աստ։ . . .

Աւադիկ, անձն իմ, այդ Յիսուս՝ որ փափագէ գալ բնակել ՚ի սրտի քում։ Ո՞չ շատ էր նմա և թողուլն իսկ քեզ զի սիրեսցես զնա։ Այլ ո՛չ, ոչ բաւականանայ սիրելովդ ևեթ, այլ և ա՛յնչափ սիրէ զքեզ՝ զի և կամի հաղորդել զանձն գլխովին ընդ քեզ, և լինել մի մարմին և մի հոգի։

Ո՛վ մեծի և անբաւ սիրոյ Աստուծոյ իմոյ։ Եւ ո՞րպէս ոչ սիրեցեմ և ես զքեզ, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, դիտելով չափ զայսքան վաստակս

քո՝ առ 'ի ձգել զիս 'ի սէր քո։ Ո՛հ, Աստուած իմ, լուսաւորեա՛ զիս, բորբոքեա՛ զիս, զի մի՛ կեցից ապաշնորհ առ սէր քո անբաւ։ Արա՛ զի մի՛ ևս եղէց խափան բազմազեղ շնորհաց քոց, զոր հեղուած յոյս ընդունիմ զքեզ մեծաւ սիրով՝ յամենասուրբ հաղորդութեան։ Սիրեմ ըզքեզ, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, որ մեռար վասն իմ և եղեր ինձ 'ի կերակուր։ Ինձ միայն զբօսանք լիցին ուրախ առնելն զքեզ, զբարութիդ իմ, զսէրդ իմ և զամենայն ինչ իմ։ Խլեա՛, 'ի բա՛ց հան յինէն զամենայն սէր արարածոց՝ որք խոչ ընդ ոտն ինձ լինին 'ի զօդ միութեանս իսպառ ընդ քեզ։ Բորբոքեա՛ յիս զկիզբոցավառ՝ ընդունելոյ զքեզ յաճախ և լինել միշտ կենակից ընդ քեզ։ Օժանդակեա՛ ինձ շնորհօք քովք, և արա՛՝ զի անարգ ստրուկս դժոխոց՝ դարձայց և եղէց ցանկ երջանիկ ծառայ քո սուրբ սիրոյդ։

Հա՛յր յաւիտենական, վասն արդեանց Յիսուսի Քրիստոսի, զոր յայսմ առաւօտու մատչիմս ընդու-

նել, պարգևեա՛ ինձ զշնորհսն կարեւորս՝ առ 'ի լինել ինձ քո բոլորովին: Եւ դու, ամենասրբուհի Մարիամ, աղաչեա՛ զՅիսուս վասն իմ մեղաւորիս:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Աստուած յիս է. Աստուած 'ի սրտի իմում: Բա՛բէ, և միթէ ո՛չ մեղայ քեզ երբէք, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս: Ո՛հ, ո՛ տայր ինձ դառնալ վերստին յերջանիկ տիս մանկութեան, յորում չէր իմ տակաւին մեղուցեալ և ոչ մի անգամ: Եթէ էր հնար՝ գնել գնէի զայն արեամբ իսկ իմով, 'ի փոխարէն ժամանակին կորուսելոյ՝ յորում ոչն սիրեցի զքեզ. այլ զի չէք հնար գամագիւտ լինելոյ այսպիսւոյ շնորհի, տո՛ւր ինձ ապա, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, մի՛ ևս յայսմհետէ և առ յապա անջատել 'ի քէն: Մի՛ թողուր զիս ըստ կամս յեղյեղուկ մտաց և տկարութեան իմոյ, եթէ չկամիցիս

զի միւսանգամ հանից զքեզ սըր-
տաքս ՚ի սրտէ իմմէ, և արարից
զայն ընդունարան մեղաց: Մի՛ լքա-
ներ զիս ՚ի ձեռս իմոց անկարգ ա-
խորժակաց՝ առ ՚ի վտարանջել ՚ի
քէն և լինել անհաւատարիմ առ
սէր քո սուրբ: Մի՛ թողուր ինձ բա-
րուոյ պատրուակաւ՝ հանել ՚ի ձե-
ռաց զշնորհս քո և զգերագոյն քո
մտերմութիւն: Արա՛ ընդ իս զոր և
ախորժես. ամենայօժար սրտիւ հը-
պատակեմ քեզ. այլ տուր ինձ շը-
նորհս՝ միշտ սիրելոյ զքեզ, և չառ-
նելոյ ինչ ընդդէմ կամաց քոց վասն
ամենայն երկրային իրաց: Կատա-
րեա՛ արդ յիս զսուրբ խորհուրդս
կամաց քոց, վասն որոյ եկիրդ յայց
ելանելով տառապելոյ անձինս.
խլեա՛ և կործեա՛ արմատաքի ան-
դուստ զամենայն չար յօժարու-
թիւն. հաստատեա զնա ՚ի բարւոջ,
և տո՛ւր նմա զօրութիւն՝ զդէմ ու-
նելոյ յարձակմանց թշնամեաց ի-
րոց, և նկուն առնել զնոսա մեծա-
յաղթութեամբ: Տո՛ւր նմա ճանա-
չել զունայնութիւն երկրայնոցս, և

զգերունակութիւն երկնայնոցդ ·
լից և ամրացո՛ զնա շնորհօք, զի առ
ոտն հարեալ արիաբար զմնոտիա-
պատիր հեշտութիւնս խոտան եր-
կրիս, երկնայնոցն միայն անձկացի
բերկրանաց:

Եւ զո՞ր գոհութիւն արժանաւոր
մատուցից քեզ, ո՛վ Աստուածդ սի-
րոյ, վասն գերագունիս այսմ շնոր-
հի՝ զոր շնորհեցերդ ինձ յառաւօ-
տուս՝ գալստեամբ քով և բնակե-
լովդ 'ի հոգւոջ իմում: Եթէ էր իմ
գէթ սիրտ անմեղ և վառեալ սի-
րով քով, գուցէ կարէի իմն յայն-
ժամ ընծայել քեզ զայն՝ յուսա-
լով առնել խուն մի նուէր երախ-
տեաց: Աւա՜ղ, զի ցրտին է յոյժ,
կարծր և անզգայ սիրտս այս իմ:
Այլ զիարդ և էն՝ ընծայեմ քեզ
զայն, պաղատելով մի՛ ապախտ առ-
նել զնովաւ: Մի՛ հայիր յոր ինչ էն,
այլ յայն միայն՝ զի ուղղեսցի և սըր-
բեսցի յախտից իւրոց՝ քոյին սուրբ
շնորհօք: Ահա ուխտ դնեմ, Աս-
տուած իմ, ոչ ևս կեալ ըստ աշ-
խարհի և ըստ արարածոց, ոչ ըստ

ես, այլ գլխովին ըստ քեզ և վասն քո։

Բայց աստանօր խորհուրդ մի տագնապէ զիս, սիրելիդ իմ Յիսուս, և դառնացուցանէ զանուշութիւնն՝ զոր ճաշակեմս յամենաքաղցր ընկերակցութենէ քումմէ. խէթ և երկեղուկ յիս անկանի՝ եթէ ՚ի մեկնելս ՚ի սեղանոյ աստի, մեկնեցայց առ փոքր փոքր և ՚ի քէն, մինչև իսպառ թիկնադարձոյց լինել և ՚ի մոռացօնս արկանել զքեզ։ Ո՜հ, Տէր, տո՛ւր հաստատութիւն առաջադրութեան մտաց իմոց. տո՛ւր ինձ պահել անմոռաց զխոստումն իմ՝ կալոյ հաւատարիմ ՚ի սէր քո. տո՛ւր զի և որ առ յապա ուխտք իմ մնալոյ հանապազ ընդ քեզ, եղիցին հաստատունք և անշարժք. արա՛ զի այս սէր և գոհութիւն՝ որով այժմիկ վառեալս կամ՝ մի՛ երբեք շիջցի ժամանակաւ, այլ և ևս արծարծեալ և աճեցեալ վերասցի և բարձրասցի։

ԻՂՁՔ

Արա՛, սիրելիդ իմ Յիսուս, զի 'ի տեսանելն իմ զքեզ զառաջինն՝ տեսից հաշտ և կամակ։

Ե՞րբ լիցէ, ո՛վ Աստուած իմ, զի կարացից ասել քեզ, Գտի զքեզ, զբարութիւնդ իմ, և այլ ո՛չ հանից 'ի ձեռաց։

Ե՞րբ լիցէ, ո՛վ Աստուած իմ, զի տեսից զգեղեցիկ դէմս քո։

ՅՈՒՇՔ

Ամենայն ինչ ունայնութիւն է, բաց 'ի սիրելոյ զԱստուած, և ծառայելոյ նմա միայնոյ։

Որ զանգիտէ 'ի շաղփաղփանաց աշխարհի՝ բարի ինչ երբեք ոչ գործեսցէ։

Շնորհն Աստուծոյ քաղցրացուցանէ զամենայն դառնութիւն։

ԺԷ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Խրախացիր արդ սիրտ իմ, զի
դու քեզ փաստ իրաւացի· խնդա՛
ընդ գեղեցիկ քո բախտ, զի ահա
ընկալցիս այժմիկ զմարմին և զա-
րիւն Յիսուսի Քրիստոսի փրկչին
քո, զդաստաւորին քո և զԱստու-
ծոյ· զնոյն ինքն զԱստուած, որ լու-
սով երեսաց իւրոց հիացուցեալ
յափշտակէ 'ի սէր իւր զարքայու-
թիւնն համօրէն։ Ո՛վ Աստուած իմ
սիրելի, ո՛րպէս զի մեծ եղև գթու-
թիւն քո և ողորմութիւն ընդ ծա-
ռայս քո եղկելի։ Ճշմարտիւ տա-
ծեմ յիս զհոգի՝ որ գործ ձեռաց
քոց է, զհոգի՝ որ կրէ յինքեան
դրոշմեալ զկերպարան պատկերի

քո . զհոգի՝ զոր նկատես իբրև ըզ-դուստր քոյին և հարսն սիրեցեալ, զհոգի՝ որ եւ 'ի ջրոյ սրբոյ աւազանին՝ անբիծ, սուրբ, անարատ: Այլ սակայն քանի՛ աղտեղացեալ խմով-սանն գեղ նորա, քանի՛ անարգեալ պճճեալ և եղծեալ: Ակն ունիմ թէ բաղասանն ապաշխարութեան ըն-ժրչկեաց զվէրս նորին. սակայն թէ և այժմիկ չիցէ մեղաւոր՝ այլ կրէ զնախատինս այնպիսի երբեմն լի-նելոյ :

Ո՛վ Տէր, զիա՛րդ ժպրհեցայ մե-ղանչել քեզ. և ո՞րպէս ոչ նուա-ղիմ 'ի ցաւոց յաղագս զքեզ թըշ-նամանելոյս: Վա՜յ ինձ, արժան էր մտածութեանս այսմիկ լինել իբրև զսուր՝ և թափ անցանել ընդ սիրտ իմ: Աւա՜ղ ինձ, սիրեցեալ Յիսուս, զի յոյժ անարժան եմ հաղորդա-կից լինելոյ ամենասուրբ մարմնոյդ. չեմ արժանի ծառայելոյ քեզ, և ոչ յիշման առ 'ի քէն՝ և ակնարկու-թեան քո քաղցրահայեաց աչաց: Բազմաթիւ են յոյժ մեղք իմ, և ան-հնարին չարութիւն նոցա. եղուկ

ինձ, զի խուլ եղէ բազում անգամ Թելադրութեանց քոց և խրատուց, որովք կոչէիրդ զիս 'ի շաւղաց անտի կորստեան 'ի ճանապարհս փըրկութեան: Վա՜յ ինձ, զի կարի չարաչար հատուցի փոխարէն բազմաչեղանակ հրահանգաց սիրոյ քո, որովք կամեցար բորբոքել զսիրտ իմ: Ո՛հ, ես ինքն եմ ապիրատն՝ որոյ չարութիւնք չունին պատճառանս չքմեղութեան, ոչ զտգիտութիւն, ոչ զանխորհրդածութիւն և ոչ զայլ ինչ: Վա՜յ ինձ, թէ որպիսի՛ հրէշ եղէ ապերախտութեան և անզգայութեան: Ո՛վ Տէր, շատ իսկ դառնացուցի զքեզ. արդ մի ևս լիցի ինձ յայսմհետէ միւսանգամ դրժել քեզ: Շատ իսկ սիրեցի զարարածս, յայսմհետէ քեզ կամիմ նուիրել զսէր իմ զամենայն: Սիրեցից զքեզ բովանդակ սիրով՝ որում բաւական իցեմ, և 'ի կիտէ ժամուս յայսմանէ և առ յապա՝ սիրեցից զքեզ առաւել քան զամենայն արարածս, առաւել քան զանձն իմ. փափաքեմ իսկ սիրել

տարփմամբն՝ որով սիրեցին զքեզ յերկինս սերովբէք վեհագոյնք, և որով սիրէ զքեզ քո ամենասիրելի մայր Մարիամ։

« Եղբօրորդին իմ էջ 'ի պարտէզ իւր... հովուել 'ի բուրաստանս, և ժողովել շուշանս »։... Փրկի՛չ ամենաքաղցր, քանզի իջանես յերկնից գալ 'ի հոգիս իմ. շնորհեա սմա լինել քեզ պարտէզ, որպէս զի ժողովեսցես 'ի նմանէ ծաղկունս և մրգունս հաճոյականս քեզ։ Ներեա ինձ, թէպէտ յանցեայ քեզ. ընկալ զիս, թէպէտ թողի ես զքեզ. արդ ապաշաւեալ դառնամ առ քեզ։ Շնորհեա ինձ զմաքրութիւն՝ զոր պահանջես յինէն։ Տուր ինձ զօրութիւն առնել զոր դուդ կամիս։ Լուսաւորեա ըզմիտս իմ. փարատեա զաղջամուղջ՝ որ խափանէն զնա, և չթողու նշմարել զճաճանչս սրբութեանն՝ զոր այժմիկ ընկալայց։ Ամրացո զմիտս իմ՝ մի՛ ցրուել յանօգուտ մտածութիւնս, այլ պարապել բովանդակ 'ի խորհուրդ մեծութեան պար-

գւիդ՝ զոր ահաւասիկ մատչիմ ընդունել: Եւ հուսկ հայցուածոցս, տուր զսուրբ մտածութիւնքս յեղյեղել հանապազ 'ի սրտի իմում, բորբոքելով 'ի նմին զկիղձս մաքուրս՝ առ 'ի քաջ հասու լինել, թէ մատչի ահա 'ի սեղանն սրբութեան առ 'ի ճաշակել յանարատ 'ի մարմնոյ քումմէ: Քեզ նուիրեմ զամենայն զյօժարութիւնս իմ, և փափագիմ և բաղձամ քեզ միայնոյ հաճոյ լինել: Փափագեալ անձկամ, ով տենչալիդ Յիսուս, ցանկալի վայրկենին՝ յորում բաւական եղէց գիրկս արկանել զքև. այո, տենչամ և տարփամ անձկանօք միանալ ընդ քեզ, և զմայլել քոյին ամենաքաղցր կենակցութեամբ:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Առ ի՞նչ այսքան բարութիւն և ողորմութիւն, ով Տէր... Եւ ո՞չ ածիցես 'ի յուշ՝ թէ քանի՛ մեծե-

զեւն մեղաւոր էի ես . և յերբ կամե-
ցար այց առնել և գալ 'ի հոգիս իմ
տառապեալ: Բա՛րէ, չէր այսքանոյ
բարութեան այլ պատճառ՝ բայց
սէրն քո անբաւ: Եւ արդ զի ար-
ժանի համարեցար գալ և բնակել
'ի սրտի իմում անարգի, արժանա-
ւորեա և զպէտս նորին տնտեսել:
Ո՛վ, քանի՛ մեծ են նոքին և բազ-
մաթիւք, ո՛վ գորովագութ Յիսուս.
չգիտեմ ուստի՛ սկսայց յայտնել
քեզ: Բայց ո՞ւմ կամիցիմ յայտ-
նել. դու լաւ ևս քան զիս ճանա-
չես զնոսին. հաճեաց միայն հայել
խնամով, որպէս զի գոնեա յայսմ-
հետէ նուիրեցից քեզ զամենայն
զիղձս իմ:

Երկիր պագանեմ քեզ, ո՛վ Աս-
տուած իմ, այնու խոնարհութեամբ
և խորին յարգանօք, որով երկըր-
պագին 'ի գերագոյն հրեշտակա-
կան դասուց, որք շուրջ պատեն
զաթոռով քով, և պատկառեալ
թեւաքօղիկ լինին, ոչ համարձա-
կելով հայել անդրդուելի աչօք 'ի
դէմս քո: Շնորհս մատուցանեմ

գորովեալ սրտիւ վասն բարութեան քում և անճառելի պարգևիդ, որով հաճեցար առատաձիր լինել ինձ անարժանիս՝ յայսմ առաւօտուս: Բայց, որպիսեօք մեծամեծ ըղձիւք երախտագիտութեան արժան էր լինել սրտիս: Քեզ յանձն առնեմ զիս, ով ամենասրբուհի կոյս, և աղաչեմ լինել զթերութիւն անբաւականութեանս իմոյ: Դու սրտիւ քով և բերանով դիր առաջի Յիսուսի զշնորհակալիս իմ զայս՝ զոր կամիմս և ոչ գիտեմ զիարդ մատուցանել: Եւ 'ի մատուցանելդ նմա գոհութիւն վասն արժանի առնելոյ զիս սեղանոյ հաղորդութեանս, դիր առաջի նորա և զսիրտ իմ, որ, ո՜հ, ոչ ևս է իմ, այլ բոլորովին Աստուծոյ իմոյ: Այո, ընծայեմ քեզ զայն անկեղծ մտօք, ով Աստուած իմ, և 'ի նուիրելն անդ խոստովանիմ զիս ծառայ քո հաւատարիմ. և եդեալ ունիմ 'ի մտի առնել 'ի պատիւ և 'ի փառս քո միայն՝ զոր և արարից զամենայն աւուրս կենաց իմոց:

Գնեմ 'ի մտի սիրել զքեզ այնչափ սիրով՝ որչափ բաւիցէ սիրտ իմ, մերժելով առ 'ի նմանէ զամենայն իղձ արարածական։ Եւ արդ արա ընդ իս, սիրելիդ իմ Յիսուս, որպէս և հաճոյ իցէ քեզ, բայց ես սիրեցից զքեզ միշտ։ Թէպէտ բերկրանս ինձ տացես և Թէպէտ վիշտ, սակայն ես ոչ անջատեցայց 'ի սիրոյ քումէ սրբոյ, այլ ընկալայց զնոսին որպէս ցուցակս գորովոյ խանդաղական սրտիդ, որ զամենայն 'ի կիր արկանէ առ իմ օգուտ։ «Պատրաստ է սիրտ իմ Աստուած, պատրաստ է սիրտ իմ». ահաւասիկ կամք իմ պատրաստք են, ով Տէր, յանձն առնուլ զամենայն զոր վասն իմ սահմանեսցես։ «Օրհնեցից ըզՏէր յամենայն ժամ». յամենայն ժամ՝ եԹէ բարեպատեհ և եԹէ տարադէպ, միշտ կամիմ օրհնել և սիրել զքեզ՝ զարարիչդ իմ։ Ոչ խնդրեմ և ոչ իսկ եմ արժանի մխիԹարուԹեանց առ 'ի քէն, որ անչափս դառնացուցի զքեզ մեղօք. այլ խնդրեմ միայն զհաճոյս կա-

մաց քոց ։ Քաղցր են ինձ ամենայն տանջանք, եթէ միայն հաճ՝ և հաւան լիցես դու ։ Յիսուս իմ, իմ Յիսուս, եթէ հեռի և եթէ մերձ՝ դու ինձ միշտ ցանկալի, միշտ սիրելի ։ Եթէ մխիթարես զիս և եթէ տառապեցուցանես՝ ես հանապազ սիրեցից և գոհացայց զքէն ։

Ո՛վ Աստուած իմ, ցորչափ լիցեմ ՚ի կեանս յայս, ՚ի վտանգի կամ կորուսանելոյ զքեզ ։ Բա՛րէ, երբ եկեսցէ օրն՝ յորում կարասցից ասել քեզ, եթէ Յիսո՛ւս, այսուհետև ոչ ևս կորուսից զքեզ ։ Սիրեմ զքեզ, ո՛վ անճառ բարի, այլ տուր ինձ ճանաչել զբարին մեծ զոր սիրեմ. տուր ինձ զսէր՝ զոր յինէն պահանջես ։ Տուր ինձ յաղթել ամենայնի առ ՚ի հաճել զքեզ ։ Ո՛վ Հայր յաւիտենական, վասն սիրոյ Յիսուսի Քրիստոսի՝ մի՛ մերժեր զիս, այլ ընկալ ՚ի թիւս սիրելեաց քոց և զմի ՚ի մեծագոյն յանցաւորաց երկրի ։ Կամիմ սիրել զքեզ յոյժ յայսմ աշխարհի, զի սիրեցից խապառ և ՚ի հանդերձելումն ։

Ո՛վ գորովագութ Մարիամ, մայր գեղեցիկ սիրոյ, վառեա զսիրտ իմ սիրալիր բոցովք։ Դու որ բաղձաս մեծապէս տեսանել զորդիդ առ 'ի մարդկանէ սիրեցեալ, տուր ինձ սիրել զնա զամենայն ժամացուածս կենաց իմոց։ Առ քեզ ապաւինիմ, սիրեցեալ մայր իմ և տիրուհի։ Դու որ բարեխօսես առ Աստուած վասն ամենայն պաշտօնասիրաց քոց, բարեխօս լեր և վասն իմ, և ընկալ ինձ զշնորհս զայս զոր հայցեմս 'ի քէն։

ԻՂՁՔ

Զի՞նչ կարացէ անջատել զիս 'ի սիրոյ քումէ, ո՛վ բազմագութ Յիսուս։

Մեռանել քան թէ միւսանգամ մեղանչել։

Յիսուս իմ, տուր ինձ շնորհս սիրելոյ զքեզ զբովանդակ յաւիտենականութիւն։

ՅՈՒՇՔ

Որ ջանայ զիւր կամս հաճել՝ ոչ երբէք եղիցի սուրբ։

Որ խոնարհեցուցանէ զանձն իւր՝ բարձրասցի, և որ բարձրացուցանէ՝ խոնարհեսցի։

Աստուծոյ սէրն որչափ լինի և արժեսցէ՝ չէ բնաւ մեծագնի ստացեալ։

ԺԸ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Մատչիմ 'ի սեղան քո սուրբ, ով սիրելի Յիսուս, առ 'ի միանալ ընդ քեզ խորհրդով հաղորդութեան, և ունել զքեզ ինձ 'ի վահան և 'ի պաշտպանութիւն անձին՝ ընդդէմ անդադար պատերազմաց գեհենական թշնամւոյն։ Հաւատամ յամենայն մտաց և յամենայն սրտէ, զի կաս դու ճշմարտապէս 'ի սրբագործեալ նուէրքս, զոր հանդերձեալս եմ առնուլ. հաւատամ զի ոչ այլ ինչ՝ բայց վարագոյրք իմն են սոքա և ծածկոյթք փառաց մեծվայելչութեան քո յաչաց իմոց։ Հաւատամ զի ընդունելով զնոսին 'ի սիրտ իմ՝ զքեզ ինքն ընկալայց,

զամենակարող արարիչդ երկնի և երկրի, զվեհագոյն պահապանդ ամենայնի, զմիայն և զինքնիշխան տէր ամենայն եղելոց. զքեզ՝ զբարութիւն, զգթութիւն, զարդարութիւն անբաւ, զքեզ զԱստուածդ միակ և երրեակ։

Ողբամ և ատեամ, սիրելիդ իմ Յիսուս, զդժնդակ ապաշնորհութիւնս իմ՝ որով վշտացուցի զքեզ այնքան բազում անգամ, և խոստանամ լալ անդադար զանգիտութիւն իմ։ Եւ զի՞րդ հնար իցէ ինձ չողբալ դառնապէս՝ զի նախատեցի զԱստուած անճառելի բարութեան և ողորմութեան, որ ոչ շատ համարեալ թողուլ զմեղս իմ, ներէ և կալ ինձ առաջի նորա, մերձեցուցանէ 'ի ծոց իւր, և տայ ինձ զհամբոյր հաշտութեան, և շնորհէ ինձ զանձն բովանդակ 'ի կերակուր հոգւոր։ Ո՛հ, ընդէ՞ր իսկ ոչ մեռայ մինչ չև վշտացուցեալ զԱստուած զբարերարն և զողորմած։ Ընդէ՞ր ոչ կորուսի զզգայարանս իմ՝ մինչ չև էր իմ զեղծեալ և մեղուցեալ

նոքօք։ Քանի՜ մեծ լինէր ուրախու-
թիւն իմ, եթէ զրկեալ յամենայն
բարեաց և լցեալ վշտօք՝ կարէի վս-
տահ լինել թէ զքեզ ոչ անարգե-
ցի։ Ո՛վ Տէր, եթէ մինչև ցարդ ան-
հաւատարիմ գտայ առ սէր քո,
յայսմհետէ կամիմ լինել միշտ քո
գերի։ Ոչ, ոչ ևս այլ վշտացուցից
զքեզ, ո՛վ բարութիւն իմ սիրելի։
Զօրացուցից զտկարութիւն իմ կըր-
թանօք առաքինութեան, մահա-
ցուցից զզգայարանս իմ, և մանա-
ւանդ զաչս․ փախեայց յառիթից
մեղաց, առ ոչ ինչ համարեցայց
զամենայն ակնածութիւն մարդկայ-
նի, և ապախտ արարեալ զբանիւք
որերոյն՝ եղէց յամենայնի հաւա-
տարիմ կամաց քոց։

« Ի վայրի դալարուոջ բնակեցոյց
զիս․ և ինձ ինչ ոչ պակասեսցէ »։
Ո՛վ սիրեցեալդ իմ Յիսուս, հրաւի-
րես զիս 'ի սեղան սիրոյ կերակրել
յաստուածային մարմնոյ քումմէ․
և զի՞նչ այսուհետև պակասիցէ ինձ։
« Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յու-
մէ՞ երկեայց »։ Յումէ՞ երկեայց․

յորժամ դու Աստուած իմ՝ ես լոյս իմ և կեանք: Ահա տամ քեզ զամենայն իմ բոլորովին. ընկալ զիս, և արա՛ ընդ իս որպէս և կամիս. պատուհասեա՛, մահացո՛, սպան, մաչեա: Այլ ես ասացից միշտ ընդ Յոբայ. « Թէպէտ և սպանցէ զիս, սակայն 'ի նա յուսացայց ». գնա՛ ընդ իս խստութեամբ որպէս և կամիս, բայց միայն զի քո եղէց, և տուր զգեղեցիկ շնորհս սիրելոյ ըզքեզ յամենայն սրտէ: Փախի՛ր յինէն հողմն հիւսիսաբեր և ցուրտ, հողմն երկրաւոր բաղձանաց. և ե՛կ հողմիկ քաղցր և ջերմին՝ աստուածային սիրոյ, որ շնչես 'ի սրտէ սիրելոյն իմոյ Յիսուսի: Հա՛պա, դու միայն շնչեա՛ 'ի հոգիս իմ բովանդակ՝ որ ընտրեալ է արդէն 'ի Յիսուսէ լինել իւր պարտէզ բերկրանաց: Շնչեա՛, շնչեա՛, և 'ի շնչելն քո, ո՜հ, քանի՛ նորանոր և քաղցր հոտք առաքինութեանց բուրեսցեն յինէն:

Արծարծեա՛ յիս առաւել քան զառաւել վառեալ, Տէր իմ սիրեցեալ, զիղձս եռանդունս, որովք

արժան էր ինձ գոլ բորբոքեալ ։ Տուր ինձ հաղորդութեամբս այսու զգէմ ունել ցրտութեան և ամենայն դեգևանաց մտաց, և արժանի լինել միշտ մերձենալ 'ի սեղան քո սուրբ և շահս յոլովս շահել անտի ։ Սրբուհի Մարիամ, ամենաքաղցր մայր, որում այնքան հաճոյ է կոչիլ մայր շնորհաց, խընդրեմ վասն իմ յորդւոյ քումմէ ըզշնորհսն՝ որոց կարօտիմս առ ընդունել զնա արժանապէս յայսմ առաւօտու, և կեալ սրբութեամբ զամենայն ժամանակս կենաց իմոց․ որով կարող եղէց ժամանել առ նա և օրհնել ընդ քեզ յերկինս ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Բաւէ, զինչ է զոր ընկալայ 'ի ժամուս յայսմիկ ։ Ընկալայ որ ըստեղծն զիս, որ փրկեացն զիս, որ պահէն զիս . . . զնա որով կեամ, որով շարժիմ, որով եմ ։ Զ Աստուած

ինքն ընկալայ ... այս ստուգապէս այժմիկ Աստուած կայ 'ի սրտի իմում:

Ո՜վ Աստուած իմ սիրելի, որպէս զի մեծ է բարութիւն քո առ արարած մի չնչին՝ որպիսի եսս եմ: Քանի՜ մեծ են շնորհքս այս՝ մերձեցուցանել զքեզ 'ի ծոց իմ: Ո՜վ մեծի գանձուս, զի ստացայ զմարմին քո, զարիւն քո և զաստուածութիւն: Գոհանամ զքէն Տէր իմ, և ո՛ տայր ինձ սիրտ առաւել զգայուն և լեզու ճարտարագոյն առ 'ի կարող լինել մատուցանել քեզ շնորհս յոլովագոյն ևս եռանդեամբ և նըրբագոյն զգացմամբ և ցուցիւք: Ահաւասիկ քեզ՝ ո՜վ սիրեցեալդ իմ Յիսուս, սիրտն՝ զոր խնդրես յինէն և վասն որոյ իջեր 'ի բարձանց գահուց քոց՝ այց առնել աղքատին հոգւոյ իմոյ: Քեզ նուիրեմ զանձն իմ բոլորովին, և խոստանամ յամենայնի զոր և արարից՝ խնդրել միայն զփառս քո, և զփրկութիւն հոգւոյ իմոյ, առ որս ուղղեմ յայսմ վայրկենէ և անդր զամենայն զգործս

իմ։ Մի՛ լիցի ինձ յարել 'ի հրապոյրս կրից, և հաւանել անկարգ բաղձանաց նոցին. դու միայն սիրելիդ իմ Յիսուս, դու լիցիս իմ Տէր և միակ սէր։

«Ի վերայ ձեռաց իմոց նկարեցի զպարիսպս քո»։ Այսպէս գորովեալ գթայ Աստուած 'ի վերայ հոգւոյ՝ ընտրելոյ իւրոյ։ Ի ձեռին իւրում կրէ զնա նկարեալ, զի մի՛ մոռասցի զնա. ինքեան իսկ վկայելով, եթէ դիւրագոյն է մօր մոռանալ զմանուկ իւր՝ քան ինքեան զմի 'ի սիրելեաց իւրոց. «Եւ եթէ մոռանայցէ զայն կին՝ սակայն ես ոչ մոռացայց զքեզ»։ Հսկէ հանապազ 'ի պաշտպանութիւն նորին, և ակնարկէ հանապազ 'ի վերայ նորա սիրալիր աչօք, զի մի՛ մեղիցէ նմա թըշնամի։ Ո՛հ, Աստուած իմ, բարութիւն անբաւ, որ 'ի վեր քան զամենայն սիրես զիս և կամիս զօգուտն իմ, 'ի քեզ թողում զանձն իմ բոլորովին։ Թո՛ղ պակասեսցեն ինձ այլ ամենայն նեցուկք, դու միայն մի՛ լինիր հեռի յինէն։ «Տէր, զիս

զի՞նչ կամիս առնել»։ Ահաւասիկ պատրաստ եմ ես առ ամենայն, ո՛վ քաղցր Տէր, առնել որ ինչ և հաճոյ է քեզ։ Ոչ կարեմ այլ ինչ ասել, բայց Եղիցին կամք քո։ Ոչ այլ ինչ կամիմ՝ բայց զկատարումն կամաց քոց։ Արդ օգնեա՛ ինձ սիրելիդ իմ Յիսուս. զի ես ինձէն ոչ եմ կարող առնել ինչ բարի։ Ուսո՛ ինձ՝ ոչ միայն ճանաչել, այլ և առնել զայն ամենայն՝ որ հաճոյ իցէ քեզ. «Ուսո՛ ինձ առնել զկամս քո»։

Տուր ինձ, Հայր յաւիտենական, կարող լինել ասել ճշմարտութ̃բ զոր ասէրն Յիսուս յայսմ աշխարհի. «Ես զհաճոյս նորա հանապազ առնեմ»։ Եւ զի կարացից հաստանել այսմ համանման կամաց քոց, տո՛ւր ինձ, ո՛վ Տէր, յաղթել կրից իմոց։ Նովին գթութեամբ որով հաճեցար շնորհել ինձ զԱստուածորդիդ 'ի սուրբ խորհրդեանս, հերքեա՛, աղաչեմ 'ի սրտէ իմմէ զյօժարութիւնս չարս՝ որք նեղենն զնա, և տուր ինձ շնորհս սիրելդ

զքեզ, պատուելոյ զքեզ և ծառայելոյ քեզ զամենայն կեանս իմ. որով կարող եղէց ժամանել և սիրել զքեզ, պատուել, և ծառայել քեզ յարքայութեան յաւիտեանս: Եւ զայս ամենայն խնդրեմ 'ի քէն, Տէր, հաստատուն յուսով ընդունելութեան: Չեմ արդարև արժանի լսելի լինելոյ առ 'ի քէն. այլ կարի իսկ քաջ արժանի է լսելութեան միածնին քո Աստուածորդի, որ և միացեալ ընդ իս աղաչէ ըզքեզ: Քեզ յանձն առնեմ, սէր իմ Աստուած, զծնողս, զազգականս և զբարեկամս իմ. տուր նոցա հոգի բարեպաշտութեան և սրբութեան: Քեզ յանձն առնեմ զհարսն քո՝ զսուրբ եկեղեցի. ազատեա զնա 'ի թշնամեաց իւրոց: Քեզ յանձն առնեմ զպետութիւնս երկրի, և զվարիչս նոցին. քեզ յանձն առնեմ զառաջնորդս իմ և զընկերս. քեզ յանձն առնեմ զհոգիսն որ 'ի քաւարանի, և մանաւանդ զկցորդեալսըն ինձ կապանօք տոհմակցութեան և ծանօթութեան:

ԻՂՁՔ

Արա, ո՛վ Տէր, զի Թշնամին քո մեծ՝ լիցի քո մեծ սիրելի :

Թող կորիցէ ամենայն, և մի կորիցէ Աստուած :

Տուր ինձ, Տէր, մնալ հաստատուն 'ի շնորհս քո :

ՅՈՒՇՔ

Չիք ճշմարիտ բարի բայց միայն Աստուած, և ոչ չար ճշմարիտ՝ բայց մեղքն :

Դատեսցի զմեզ Աստուած որպէս և մեք դատիմք զայլս :

Ճշմարիտն համբերութիւն մերձեցուցանէ առ Յիսուս, և առաջնորդէ մեզ ընդ ճանապարհն երկնից :

ԺԹ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Եւ այսքան ուրեմն սիրես զիս, ով սիրելդ Յիսուս, մինչև յանձն առնուլ գալ և օթևանել յաղքատիկ հոգւոջ իմում: Աստուած իմ, մեծ է քան զիս շնորհդ այդ, չեմ արժանի այդմիկ. պահեա զդա հոգւոյն բարեբաստից՝ զարդարելոցն անստգիւտ մաքրութեամբ մտաց և սրտի: Իսկ ինձ որ լցեալս եմ թերութեամբք և տնանկ յառաքինունութենէ, շատ լիցի և լինելն յանդիման աստուածային տեսոյդ, և խոնարհեալ առաջի սեղանոյ քոյ՝ խնդրել զգթութիւն և զողորմութիւն:

Ո՛հ, և զինչ 'ի բարեաց մասնէ

դստանես յիս, զի հաճիս գալ և միաւորիլ ընդ հոգւոյ իմոյ։ Արդեօք զսի՞րտ իմ. զսի՞րտ՝ որ կլկալթ կաթոգի յարարածս, ցուրտ և ապերախտ է առ Արարիչն. — սիրտ, որ զակատեալ զողմաշաղախ երկրաւս՝ 'ի մոռացօնս էարկ զքեզ. — սիրտ, որ այնքան յաճախ արհամարհեաց զքեզ։ Եւ զի՞ր փոխարէն հատոյց ցարդ եռանդագին սիրոյդ՝ որով սիրեցեր զիս 'ի վեր քան ըզմիտս և զբան։ Ո՞ւր իցեն 'ի նմա ջերմաջերմ խղճքն, որովք հալին ճշմարիտքն քո սիրովք. ո՞ւր ցումունք մաքուրք սիրոյ՝ զոր նոքայն արձակեն առ քեզ։ Ո՛վ սիրտ ապերախտ, սիրտ անզգայ, սիրտ դրուժան։ Եւ իբր հանդուրժեցեր նախատել, թշնամանել և խոտել զԱստուած՝ անբաւն բարութեամբ. և իբր հաստատութեամբ եդեր 'ի մտի ապախտ առնել զԱստուծով քով՝ առ 'ի լրումն սնոտեաց ինչ հաճոյից, ընդվայրաքնին ինչ հեշտաղօստութեան, առ 'ի վայելս վայրկենական հեշտութեան, առ 'ի կա-

տարումն ամբարտաւանութեան կամացդ, կամ անարժան ինչ կրից։ Ո՛հ, այնքան մեծ են դրժանք քո՝ զի առ ոչինչ համարեցին ամենայն զեղջդ և ապաշաւ, Թէպէտ և հիւծեալ և մաշեցիս։ Եւ արդ զիա՞րդ ժուժես տակաւին կալ անայլայլակ և անզգայ առ այսքան ամենագորով սիրարկու։ Զիա՞րդ ոչ անձկարեկ փշրիս դառն ցաւովք՝ վասն այնքանեաց Թշնամանաց և անարգանաց՝ զոր կուտեցերդ զնովաւ։

Ո՛վ ամօԹ. ո՛վ անհնարին ապերախտութեանս։ Աստուած իմ, տուր ինձ զղջալ դառնապէս 'ի վերայ մեղաց իմոց. զի սորջանք զոր զգամս արդ 'ի սրտիս՝ նիազ է յոյժ, և հեռի 'ի բաւականէն, որում ըղձիւք ըղձանամ։ Հե՛ղ յիս զղջումն զայն, Տէր սիրելի, և ընդ նմին տուր կամս հաստատունս՝ մի ևս Թըշնամանելոյ զքեզ, և մանաւանդ չանկանելոյ 'ի կիրսն՝ որ առաւել քան զայլս իշխեն յիմ վերայ։ Ոչ միայն ժախիմ շնորհս չարհամարհելոյ զքեզ, այլ և խնդրեմ շնորհս

հզօրեղապէս զքեզ սիրելոյ, յորդորելոյ և զայլս իմովս օրինակաւ՝ 'ի կրթութիւն առաքինութեանց: Փոփոխեա, ո՛վ Տէր, զսիրտս իմ, բժըշկեա յախտից նորին, անջատեա յերկրաւոր ախորժակաց. վառեա սուրբ սիրով, և ճոխացո առաքինութեամբ, և մանաւանդ խոնարհութեամբ, սիրով և մաքրութեամբ:

Փափաքեմ, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, վաղվաղակի ընդունել զքեզ 'ի ծոց իմ, որով ուխտք սրտիս կատարեսցին, և ընդունելի լիցին աղաչանք իմ: Ե՛կ արդ, ո՛վ գթած Յիսուս, եկ 'ի սիրտ՝ որ տարփայ քեզ: Ոչ շատանամ սփոփանօք ևեթ քովք՝ եթէ ոչ տացես ինձ ըզքեզ ինքնին, որ աղբիւրդ ես ամենայն մխիթարութեանց. չէն ինձ շատ պտուղք սիրոյդ, եթէ ոչ տացես ինձ զքեզ ինքն՝ որ ես ճշմարիտ և միակ գանձ ամենայն սրտից: Դու միայն բաւականանաս ինձ, և ես յօժար կամօք հրաժարիմ յամենայն մխիթարութեանց՝ առ 'ի ժառանգել զքեզ, որ ես բարութիւն իմ

համայն ։ Սիրեմ զքեզ ով սիրելիդ Յիսուս, ոչ առ հեշտի կամացս, այլ առ ՚ի քո հաճոյս, որ կամիս սիրելի լինել, և որ արժանիդ ես ամենայն սիրոյ հոգւոց մերոց ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛վ Ած իմ, Ած իմ, քանի՜ մեծ և անճառելի է գթութիւն քո առ արարած խոտան իբրև զիս ։ Եւ ուստի՛ քեզ հաճոյք լինել ընդ հոգւոյ՝ որ ապստամբ եղև ՚ի քէն․ որ բազմազան օրինակաւ արհամարհեաց զքեզ և անշքեցոյց, եկեալ զանարժան հաճոյիւք իւրովք, և զանարգագոյն իրօք աշխարհի ։ Որքան խորհիմս զայս՝ այնքան և յիմարիմ, և չգտանեմ զարման և տեղի անդորրու՝ բայց ապաւինել յանհուն գթութիւն քո և սէր ։ Գիրկս արկանեմ քեզ ՚ի սրտի իմում, ով սիրելիդ իմ Յիսուս, երկրպագեմ քեզ խորին խոնարհութեամբ, և ցաւէ ինձ՝ զի չունիմ ոչ խորհուրդ, ոչ

խղճ, և ոչ ըստ համապատշաճ մեծի շնորհիս՝ զոր արարերդ ինձ։ Իցիւ, թէ ուսանէի գոնեայ յայսմ հետէ ճանաչել առաւել քան զառաւել, և ըստ չափու որ առ ին քո ողորմութեան՝ գոնեայ աճէր 'ի սրտի իմում սէր և երախտագիտութիւն առ քեզ։ Այլ ես այնքան ցուրտ եմ՝ զի և ոչ այսուիկ բորբոքիմ. այնքան կարծր ունիմ սիրտ՝ զի և ոչ այնչափ բարութիւնք քո բաւական լինին ամոքել զնա և լուծանել յարտասուս։ Ո՛հ, այս կարծրութիւն և ցրտութիւն սրտի իմոյ, աղետալի մնացուած մեղաց իմոց, սա իսկ շարժեացէ զգութ քո 'ի վերայ իմ. և քանզի եկիր յիս առնել գթութիւն, բարձ զամենայն որ խոչընդոտն արգել լիցի շնորհաց քոց։ Շնորհեա Տէր, վասն սիրոյ քո և փափաքանաց մոռանալ զսէր երկրաւոր. դառնասցին ինձ ամենայն կենցաղականք, որք կամ ոչածեն զիս առ քեզ, և կամ առ յետին տարաբաղդութիւն իմ՝ անջատեն զիս առ 'ի քէն։ Դու

միայն, ո՛վ սիրելի փրկիչ, դու միայն գիտես զժամ մահուան իմոյ, ըզժամն՝ որ արասցէ վախճան ամենայն վտանգաց հոգւոյ իմոյ։ Եւ զվերջինս զայս ժամ 'ի քէն շնորհ. 'ի յայնմ յահաւոր պահու օրհասի կենաց իմոց՝ կա՛ց ինձ առ ընթեր շնորհօք քովք, և կոչեա զիս 'ի գիրկս քո։ Պահեա զողորմութիւն քո յայնմ պահու, ընկալ զիս 'ի դասս ընտրելոց քոց. և արա մանակից ուրախութեան և պարուց երանացելոցն առ 'ի քէն, որպէս զի միացեալ ընդ նոսին օրհնեցից զքեզ յաւիտեան։ Ո՛վ դղրդանք յաւիտենականք, ո՛վ յաւերժական սփոփանք։ Եթէ այնքան մեծ շնորհ է և մի վայրկեան վայելել զարքայութիւնն, զի՞նչ լինիցի մտանելն 'ի նոյն և ժառանգել մինչև 'ի յաւիտեան։

« Դիր զիս իբրև զկնիք 'ի վերայ սրտի քո »։ Այո, սիրելիդ իմ Յիսուս, քանզի նուիրեցի քեզ բովանդակ զսիրտ իմ, արժան է ինձ ամենայնիւ դնել զքեզ իբրև զկնիք

՚ի վերայ սրտի իմոյ. առ ՚ի փակել զմուտս նորին ընդդէմ ամենայն օտարոտի ախորժակաց սիրոյ, դիտասցեն ամենեքին զի քո է սիրտս իմ, և միայն ՚ի քո ձեռս է իշխանութիւն նորա: Քեզ տամ, ով Տէր, զսիրտ իմ աղքատին, որպէս զի արասցես ընդ նա ըստ հաճոյից քոց: Դու ժառանգեա զնա, զի ես ոչ ևս կամիմ ունել մասն: Մի թողուր զնա, աղաչեմ յիմ ձեռս, եթէ չկամիս զի դարձայց և յափշտակեցից զնա միւսանգամ առ ՚ի քէն: Ոչ ևս կամիմ կեալ, ով սիրելիդ իմ Յիսուս, բայց առ ՚ի սիրել զքեզ. և ոչ սիրել զքեզ կամիմ՝ բայց առ ՚ի հաճոյս քո: Ո՜վ որ այնքան սքանչելիս գործես առ ՚ի մտանել ՚ի սիրտ իմ՝ սրբովս այսու հաղորդութեամբ, արա և զմի զայս, զի եղէց քո բոլորովին, անբաժան և անմեկին. մինչև կարացից ասել ՚ի կեանս իմ և ՚ի յաւիտենականութեան, եթէ դու ես միակ տէր սրտի իմոյ, և հաստատութիւն իմ միայն. « Աստուած սրտի ի-

մոյ , բաժին իմ Աստուած յաւի-տեան » :

ԻՂՁՔ

Իցի՜ւ թէ կրէի շատ ինչ վասն քո , ով Աստուած իմ, որ այնքան վասն իմ կրեցեր :

Շատ իսկ ընդ վայր հարի զքեզ, Աստուած իմ, այսուհետեւ սիրեցից զքեզ :

Զօրացո զիս ընդդէմ ամենայն մարդկային ակնածութեանց :

ՑՈՒՇՔ

Աշխարհի բարիք , 'ի դէպ է , թէ սպաս հարցեն մարդկան, այլ ոչ մարդս բարեաց աշխարհի :

Ուր մեծամեծ պատուասիրութիւնք իցեն, անդ ոչ գուցէ տեղի մեծի բարեպաշտութեան :

Ոչ ոք ժամանեսցէ 'ի կատարելութիւն ուղղութեանց՝ եթէ ոչ սիրէ զաղօթս :

Ի

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ճշմարի՛տ արդեօք իցէ, սիրեցեալ Յիսուս, եթէ կամիցիս յայսմ առաւօտու արժանաւորել զիս ճաշակման քում մարմնոյ։ Ո՛վ մեծի շնորհացս, որում խոստովանիմ զանձն իմ բնաւ իսկ անարժան։ Եւ զիա՞րդ իցէ արժանի սիրոյ՝ որ ընդունարան եղև ամենայն չարեաց՝ դառնալ լինել 'ի տապանակ և սըրբարան Աստուծոյ։ Որո՞վ երեսօք համարձակեցայց ընդունել զմարմին և զարիւն Յիսուսի Քրիստոսի, և հանգուցանել և արգելուլ անդանօր զԱստուածն սրբութեան, ուրանօր մեղք այնչափ տիրեալ և յաղթանակեցին։ Ո՛ Տէր, չտան

ինձ Թոյլ յանցանք իմ մերձենալ առ սեղանն սրբութեան. այլ հրաւէրք քո կոչէն զիս անդր: Զի՞ արարից. դու կոչես զիս: — Եկից ապա, եկից ընդունել զքեզ, 'ի բաց մերժեալ զերկիւղ: Զայնք ողորմութեան քո հեղձուցանեն 'ի սրտի իմում զձայնն արդարութեան:

Ո՛, զիա՛րդ եղէ անօրէն, նենգաւոր և ապերախտ յանարգել իմում զԱստուածն իմ: Աւա՛ղ ինձ, և զորպիսի ոք ընդ վայր հարի: — Զսիրելին փեսայ հոգւոյ իմոյ, զհայրն իմ բաղձալի, զհաւատարմագոյն և զանշահասէր բարեկամն իմ. նախատեցի զամենաքաղցրն Յիսուս, զՄիածինն Աստուծոյ Հօր, որ վասն իմ եղև մարդ, որ վասն իմ եկաց յանշքութեան անարգ արուեստանոցին, որ վասն իմ ընկալաւ զանողորմ հարուածսն, որ վասն իմ պսակեցաւ սայրասուր փշովք, որ վասն իմ կախեցաւ զանարգական բնոյ խաչին, որ վասն իմ կոծեցաւ 'ի ծով ցաւոց, որ վասն իմ մատնեցաւ 'ի կտտանս սոսկալիս և 'ի

մահ անագորոյն։ . . . Ընդ վայր հարի զամենաքաղցրն Յիսուս, զԱստուածն բարութեան և անհուն ողորմութեան. զԱստուածն՝ որ սիրով իմով վառեալ սաստիկ բորբոքէր. որ և 'ի ցոյցս եռանդեան սիրոյն՝ կարգեաց զաստուածայինս զայս խորհուրդ, յորում տալ ինձ առաւել իմն քան զթագաւորութիւնս և զինքնակալութիւնս և զաշխարհս ամենայն. զխորհուրդն սրբութեան, որով տալ զանձն բոլորովին, և տալ այնքանեաւ յօժար սրտիւ, մինչև յայտ առնել թէ ծանր համարեսցի զհրաժարելն իմ ընդունելոյ զնա։

Ահանիկ նա, զոր նախատեցի մեղօք իմովք։ Ո՛վ, քանի՛ սիրուն իցէ Աստուածդ այդ, զոր այնչափ արհամարհեցի։ Այո՛, պարտ և արժան էր ինձ զոհել զամենայն քան թէ անարգել զնա։ Եւ ես անարգեցի առ 'ի վայելս վաղանցիկ հեշտութեանց, 'ի լրումն հաճոյից բարուցս և 'ի յագուրդ անարգ կրից։... Ո՜հ, արդարև հրէշ իմն եղէ անօրէ-

նութեան և ապերախտութեան յանարգել խմում զնա։ Ո՛վ ապաւում անձինս, որպէս ոչ հալեալ և ծախիմ ցաւօք ընդ անգիտութիւնս իմ. ընդէ՞ր ոչ դառնան աչք իմ 'ի յորդահոսանս արտասուաց. ընդէ՞ր ոչ խորտակի սիրտս իմ 'ի սաստկութենէ ապաշաւանացս։

Ո՛վ Աստուած իմ, զգամ յանձին զբովանդակ զամօթ և զցաւ անարգելոյ իմ զքեզ։ Քանի՜ երանութիւն էր ինձ եթէ կարէի հոսել թափել հեղեղս արտասուաց վասն բազմութեան մեղաց իմոց։ Քանի՜ շնորհ էր ինձ կարել մեռանել 'ի ցաւոց՝ ընդ թշնամանելն իմ զքեզ։ Մի՛ ևս լիցի ինձ, ո՛վ Տէր, անգոսնել զքեզ։ Պատրաստ է սիրտ իմ թողուլ 'ի բաց զամենայն ինչ՝ որ անհաճոյ իցէ քեզ, ընդունել զամենայն որ իցէն հաճոյ. պատրաստ է սիրտ իմ հրաժարել 'ի կրից և մանաւանդ... պատրաստ է ձընջել զնոսին մահացուցմամբ զգայարանաց, և փախչելով յառթից և մանաւանդ... պատրաստ է առ-

նել զամենայն որ միանգամ 'ի ճահ լիցէ լման առաջադրութեցս· պատրաստ է ծանուցանել թէ քոյ լիցէ ամենեքին, և գոչել համարձակաձայն ըստ առաքելոյն, եթէ պատրաստ է կրել և կորուսանել զամենայն առ 'ի պահել զշնորհս քո: Առ այս ամենայն պատրաստ է սիրտ իմ, և եղիցի միշտ՝ քոյին ողորմութեամբ: Յուսամ, ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, զի բարութիւնն այն՝ որով յանձն առնուս փոխել իսկ զանձնդ 'ի հոգևորական կերակուր, զօրացուսցէ զտկարութիւնս իմ և հաստատեսցէ զիս յառաջադրութեանս իմում: Եւ այժմ հայցեմ 'ի քէն զշնորհս մի՛ ևս ընդ վայր հարկանելոյ՝ այլ սիրելոյ միշտ զքեզ: Վաղվաղեա զժամ գալստեան քո, զի կարացից գործովանօք պնդել զքեզ ընդ սրտի իմում:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛վ, քանի՛ մեծ են գթութիւնք Աստուծոյ առ իս. քանի՛ մեծ ողորմութիւնք նորա: «Ի՛բրև զի՛ բարի է Աստուած Իսրայէլի»: Ես որ արժանիս էի լինել 'ի դասս դիւաց և դատապարտելոց՝ արդ շուրջ զինև ունիմ զհրեշտակս, և սերտիւ միացեալ եմ ընդ Աստուծոյ իմոյ: Ես որ 'ի բաց ստեայ 'ի ծոցոյ Յիսուսի, զի Թաւալեցայց 'ի գիրկս մեղաց, արդ ունիմ զնա առ սրտի իմում, և ըստ հաճոյս կամացս կարեմ փարիլ զնովաւ: Ես . . . ո՛վ ո՛րչափ գթած է առ իս Աստուած իմ, քանի՛ ողորմած:

Ո՛վ ապաշում սրտիս, սի՛րտ անզգայ, սիրտ քարեղէն: . . . Ե՞րբ զգածցիս դու խանդաղատանօք առ Աստուածն քո: Եւ ո՞վ կարասցէ զարթուցանել 'ի քեզ զայդոսիկ, եթէ չլինիցին այդմ բաւական անբաւ պարգևք բովանդակ անձին իւ-

րոյ, զոր տայն քեզ յայսմ առա-
ւօտու: Յիսուսն քո և Աստուածն
քո՝ 'ի բժշկութիւն վիրացդ, 'ի դար-
ման պիտոյիցդ և յառընթերակա-
ցութի քեզ, իջանէ յերկնից ծած-
կելով զբովանդակ մեծութիւն և
զվայելչութիւն իւր ընդ դոյզն տե-
սակաւ հացին. և դու տակաւին
կացցես խստացեալ առ այդքան
սէր Նորա: Ո՜վ սիրտ ապերախտ,
սիրտ անզգայ, սիրտ քարեղէն:

Ե՞րբ իցէ, ո՛վ Տէր, զի կարացից
ասել, թէ քո եմ բովանդակ որպէս
դու իմ: Ո՛վ Տէր, փափագեմ զի
սիրտ իմ մի՛ շարժեսցի և մի՛ կեցցէ՝
բայց առ 'ի սիրել զքեզ: Յաղթե-
ցեր, Տէր իմ, յաղթեցեր, քո է
սիրտ իմ: Աստ ուրեմն, զի՞նչ կա-
միս առ յինէն 'ի ցոյց սիրոյ իմոյ.
զի պատրաստ եմ առ ամենայն:
Կամիցիս զմեռելութիւն զգայա-
րանացս, որովք ըստ չափ իսկ ա-
զատօրէն վարեցայ: Կամիցիս՝ յօ-
ժար կամօք տանել ինձ նեղութեց
կենցաղոյս. կամիցիս հաւատարմու-
թեամբ լնուլ ինձ զպարտս իմ. կա-

մխցի՞ս զի եռանդեամբ կատարեցից զգործս բարեպաշտականս. կամի-ցի՞ս զի արագ արագ մերժեցից ըզ-փորձութիւնս: — Այո՛, սիրտ իմ, զայդոսիկ պահանջէ 'ի քէն Աս-տուածն քո՝ 'ի ցոյց քում սիրոյ: Զայդ խնդրէ 'ի քէն վասն պատուա-կան արեանն՝ զոր մատոյց առ Հայրն յաւիտենական 'ի քաւութիւն մե-ղաց քոց. խնդրէ 'ի քէն վասն այնր գթութեանն՝ որ թափեաց զքեզ բազում անգամ 'ի դժոխոց, ուրոց արժանի էիր յանցանօք. — զայդ խնդրէ վասն անհուն սիրոյն՝ որ ի-ջոյցն զնա յերկնից յերկիր, և ետ նմա մեռանել 'ի վերայ խաչին յօ-գուտ քո, կրելով զանարգագոյն տան-ջանսն. — խնդրէ 'ի քէն վասն ան-ձառ բարութեանն՝ որով վարեցաւ 'ի տալ քեզ զինքն բովանդակ յաս-տուածային խորհրդեան անդ. — խնդրէ 'ի քէն. . . ո՛հ խնդրէ 'ի քէն Աստուածն քո, և շատ է. զի քեզ պէտք այլոյ իմիք:

Տուր ինձ, Տէր, զշնորհս, զի մի՛ ևս յետ այսորիկ անարգեցից ըզ-

քեզ, և մանաւանդ, . . . Ոչ խընդրեմ 'ի քէն շնորհս ժամանակաւորս, ոչ փառս, ոչ գանձ, ոչ մըխիթարանս, ոչ սփոփանս երկրաւորս, այլ խնդրեմ շնորհս՝ մի՛ ևս անարգելոյ զքեզ և ոչ դադարեցայց 'ի խնդրելոյ զայս: Բայց սաստի յայսմանէ և ոչ մի՛ ինչ ոչ կարասացէ հանել զսիրտ իմ: Ներեա, Տէր, ոչ թերամտութեամբ ինչ յամառեալ պնդիմ, այլ առ բուռն ըղձանաց կալոյ 'ի շնորհս քո և սիրելոյ զքեզ միշտ:

Ընկալ զիս, ո՛վ ամենասրբուհի Մարիամ, ընդ պաշտպանութեամբ քով և 'ի թիւս սիրելեաց որդւոցն քոց: Վասն արժանեացն Յիսուսի՝ ընդ որում միացեալս եմ այժմ, վասն սիրոյն՝ որով սիրեացն նա զքեզ, վասն անհամեմատ շնորհացն՝ որով ելից զքեզ, խնդրեմ զպաշտպանութիւն քո:

ԻՂՁՔ

Յիսուս իմ, գթա յիս:
Մի՛ թողուր զիս, Տէր, 'ի ձեռս իմ:
Սիրեցեալ մայր, աղաչեա վասն իմ:

ՅՈՒՇՔ

Խոնարհն օրհնեալ է յԱստուածոյ՝ յամենայն 'ի գործս իւր:

Սէր միշտ զբարիս խորհի զընկերաց, և անմեղադիր առնէ զամենայն զխոնարհն՝ յորժամ չիցէ հնար անմեղադիր զգործս առնել:

Չսիրել զպատուիրանսն Յիսուսի՝ նշան է յաւիտենական դատապարտութեան:

ԻԱ.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Աստուած իմ, հաւատամ զի ընդունելով զհացս սրբագործեալ՝ ընկալայց զքեզ ինքն մարմնով, արեամբ, հոգւով և աստուածութեամբ, զքեզ զմիածինդ Աստուծոյ Հօր, զքեզ՝ զճառագայթդ փառաց Նորա, զքեզ՝ զնկարագիր և և զկերպարան էութեան իւրոյ, զքեզ՝ զփրկողդ աշխարհի. զքեզ՝ Աստուած և մարդ։ Այո՛, այո՛ ընկալայց ես յայսմ առաւօտուս, ըզնոյն ինքդ զՅիսուս՝ 'ի նշխարին սըրբագործելոյ, որ եղերդ 'ի յերկինս և նստար ընդ աջմէ Հօր, և որ գալոցդ ես միւսանգամ դատել զկենդանիս և զմեռեալս։

Ո՜վ բարի Յիսուս, քանի՜ խորք բարութեան և գթութեան են ինձ այսոքիկ։ Իցէ՜ թէ հաճեսցիս ելանել յայց աղքատին հոգւոյ իմոյ։ Դու առ ելանել յերկինս՝ թողեր զառաքեալսն քո․ միթէ հաճեսցիս իջանել յերկնից առ 'ի զօդել զիս ընդ քեզ։ Ո՞վ եմ ես, զի ոչ միայն ներես ինձ յանդիման լինել քեզ, այլ և ընդունիս զիս 'ի սեղան պատրաստեալ 'ի մարմնոյ քումմէ և յարենէ։ Երանի՜ թէ լինէի միայն հող և մոխիր․ իցէ՜ թէ լոկ ծառայ վատ և անպիտան … Այլ վատթարագոյն եւս եմ․ ծառայ դուլ անհաւատարիմ, որ բազում և յաճախ դառնացուցի զքեզ բազմադիմի եղանակօք։ Ո՜վ քանի՜ ծանր և բազմապատիկ են անօրէնութիւնքս, Աստուած իմ, յորս անկղիտացայ ընդդէմ տիրականի մեծվայելչութեան քո։ Դու միայն գիտես ըզթիւ նոցին և զծայրայեղ չարութիւն։ Այլ տակաւին սիրես զիս՝ մինչև տալ ինձ զքեզ զլիովին 'ի սրբումն հաղորդութեն։ Աստուած

իմ, լամ և զղջում 'ի մեղաց իմոց, որք չնաս մեծապէս հասուցին ինձ. և խոկումն՝ զի նոքիմբք տրտմեցուցի զքեզ յոյժ, տագնապէ զիս անհնարին, և ցանկամ զի տագնապեացէ զամենայն աւուրս կենաց իմոց: Ո՛վ, քանի՛ նուազ են ապաշաւանք իմ առ մեծութեամբ անարգանացն՝ որովք ընդդէմ գարձայ Աստուծոյդ բարերարի: Կամէի հալեալ լուծանիլ 'ի ցաւոց, կամէի իջուցանել յաչաց հեղեղս արտասուաց. կամէի անցուցանել զամենայն վայրկեան կենաց իմոց համակեալ 'ի տխրութիւն սուրբ: Ո՛հ, կամէի մաշել սրտիս 'ի ցաւոց՝ փոխանակ զի վշտացուցի զԱստուածդ բարի:

Ընկալ Հայր յաւիտենական ըզպատարագ Որդւոյ քո՝ զոր յայսմ առաւօտուս մատուցանեմ քեզ: Պատարագս այս հաճոյականն՝ ածցէ զքեզ 'ի գութ և 'ի գորով առ թշուառական մեղաւորսն, որք կամ զքեզ ոչ ճանաչեն և կամ ծանուցեալ՝ սիրել չկամին, և կեան մե-

կուսի 'ի շնորհաց քոց ։ Տուր նոցա լոյս և զօրութիւն՝ ելանել յողորմագին կայից իւրեանց՝ յորում կան կուրացեալք 'ի կրից ։ Եւ եթէ մեծ են մեղք նոցա, մեծագոյն ևս է պատարագն և նուէր Որդւոյ քո, զոր քեզ առաջի դնեմ ։ Աղաչեմ զքեզ վասն ամենեցուն, այլ մանաւանդ վասն իմ, որ առաւել քան զայլս վայելեալ 'ի խնամս քոյին դարձեալ ապերախտ գտայ առ սուրբ սէր քո ։ Թող ինձ զամենայն զմեղս իմ զմահացու և զներելի՝ վասն սիրոյ Յիսուսի Քրիստոսի. զամենայն զանհամբերութիւնս իմ և զսուտակասպասութիւն, զանժուժկալութիւն և զհեղգութիւն 'ի գործս բարեաց և պաշտաման ։ Զղջամ բոլորով սրտիւ 'ի վերայ մեղացս՝ որովք գարշելի գտայ յաչս քո, ո՛վ անբաւելի բարութիւն, որ արժանիդ ես սիրոյ բնաւիցս անվախճան սիրով ։

Ո՛վ Աստուած պատարագեալ, ո՛վ հաց հրեշտակաց, ո՛վ կերակուր երկնաւոր, սիրեմ զքեզ 'ի վեր քան

զամենայն, և խոստանամ յանձն առնուլ զմահ՝ քան զառնացուցանել զքեզ կամաւ և 'ի փոքունս անգամ: Տուր ինձ ո՛վ Յիսուս, ճանաչել զքեզ՝ զգեղեցկութիւնդ գերագոյն, և զանբաւ բարիդ՝ զոր սիրեմ: Տուր սրտի իմոյ քեցել յինքենէ զամենայն կիրս աշխարհային, և տալ տեղի սիրոյ քում եւեթ: Ա՛ռ 'ի ձգել զիս 'ի սէր քո և յօդիլ ընդ իս՝ գաս դու 'ի հոգիս իմ. արժան և իրաւ է ինձ ուրեմն խոկալ 'ի սէր քո միայն, երկնիր պադանել քեզ և հաճոյ գտանել յաչս քո: Սիրեմ զքեզ հոգւով չափ, սիրեմ զքեզ 'ի բովանդակ մտացս: Ցաւել 'ի սիրտ իմ զբոց սիրոյդ՝ զի շատ սիրեցից զքեզ: Ո՛վ սիրեցեալդ Յիսուս, մահ քո և արիւն են յոյս իմ բովանդակ: Վասն արդեանց քոց պաղատիմ զշնորհս քո, զի կացից հաւատարիմ մինչև ցմահ և մի՛ զոք սիրեցից բաց 'ի քէն:

Ընկերեա՛ ինձ ներկայութեամբ քով ո՛վ սրբուհիդ Մարիամ, մինչդեռ գնամս ընդունել զԱստուածորդիդ քո 'ի սուրբ հաղորդութեան:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Աստուած իմ կեայ յիս, և ես կեամ 'ի յԱստուածն իմ։ Որպիսի՜ բաղդ, որպիսի՜ երանութիւն։ Ու ո՞ կարիցէ կշռել զբարձրութիւնն՝ յոր համբարձայ ես յայսմ վայրկենի։ Զի՞նչ են առ ինև մեծամեծքն աշխարհի՝ ամենայն իշխանութք և զօրութեամբ իւրեանց. և զի՞նչ աշխարհք՝ որոց տիրեն նոքա, առ Թագաւորան երկնից և երկրի, զոր ես կրեմ 'ի ծոցի։ Ո՜վ սիրեցեալ Յիսուս, խոստովան լինիմ քեզ, զի յապուշ կրթին միտք իմ, և խորհուրդք իմ ալեկին 'ի նշոյլս բարձրութեանն՝ յոր ածեր հաներ զիս։

Աստուած փառաց և մեծվայելչութեան 'ի ծոցի իմում։ Ո՜վ Տէր, զի՞րդ կարացից ես հաւատացանել զկշիռ այսքանեաց անձառելի բարեաց քոց, իբրև այնքան մեծ ես և բարձր, զի անհնար է ինձ ըստ ար-

ժամուոյն շնորհ ունել ընդ պար-
գեւացն զորս տաս ինձ։ Իսկ արդ զի՞նչ
առնել իցէ ինձ՝ զի եւտուր զքեզ
ինքն հոգւոյս իմոյ կերակուր երկ-
նաւոր։ Վարանիմ ես եւ ոչ գտա-
նեմ ելի աղագս՝ յայտնելոյ քեզ
զերախտիս իմ։ Եւ ոչ կարեմ այլ
ազգ գոհանալ զքէն՝ բայց լուռ լի-
նելով։ Եւ ո՞ այլ ինչ ազգ կարասցէ
առնել։ Ոչ մի երգ գոհութեան
ոչ կարէ 'ի կշիռ գալ ընդ գերա-
գունի տուեցելոյդ ինձ շնորհի· ոչ
հրեշտակ երկնից, եւ ոչ նոյն ինքն
սրբուհին Մարիամ, կարիցեն ըստ
արժան բաւականին շնորհ ունել
զԱստուծոյ՝ վասն այսքանոյ մեծի
պարգեւի։ Զի՞նչ ուրեմն գործեցից
ես ապիկարս՝ փոխարէն շնորհակա-
լեացն որոց պարտական եմ։ Ո՛վ
Աստուած իմ եւ սէր իմ, եթէ ոչ գը-
տանես յիս ինչ՝ որ հաճոյ իցէ յաչս
քո, հայեաց աղէ յԱստուածորդին
քո, որ ընծայէն քեզ զարդիւնս
չարչարանաց իւրոց· « Ահա գառն
Աստուծոյ »։ Ահա հրեշտակն զոր
տեսեր երբեմն պատարագեալ 'ի

փառս քո և 'ի փրկութիւն մեր 'ի վերայ խաչին սեղանոյ: Անգին արիւն նորա հեղեալ յիմ փրկութիւն՝ աղերսէ քեզ վասն տկարութեանս իմոյ, և լինի փոխարէնս մեծի պարգևին՝ զոր շնորհեցեր ինձ յայսմ առաւօտու:

Եւ զինչ այլ մարթ էր քեզ առնել ո՛վ սիրեցեալդ իմ Յիսուս՝ առ 'ի ձգել զիս 'ի սէր քո: Ո՛վ, որպէս ամաչեմ ընդ անցեալ վարս իմ անարժանս. զի ընդ չնչին հաճոյից և ախորժակաց՝ փոխանակեցի զշնորհս քո, և բազում անգամ դարձուցի քեզ թիկունս: Եւ ընդէր ոչ արտասուեսցէ սիրտս այս 'ի խոկալն՝ զի երախտագէտ առ արարածս՝ ապերախտ գտաւ առ Աստուածդ բարութեան և սիրոյ:

Թո՛ղ ինձ ուրեմն զժխտութիւն իմ. ցաւէ ինձ ընդ այն մեծապէս և ակն ունիմ հանդիպել 'ի քեն թողութեան, որ եսդ անբաւ բարի: Շնորհ ունիմ զքէն՝ սէր իմ, զի ոչ ըստ որում արժանիս էի՝ առաքեցեր զիս 'ի դժոխս ոմանս, այլ մին-

չև ցայս վայր երկայնամիտ եղեր։ Ո՛հ, համբերութիւնն ևեթ որով տարար ինձ՝ բաւական էր 'ի հարկանել զիս սիրով քով։ Եւ ո՞ երբէք այնչափ համբերեաց ինձ, որպէս դու, որ եսդ անբաւ գթութիւն։ Եւ ահա յետ այնքան ժամանակաց դարձեալ մատչիս առ իս, զի սիրեցից զքեզ։ Ոչ կամիմ յետ այսորիկ ընդդէմ կալ սիրոյ քո. ահաւասիկ բոլորովին 'ի քեզ յանձն առնեմ զիս։ Շատ իսկ վշտացուցի զքեզ, այսուհետև կամիմ սիրել զքեզ։ Սիրեմ զքեզ, սէր իմ կատարեալ, սիրեմ զքեզ Աստուած իմ, արժանիդ անվախճան սիրոյ. և կամիմ միշտ կրկնել 'ի յաւիտենիս յայսմիկ և 'ի հանդերձելումն, Սիրեմ զքեզ, սիրեմ զքեզ։

Ո՛հ, քանի՛ ամս կորուսի՝ յորս կարէի սիրել զքեզ, Աստուած իմ, և յառաջել 'ի սէր քո։ Այլ Յիսուս, արիւն քո է յոյս իմ. ակն ունիմ, զի մի՛ ևս կասեցայց 'ի սիրելոյ զքեզ։ Չգիտեմ, թէ ո՛րչափ ևս մնայցէ ինձ կեալ, այլ զմնացեալ

ժամանակին՝ եթէ շատ և եթէ սա-
կաւ՝ զամենայն նուիրեմ քեզ։
Այո՛, Տէր իմ սիրեցեալ, կամիմ
տառապիլ հաճել զքեզ, կամիմ սի-
րել յար զքեզ, և սիրել եռափա-
փագ տենչմամբ սրտիս։ Քանի՛ քաղ-
ցրութիւն, որպիսի՛ ձոխութիւնք,
որպիսի՛ պատիւ։ Դու միայն ես
և լցիս իմ սէր և ամենայն ինչ.
բայց ես չեմ իմիք ձեռնհաս, եթէ
ոչ շնորհք քո հասցեն ինձ 'ի թի-
կունս։ Հա՛ր խոցեա՛ զսիրտ իմ՝ բո-
ցակիզեա՛ զաս սիրով քո սրբով, և
կապեա ընդ քեզ. և այնպէս ուժ-
գին պնդեա՛, զի մի՛ բնաւ մեկնեցի
'ի քէն։ Դու խոստացար սիրել զայ-
նոսիկ որք սիրեն զքեզ. «Ես որ
զիս սիրեն՝ սիրեմ»։ Արդ սիրեմ
ես զքեզ. ներեա՛ համարձակու-
թեանս, և սիրեա զիս. մի՛ թողուր
ինձ զթել յինչ՝ որ ստիպեսցէ ըզ-
քեզ չսիրել զիս։ «Որ ոչն սիրէ՝
մնայ 'ի մահու»։ Աղէ պահեա
զիս 'ի մահուանէս յայսմանէ. զի
ոչ ուստեք այնպէս երկիւղ է ինձ՝
որպէս 'ի զրկմանէ սիրոյ քո։ Տուր

ինձ հանապազ սիրել զքեզ. որպէս զի և դու միշտ սիրեսցես զիս, և այսպէս սէր մեր լիցի յաւիտենական, և մի՛ լուծցի յաւիտեան և եւս: Շնորհեա՛ ինձ զայդ. տո՛ւր Յիսուս, վասն արդեանց քոց, յորս յուսացեալ անձն ունիմ՝ սիրել ըզքեզ յար, և սիրել առ 'ի քէն միշտ: Մարիամ մայր Աստուծոյ և իմ, աղերսեա զՅիսուս վասն իմ:

ԻՂՁՔ

Ընկալ Յիսուս 'ի սէր քո՝ զմի յապաշնորհ որդեաց քոց:

Այսօր տամ զիս բովանդակ քեզ՝ սէր իմ և ամենայն ինչ:

Տուր ինձ, ո՛վ մայր սիրոյ՝ վստահութիւն մեծ, դիմել առ քեզ հանապազ:

ՅՈՒՇՔ

Հեշտութիւնն սուղ է, պատուհասն յաւիտենական:

Սիրտք մեր ստեղծեալ են վասն

Աստուծոյ, և 'ի նմա միայն գտանեն զհանգիստ ։

Որ ոչն իմիք ցանկայ՝ բաց յԱստուծոյ, նա զամենայն զոր կամի՝ ունի ։

ԻԲ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Եւ ո՞վ եմ ես, սիրելիդ Յիսուս, զի ցանկաս այց առնել ինձ յայսմ առաւօտուս. զո՞ր բարի տեսանես յիս՝ զի կամիս խոնարհիլ յաթոռոյ փառաց քոց առ իջանել՚ի ծոց իմ: Եւ չիցե՞մ ես ստեղծուած ամենազազիր, որ առ ժահահոտութե̄ մեղաց իմոց արժանի էի խոտիլ ՚ի քէն մինչև իսպառ. չիցե՞մ ես ստեղծուած ապախտաւոր, որ փոխանակ անչափ բարեացն զոր շնորհեցեր ինձ՝ ոչ այլ ինչ հատուցի բայց Թշնամանս, անարգանս և նախատինս: Ո՞չ ապաքէն եղև սիրտ իմ որջ զզուելի կրից և բնակութիւն ոխերիմ Թշնամւոյ քո. զիա՞րդ ապա կամիս օթեւանս առնել յիս:

Ո՛հ, և քանզի այդչափ գթու-
թեամբ կոչես զիս մերձենալ առ
քեզ և ընդունել զքեզ, չկամիմ և
ես յուսահատ լինել վասն թշուա-
ռութեանս իմոյ. այլ զմի զայս շնորհ
պաղատիմ 'ի քէն՝ զի յաղթեսցես
ինձ 'ի ձեռն սուրբ սիրոյ քո, և
այնպէս փոխեսցես զսիրտ իմ. զի
բոլորովին վառեցայց 'ի քեզ սիրա-
բորբոք կայծակամբք: Մերժեա յի-
նէն զամենայն սէր՝ որ չէն վասն քո,
զամենայն բաղձանս՝ որ քեզ ան-
հաճոյն է, զամենայն խորհուրդ՝ որ
ոչ բերիցի առ քեզ: Յս՜ իմ, սէր իմ,
գանձ իմ, կամիմ հաճել զքեզ միայն
և քեզ միայնոյ քաղցրանալ: Զքեզ
միայն կամիմ սիրել 'ի բոլոր սրտէ,
քանզի դու միայն ես արժանի ա-
մենայն սիրոյ իմոյ:

Եղո՛ւկ ինձ, զի երբեմն անփոյթ
եղէ սիրելոյ զԱստուած՝ որ այսպէս
սիրելին է, մանաւանդ եթէ կեցի
ապստամբ 'ի կամաց նորա սրբոց:
Այլ արդ որովհետև տաս ինձ լոյս,
Աստուած գթութեանց, չկամիմ
դարձեալ անհոգանալ: Խառնեմ

արդ, ով հայր յաւիտենական, զա-
ղօթս իմ՝ ընդ աղօթից Յիսուսի Քրիստոսի. առ սէր որդւոյ քո այդորիկ՝ զոր յայսմ առաւօտու երթամ հիւրընկալել, աղաչեմ զքեզ, զի նախ շնորհեսցես ինձ թողութի̅ մեղաց՝ զորս ապաշաւեմ 'ի բոլոր սրտէ: Ծանո ինձ զանբաւ արժանիսդ առ 'ի սիրելոյ 'ի մէնջ, և ըզպարտսն զոր ունիմ առ 'ի սիրել զքեզ վասն բարութեանց քոց և վասն սիրոյն զոր ունիսդ առ իս: Զօրացո զիս քակել զանձն իմ յամենայն երկրաւոր ըղձից և կրթել զսիրտ իմ 'ի սիրել զքեզ միայն ըզծայրագոյնդ բարի, որ այնչափ սիրեցեր զիս: Աղաչեմ զքեզ լուսաւորեա և զամենայն անձն՝ որ զքեզ ոչ ճանաչէ և զրկեալ իցէ 'ի շնորհաց քոց. տուր ամենեցուն զպարգևս սիրոյ քո սրբոյ, զի ամենեքին ծանիցեն զքեզ, և զի ամենեքին սիրեսցեն զքեզ:

Յիսուս իմ, դու ես սէր իմ և յոյս իմ. տուր ինձ 'ի մերձենալս իմում 'ի սուրբ մատուցարանն

յընդունել զքեզ՝ ասել քեզ 'ի բոլոր սրտէ*, Ահաւասիկ սէր իմ, ահաւասիկ սէր իմ, ահաւասիկ բովանդակ սէր իմ։ Տուր ինձ մեկնիլ 'ի սրբոյ սեղանոյ քումմէ՝ սրտիւ բորբոքելով սիրով քով, ահարկու թշնամեաց և սարսափելի համանգամայն դժոխոց։

Ամենասրբուհի կոյս, աղաչեա վասն իմ զԱստուածորդին քո․ աղաչեա զնա տալ ինձ շնորհս հաստատութեան և յարատեւութեան 'ի սուրբ սէր նորա։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛հ Աստուած իմ, և ե՞րբ իցէ մարթ անբաւիդ մեծվայելչութեան՝ արժանի համարել այց առնել սա անարգագոյնս 'ի ստեղծուածոց քոց։ Եւ որո՞յ բարւոյ ակն ունիցիս յինէն միանալովդ այսպէս ողեխա-

* Զոր ինչ ասէրն սուրբն Փիլիպպոս Ներեան։

նեալ 'ի ծոց իմ և լինելովդ մի ընդ իս ։ Զիա՞րդ կարացից կշռել զորի-տուր այսպիսւոյ գողտրիկ սիրոյ ։ Ո՛հ, ընդէ՞ր ոչ վառիս, սիրտ իմ, սիրով Յիսուսի · հի՞մ ոչ հալիս խանդակաթ հրայրեցիւք ։ Զիա՞րդ խիստ և անզգայ զդէմ կալցիս Աստուծոյ որ ընծայեաց քեզ բովանդակ զանձն իւր · զի՞նչ ևս այլ մարթէր նմա առնել՝ առ 'ի պարտաւորել զքեզ 'ի սէր ։

Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, որպիսի՛ ամօթ, որպիսի՛ շառագունանք են ինձ յիշելն՝ զի այնպէս սակաւ սիրեցի զքեզ, մանաւանդ եթէ և այնչափ թշնամանեցի ։ Տո՛ւր ոք ինձ գէթ առ յապայն լնուլ ըզպակասութիւն այսպիսեաց մեծամեծ յանցանաց, և փոխել 'ի թըշնամութենէս 'ի մեծ քո սիրելութիւն ։ Յուսամ, ո՛վ Տէր, վասն լեալ յարդիւնս չարչարանաց քոց · երկրպագեմ քեզ և մեծարեմ ըզքեզ յանդընդոց չքութեան իմոյ, հանգոյն որդանն որ սողայ 'ի հող անարգութեան իւրոյ ։ Բեկելով

սրտիւ շնորհ ունիմ քեզ վասն այսպիսւոյ մեծի բարերարութե̃ն, զոր պարգևեցեր ինձ յայսմ առաւօտուս՝ եկաւորութեամբդ յայցելութիւն թշուառական հոգւոյս ։

Զքեն գոհասցին ընդ իմ ամենասրբուհի մայր քո, ամենայն հրեշտակք և սուրբք ։ Նուիրեմ քեզ զամենայն գովութիւնս և զշնորհակալիս՝ որք մատուցան քեզ և մատուսցին յամենայն արարածոց։ Սիրելիդ Յիսուս, դու գիտես իմ իմիք կարօտիմս. գիտես զի առանց քո ոչ ինչ կարեմ. գիտես զապիկարութիւն իմ. արդ գթա յիս ։ Տուր ինձ խոնարհութիւն, սրբութիւն սրտի, սէր և կամակցութիւն կամաց քոց սրբոց, զթողութիւն մեղաց իմոց, և շնորհս ոչ ևս այլ երբէք մեղանչելոյ. տուր ինձ արհամարհել իսպառ զամենայն, և սիրել զքեզ միայն ։ Տուր ինձ՝ վասն սիրոյ քո՝ համբերութիւն առ ամենայն դառնութիւն և ծանրութիւն՝ որ թէ պատահիցեն ինձ ։

Հա՛պա, ծախեա բոցով սիրոյ քո

սրբոյ և խլեա յինէն զամենայն երկ-
րաւորս յօժարութիւնս : Տուր ինձ
կեալ յայսմհետէ և առ յապա
պարտապան այնքանեաց շնորհաց՝
զորս արարեր ինձ, և այնչափ սի-
րոյն՝ զոր ցուցեր ինձ : Եթէ արհա-
մարհեցի երբեմն զմտերմութիւն
քո, արդ յարգեմ զնա քան զամե-
նայն թագաւորութիւնս աշխարհի,
և նախամեծար առնեմ զվայելս քո
քան զամենայն մեծութիւնս և հա-
ճոյս երկնից և երկրի :

Ո՛վ հայր իմ, առ սէր Յիսուսի
Քրիստոսի մեկնեա զիս յամենայնէ.
տուր ինձ համբերութիւն և համա-
կամութիւն 'ի նեղութիւնս և 'ի
ձախորդութիւնս : Տուր ինձ միտս
ճնշել զանձն իմ վասն սիրոյ քո.
տուր ինձ հոգի ճշմարիտ խոնար-
հութեան, այնպէս զի խնդացից ընդ
համարել մարդկան զիս անարգ և
բծկան ումն. «Ուսո՛ ինձ առնել ըզ-
կամս քո» : Ընկալ, Աստուած իմ,
'ի սէր քո զմեղաւոր՝ որ երբեմն
թշնամանեաց յոյժ զքեզ, բայց
արդ կամի սիրել զքեզ ճշմարտա-

պէս և լինել բովանդակ քո։ Աստուած յաւիտենից, ակն ունիմ սիրել զքեզ յաւիտեանս։

Եւ քանզի սիրեմ զքեզ, փափաքեմ և տեսանել զնոյնդ ծանուցեալ և սիրեցեալ յամենեցունց։ Վասն այսորիկ, Տէր, ջանացայց օրինակաւ և բանիւ ծանուցանել և սիրելի առնել զքեզ։ Ամենայն իմիք ակնունիմ յարդեանց քոց, ով Յիսուս Քրիստոս, և 'ի բարեխօսութենէ քումմէ, ով մայր իմ Մարիամ։

ԻՂՁՔ

Զո՞ր ճոխութիւն, զո՞ր հաճոյս, զո՞ր պատիւս. զքեզ միայն կամիմ, Աստուած իմ։

Պնդեա զիս, ով Տէր, առ գիրկս քո, զի մի բաժանեցայց 'ի քէն յաւիտեան։

Արա զիս քո բոլորովին, ով սիրելիդ Յիսուս, մինչև իցեմ մեռեալ։

ՅՈՒՇՔ

Նեղութիւնք առօրեայ կենցաղոյս՝ ոչ ինչ իմն են առ յաւիտենական վայելչուք հանդերձելոյն :

Որ ամօթ համարեսցի խոստովանել զՔրիստոս և զօրէնս նորա, խոտեսցի և յամօթ լիցի 'ի մեծի աւուր դատաստանին :

Որ չէն յամենայնի կրթեալ 'ի կցորդութիւն կամացն Աստուծոյ՝ ոչ մեծ ինչ շահ արարեալ իցէ նորա 'ի կատարելութեան :

ԻԳ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Երկրպագեմ քեզ, ով սիրելիդ իմ Յիսուս, և կցորդեմ զերկրպագութիւնս իմ ընդ անդադար մատուցման պաշտաման հրեշտակաց, որք անկեալ առաջի ահաւոր և մեծի վայելչութեան քո՝ զեղուն սիրով 'ի նուէր յարգութեան փառաց քոյ: Աղէ ընկալ և զյարգութիւն նուաստ արարածոյս՝ որ հաստատուն մտօք փափաքէ նուիրել զանձն իւր ողջոյն՝ առ սէր քո. մի՛ հայիր 'ի յանցանս սորա, այլ հայեա՛ց 'ի սուրբ չարչարանս և 'ի դառն մահ խաչիդ: Եթէ իցեմ աղտեղի, կարող ես զիս սրբել. եթէ տկարացեալ 'ի հաւատս, կարես հաստա-

տեղ ակնարկութեամբ քով վերըստին, որպէս զի սիրեցից զքեզ որքան յուրասան կայցի. և եթէ ծանունս եղի քեզ հալուածս, մի՛ անյոյս կորիցէ հոգիս իմ, փոխանակ զի ոչ դադարես դու լինել ինձ միշտ 'ի հայր ցանկալի, փեսայ խանդակաթ, բարեկամ հաւատարիմ, և վերջին իմ բարի: Եթէ վատնեցի վայրապար զշնորհսն ընկալեալս 'ի մկրտութեան, այլ ոչ իսպառ ծախեցի զգթութիւն քո, որ անբաւ է և այժմ որպէս և 'ի սկզբանն՝ առ միշտ կարեկից ինձ լինել:

Ե՛կ արդ, ո՛վ սիրելիդ Յիսուս՝ 'ի հոգիս իմ, որ ցանկայ քեզ. եկ դարման տար խորոց թշուառութեան իմոյ՝ խորովք ողորմութեան քո. եկ զերծո զիս 'ի վնասակար սիրոյ, զի միշտ ձգնեցայց սիրել զքեզ միայն զմիակ գանձդ իմ: Ե՛կ բժշկեա՛ զիս յամենայն ցաւոց, զի կարացից վաստակել առ նախանձ փառաց քոց, և տանել համբերութեամբ ամենայն վշտաց զոր միանգամ հաճեսցիս առաքել ինձ զամենայն աւուրս

կենաց իմոց. ցո՛յց ինձ առաւել զմեծութիւն անբաւ ողորմութեան քո, որպէս զի 'ի նա հարեալ սիրով՝ եդից զամենայն յոյս իմ 'ի քեզ: Կամիմ, ո՛վ Տէր, հաղորդութեամբս այսու՝ գոհութիւն մատուցանել քեզ վասն ամենայն բարեաց, զոր շնորհեցեր աշխարհի և մանաւանդ ինձ՝ հեղգոյս մեղուցելոյ, որ արժանի էր մերժիլ 'ի վեհափառ տեսութենէդ, փոխանակ այնքանեաց ապախտեացն: Կամիմ, Տէր, ընծայել քեզ զգոհութիւնս զայս առ 'ի յաւելուլ ինձ յեռանդն սիրոյ քո, որպէս զի գտից շնորհս լինելոյ նմին 'ի զոհ կատարեալ: Ո՛վ մայր իմ Մարիամ, որ տարար յորովայնի զԱստուածն՝ զոր հանդերձեալ եմ ընդունել յայսմ առաւօտու, օգնեա ինձ, որպէս զի սիրով և խոնարհութեամբ ընկալայց:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛վ Տէր իմ, ո՞վ լիցեմ ես, արարած չնչին յարարածս, որ պղծեաց զանձն հազարաւոր մեղօք, և ապըստամբեցաւ բազում անգամ 'ի սիրոյ քո սրբոյ: Եւ զի՞արդ կամիցիս այսքան մարդասիրել առ իս, մինչև ընդունել 'ի գիրկս քո և միանալ ընդ հոգւոյս սեռն սիրով: Ո՛վ Տէր, հիանամ յոյժ ընդ բարութիւնդ որով կարգեցեր զխորհուրդս զայս՝ 'ի հաղորդել քեզ ընդ որդւոց քոց սիրելեաց. բայց առաւել ևս հիանամ ընդ քաջալերն քո առ իս՝ առ ընդունել զքեզ 'ի սիրտ իմ: Զի՞արդ կարիցեմ ապրել՝ եթէ չիցեմ կլկալթ կաթոգի 'ի քեզ՝ որ պատարագեցար առ սէր իմ: Զի՞արդ կարիցեմ հեռանալ առ 'ի քէն, մինչդեռ ծանեայ զմեծ և զանպատմելի բարութիւն քո. կամ զի՞արդ իշխեցից զանց առնել զխորհօք քովք: Եւ ո՞ւմ վառեալ ծխեա-

ցի սիրտս իմ՝ եթէ ոչ քեզ՝ որ եսդ սորին կենդրոն, խաղաղութիւն, գանձ և լրումն: Այո՛, սիրեմ ըզքեզ, ո՛վ Յիսուս, և սիրեցից զքեզ միշտ: Շատ անգոսնեցի զքեզ երբեմն, ընդ երկար մոռացայ զքեզ, ո՛վ սիրելի բարիդ իմ: Եւ քանզի մինչդեռ հակառակն իսկ էի քեզ՝ դու գթութեամբ պահեցեր զիս կենդանի, մնալով զղջման իմոյ, այժմ 'ի դառնալս իմում 'ի շնորհս քո՝ կամիմ սիրել զքեզ որչափ և կարիցեմ. կամիմ քո լինել, ուղղելով առ քեզ զամենայն միտս իմ, զխղձս և զամենայն գործս իմ 'ի փառս քո: Սիրեմ զքեզ, ո՛վ բարութիւն անբաւ, սիրեմ զքեզ առաւել քան զիս և քան զկեանս իմ. և զի սիրեմս՝ ընծայեմ քեզ զհոգի, զմարմին, և զկամս իմ բովանդակ: Արա՛ ընդ իս զինչ և հաճոյ է քեզ, հաւանիմ կամակար. շատ է ինձ թէ տայցես լինել քո ճշմարիտ սիրեցող. ընդ այդ՝ և շընորհս կալայց քեզ զամենայն աւուրս կենաց իմոց:

Բայց, ով փրկիչ սիրեցեալ, ըղձեռս քո 'ի վերայ իմ, հեղ 'ի սիրտ իմ զգանձս շնորհաց քոց. հայեաց յիս աչօք քաղցրութեամբ քո. խօսեաց առ սիրտ իմ, և տուր ինձ ճանաչել ստուգապէս զկամս քո. «Լսելի արա ինձ զբարբառ քո»: Եւ քանզի շնորհեցեր զմեծն՝ տալով ինձ զքեզ ողջոյն, պարգևեա և ըղփոքրն՝ տալով ինձ զշնորհս քո, և հաստատելով ուխտ հաշտութեան և դաշն հարսնական հաւատոց և սիրոյ՝ անլուծանելի 'ի յաւիտեանս ժամանակաց:

Ուսո ինձ, ով Յիսուս, գթով քով մեծաւ՝ կատարել միշտ և յամենայնի զսուրբ և զարդար կամս քո, և գնալ ուղղութեամբ 'ի ճանապարհս սրբոց պատուիրանաց քոց: Ուսո ինձ գարշել խորշել յամենայն մեղաց, սիրել և ընդգրկել զառաքինութիւնս, և մերժել 'ի սրտէ իմմէ զամենայն գաղջութիւն, առ 'ի բորբոքել օր ըստ օրէ 'ի սպասու ծառայութեան քում: Ուսո ինձ անտեսել զիս քաջ, և զամե-

նայն զգործս իմ 'ի կեանս յայս • որպէս զի կարող եղէց ճանաչել զյանցուածս իմ և զգուշանալ․ և յելանելն իմ յաստեացս՝ զերծանել յահաւոր աղետից՝ յաւիտենականն առ 'ի քէն դատապարտութեան :

ԻՂՁՔ

Տէր , կամ մեռանել կամ կրել :

Լուսաւորեա , ով Յիսուս սիրելի , լուսով քով զխաւար մտաց իմոց :

Բորբոքեա , ով սիրելի Յիսուս , սիրով քով սրբով՝ զխիղձս սրտի իմոյ :

ՅՈՒՇՔ

Աստուած՝ կամի միայնակ թագաւորել 'ի սիրտս մեր :

Ճշմարիտ փառք քրիստոնէի է՝ անարգելն ընդ Քրիստոսի :

Որ ոչ կիզու 'ի կենցաղումն հրով երկնային սիրոյ , այրեսցի 'ի հանդերձեալն անշէջ հրով ․

ԻԴ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ամենասուրբդ Աստուած, որ 'ի հաղորդել ինձ զսրբութիւն քո, ըզքեզ ինքն ետուր ինձ նախ օրինակ, և արդ կամիս լինել ինձ կերակուր․ և զի՞նչ կարացից հատուցանել փոխարէնս անբաւ բարութեանդ: Յապուշ կրթիմ յիշելով զսէր քո անհուն՝ զոր բաշխեսդ ինձ առատապէս: Ոչ շատացար հեղլով զամենայն արիւն քո 'ի խաչին յիմ փրկութիւն, այլ և տենչա՜լ տենչաս զի եկից և ես ընդունել զքեզ սրբով հաղորդութեամբս, առ 'ի միանալ ընդ քեզ գլխովին: Ո՛հ, ցանկալիդ հոգւոյ իմոյ, եկ, եկ ուրեմն, առ որ հրաւիրեմս հրաւեր-

բո՛ք հառաչանօք, և ողջագուրեմ ամենավառ ըղձիւք. եկ 'ի սրբել զսիրտ իմ ապիկար՝ քոյին ընթերակայութեամբ, շնորհօք և զօրութեամբք: Քաղջածանօթ են քեզ խոչ և խութ՝ որ կրծիւն լինին անբաւ բարեացդ, և ոչ թողուն զիս միանալ ընդ քեզ կատարելապէս: Ո՛հ, աղաչեմ և խնդրեմ, բա՛րձ զայն 'ի միջոյ, հեռի՛ արա յինէն, վանեա՛ 'ի սրտէ իմմէ, զի դու միշտ կեցցես յիս և ես կեցից ցանկ 'ի քեզ: Յիշեա զի գին եմ արեան քո. քո եմ կրկնակի, զի ստեղծեր զիս և զի փրկեցեր. և արդ իբրև զքո՝ խնամեա՛ զիս և տածեա՛: Աղաչեմ զքեզ, սրբեա՛ զհոգի իմ յամենայն աղտոյ, և արա սպիտակ իբրև զձիւն, զի ընկալայց արժանապէս զամենասուրբ մարմին քո՝ զխոստացեալն ամբծաց և սրբոց սըրտիւք:

Հաւատամ, ո՛վ սիրելիդ Յիսուս, զի դու ես Որդի Աստուծոյ, զի մեռար վասն իմ, և զի բնակես յամենասուրբ հաղորդութեանս՝ առ 'ի

լինել ինձ կերակուր։ Վասն արդեանց չարչարանաց քոց և մահուան խաչի՝ յուսամ սիրել զքեզ հանապազ և ժառանգել զքեզ 'ի յաւիտեանս։ Սիրեմ զքեզ՝ զսիրելիդ իմ, և ցաւէ ինձ յոյժ զի կարի սակաւ սիրեմ զքեզ։ Կամէի սիրել զքեզ որքան կարող ոք իցէ սիրել յայս կեանս, տինա որքան կարեն սերովբէք երկնայինք, և նոյն ինքն մայր քո Մարիամ։ Ո՛հ, բորբոքեա՛ յարաժամ 'ի սրտի իմում զբոց սիրոյ քո սրբոյ, և արա՛ զիս լինել քո բովանդակ։

Անձկամ տարփանօք, ո՛վ Աստուածդ իմ, տօնելի վայրկենին և ժամուն՝ յորում ընկալայց զքեզ 'ի սիրտ իմ և անդեցից 'ի ծոցի իմում։ Փափաքեմ քեզ, որպէս ախտաժէտն՝ բժշկի, և ստրուկն՝ ազատչի իւրում։ Եկ, Հոգիդ սուրբ, 'ի լեզուս յայս, և հրով քով սրբեա՛ զսա. Եկ 'ի սիրտ իմ, և բոցով քով վառեա՛ զսա։ Պատրաստեա՛ և յարդարեա՛ յիս տեղի՝ արժանաւոր հիւրոյն մեծի՝ որ աւադիկ մատչի մտանել առ իս։

Հայր յաւիտենական, նուիրեմ քեզ զհաղորդութիւնս զայս 'ի գոհութիւն ամենայն բարեացդ՝ զոր շնորհեցեր առ համօրէն մարդիկ։ Տուր ինձ յարածնալ 'ի սէր քո սուրբ, և զամենայն շնորհս՝ զոր վասն իմ խնդրեն 'ի քէն՝ Յիսուս, Մարիամ և ամենայն սուրբք՝ իմ բարեխօսք։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Բարեաւ է գալուստ քո, Տէր Յիսուս, յանարժան հոգիս իմ. գոհանամ զքէն յամենայն սրտէ, և կամիմ գոհանալ՝ ըստ քոց արժանեաց։ Այլ զո՞ր գոհութիւն կարէր մատուցանել գեղջուկ ոք գռեհիկ՝ տեսանելով եկեալ 'ի խրճիթ իւր զթագաւորն, բայց եթէ անկանել յոտս նորա գետնամած, և կալ 'ի լռութեան և 'ի հիացման՝ գովելով զմեծ նորա բարութիւն։ Անկանիմ և ես յոտս քո, ո՛վ Թագաւորդ իմ երկնաւոր, և 'ի խորոց անդնդոց

թշուառութեանցս իմոյ՝ քեզ երկիր պագանեմ: Յառաջագոյն երկիր պագի քեզ՝ նկատելով 'ի փառսն քում՝ յաջմէ Հօր յաւիտենականի. և այժմ երկիր պագանեմ տեսանելով զնոյն ինքդ եկեալ 'ի սիրտ իմ, և փոխեալ 'ի կերակուր և յըմպելի հոգւոյս: Միաւորեմ զերկրպագութիւնս իմ ընդ մատուցելոյն քեզ յամենասրբուհւոյ կուսէն Մարիամայ՝ յընդունելն զքեզ 'ի ծոց իւր մաքուր. ոչ թէ և սիրէի որքան նայն սիրեաց:

Փրկիչ իմ սիրելի, քանի՜ մեծ են գթութիւնք քո առ իս՝ արարածս ապերախտ: Ես որ բազում անգամ ընդդէմ կացի կամաց քոց սրբոց, դարձուցի անարգապէս թիկունս առ քեզ, անգոսնեցի զշնորհս քո. իսկ դու յայսմ առաւօտու՝ կազմ և պատրաստ առ խղճս իմ, ելեր 'ի գահոյից փառաց քոց և մտեր 'ի ծոց իմ: Ո՜հ, սիրելիդ Յիսուս, իցի՜ւ թէ սիրեալ էր իմ ցանկ զքեզ, կամ գէթ սիրեալ էր յառաջնմէ անտի մտից քոց առ իս հաղորդութեամբս

այսու։ Ո՛հ, ապերախտութեանս մեծի՝ 'ի փոխարէն այնքան հնարից սիրոյ քո։ Զի՞նչ ես կարէիր առնել ինձ 'ի ստանալ քեզ զսիրտ իմ, քան եթէ ընտրել զիս 'ի բիւրուց ստեղծուածոց և կերակրել ամենասուրբ մարմնովդ քով։ Իսկ ես յանդգնեցայ մեղանչել ընդդէմ քո, բարկացուցանել զքեզ, և հատուցանել չար ընդ բարւոյ...։

Զղջամ, սիրելիդ իմ Յիսուս, 'ի վերայ ապերասանութեանս, և խոստանամ կեալ և մեռանել 'ի սէր քո, որ կեցեր և մեռար 'ի սէր իմ։ Ո՛չ, մի՛ ես լիցի ինձ ապստամբել 'ի քէն, և մերժել զշնորհս քո։ Մի՛ ես լիցի ինձ մեծամտել 'ի վերայ այլոց, և զհետ երթալ կամաց իմոց չարաց. այլ ծանեայց զիս հեզ և տրուպ՝ որպէս և եմ։ Մի՛ ես լիցի ինձ դրդուիլ սրտմտութեամբ ընդ ընկերի իմոյ, այլ զամենայն թշնամանս՝ զոր թէ ոք ածցէ 'ի վերայ իմ՝ ընկալայց 'ի քաւութիւն մեղաց իմոց, և թողից նմա արագ արագ։ Մի՛ ես լիցի ինձ դաւանալ ընդ-

դէմ հրամանաց առաջնորդաց ի-
մոց, այլ մեծարել և պատկառ կալ
նոցին՝ որպէս երկնաւոր պատգա-
մաց: Եւ եթէ այսն պիղծ՝ ջանա-
հնար լիցի մոլորեցուցանել զիս,
զինեցայց անդէն ընդդէմ նորին,
առեալ 'ի բուռն զսուսեր զօրաւոր
անուանդ քում սրբոյ, և ոչ եղից
'ի բաց՝ մինչև տեսից զանձն իմ ձո-
ղոպրեալ 'ի հրապուրանաց բան-
սարկուին: Ա՛ռ, ընկա՛լ յինէն, Տէր,
զխիրտ իմ, և հռչակեա՛ քո լինել
զայն, և արա՛ քո բովանդակ, որպէս
և 'ի ձեռն ամենասուրբ հաղորդու-
թեանս՝ հաճեցար լինել իմ հա-
մակ:... Ո՛վ, որպիսի՛ մեծութիւնք,
որպիսի՛ բերկրանք, որպիսի՛ պա-
տիւք. Աստուած իմ և ամենայն
ինչ, Ած իմ և ամենայն ինչ: Դու
միայն, ո՛վ Տէր, դու միայն ես զանձ
իմ և ամենայն բարութիւն իմ, և
բաց 'ի քէն ամենայն ինչ ունայնու-
թիւն է, պատրանք և ցնորք: «Թող
կալցեն մեծատունք զմեծութիւնս,
թագաւորք զթագաւորութիւնս.
ինձ փառք և արքայութիւն՝ Քս̃ է»:

Հայր յաւիտենական, վասն սիրոյ Որդւոյ քո, զոր յայսմ առաւօտու ընկալայ 'ի սիրտ իմ, շնորհեա՛ ինձ զպարգեւս սիրոյդ քո սըրբոյ, և զյարամնալն 'ի շնորհս քո սուրբ: Տո՛ւր ինձ զճշմարիտ խոնարհութիւն, որով 'ի բաց հերքեցից յանձնէ զսէր ունայնութեան, և սիրեցից զանարգանս և զարհամարհանս: Տո՛ւր ինձ ոգի մեռելութեան, զի հրաժարեցայց յախորժակաց՝ որք ոչ բերցին առ սէր քո սուրբ: Յանձն առնեմ քեզ և զամենայն ազգականս իմ, զբարեկամս և զթըշնամիս. յանձն առնեմ և զհոգիս քաւարանին, և զամենայն հէգ մեղաւոր:

ԻՂՋՔ

Սրբեա՛, Տէր, զհոգի իմ յամենայն արատոյ մեղաց:

Տո՛ւր ինձ, Տէր, ճանաչել զունայնութիւն երկրայնոցս, և զգերակայութ̃ի բարեացն երկնայնոց:

Օրհնեա՛լ Յիսուս, Մարիամ և սուրբ Յովսէփ:

ՑՈՒՇՔ

Որ կամի լինել սուրբ, եղիցի խոնարհ. իսկ որ կամի լինել ամենասուրբ՝ եղիցի ամենախոնարհ։

Որ ոչ սանձէ զզգայութիւնս իւր, նա մանաւանդ զտեսանելիս՝ ոչ երբէք լիցի անարատ։

Ամենայն ախտասէրք՝ դժոխք իմն են հանապազ անձամբ անձանց։

ԻԵ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ահա ընդ հուպ ընկալայց 'ի ծոց իմ զմանանայն երկնային, զկերակուրն հրեշտակաց, զբերկրանս արքայութեան, զամենասիրելին Յիսուս. զգորովալիր զայն Յիսուս՝ որ առ սէր իմ ոչ անխայեաց 'ի քըրտունս, ժուժկալեաց ծանր ծանր աշխատանաց, չարչարեցաւ անհնարին ցաւովք, վարեաց կեանս դժընդակս, եհեղ մինչև 'ի յետին շիթ՝ զարիւն իւր պատուական, մեռաւ թաթաւեալ 'ի յանդունդս ցաւոց: Զսիրելին Յիսուս, որ արդ բազմի փառօք ընդ աջմէ ծնողին իւրոյ յաւիտենականի, և ոչ դադարէ հայցել 'ի նմանէ վասն իմ զգութ և ըզ-

մարդասիրութիւն ։ . . Զկաթողին զայն Յիսուս, որ յաւուր միում դատելոց է զիս և տալոց զսոսկալին վճիռ՝ որ սահմանեսցէ ինձ պայման յաւիտենական, կամ կարգել ՚ի սպառ ՚ի վայելս ընդ ընտրելոց յերկինս, և կամ դատապարտել ՚ի կրճտումն ատամանց և ՚ի պատուհասակոծ լինել ընդ դիւաց ՚ի գեհենի ։

Եւ զի՞նչ դու խորհեցիս արդ հոգի իմ, կամ զի՞նչ արասցես Աստուծոյ քում՝ որ գալոցն է ՚ի գիրկս քո ։ Հա՛պա, անդէն զշնաւատս քո, և անկեալ յերկիր առաջի անբաւ մեծվայելչութեան նորա՝ խոնարհեցո զքեզ և յաւել նմին յերկրպագութիւն ։

Երկիր պագանեմ քեզ, ո՛վ Թագաւոր սրտի իմոյ, և յառաջ մատուցանեմ զանձն իմ ընդունել ըզքեզ, լի պատկառանօք և մեծարանօք անսահման մեծութեանդ․ և ոչ ինչ ունելով ՚ի մատուցանել քեզ, արկանեմ առաջի քո զտառապեալ սիրտս իմ, նուիրել քո-

վանդակ սիրոյ քում սրբոյ և հպատակել յամենայնի աստուածայնոց կամաց քոց։ Կապեա զիս բոլորովին ընդ աստուածային կամաց քոց, որպէս զի համարձակ եղէց և ես ասել ընդ զուարճացեալ աշակերտին քո, եթէ «Ես կապեալ Յիսուսի Քրիստոսի», կապանօք սիրոյն։ Միացո զիս, Տէր իմ, ընդ քեզ․ և արա զիս քո բոլորովին․ որպէս զի մի՛ յայլ ինչ պարապեցայց, բայց միայն ՚ի քեզ և ՚ի սէր քո սուրբ։ Ցոյց արա ինձ համապատ զբարին՝ զոր կամեցար դու ինձ, զսէրն զոր ցուցեր, և զամենայն զոր արարեր, որպէս զի և ես սիրեցից զքեզ։ Հայր յաւիտենական, վասն սիրոյ որդւոյ քո լցո՛ զուշ մտացս խորհրդովք սրբովք, որովք կարող եղէց ընդունել զնա եռանդեամբ ՚ի սուրբ հաղորդութեանս յայսմիկ։ Զօրացո, Հոգի՛ աստուածային, զկամս իմ սուրբ ըղձիւք, որպէս զի կարող եղէց մերձենալ և ընդունել սիրով զտենչալին Յիսուս, որ առ սէր ևեթ գայ ՚ի ծոց իմ։

Ամենասրբուհի Մարիամ, օգնեա ինձ յայսմ պահու, և գի՛տ վասն իմ շնորհս արժանապէս ամփոփելոյ յիս զամենասիրելի և զքաղցրագութ զորդին քո :

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Զի՞ գործես հոգի իմ, կամ զի՞նչ խորհիս . գիտիցես զի արդ այժմ տաճար ես կենդանի՝ յորում բազմի խնկապէս փրկիչն քո և Աստուած . և իշխիցես կալ վայրապար և ցնորեալ մտօք առաջի այնքանոյ փառաց և մեծվայելչութեան : Բա՛րէ, չէ ժամս յանօգուտս ծախելոյ, այլ ժամ թանկագին խնդրելոյ և 'ի ձեռս բերելոյ զամենայն շնորհս՝ որոց պէտս ունիս յԱստուծոյ կենդանւոյ և ճշմարտէ, որ ագանի արդ 'ի քեզ : Այժմ բաց են երկինք, և ամենասուրբ Երրորդութիւնն սիրալիր աչօք հայի 'ի վերայ քո, նկատելով զառիթ բերկրութեանց իւրոց հանգուցեալ 'ի գիրկս քո :

Այժմիկ և ամենասրբուհին Մարիամ, հրեշտակք, և պաշտպան քո սուրբք՝ առաւել իմն ժամին վասն քո շնորհս յԱստուծոյ: Արդ տես մի՛ կորուսանել և մի բոպէ ՚ի պատուական վայրկենիցս. ուշ առա անձին խօսել ընդ Աստուծոյ զկարևորացն առ յաւիտենական փրկութիւն քո: Տանիս ՚ի քեզ տէր ամենաբաւական, հայր ամենասիրելի, փեսայ խանդակաթ և Աստուած խնամող. և ուստի՞ քեզ երկիւղ. խնդրեա և վստահ լեր. բա՛ց զսիրտ քո, զօրացո զհաւատս, հայցեա ՚ի Յիսուսէ շնորհս առատս, շնորհս երկնայինս. շնորհս արժանիս Աստուծոյ:

Սիրելիդ իմ Յիսուս, որովհետև եկիր յիս տալ ինձ շնորհս, տուր ինձ զաճումն կենդանի հաւատոյ, յուսոյ, սիրոյ և զղջման: Տուր ինձ զխոնարհութիւն, զհեզութիւն, ըզմաքրութիւն, զհամբերութիւն և զամենայն առաքինութիւնս: Փոփոխեա զսիրտս զայս զակատեալ զաշխարհայնովք և լի անձնասիրու-

Թեամբ, և տուր ինձ սիրտ ըստ հաճոյից կամաց քոց, զի խնդրեսցէ հանապազ զառաւելութիւն փառաց քոց, և ամենայն բաղձանօքն հանգիցէ 'ի քեզ, 'ի սէր քո սուրբ։ «Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում»։

Ամենասուրբ Երրորդութիւն, Աստուած ամենակալ, լուր աղաչանաց իմոց։ Ոչ ևս է ժամս ժըխտելոյ առ անարժանս զշնորհս, զի ոչ ես միայն հայցեմ զայդ առ 'ի քէն՝ այլ 'ի միասին Յիսուս պաղատի ընդ իս։ Եւ եթէ չիցեմ ես արժանի լսելի լինելոյ առ 'ի քէն, արժանի է դոցին Յիսուս Քրիստոս՝ իմ փոխանակ, որ աղաչէ իսկ ընդ իս, յիս և վասն իմ։ Հայր յաւիտենական, յուշ առնեմ քեզ ըզխոստմունս Յիսուսի Քրիստոսի, որ ասացն մեզ, եթէ զոր ինչ և խնդրեսցուք 'ի քէն յանուն նորա, տացի մեզ աներկբայ։

ԽՂՃՔ

Ո՛վ Յիսուս խաչեալ, աղբիւր բերկրութեան իմոյ, տպաւորեա՛ ՚ի սրտի իմում զվիշտս քո։

Յամենայն ժամ օրհնեալ և գովեալ լիցի խորհուրդն ամենասուրբ և ամենասուտուածեան։

Թագաւորեսցէ յաւիտեան սէր իմ Յիսուս, և յոյս իմ Մարիամ։

ՑՈՒՇՔ

Աստուած բարձր և փառաւոր առնէ զայնոսիկ՝ որք խոնարհեցուցանեն և փոքրկացուցանեն զինքեանս առ սէր Նորա։

Որչափ ոք ունիցի և ստանայցէ իրս աշխարհայինս, յաւելցէ ՚ի չարիս և ՚ի կարօտութիւն։

Իմաստութիւն աշխարհիս միշտ խենթիւ հայի յաւետարանն Քրիստոսի։

ԻԶ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՜վ ամենասիրելի սիրտ իմոյ Յիսուսի, որ արժանիդ ես 'ի ժառանգել զամենայն սիրտ եղական. սիրտ վառեալ ամենասուրբ սիրով, տուր և իմոյ սրտիս բորբոքել նովին բոցով՝ որով դուդ վառիս: Ո՜վ հուր ծախիչ, ծախեա՛ զիս բոլորովին, և տուր ինձ նոր կեանս՝ սիրոյ և շնորհաց: Այնպէս զօդեա՛ զիս ընդ քեզ, զի մի՛ երբէք բաժանեցայց 'ի քէն: Ո՜վ սիրտ բացեալ յապաւէն հոգւոց, ընկալ զիս: Ո՜վ սիրտ տըրտմեալ վասն մեղաց աշխարհի, տո՛ւր ինձ զզղջումն ճշմարիտ 'ի վերայ մեղաց իմոց: Աղէ վասն արդեանց քոց, սէր իմ Յիսուս, վիրաւորեա՛

զիս, կապեալ զիս, պնդեալ զիս, միացո զիս բոլորովին ընդ սրտի քում: Դնեմ 'ի մտի այսօր շնորհօք քովք առնել յամենայնի զհաճոյս քո, առ ոտն հարկանելով զամենայն զմարդկային պատիւ, զթիւր յօժարութիւնս, զամենայն ախորժակս իմ և զհեշտութիւն, որք խափան լիցին ինձ առնել զկամս քո լիապէս: Տուր ինձ Յիսուս, այնպէս առնել այսուհետև զի ամենայն գործք իմ, խոհք իմ և ամենայն բաղձանք իմ լիցին յամենայնի ըստ աստուածայնոց քոց կամաց: Ո՜վ սէր Աստուծոյ, հալածեա 'ի սրտէ իմմէ զայլ ամենայն սէր:

Փրկիչ իմ սիրելի, դու մեռար վասն ամենեցուն զի մի՛ ոք անձին ևեթ կեցցէ, այլ միայն 'ի քեզ, որ վասն ամենեցուն ետուր զկեանս քո. « Ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ որ 'ի վերայ նոցայն մեռաւ »: Իսկ ես զանցեալ զկեանս իմ կեցի վասն իմ միայն, ոչ խնդրելով զքեզ. այսու-

հետև 'ի քեզ միայն կամիմ կեալ, որ մեռարդ վասն իմ. զամենայն մոռանալ կամիմ, առ 'ի խորհելոյ սիրել զքեզ միայն որ սիրեցեր զիս յոյժ յոյժ:

Յիսուս իմ սիրելի, այդքան ծանրագնոյ եղև քեզ գալդ և միանալ ընդ հոգւոյս՝ ամենաքաղցր խորհըրդեամբս այսուիկ, մինչև արժան համարել զկիրս դառն և անարգականն մահուան: Ե՛կ արդ փութով միանալ ընդ հոգւոյ իմոյ, որ երբեմն Թշնամի էր քո, իսկ այժմ՝ քաջալերիմ Թէ հարսնացաւ քեզ քոյին շնորհօք: Ե՛կ փեսայդ իմ Յիսուս, զի այլ ոչ ևս կամիմ մատնել զքեզ, այլ որպէս հարսն սիրելի փափագեմ զհաճոյս քո խորհել և խնդրել միշտ: Ե՛կ, էկ, ո՛վ Աստուած հոգւոյ իմոյ, և արա զսա լինել քո բոլորովին: Ե՛կ և հալածեա՛ յինէն զամենայն խիղճ երկրաւոր, զի զքեզ միայն սիրեսցէ անձն իմ, զքեզ միայն խորհեսցի, քեզ միայն փափաքեսցէ և զքեզ միայն խնդրեսցէ: Եւ զո՞ այլ սիրե-

ցից՝ եթէ միայն զքեզ ոչ սիրեցեմ, զբարութիւնդ անբաւելի, որ սիրեցեր զիս մինչև ցմահ։ Ո՛վ Յիսուս, զիա՞րդ եղեր ինձ մեծարանս ընդունել զքեզ 'ի ծոց իմ։ Քանզի ես թիկունս դարձուցի քեզ, և դու ոչ դարշիս գալ և բնակել յիս։ Եղուկ ինձ, եթէ յետ այնքան շնորհաց՝ կորուսից միւսանգամ զսէր բարեկամութեան քո։ Տէր, սիրեմ արդ զքեզ բոլորով սրտիւ, և ցաւէ ինձ յոյժ զի անարգեցի երբեմն զքեզ։ Ոչ ես կամիմ դառնացուցանել զքեզ, այլ սիրել ամենայն զօրութեամբ իմով։ Վէրք քո, արիւն քո, մահ քո, յոյս իմ են։ Տուր ինձ զհաստատութիւն յարանալ 'ի կամս յայս, տուր ինձ յամենայն փորձութիւնս իմ դիմել առ քեզ. աճեցո՛ յիս հանապազ զսէր քո սուրբ և արա ընդ իս որ ինչ և հաճոյ իցէ քեզ։ Ո՛վ Մարիամ՝ յոյս իմ, եկ յօգնել ինձ, որ ամենայնի կարօղդ ես առ որդւոյ քում. մաղթեա՛ ինձ զշնորհս արժանապէս ընդունելոյ զնա 'ի խորհրդեանս սըրբում։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ո՛վ Յիսուս իմ սիրելի, և ո՞վ իցեմ ես՝ զի հաճեցար տալ ինձ ըզքեզ բովանդակ: Դու Թագաւոր երկնից և երկրի, ես քո ծառայ անպիտան. դու Աստուած ամենայն բարութեանց, և ես մեղաւոր խոտան: Ո՛հ, ընդէ՞ր ոչ վառիմ բոլորովին սիրով քով. ընդէ՞ր ոչ լուծանի սիրտս իմ համայն 'ի բոց սիրոյ քո. ընդէ՞ր ոչ բորբոքին յիս խղճք ըստ պատշաճի գթութեանդ քում:

Եղուկ ինձ, քանի՛ ամս կորուսի՝ յորս կարէի սիրել զքեզ և սըրբել զանձն իմ. զիա՞րդ 'ի զուր վատնեցի զնոսին, զքեզ անարգելով և զհոգիս իմ մատնելով յապականութիւն: Այլ գթութիւն քո, սիրելիդ Յիսուս, յուսացուցանէ զիս հատուցանել յայսմհետէ փոխանակ ժամանակին կորուսելոյ, կըրկնապատկելով զսէրն՝ զոր քեզ պարտէի:

Զի՞նչ տաց տրիտուր, ո՜վ իմ Յի-
սուս, ընդ մեծի պարգևին՝ զոր ա-
րարեր ինձ, տալով զքեզ ինքն 'ի
խորհրդեանս յայսմիկ սրբում։ Ա-
հաւասիկ տամ քեզ զմարմին, զհո-
գի, զկամս և զազատութիւն իմ։
Իսկ եթէ գիտես զի և յայսմհետէ
դարձեալ ունիցիմ ապստամբել 'ի
քէն, այժմէն մինչդեռ յուսամ լի-
նել 'ի շնորհս քո՝ զրաւեա՛ զիս 'ի
կենաց։

Ո՜վ Աստուած հոգւոյ իմոյ, որ
արժանիդ ես սիրոյ՝ առաւել քան
զամենայն արարածս, ուխտեմ ըզ-
քեզ միայն ունել այսուհետև կէտ
ըղձից իմոց, զքեզ ընտրեմ՝ 'ի վեր
քան զամենայն բարութիւն աշ-
խարհի։ Կամիմ կալ մնալ քեզ հա-
ւատարիմ մինչև ցմահ. ոչ ևս կա-
միմ տեսանել զիս հեռացեալ 'ի
քէն։ Յանձն առնում զամենայն
համակամութեամբ զոր ինչ և ա-
րասցես ընդ իս 'ի կեանս յայս և 'ի
յաւիտեանս։ Ո՜վ Բան մարմնա-
ցեալ, արեամբ քո լուա՛ զսիրտս
իմ, և տպաւորեա՛ 'ի նմա որպէս

զկնիք սիրոյ՝ զանուն քո՝ Յիսուս։ Վասն անբաւ գթութեանց քոց՝ որով իջեր յերկիր, աղաչեմ զքեզ տուր ինձ զգալ զփափագ սիրոյ քո սրբոյ, այնպէս վառեալ նովին զհոգիս իմ՝ զի արհամարհեալ զամենայն երկրաւորս, մի՛ այլ ինչ նկատեսցէ բայց 'ի քէն, մի՛ այլ ինչ խորհեսցի բաց 'ի քէն. մինչև նոյն ինքն սէր՝ որ ետ քեզ մեռանել վասն իմ 'ի վերայ խաչին, տացէ և ինձ մեռանել 'ի քեզ առ 'ի կեալ 'ի քեզ յաւիտեանս։

Մի՛ թողուր զիս, Տէր, որս լինել կրից իմոց. յիշեա՛ զի գործ ձեռաց քոց եմ, մի՛ թողուր լինել ինձ կապուտ դիւաց։ Արդարև մեղաւոր էի, այլ արդ եդի 'ի մտի սիրել զքեզ յոյժ։ Տուր ինձ տեսանել զքեզ կենդանի հաւատով, առ 'ի ճանաչել և սիրել զքեզ։ Տեսից զկամս քո, զի կատարեցից. տեսից զանձն իմ, զի խոնարհ եղէց. տեսից և զաստուածային դէմս քո՝ զի մի՛ ևս այլ բաժանեցայց 'ի քէն։ Տէր, ես վայրապար ծախեցի զամենայն ինչս

իմ, որպէս զանառակ որդին, այլ ոչ և զգթութիւնս քո։ Տուր ինձ զկամս քո ունել միակ առաջնորդ կենաց իմոց։ Գրեա՛ 'ի խորս սրտի իմոյ զօրէնս սիրոյ քո սրբոյ, այնպէս՝ զի մի՛ ևս ջնջեսցին։ Հայեաց, ո՛վ Հայր յաւիտենական, 'ի չարչարանս որդւոյ քո, որոյ արիւն սպաղատի վասն իմ առ 'ի քէն գթութիւն։ Զայսոսիկ քեզ նուիրեմ, վասն այսորիկ զերծո՛ զիս 'ի ցանկութեանց աշխարհի, և լից զիս սիրով քով սրբով։ Տուր ինձ ըզշնորհս մեռանելոյ 'ի միաբանութիւն կամաց քոց, հաւատով և կատարեալ սիրով։ Միացո՛ զիս, ո՛վ կոյս ամենօրհնեալ բոլորովիմբ ընդ որդւոյ քում։ Խօսեաց ընդ նմա վասն իմ, և ընկալ վասն իմ զշնորհս՝ գնալոյ զհետ թելադրութեանց նորին սրբոց։ Ուսո՛ ինձ զլռութիւնն՝ որովք առաքինացար յերկրի, և քեցեալ զատո՛ զիս յամենայնէ՝ որ չիցէ յԱստուած, զի կարացից սիրել զնա ամենայն զօրութեամբ իմով։

ԻՂՁՔ

Յիսուս, դու ետուր ինձ զքեզ բովանդակ, տաց և ես զանձն իմ քեզ ողջամբ:

Կամիմ առնել փոխարէնս վըշտացն զոր հասուցի քեզ, ո՜վ սիրեցեալ Յիսուս, գործելով որչափ կարեմս 'ի հաճոյս քո:

Ո՜վ Մարիամ, վերջին ապաւէն մեղաւորաց, գթա՛ յիս:

ՅՈՒՇՔ

Կա՛մ հանապազ ուրախանալ ընդ ընտրեալսն յերկինս, կամ հանապազ տանջիլ ընդ ամբարիշտս 'ի դժոխս:

Չյառաջելն 'ի Ճանապարհի Տեառն՝ յետադարձութիւն է:

Որ սուրբ ոք կամիցի լինել՝ հալածեսցէ 'ի սրտէ իւրմէ զամենայն որ չէ Աստուած:

ԻԷ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

«Զի՞նչ ի՞նչ առնել էր այգւոյ իմում և ես ոչ արարի»։ Մի՛տ դի՛ր, ով անձն իմ, զի՞նչ ասիցէ քեզ Յիսուսն քո։ Զի՞նչ ինչ հնար ինձ առնել վասն քո՝ զոր ոչ արարի։ Առ սէր քո եղէ մարդ. տէրս՝ ծառայ եղէ. ծնայ 'ի գոմս, և մեռայ վասն քո 'ի վերայ անարգ կոճեղ փայտի։ Յիմոյս տուեալ քեզ զմեծութիւն և զփառս, 'ի քոյոցդ չառի ինչ ինձ՝ բաց 'ի մերկութենէ և աժգունութենէ։ Ետու քեզ զմեծութիւն աստուածութեանն՝ և առի ինձ զանարգանս մարդկութեան։ Քեզ զարժանիսն իմ տըւեալ՝ յանձին կալայ զտառապանս

քո։ Ետու քեզ զանմահութիւն իմ, և առի ինձ զմահ քո։ Զերանութիւն արքայութեան իմոյ տրւեալ քեզ՝ կալայ յանձին զտառապանս աքսորանաց քոց։ Զի՞նչ այլ առնել էր ինձ վասն քո։ Եւ սակայն սէր իմ գիտաց առնել աւելի ևս, և արար զայն ճշմարտապէս։ Յետ մեռանելոյ վասն քո՝ կամ եղև ինձ թողուլ զիս յայսմ խորհրդեան, և տալ զիս բովանդակ՚ի կերակուր հոգւոյ քո. և ահա յայսմ իսկ առաւօտու՝ սպասեալ մնամ գալոյ՚ի ծոց քո։

Ո՜վ սիրեցեալ Յիսուս, և ո՞ իցեմ ես՝ որում կամիցիս առնել զմեծագոյնդ շնորհաց։ Եղո՜ւկ եմ ես. առաքեալք՝ բովանդակ աւուրբս տասն պատրաստեցին զանձինս յընդունելութիւն հոգւոյն սրբոյ՝ առանձնութեամբ, պահօք և մեռելութեամբք. և ես ի՞բր յանդգնեցայց մատչել և ընդունել զքեզ անպատրաստ գոլով. ես որ հոլացեալս եմ բազում մեղօք, ցրտացեալ և անզգայ եղեալ առ սէր քո։...

Ո՛վ Տէր, և ո՞ր ցաւ բաւական իցէ 'ի հատուցումն այնքանեաց զզուանաց՝ որովք զզուեցի երբեմն զքեզ: Եւ դու յայսր ամենայնի վերայ հանդերձեա՞լ կայցես գալ և բնակել յարարածս չնչինս և ապերախտ:

Ո՛ տայր եթէ չէր իմ բնաւ մեղուցեալ առ Աստուածդ անբաւ բարութեան և ողորմութեան, որ գրաւական թողութեան սարջանաց որդւոց քոց շնորհես և տաս զքեզ բովանդակ: Ո՛հ, անդր քան զամենայն չափ անխրատեցար սիրտ իմ, 'ի սիրելն զնենգաւոր արարածս, 'ի մոռացօնս արկեալ զԱրարիչն: Ո՛ ծայրագոյն սէր իմ, քանի՜ անգոսնեցար յինէն:... Բարութիւնք երկրաւորք, մի՛ այսուհետև այլում իմիք ակն կալջիք յինէն՝ բայց եթէ արհամարհանաց:... Արարածք, մի՛ այլում իմիք ակն կալջիք յինէն, բայց առ խոտանս համարելոյ:... Շատ իսկ սիրեցի զձեզ. մի՛ ևս յայսմհետէ սիրտ իմ հարցի 'ի սէր այլոյ՝ բայց միայնոյ ամենասիրելւոյ տեառն իւրոյ: Այո՛, այո՛, սիրեցեալ Յի-

սուս, կամիմ սիրել զքեզ · շատ խակ ապերախտ գտայ առ քեզ, առ ամենայն բարեացդ իմոց առիթ : Հիանամ ընդ անբաւ բարութիւն քո · գարշիմ յապաշնորհութենէս իմմէ · արկանեմ զանձն իմ յոտս քո և գոչեմ · Սիրեցեալ Յիսուս գթա յիս, որ փոխարէն սիրոյ քո հատուցի զապերախտութիւն : Ա՛ռ յինէն վրէժս, պատուհասեա՛, այլ մի՛ լքաներ և մի՛ զրկեր զիս 'ի սիրոյ քումմէ : Պատժեա զիս և փոխեա յայլ մարդ : Մի՛ ևս տացես ինձ թոյլ՝ լինել ապաշնորհ առ սէր քո · տուր ինձ գոնէ վասն երախտեացդ քոց սիրել զքեզ, և մինչ չև իցեմ մեռեալ՝ հատուցանել ինչ զփոխարէն սիրոյդ :

Վա՜յ ինձ, եթէ հասեալ էր ինձ մահ մինչ դեռ 'ի մեղսն էի, զի՞արդ կարէի սիրել զքեզ : Գոհանամ ըզքէն, սիրեցեալ Յիսուս, զի համբերեցեր ինձ զայնքան ժամանակս, որպէս զի սիրեցեմ զքեզ : Եւ արդ եկ և ստացիր զսիրտ իմ բովանդակ, առ 'ի քեցել զսա յամենայն եր-

կրաւոր սիրոյ և 'ի քեզ փոխարկել: Երանի՜ է ինձ՝ եթէ շնորհօք քովք հասանիցեմ այդմ, հրաժարել յամենայն երկրաւոր հեշտութեանց, և գուն գործել հաճել ըզքեզ միայն, որ եսդ միայն իմ գերագոյն բարի: Վա՜շ, թէ կարէի մոռանալ զամենայն զմարդկային իրս և յուշի ունէի զքեզ միայն և զքո սէր: Եւ զի՞նչ իցէ աշխարհ, զի՞նչ մեծութիւնք, զի՞նչ զբօսանք և պատիւք: Սիրտ իմ հաստեալ է վասն քո, և 'ի քեզ միայն կարեմ գտանել զանդորրութիւն իմ. արարածք զօրէն զօրիցեն ձգել զնա և յանկուցանել, այլ ոչ և շատացուցանել: Դու միայն ես, ո՜վ Աստուած իմ, կենդրոն, խաղաղութիւն և երջանկութիւն սրտի: Ապա զքեզ միայն կամիմ. դու միայն շատ ես ինձ. դու անչափս 'ի վեր ես ինձ քան զամենայն արարածս համանգամայն:

Եկ, աստուածային Հոգի, լնուլ պարգևօք քովք զհոգիս իմ, և հեղուլ զնովաւ զօրհնութիւնս քո:

Եւ եթէ յամենայն ժամ կարեւոր էն ինձ քո շնորհքդ, առաւել ևս յայսմ պահու, յորում ընդունելոց եմ զՅիսուս զՔրիստոս 'ի ծոց իմ: Արդ, սրբեա՛ զիս յամենայն անկարգ սիրոյ, և քո եռանդեամբդ վառեա յիս զսէր և զխորհրդածութիւնս՝ որովք անկ իցէ զգածնուլ որոց միանգամ մերձենանն 'ի սեղան հաղորդութեան: Եկ, Հոգիդ ստեղծող, լուա՛ զաղտեղացեալս, ոռոգեա զծարաւիս, բժշկեա՛ զվիրաւորեալս:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Զի՞նչ տաց քեզ, սիրեցեալդ իմ Յիսուս, նշանակ երախտեաց իմոց: Վա՜յ ինձ, զի կարի իմն ցրտացեալ և անզգայեալ է սիրտ իմ առ 'ի դիւտ հատուցման փոխարինի մեծի բարերարութեանդ: Առ արարածս և առ երկրաւոր բարիս՝ սաստկագէս սա ջեռանի, և առ քեզ միայն թալանոյ, տաղտուկ

լնուլ, անջան և անհոգ։ Ո՛վ սիրտ ապերախտ, սիրտ ապաշնորհ, սիրտ ապառաժ։ Ո՞ր շահ քեզ 'ի գորովանաց առ սիրելութիւնս մարդկայինս, եթէ անզգայ և սառուցեալ ամենևին կայցես առ սիրալիր խանդաղատանս Աստուծոյ քո։ Աղէ սթափեա՛ց միանգամ, հրաժարեաց յաշխարհական ցանկութեանց, և վառեաց սիրով առ Աստուած քո։

Ո՛վ Աստուած իմ, զգաստացո սթափեցո զսիրտ իմ. շիջո զվառեալսն 'ի նմա զանսուրբ ցանկութի̅ս. բորբոքեա սիրով քով սրբով։ Այո, այո, սէր Յիսուս, վառեա զիս բոլորովին սիրով քով սրբով, զի մի՛ այլ ինչ բնաւ խնդրեցից բայց զճաշակ քո. մի՛ և մի ինչ զբօսեցուցէ զիս՝ բայց որ ինչ հաճոյն է քեզ։ Հեռացո 'ի սրտէ իմմէ զամենայն՝ որ ոչն է ըստ հաճոյից կամաց քոց։ Տուր ինձ ասել հանապազ մեծաւ սիրով՝ Աստուած իմ, Աստուած իմ, զքեզ միայն կամիմ, և ոչ այլ ինչ։ Տուր ինձ սէր մեծ

առ ամենասուրբ չարչարանս քո, զի ցանկ առաջի աչաց ունելով ըզ-վիշտս և զմահ քո՝ առաւել ևս բոր-բոքեցայց սիրով քով, և գուն գոր-ծեցից առնել ինչ փոխարէնս ե-րախտեաց մեծի սիրոյդ: Տուր ինձ սէր մեծ առ աստուածայինս այս խորհուրդ, յորում յայտնեցեր ըզ-գորով քո առ իս. և ևս աղաչեմ տալ ինձ զեռանդն գորովանաց առ ամենասուրբ մայր քո, և շնորհս առ 'ի միշտ սիրելոյ զնա և ծառայել նմա, դիմելով ցանկ 'ի բարեխօսու-թիւն նորին, յորդորելով և զայլս առ նոյն: Խնդրեմ 'ի քէն, Տէր, շնորհել ինձ և մահ սրբութեան. տուր ինձ ընդունել զքեզ յայն-ժամ մեծաւ սիրով յամենասրբութե-անդ Թոշակի. որպէս զի գիրկս ա-ծեալ զքև սրտիւ բորբոքելով և մե-ծաւ փափագանօք տեսութե՛ քում՝ ելից 'ի կենաց աստի, մտանել առ քեզ և սիրել յերկինս յաւիտեանս յաւիտենից:

Այլ զի՞նչ տաց քեզ այժմիկ 'ի փոխարէն մեծի շնորհիդ՝ զոր պար-

գնեցեր ինձ 'ի գալստեանն քում և յայց ելանել յայսմ առաւօտուս ։ Այժմ, մի՛ ինչ զնայիր ընդ չքոտի նուէրս իմ, այլ 'ի փոքրկութեան անդ նուիրին՝ հայեաց և տես զբարիոք փափագ տուողին ։ Ընկալ նախ զհոգիս իմ, աւա՜ղ, ոչ որպէս զարդարեցերն զնա 'ի սրբութեան մկրտութեան, այլ գէթ որպէս յուսադրես զիս՝ վերածնեալ ապաշխարութեամբ և լուացեալ պատուական արեամբ քով ։ Քեզ լիցի միշտ, և ծառայեսցէ քեզ հաւատարմապէս ամենայն զօրութեամբք իւրովք. մի՛ ուստէք երկիցէ 'ի համար քո, այլ կրեսցէ զամենայն վասն քո, և զքեզ եւեթ խնդրեսցէ ։ Ընկալ և զմնացորդ ամացն զոր 'ի կեանս ինձ ունիցիս կարգեալ. բովանդակ նուիրեմ քեզ զայնոսիկ և ոչ մի մասն պահելով վասն իմ ։ Քեզ լիցին և գործքն սիրոյ զոր տացես ինձ գործել. քո լիցին և ամենայն պարապմունք և վաստակք՝ զոր պահանջեսցեն յինէն հրամանք և վիճակ կենաց իմոց, զոր աստի և

առ յապա կարգեմ 'ի պատիւ և 'ի փառս քո :

Նուիրեմ քեզ 'ի սրտէ և զամենայն զառնութիւնս, որովք հաճեցիս փորձել զհաւատարմութիւն իմ` և զհպատակութիւն առ սուրբ կամս քո : Կամիմ կրել զամենայն 'ի սէր քո և հանգչել անխռով հոգւով 'ի տեսչութե՟ քում : Կամէի, Յիսուս, եթէ էր հնար, համահաւաքեալ 'ի խուրձն մի զամենայն զչարամէտ բարս իմ` առնել քեզ 'ի զոհ, որպէս զի հրով սիրոյ իսպառ կիզուիր զայնոսիկ : Այլ եթէ չկցեմ բաւական առ այդչափ 'ի միում նուագի, կալայց ինձ 'ի կէտ անշուշտ նպատակի զկալն ընդդէմ բռնաւորելոցն յիս կրից, և եդից 'ի մտի մի՛ համարձակել երբեք առաջի սրբոյ սեղանոյ քո` մինչ չև յաղթանակեալ 'ի վերայ կրից իմոց : Տէր Յիսուս, դու բովանդակ ես սրտի իմոյ, և սիրտ իմ քո բովանդակ : Որպէս առաքեալքն յաւուր գալստեան Հոգւոյն նուիրեցան քեզ բոլորովին և աներկբայապէս, նոյն

և ես նուիրեմ և սրբեմ քեզ զանձն իմ, գոհանալով վասն ամենայնի զինչ և արասցես ընդ իս ըստ հաճոյից քոց: Նոքա 'ի գալստենէ հոգւոյն և առ յապա՝ ոչ յայլ ինչ ուշ եդին՝ բայց 'ի փառս քո. այն էր միակ կէտ նպատակի գործոց նոցին: Փառք քո, Տէր, և ծառայութիւն քո՝ եղիցին յայսմհետէ առաջին և գլխաւոր դիտումն իմ վաստակոց և իմ խորհրդոց իմոց: Եւ որպէս առաքեալքն էին 'ի վերնատանն անտի հաստատեալք 'ի մտի՝ առնել զամենայն և կրել զամենայն 'ի սէր քո, նոյն և ես կամիմ՝ ելանել յեկեղեցւոյ աստի յօժարափոյթ 'ի դիմագրաւել առ ամենայն, և վըշտանալ մանաւանդ՝ քան եթէ վրիպել յառ քեզն հաւատարմութենէ: Զայս ինչ առեալ է իմ յանձն, Տէր. աղէ մի՛ ընդ ակամբ հայեցիս ընդ նուէրս իմ, զոր նուիրեմ քեզ՝ ընդ առաջադրութիւնս այս: Պաշտելիդ Յիսուս, խոնարհեալ աղաչեմ առաջի աստուածային մեծվայելչութեան քո, լեր ինձ 'ի հայր և 'ի փրկիչ:

ԽՂՃՔ

Ի՛մ խմէք առաւելապէս ախտորժեացի անձն իմ, բայց զի հաձոյ քեզ գտանիցիմ, Աստուած իմ:

Կամիմ սիրել զքեզ, Աստուած իմ, մաքրութեամբ և յամենայն սրտէ:

Սիրո՛ւն ցաւք Յիսուսի, առ 'ի ձէնջ ակն ունիմ համբերութեան 'ի վիշտս իմ:

ՅՈՒՇՔ

Որպէս կեայ ոք՝ նոյնպէս և մեռանի:

Խոսվէլ ընդ եղեալն, ոչ է խոնարհութեան այլ հպարտութեան:

Ցաւ, աղքատութիւն և արհամարհանք՝ եղեն ընկերք Յիսուսի, և են ժառանգութիւնք ճշմարիտ հետևողաց նորին:

ԻԸ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՞ր մեծ եւս նշան հնայր քեզ, ո՜վ Բանդ յաւիտենական, առ ՚ի տալ ինձ՝ ՚ի ցոյց խանդաղատանաց սիրոյ քո, զոր և արծարծեսդ վասն իմոյ թշուառ և հեգս անձին։ Ասա ինձ, հնայցէ՞ քեզ և այլ ինչ առ ՚ի հարկեցուցանել զիս ՚ի սէր քո։ Եղուկ ինձ, զի ոչ միայն ոչ սիրեցի զքեզ, այլ և եպերանս կուտեցի զքև, որպէս թէ զյոռեգոյն թըշնամեաւ ումամբ։ Աւա՜ղ ինձ, զի փոխանակեցի զշնորհս քո ընդ սնոտի հաճոյից, և ասացի լրբութեամբ՝ եթէ ոչ կամիմ սիրել զքեզ։ Ո՜վ Աստուած իմ, այս յիշատակ՝ սուր է սրտի իմոյ՝ որ հարկանէ և խոցէ։

Ո՛հ, գթա յորդնս աղկաղկ՝ որ զեղջացեալ անձամբ պաղատի զքաղցրութիւն քո։ Աստուած իմ, ակն ունիմ թողութեան՝ արդեամբք մահուան քո, ակն ունիմ յարատևել 'ի սէր քո։ Ոչ ևս կամիմ հակառակել քաղցրութեան սիրոյ քում։ Եւ զի՞նչ, մինթէ սպասեցի՞ց զի առաքիցես զիս 'ի դժոխս . . . ։ Սիրեմ զքեզ բարութիւն անբաւ, սիրեմ զքեզ Աստուած իմ, արժանիդ անչափ սիրոյ. սիրեմ զքեզ, և կամիմ փոխարինել քեզ 'ի կեանս յայս և 'ի հանդերձելումն։ Սիրեմ զքեզ սիրեցեալդ իմ բարի, գանձ իմ ցանկալի և ամենայն ինչ իմ։ Մի՛ թողուր ո՛վ Յիսուս, տեսանել զիս միւսանգամ անջատեալ 'ի քէն։ Եկ յառաւօտուս յայսմիկ յաղքատին հոգիս իմ, և այնպէս միացո՛ զիս ընդ քեզ՝ զի մի՛ ևս մեկնեցի 'ի քէն։

Քանզի դու, ո՛վ սիրեցեալդ իմ Յիսուս, կամիս կերակրել զիս այսօր անապական մարմնով քով 'ի հաղորդութեանս, արժան է և

ինձ հրաժարել կամովին յամենայն հեշտալեաց և ախորժելեաց՝ զոր կարիցէ մատուցանել ինձ աշխարհ: Այո՛, հրաժարեմ յամենայնէ, ո՛վ սէր իմ, և խոստովան լինիմ՝ զի ա֊ ռաւել ընտրեմ տանել ամենայն վշտաց միանալով ընդ քեզ, քան վայելել յամենայն բարութիւնս կենցաղոյս հեռանալով 'ի քէն: Բա֊ ւական լիցի առ հաճութիւն սրտի իմոյ առնելն զկամս քո և զհաճոյս, որ արժանիդ ես յամենեցուն մեծա֊ րանաց և սպասու կամացդ:

« Իջցէ սիրելին իմ 'ի պարտէզ իւր և կերիցէ զպտուղս ծառոց իւ֊ րոց »: Եկ, ո՛վ տենչալիդ իմ, 'ի սիրտս տառապեալ, որ երբեմն ոչ էր քո, այլ արդ 'ի ձեռն շնորհաց քոց՝ հանդերձի լինել: Ո՜հ, Յիսուս, ալէ 'ի պատիւ մեծվայելչութեան փառաց քոց, մաքրեա զսիրտս իմ, յարդարեա զնա, բորբոքեա, և ա֊ րա հաճոյ աչաց քոց, զի պատրաս֊ տեսցի քեզ օթեւան արժանաւոր:

Սիրեցեալդ իմ Յիսուս, չեմ ես կատարեալ, այլ դու կարող ես՝

լնուլ զիմ Թերին : Ոչ եմ քեզ սիրելի վասն յանցանաց իմոց, այլ քեզ հնար է առնել զիս արժանաւոր, արբուցանելով յայսմ առաւօտու 'ի սիրոյ սրբոյ քումմէ : Ով Տէր իմ սիրելի, ժառանգել զհոգիս իմ :

Եկեսցէ յիս արքայութիւն քո, որպէս զի սէր քո միայն հրամայեսցէ ինձ, և ես լուայց սիրոյ քում միայնոյ : Արբեցո զիս, և տուր ինձ մոռանալ զարարածս, զանձն և զամենայն շահս անձին իմոյ. որպէս զի զքեզ միայն սիրեցից, Աստուած իմ, գանձ իմ, բարութիւն իմ. առ քեզ միայն հառաչեցից. զքեզ միայն խնդրեցից, զքէն միայն խորհեցայց, և քեզ միայնոյ եղէց հաճոյ :

« Ձայն սիրելւոյ իմոյ բախէ 'ի դրան . . . բաց ինձ, քոյր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ » : Ահաւասիկ ձայնն՝ զոր լսելի առնէ քեզ, ո՛վ հոգի իմ, սրբագործեալն Յիսուս : Բաց ինձ, ասէ, ո՛վ հոգի, զսիրտ քո, և ես մտից և փարեցայց ընդ քեզ. որպէս զի միացեալ քո ընդ իս, եղիցիս ինձ 'ի քոյր՝ նը-

մանութեամբ , բարեկամ մանա-
կցութե̃ բարեաց , աղաւնի՝ միա-
մտութեանն շնորհիւ, և կատարեալ
իմ՝ ձրիւ մաքրութեանն զոր տաց
քեզ ։ Արդ եթէ ցանկաս հոգի իմ,
զի Յիսուս 'ի քեզ հանգիցէ, բա՛ց
նմա զսիրտ քո․ հայեաց ընդ քո
նուաստութիւն և ընդ նորա մեծ-
վայելչութիւնն ։ Խոնարհեցո զքեզ
որքան և մարթասցիս, մերժեա՛ 'ի
քէն զամենայն անձնահաճութիւն ,
որ հեռացուցանէ 'ի քէն զՅիսուս
և խափան արկանէ գալստեան նո-
րա , և օթևանելոյ 'ի քեզ ։ Ե՛կ առ
իս սիրելի փրկիչ իմ, եկ , զի տեսից
աստուածային լուսով քով զանար-
գութիւն իմ, զապիկարութիւն իմ,
զոչնչութիւն իմ․ որպէս զի հնար
լիցի հանգչել քեզ յիս ըստ հա-
ճոյից քոց , և մի՛ ևս անջատիս 'ի
հոգւոյ աստի իմմէ ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

«Ձգեա զիս զհետ քո. 'ի հոտս իւղոյ քոյ ընթասցուք»: Եւ արդ, ո՛վ սիրեցեալդ իմ Յիսուս, քանզի այդպէս ցանկացար խոնարհեցուցանել զքեզ, մինչև գալ յաղքատին հոգիս իմ, պնդեա զիս 'ի ծոց քո և արա զիս քո բովանդակ: Ոչ խնդրեմ 'ի քէն փափկութիւնս երկրաւորս, այլ զի քաղցր ողոքանօքդ շահեսցիս զսիրտ իմ, և կապեսցես կապանօք սիրոյդ, որպէս զի մի այլ ինչ, բայց զկամս քո միայն կատարեցից: Ամենայն բերմունք ըղձից իմոց տեղի տացեն կամաց քոց սրբոց: Մխացո՛ զիս անանջրպետ ընդ քեզ, զի այսպէս կցորդեալ ընդ քեզ և զերծեալ յամենայն երկրաւոր ախորժակաց, կարասցից ընթանալ ընդ քեզ զճանապարհ օրինաց քոց, հանդչել և յայս կեանս և 'ի հանդերձելումն՝ յաստուածային կամս քո:

« Եմոյծ զիս արքայ 'ի տուն գինւոյ, և կարգեաց 'ի վերայ իմ ըզսէր » : Ամենևին քաղցր Յիսուս և միակ տէր սրտի իմոյ, մուծեր զիս յերջանիկ սենեակ սիրոյ քո. և զօդեցեր զիս ընդ քեզ 'ի ձեռն սրբոյ հաղորդութեանս : Այո, Տէր իմ, զգամ յանձին զփոփոխութիւն սըրտիս. զգամ հաճութիւն սուրբ, որ պարգևէ ինձ զանդորր, և վառէ զիս 'ի սէր քո անտախեղծ : Եւ զի մտի 'ի սենեակս յայս երանաւէտ, մի՛ թողուր ինձ ընաւ ելանել աստի : Կորզեա զիս յերկրաւոր սիրոյ. առաւել քան զառաւել յօդեա՛ զիս ընդ քեզ, որպէս զի յաւուր միում եկից միանալ ընդ քեզ իսկապէս 'ի յերկինս, և սիրեցից զքեզ անդ արթնապէս ամենայն զօրութեամբ իմով, անապառ և անթերի և յաւիտեանս յաւիտենից :

« Ո՞վ է սա, որ ելեալ գայ սպիտակացեալ, յենու գայ 'ի սիրելի իւր » : Եւ ո՞յք իցեն հոգիքն՝ որք յերկրի գոլով՝ որպէս յանապատի կան 'ի նմին : Ո՞յք իցեն հոգիքն՝ որք

անջատեալք յիրացս երևելեաց , կեան 'ի քեզ միայն , որպէս թէ աշխարհս չունիցի ինչ վասն նոցա ։ Ո՞յք իցեն հոգիքն՝ որք մեռացեալք զանձինս և բարձրացեալք 'ի տառապալից աշխարհէ աստի , երկնից ևեթ ակնկառոյցք կան , և 'ի քեզ միայն հաստատեն զյոյս իւրեանց ։ Ո՞յք իցեն հոգիքն այնոքիկ , եթէ ոչ՝ որք ցանկ միացեալ կան ընդ քեզ , տէր սրբութեանց ։ Այո՛ , Տէր , զսոյն զայսօրինակ կամիմ և ես լինել 'ի ձեռն շնորհաց քոց · անջատել յամենայն իրաց , և միանալ բոլորովիմբ ընդ քեզ ։ Հրաժարեմ յամենայն կցորդութենէ կենցաղոյս , և կամիմ զքէն ևեթ խոկալ և վասն քո ևեթ կեալ , որպէս թէ դու և ես միայն իցեմք 'ի տիեզերիս ։ Ի քեզ լոկ կամիմ ապաստան առնել զվստահութիւն իմ , զսէր իմ զամենայն , ո՛վ գանձ իմ և ամենայն ինչ ։

Այլ ո՞հ , անձկալիդ Յիսուս , և իցէ՞ ոք յողդողդ և թշուառ քան զիս ։ Գիտես թէ քանիցս անգամ

տեղի ետու Թշնամեաց իմոց, և քա-
նիցս իշխեցին նոքա 'ի վերայ կա-
մաց իմոց, մինչև մտանել 'ի հոգիս
իմ, ապականել զսա, և զերծուլ
յինէն զշնորհս քո: Ո՜հ, զօրացո
զիս շնորհօք քովք, զի մի ևս այլ
կորուսից զքեզ և կամ արտաքս
հանից յինէն: Եւ փոխանակ Թող-
լոյ զիս անկանել վերստին 'ի մեղս
և կորուսանել զբարեկամութիւն
քո, տուր ինձ մեռանել այժմէն,
ով սիրելի փրկիչ իմ, ընդ որում
ակն ունիմ միանալ:

Զիա՞րդ մարթ իցէ ինձ սիրել
այլ ինչ քան Թէ զքեզ, ով Աս-
տուած իմ, որ բարութիւնդ ես
գլխովին: Ո՜վ Տէր, լաւ են ինձ սէր
քո և շնորհ քո՝ քան զամենայն
կենցաղական իրս: Կամիմ ոչ զոք
սիրել բաց 'ի քէն, և չունել այլ
ինչ աւիԹ ըղձից: Մի ևս յայսմ-
հետէ մոռացայց զբարութիւն քո
և զողորմութիւնս, ով սիրելի փըր-
կիչ իմ: Տուր ինձ, ով Տէր, շնորհս
յարատեւելոյ անյողդողդ 'ի սէր քո
սուրբ: Եդեալ եմ 'ի մտի հաստա-

տութեամբ՝ քո լինել ամենեւին · այլ զի ցորքան կեամ՝ կարեմ շրջել 'ի կամացս և վերստին մասն լինել քեզ, որպէս երբեմն, արդ օգնեա ինձ և գթա յիս:

Ամենասրբուհի Մարիամ, որ մայրդ ես յարատև ժուժկալութեան, ընկալ ինձ 'ի Յիսուսէ ըզշնորհդ զայդ · 'ի քեն հայցեմ, 'ի քէն ակն ունիմ, առ քեզ ժտիմ:

ԻՂՁՔ

Ո՛ տայր ինձ սիրել զքեզ, ով Յիսուս, որքան թշնամանեցի զքեզ:

Յիսուս սիրելի՝ այպանեալդ վասն սիրոյ իմոյ, տուր և ինձ անարգիլ 'ի սէր քո:

Սիրելի վէրք Յիսուսի, դուք էք ինձ սփոփանս:

ՅՈՒՇՔ

Յորժամ 'ի մահճին մահու անկանիցին, ամենեքին իղձ լինին եթէ քրիստոնէաբար կեցեալ էին:

Այնչափ եմք, որչափ եմք առաջի Աստուծոյ ։

Ճշմարիտ խոնարհ՝ անարժան համարի զանձն բնաւին պատուոյ, և արժանի ամենայն անարգանաց ։

ԻԹ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

« Խորհեցարուք զՏեառնէ բարութեամբ»։ Ընդէր այսպէս ցուրտ ես և փոքրոգի՝ անձն իմ, յետ այնքան բարեաց և սիրոյ փրկչին քո. ընդէր ես թերեհաւատ։ Արդ զի արժանի գտար ընդունել՚ի քեզ զՅիսուս Քրիստոս, արա և զկերպս քո համեմատ զգթութեան նորա, խրախուսելով ՚ի սէր նորին յանբաւ, որով տայն քեզ բովանդակ զինքն։ Ահաւոր են արդարև դատաստանք նորա, այլ ամբարտաւանից և կամակորաց. իսկ խոնարհաց և ապաշխարողաց՝ որք ցանկան սիրել զնա և հաճել, դատաստանք նորա փոխին յողորմութիւն

և 'ի սէր. յոր և մտախոհ լինելով Դաւթի՝ ապաստանայր յուսովն, և կայր ուրախութեամբ և մխիթարութեամբ. « Յիրաւունս քո յուսացայ ... դատաստանք քո քաղցր են » : Ո՛վ, քանի՜ քաղցր և բարի է Աստուածս մեծ՝ որում խնդրէն զինքն սիրով: « Բարերար է Աստուած 'ի վերայ համբերողաց իւրոց. զի անձն որ խնդրէ զնա՝ բարի է որ համբերէ նմա ճշմարտութե » : Ո՛վ, որչափ բարի է Աստուած՝ առ որ խնդրեսցէ միաբանել զկամս իւր ընդ կամաց նորա սրբոց: « Իբրև զի՜ բարի է Աստուած Իսրայէլի, և որք ուղիղ են սրտիւք » :

Ե՛կ ուրեմն 'ի հոգի իմ, սիրելիդ Յիսուս, նորոգեա զիս և յագեցո սիրով քո սրբով: Ո՛վ, քանի՜ քաղցրութիւնք զեղանին 'ի հոգիս իմ՝ յորժամ զմտաւ ածեմ զի ընդունիմ յիս զնոյն Տէր, որ 'ի փրկութիւն իմ մատեաւ կամաւ պատարագ 'ի վերայ անարգ կախաղանին: Ո՛վ սէր իմ Յիսուս, արա զիս քո բոլորովին, զի արժանապէս մարթա-

յայց ընդունել զքեզ։ Տուր ինձ մտւանալ զայն ամենայն՝ որ ոչն հայի 'ի սէր քո սուրբ։ Յաւել յիս եւանդն, զի հաճոյ եղէց քեզ։ Տուր ինձ կրել ինչ վասն քո, որ գործեցերդ և կրեցեր շատ վասն իմ։ Ո՛վ Աստուած հոգւոյ իմոյ, տուր ինձ սիրել զքեզ ճշմարտապէս, ոչ բանիւք ևեթ՝ այլ արդեամբ և ճշմարտութեամբ՝ առ 'ի հաճոյս քեզ։

« Եղբօրորդին իմ սպիտակ է և կարմիր՝ ընտրեալ 'ի բիւրուց »։ Ահաւասիկ հոգի իմ՝ սիրելին քո, բոլորովին սպիտակ՝ մաքրութեամբն իւրով, և կարմիր՝ բոցով աստուածային սիրոյն. իջանէ 'ի գահոյից յաւերժից՝ առ 'ի գալ միաւորիլ ընդ քեզ 'ի սրբումս հաղորդութեան. պատրաստեա նմա զսիրտ քո, և հանգիր ընդ նմա յիմացմունս քաղցրութեան։ Ո՛վ սիրելի Յիսուս, գառն անարատ և բոլորովին բորբոքեալ 'ի սէր վասն իմ. Երբ լիցէ զի արասցես զիս քեզ նըմանող, սուրբ՝ որպէս էսդ, բորբոքեալ 'ի սէր քո՝ որպէս դու յիմս

Ո՞ տայր ինձ 'ի բաց քեցեալ յանձնէս զամենայն սէր, ընտրել զսէր քո ևեթ անգին, Աստուած իմ և ամենայն ինչ: Ի բաց գնացէք յինէն արարածք, զի՞ կայ իմ և ձեր, չէք դուք ինձ ինչ պիտանացու. երթայք փարելի լինել այնմ՝ որ խնդրէն զձեզ: Ես ետու բովանդակ զիմ կիրս՝ առ իմն Յիսուս. այնպէս ձգեաց նա զիս անբաւ բարութ̃ն 'ի սէր իւր, մինչև կորուսի զճաշակ ստեղծական բարեաց բնաւին: Միայն զԱստուած իմ կամիմ ես. վասն նորա միայնոյ պահել կամիմ զսիրտ իմ բովանդակ:

Ո՜վ Թագաւոր սրտի իմոյ, էկ և Թագաւորեա դու միայն 'ի վերայ սրտիս. ստացիր զնա քեզ, զի մի՛ ծառայեսցէ կամ հնազանդեսցի այլում, բայց միայն սիրոյ քո սրբոյ: Ո՞ տայր ինձ, Յիսուս, ծախել զիս բոլորովին վասն քո, որ ծախեցեր զբովանդակ կեանս քո վասն իմ: Ո՜վ գառն Աստուծոյ՝ պատարագեալ 'ի վերայ խաչին առ սէր իմ. յուշ լիցի քեզ՝ զի և ես մի եմ 'ի

հոգեայն՝ զորս փրկեցեր այնքանեօք տառապանօք և ցաւօք· մի տար կորուսանել ինձ միւսանգամ զքեզ, այլ տուր ինձ այնպէս բոլորապատուղ նուիրել զիս քեզ, որպէս դուդ տաս ինձ զքեզ· քո եղէց բոլորովիմբ, և ոչ այլ ինչ հոգացայց՝ բայց միայն հաճոյ գտանել աչաց քո: Սիրեմ զքեզ, ո՛վ անբաւ բարութիւն, զի հաճոյ եղէց քեզ· սիրեմ զքեզ, զի արժանի ես սիրոյ· և ոչ ինչ այլ այնպէս դառնացուցանէ զիս՝ որպէս այն զի ոչ սիրեցի զքեզ յանցեալ աւուրս կենաց իմոց:

Փրկիչ սիրելի, մասնաւորեա՛ զիս ցաւոցն զոր կրեցեր 'ի մեղաց անտի իմոց՝ 'ի պարտիզին Գեթսեմանի: Օ՜հ թէ բնաւ չէր իմ ցաւեցուցեալ զքեզ, սիրելիդ իմ Յիսուս, և իցի՛ւ թէ մեռեալ էի յառաջ քան զդառնացուցանելն զքեզ: Ո՛վ սէր Յիսուսին իմոյ, դու ես յոյս իմ և սէր: Կամիմ այսուհետև կորուսանել զկեանս՝ քան թէ զշնորհս քո: Կապեա զիս, ո՛վ սիրեցեալ Յի-

սուս, սիրովդ քով, և իշխեա 'ի վերայ ամենայն կրից իմոց, զի մի՛ ինչ այլ կարացից սիրել բաց 'ի քէն ։ Արա զիս քո բոլորովին մինչ չև իցէ իմ մատուցեալ 'ի սեղան քո սուրբ ։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

« Կալայ զնա, և ոչ թողից զնա, մինչև տարայց զնա 'ի տուն մօր իմոյ և 'ի սենեակ յղացելոյն զիս » ։ Գտի ուրեմն զգանձն իմ սիրելի, կրեմ զնա 'ի ծոցիս, և սեռն սիրով զգամ զմիաւորիլ նորա ընդ հոգւոյս իմոյ ։ Եւ զի՞նչ այլ սիրիցեմ ես 'ի վերայ երկրի, կրելով չափ յիս ըզՅիսուս ։ Ո՜հ, երթայք յինէն 'ի բաց՝ ընդունայն ակնկալութիւնք և կիրք աշխարհականք, չէք ինչ ինձ 'ի պէտս ։ Մեկնեցարուք 'ի հոգւոյ իմմէ, որ ոչ ևս այլ խնդրէ զձեզ, գնացէք ուր հաճոյ է յաչս ձեր ։ Ելէք 'ի հոգւոյ աստի իմմէ, ո՜վ ըստեղծուածք, զի սա ոչ է ձեր ։ Երբեմն սիրեցի զձեզ գոլով աչացու,

արդ ոչ սիրեմ, և կարեմ իսկ ոչ, զի գտի զբարին՝ զարժանին անբաւ սիրոյ· գտի զՅիսուսն իմ, որ բոլորովին գերեաց զիս գեղով իւրով 'ի սէր իւր· և սիրելւոյ իմոյ այսմիկ ետու բովանդակ զսիրտ իմ և զսէր: Ողջոյն ընդ ձեզ ուրեմն արարածք, ողջոյն ընդ ձեզ փափկութիւնք երկրաւորք· ես չեմ և չեղէց բնաւ ձեր· հատի ընկեցի զամենայն, և եղէց յար սիրելւոյ իմոյ Յիսուսի: Ընկալեալ զնա այժմիկ 'ի ծոց իմ հաղորդութեամբս սրբով, մի՛ ևս թողից հեռանալ յինէն:

Եւ արդ, ո՛վ Տէր իմ սիրելի, կատարեա զսուրբ կամս քո՝ զոր վասն եկիր 'ի հոգիս իմ: Մուտ սիրով քով սրբով 'ի ժառանգութիւն սրտի իմոյ: Հուր աստուածային, որ արբուցանես սիրով քով զայնոսիկ՝ յորս մերձենաս, էկ 'ի սիրտ իմ, և բորբոքեա զսա բոցով քով, որպէս զի քև հալեալ մաշեսցի: Զերկրաւոր սիրով գայցէ՝ որում հաճոյ իցեն երկրաւորք· ես զԱստուած իմ ևեթ կամիմ, որ սի-

րէն զիս յոյժ ։ Եւ զի՞նչ այլ գեղեցկագոյն կարասցէ գտանել սիրտ · զի այնպիսի է նորայն գեղեցկութիւն, որ միով եւեթ ճառագայթիւ դիմացն՝ 'ի յափշտակութիւն սիրոյ կրթէ զջոկս երանելեացն, որք 'ի յերկինս պար առնուն զնովաւ ։ Ո՜վ չուառական հոգիք, որք մոլորեալ զհետ երթայք ընդունայն գեղոյ աշխարհի · ո՞չ գիտիցէք, զի հեռի գոլով 'ի Քրիստոսէ՝ ոչ կարիցէք գտանել զխաղաղութիւն ճշմարիտ 'ի սէր ։ Սիրեցէք զԱստուած ձեր, զբարին ձեր, զՅիսուսն ձեր, և այնպէս խաղաղասցին սիրտք ձեր, և յագեսցին իղձք ։ Եղո՜ւկ զիս, զի 'ի կեանս իմ յառաջինս՝ կեցի առանց այսր սիրոյ, այլ գոնեա 'ի կեանսն՝ որ առաջի կայ ինձ՝ չկամիմ այլ ինչ առնել՝ բայց միայն սիրել զՅիսուս ։

Այո, այո, սէր իմ Յիսուս, չկամիմ կեալ յայսմհետէ՝ բայց 'ի սիրել զքեզ և հաճել վասն քո՝ սիրոյն բոցով ։ Արդէն իսկ կապեալ կաշկանդեցաւ սիրտ իմ շղթայիւք

քաղցրութեամբ քով, և չէք հնար կեալ ինձ առանց քո սուրբ սիրոյդ ։ Կապեալ միանգամ հոգւոյս ընդ քեզ՝ չկարէ այսուհետև զատչիլ 'ի քէն . այնպէս վիրաւորեալ է սիրով քով սրբով, զի կայ և կացցէ միշտ քեզ ողջակէզ բարերջանիկ . Այո կամիմ հանապազ սիրել ըզքեզ, ով սիրեցեալդ իմ բարի, և փափաքեմ մինչև 'ի շունչ իմ յետին շնչել զսէր քո ։

Թոյլ տուր ինձ, ով սիրեցեալդ իմ փրկիչ, գիրկս արկանել քեզ անձկանօք, և մի ևս թողուլ զքեզ ։ Ահա պատիմ զքև՝ ով Յիսուս իմ . սիրեմ զքեզ, ով բարիդ ըղձալի, և կամէի սիրել զքեզ որչափ ինչ արժեսդ ։ Կամիմ զի միակ դիւր սրտի իմոյ և հանգիստ՝ լիցի սիրելն զքեզ և հաճել զկամս քո ։

Սաստեա Տէր, տարարածականացս, զի թողցեն զիս՝ և մի ևս աղմկեսցեն . « Երդմնեցուցանեմ ըզձեզ . . . եթէ յառնիցէք՝ զարթուսջիք զսէրն՝ մինչև կամեսցի » ։ Զի եթէ ես ոչ կամիցիմ, ոչ կարասցեն

ստեղծուածք գամագիւտ լինել յիս, խռովել զսիրտս իմ և անջատել 'ի քէն ։ Արդ արա հաստատուն ընդ-կամս իմ, զօդեա զսիրտ իմ չուա-ռական՝ 'ի սիրտ քո աստուածայ-ին, զի կամք իմ լիցին նոյն ընդ քո-յոցն ։ Աստուած իմ, ոչ կամիմ ես աչս՝ բայց առ 'ի հայել ևեթ 'ի քեզ. լեզու՝ բայց առ 'ի խօսել ևեթ ընդ-քեն. սիրտ՝ առ 'ի սիրել զքեզ. մարմին՝ առ 'ի նուիրել քեզ. կեանս՝ առ 'ի պատարագել քեզ ։ Հաս 'ի թիկունս տկարութեան իմոյ, ով զօրութիւն անբաւ, լուսաւորեա գիտութիւն յաւիտենական՝ զխա-ւար իմ. ներեա բարութիւն ան-հուն՝ չարեացն իմոց ։ Արա ընդ իս որպէս և կամիս, ով Աստուած սի-րոյ. ոչ այլ ինչ կամիմ, բայց զոր դուդ կամիս ։ Վասն սիրոյն որով սիրեսդ զիս, տուր ինձ սիրել ընդ-քեզ, 'ի սուղ 'ի կեանս յայսոսիկ, որ ծնան ինձ 'ի վերայ երկրի, առ 'ի սի-րել զքեզ յաւիտեան յերկինս ։ Եւ երբ եղէց ես Աստուած իմ՝ բոլորո-վին քո, որպէս եսդ դու իմ բովան-

դակապէս ։ Ե՞րբ մեռանիցիմ ես յիս զլխովին, առ 'ի կեալ բովանդակ 'ի սէր քո ։ Տուր ինձ յարատեւել ով Տէր, 'ի շնորհս քո . պարգեւեա ինձ զփրկութիւնն յաւիտենականն ։ Ո՛վ սիրեցեալ մայր իմ Մարիամ, ընկալ վասն իմ զշնորհս զայս յԱստուածորդւոյ քումմէ ։

ԻՂՁՔ

Տէր, ծանո ինձ զպատուականութիւն սիրոյ քո սրբոյ ։

Յիսուս Քրիստոս, այպանեալդ վասն իմ, տուր ինձ կրել կամաւ 'ի սէր քո ։

Պաշտելի օրհաս Յիսուսի, շնորհօք քովք ակն ունիմ անցուցանել զօրհաս իմ յանդորրու ։

ՅՈՒՇՔ

Է ակն՝ որ զամենայն տեսանէ . ունկն՝ որ զամենայն լսէ . ձեռն՝ որ զամենայն գրէ ։

Գովիլ առ 'ի մարդկանէ՝ օգնէ

ինչ ոչ, մինչդեռ Աստուած զմեզ ստգտանիցէ. և ոչ ինչ մարդոյս ստգտանք վնասիցեն մեզ, եթէ ջատագով ունիցիմք զԱստուած։

Ծանիր զքեզ, և Աստուած յիշեսցէ զքեզ։

Լ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՜վ անյիշաչարութիւն և անվախճան բարութիւն Տեառն իմոյ. և իցէ՞ արդարև թէ 'ի վերայ այնքանեաց ապաշնորհութեանց և ժխտման, այնքանեաց թշնամանաց և նախատանաց՝ զոր ցայժմ արարի քեզ, ո՛չ գարշիցիս փախիցիս յինէն: Զո՞ր մաքրութիւն կամ զո՞ր սրբութիւն գտանես 'ի սրտի իմում զի եկեալ արասցես անդանօր զօթեւանս քո: Զի՞նչ ինչ յախորժելեաց գտանիցես յոգւոջ իմում՝ առ 'ի քեզէն գալ սմա յայցելութիւն: Ո՛հ, սիրելիդ Յիսուս, պակուցեալ և հիացեալ կամ ես խայտառ՝ խո-

կալով զանձառ բարութիւն քո 'ի վերայ իմ:

« Տուր ինձ, որդեակ իմ, զսիրտ քո »: Հոգի իմ, ահա այս միայն է զոր խնդրէ 'ի քէն տէր քո այժմիկ յայցելութեան իւրում. զսիրտ քո խնդրէ և զկամս քո: Նա տայ քեզ զանձն իւր՝ ոչ ինչ խորելով, որպէս զի և դու տացես նմա զքեզ բովանդակ, խնամ կալեալ կատարելոյ յամենայնի զսուրբ կամս նորա: Արա այնպէս զի Յիսուս յեկաւորել իւրում հաճեսցի 'ի քեզ, տեսեալ զմտաց քոց ժրաջան յօժարութիւն՝ առ 'ի լնուլ զամենայն հաճոյսն իւր:

Այլ ի՞մ իմիք ձեռնհաս իցեմ ես, ո՛վ սիրելիդ Յիսուս, եթէ ոչ օգնեսցես ինձ: Ո՛հ, և զի յայսմ առաւօտու կամիս առնել ընդ իս զշնորհս զայս մեծ, գալ 'ի հոգի իմ, հաճեա՛ց նախ սրբել զայն և արժանացուցանել 'ի բնակութիւն քեզ: Չեմ արժանի բարերարութեան և ողորմութեան քո. բայց խնդրեմ զայն առ 'ի քէն վասն խորին մեծարանացս առ քեզ. քանզի պարտ է

ինձ մատչել յաստուածայինս յայս սեղան՝ յորում կամիս տալ զքեզ բովանդակ և միանալ ընդ մեղաւոր հոգւոյս, կամիմ գէթ հիւրընկալել զքեզ նուազագոյն անարժանութեամբ ըստ իմում կարի, և ելանել ընդ առաջ քո առանց գարշանս և զզուանս ածելոյ քեզ: Քաջալերիմ վստահութեամբ 'ի բարութիւն քո, և մեծաւ ակնկալութեամբ մատուցանեմ զարժանիս քո՝ հօր Աստուծոյ, որպէս զի ընկալցի զայնոսիկ ընդ իմ:

Երկրպագեմ քեզ, ո՛վ սիրելի Յիսուս, և խառնեմ զերկրպագութիւն իմ ընդ հրեշտակացն երկրպագութեանց յարքայութեան քում, և նորուն ինքեան մօր քո Մարիամու: Կամիմ թէ հնար էր միայնակ հաւասարել ամենայն սիրոյ նոցա և մրցել ընդ խոնարհ պաշտաման նոցին. կամիմ ճանաչել զքեզ և ճանաչել զանձն իմ առ 'ի տալ քեզ պատիւ՝ առաւել պատկանաւոր քում մեծվայելչութեան և իմումն չքութեան: Ո՛վ հայր յաւիտենա-

կան, ամենակարող, անպարագիր, աղբիւր իմաստութեան, արդարութեան, սրբութեան և բարութեան. քանի՜ անհասանելի է խտրոցն որ ընդ իս և ընդ քեզ. ո՜վ եմ ես զի հաճեցիս գալ առ իս: Ո՛հ, մի՛ հայիր, ո՜վ Տէր, առ ի գալ. ենէն իսկ կարի քաջ իրաւունք քեզ առ 'ի խոտելոյ զիս. Նա մանաւանդ հաճեաց մոռացօնս առնել համապաղ բազում և ծանր յանցանաց իմոց, որք են և լցին ինձ մշտնջենաւոր առիթք ատելութեան և զզուանաց. հաստատութեամբ կամիմ մեռանել քան միւսանգամ զքեզ թշնամանել:

Ընկալ, ո՜վ սիրելիդ Յիսուս, զայս քո տրուպ ստեղծուած՝ որ սիրել զքեզ փափագէ: Ո՛հ, ցոյց ինձ ըզքեզ, անսպառ աղբիւրդ ամենայն սփոփանաց իմոց, անուշակ հզօրեդ ամենայն դառնութեանց իմոց, միակ և վերջին բարիդ իմ: Տա՛յր ոք ինձ հասանել առ քեզ, ցանկութիւն սրտի իմոյ. տա՛յր ոք ինձ ժառանգել զքեզ, սէր հոգւոյ իմոյ. տա՛յր

ոք ինձ վայելել զքեզ 'ի բոլոր սըր-
տէ, կեանքդ իմ բազմերան և ան-
պատում քաղցրութիւն։ Սիրեմ և
սիրեցից զքեզ, ով Տէր, զօրութիւն
իմ, օժանդակ իմ, ապաւէն իմ,
փրկիչ իմ. ձեամ քեզ անժուժու-
թեամբ որպէս զի սրբեսցես զիս. Հա-
ռաչեմ առ գըկախառնութիւնս քո,
որպէս զի ծածկեսցես զիս 'ի սրտի
քում։

Հայր յաւիտենական, ընծայեմ
քեզ զհաղորդութիւնս զայս 'ի փըր-
կութիւն իմ և 'ի դարձ մեղաւո-
րաց. մի՛ հայիր 'ի մեղս իմ այլ 'ի
սէր սիրեցեալ Որդւոյ քո, որ յան-
չափութենէ սքանչելի գթութեանն
որ առ իս՝ գայ հոգեխառնիլ ընդ իս
գըկայլինդ։ Վասն այսր սիրոյ, ով
Աստուած իմ, ընկալ զպաղատանս
իմ և մարդասիրեա կատարել զնո-
սին։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Բա՛բէ. ընդ ո՛ւմ հաղորդ գտանիս, ո՛վ սիրեցեալ Յիսուս. ընդ ապաշնորհի քան զամենայն հոգիս՝ զորս լցուցեր բարեօք յերկրի աստ: Բա՛բէ անճառ բարութեանդ: Գէթ գիտացեա՛լ էր իմ շնորհ ունել քեզ այնպիսեաւ ջերմեռանդն սրտիւ՝ որ զուգակից գոյր այսքանոյ քում արժանաւորութեան: Ո՛հ, թէ գիտացեալ էր իմ և յայտնի վայրկենանս քաղցրութեան՝ որ միացուցանէն զիս ընդ քեզ՝ բոցակիզել սիրով, և արհամարհել զանձն իմ յամենայն կապանաց կաշկանդողաց ընդ մարմնոյ և ընդ աշխարհի: Ընդէ՞ր չտուաւ ինձ սիրտ ապաշխարող Մագդաղենացւոյն՝ որ այնպէս ուժգին և սեռն սիրեաց զքեզ: Նուիրեմ քեզ նուազ հանդերձ զսէր իմ դուզնաքեայ, և կամէի թէ ոչ նուազ ինչ քան զնորայն լինէր. կամէի և ես հատուցանել քեզ նոյնչափ

արտասուս, նոյնչափ հառաչանս, նոյնչափ հեծեծութիւնս, և մեծ ևս զղջումն վասն մեղաց իմոց ։

Բազումողորմ Հայր հոգւոյ իմոյ, քանիպատիկ պարտական եմ քեզ վասն անձկալի այցելութեանդ քո՝ որով երանես զիս ։ Արդ իմ ես դու և ես քո ։ Ո՛հ, ստացիր զիս որպէս քեզ հաճոյագոյն ևս է, և իշխեա ՚ի վերայ իմ որպէս և կամիս ։ Այն ունիմ զի ոչ մեկնեսցեն զիս ՚ի քէն՝ ոչ տառապանք, ոչ անձկութիւնք, ոչ աղքատութիւն, ոչ թշուառութիւնք, ոչ վտանգք, ոչ հալածանք, ոչ սպառնալիք, ոչ մահունք ։ Ըղձանայի զայսոսիկ խոստանալ քեզ անպարտելի սրտիւ առաքելոյն Պօղոսի. կամէի բերել յանձին իմում զմեծն զայն հոգի մշտաբորբոք՝ անհատատալի իմն սիրով առ քեզ, և մրցիլ ընդ նմին ։

Բայց զգանձս քո, Տէր իմ, ամենառատ պարգևատու, և ՚ի վերայ այսպիսւոյ աղքատ հոգւոյ ցո՛յց յաւուր յայսմիկ՝ եթէ քանիօն բազմապատիկ իցեն ճոխութիւնք քո ։

Ի վեր քան զամենայն խնդրեմ 'ի քէն զպարգեւ գտանելոյ շնորհս առաջի քո, որ միայն արժանիդ ես ամենայն սիրոյ իմոյ։ Քեզ միայնոյ կամիմ լինել հաճոյական 'ի խորհուրդս իմ, 'ի գորովանս իմ, յամենայն 'ի գործս իմ։ Լուսաւորեա զիս՝ զի ծանեայց եթէ ո՛ր առաւել սիրելի իցէ քեզ, և շարժեա զիս ընդունել և կատարել զայն. տուր ինձ զեռանդն՝ զի մի՛ պակասեսցին յինէն կամք բարիք։ Լցո զիս ահագին սոսկմամբ յերեսաց մեղաց, մինչև զարհուրել ինձ 'ի ստուերաց և յանուանէ ևեթ նոցին։ Աղաչեմ զքեզ վասն մաքրագունին հոգւոյ՝ որ նստի առընթեր քո յերկինս, վասն Մարիամու ամենասրբուհւոյ՝ մօր քո օրհնելոյ, և վասն անբաւ սիրոյն որով սիրես դու զնա։

Գիտես և զայն, ո՛վ Տէր, եթէ որպիսի՛ ունիցիմ սէր վասն անձին իմոյ. գիտես զի սիրեմ զանձին դիւրութիւն, զհանգիստ և զպատիւ, և զի 'ի խնդիր եմ անցաւոր և երկրաւոր երջանկութեան, վասն

որոյ և նեղիմ առանց յաջողելոյ ։ Ո՛Հ, փրկեա զիս 'ի վատաբախտիկ տառապանաց աստի, և ուսո ինձ սիրել զբարին իմ զճշմարիտ ։ Տուր ինձ մի՛ զանգիտել 'ի վշտակրութէ, և մի՛ համարել զընթացս կենացս այսոցիկ՝ իբրև զժամանակ խրախութեանց՝ այլ արդեանց ։ Բարձ յինէն զպատրանս շատակեաց կենաց, և տուր ինձ չկորուսանել զառաջիկայ ժամանակս ակնկալութեամբ հանդերձելոց ինչ երկայնաւուրց ։ Վառեա զիս մեծաբորբոք տարփանօք հուպ ընդ հուպ լինելոյ ընդ քեզ՝ առ 'ի վայելել զքեզ յերջանկաւէտն յաւիտենականութե ։ Ո՛Հ, ո՛րպէս սերտեալ է յիս սէր երկրաւոր կենաց ։ Տէր, ամենայն ուժից քոց պէտք են առ 'ի ջնջելոյ զայն. մի՛ խնայեր յինէն զամենակարողութիւնդ քո ։

Մի՛ թողուր զիս, ամենաքաղցր Յիսուս իմ՝ ամայի յօրհնութենէդ քումմէ, զոր պաղատիմ խոնարհութեամբ՝ վասն հոգւոյ իմոյ փրկելոյ արեամբդ քով. որպէս զի միշտ քո

ընչի, և ոչ կորուսցէ երբէք զփառս ընծելոյ քեզ յորդի, փառք՝ զորս դու իսկ ետուր նմա: Օրհնեա և զմարմինս զայս՝ զոր շնորհեցեր նըմին 'ի կենակցութիւն, որպէս զի մի՛ ընչի մի՛ նմա և մի՛ այլոց յառիթ գայթակղութեան և յանցանաց: Հեղ զօրհնութիւնդ քո և 'ի վերայ տոհմայնոց և ընտանեաց իմոց, զի մի՛ ունիցին երբէք մուտս մեղք առ նոսա: Դարձեալ աղաչեմ ըզքեզ՝ զի օրհնեսցես զմերձաւորսն իմ, և զայնոսիկ որոց եղև երբեմն ունել ընդ իս ոգի թշնամութեան: Աղաչեմ զքեզ և ես առաւել վասն սիրելւոյ քո կաթուղիկէ եկեղեցւոյ, վասն մեծիդ այդ գործոյ և հրաշափառագունի քան զամենայն գործս զոր ցուցեր 'ի վերայ երկրի. աճեցո զնա, տարածեա զնա ընդ ամենայն աշխարհ, և ժողովեա գթութեամբդ 'ի նմա զամենայն հերձուածող, օգտեալ և այլափառ, կոչելով զնոսա 'ի մոլորութենէ և 'ի խաւարէ անտի՝ 'ի ճշմարտութիւն և 'ի լոյս աւետարանին: Ողորմեաց և թշուա-

ուսկան մեղուցելոցն՝ որք աղաւոտեն զպատիւ մօր իւրեանց անարժան վարուք, և թշնամանս ածեն գթութեան քում՝ յամառելով 'ի մեղս : Գթա, ով Յիսուս, յայնքան եղկելիս, որովհետև գթացար յիս :

ԻՂՋՔ

Յիսուս իմ, դու ես որթ, և ես մի յուռոց քոց. միացո զիս 'ի քեզ զի մի բաժանեցայց յաւիտեան :

Կամիմ, քաղցր փրկիչ իմ, մեռանել վասն քո, որ մեռար վասն իմ :

Ո՛վ մահ Յիսուսի, 'ի քէն ակն ունիմ բարւոյ մահուան :

ՅՈՒՇՔ

Առ 'ի բարւոք մեռանել՝ պարտ է խոկալ սաէպ զմահուանէ, և կեալ այնպէս որպէս թէ վայրկենի վայրկենի հասցէ մեռանել :

Չլուաւ ուրեք երբէք եթէ դիմեալ ուրուք 'ի սերտ սրտէ առ Տիրամայրն՝ անընդունակ լեալ իցէ :

Սիրեա զխոտիլն և գտցես զԱծ :

ԼԱ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ, Տէր, ծառայդ անպիտան, որ վտանգացեալ յոլորմութիւն քո անբաւելի, համարձակի մերձենալ 'ի սեղանս սրբութե՟, առ 'ի կերակրել 'ի մարմնոյ քումմէ: Այլ ինչ՞ իմ պատրաստեալ զոր արժանն է՝ առ կոչումս այս ահեղ: Ո՛հ Տէր, զգամ յանձին պէտս կազդուրելոյ 'ի կերակրէ այսմ կենաց՝ զոր բաշխեսդ. բայց և ոչ մի արժանաւորութիւն և առաքինութիւն գիտեմ յանձին, առ 'ի մերձենալ համարձակութեամբ և ընդունել զայն: Յաղագս այսորիկ անկեալ խոնարհութեամբ առ ոտս քո, աղաչեմ զարթուցանել յիս

զկիրս և զխիղճս՝ որով անկ էցէ վառել բազմելոցն 'ի սեղանս յայս սուրբ ։ Գարշիմ մերժիմ, ով Տէր, 'ի մեղաց՝ զոր մեղայ քեզ, և զարշեալ զզուեցայց յամենայն զօրութենէ սրտի ։ Առաւել կամիմ մեռանել քան մեղանչել ։ Եւ էցէ թէ մեռեալ էր իմ մինչև մեղուցեալ · քանի՜ ուրախ լեալ էր իմ այժմ ընդ այն ։ Քան զամենայն աղէտս դառնագոյն է ինձ յիշատակ յանցանաց իմոց առ քեզ ։ Երանի էր ինձ՝ եթէ հիւանդութիւն դժնդակ անզգայեալ էր զիս յառաջ քան զմխիլն իմ 'ի գործ թշնամանաց առ քեզ ։ Այո, Տէր, չեք այսուհետև վիշտ վտանգի սրտիս՝ բայց միայն զի ընդ վայր հարի զքեզ . և ոչ այլ փափաք՝ բայց զի մաշեալ սպառեսցի զղջմամբ, կամ կեցցէ լոկ առ 'ի զամագիւս լինել փոխարինի ապերախտ ծառայութեանն ։

Ո՜հ, քանի՜ մեծ եղև սէր քո, Տէր, 'ի պարագրել քում զանբաւ մեծվայելչութիւնդ ընդ դոյզն տեսակօք հացի առ 'ի միանալ ընդ հո-

գւոյս իմոյ ։ Ո՛հ, ընդ որքանեա՞ւ անարգութեամբ գրաւեցեր զփառս քո՝ 'ի ծածկիլն քում այդու քօղով ։ Եւ քանի՞ սքանչելեաց չիցեն պէտք առ 'ի գլուխ հանել զգործս զայս սուրբ ։ Հրաշալիս այս օրինակ սիրոյ՝ զոր իմաստութեան քում միայնոյ մարթ էր հնարել, և բարութեան քոյ միայնոյ հնար հաւանել, և միայնոյ ամենակարողութեանդ կատարել, խանդաղատեալ զիս՝ ձգէ առ քեզ զամենայն զօրութիւնս սրտի իմոյ ։

Նուիրեսցին առ սէր քո, Աստուած իմ, ամենայն խղձք սրտիս ․ իսկ եթէ բերցին երբէք առ արարածս ինչ՝ և այն վասն քո միայն լիցի և առ 'ի սէր քո ևեթ ։ Սիրեմ զքեզ յամենայն զօրութենէ իմմէ, սիրեմ զքեզ քան զամենայն բարի, քան զամենայն արարածս և առաւել քան զիս ։ Սիրեմ զքեզ և ըղձամ հալիլ սիրով քով ։ Քանի՜ քաղցր էր ինձ օրհաս ցաւագին 'ի սիրելն անդ իմում և 'ի ծառայելն քեզ ։ Լաւ է ինձ մեռանել վասն

քո, քան կեալ երանութեամբ վասն իմ: Տուր, Տէր, զի մի՛ այս իմ բանք յանդիմանեսցեն 'ի վարուց իմոց. արդարև 'ի սրտէ յառաջագայեն, այլ 'ի սրտէ անտի՝ որ երբեմն յողդողդ գտաւ. վասն այնորիկ դիմեմ առ քեզ և պաղատիմ զօրացուցանել շնորհօք քովք սրբովք զառաջադրութիւնս իմ:

Մի՛ շատանար շնորհիւ չմեղանչելոյ իմ առ քեզ, այլ զգեցո զիս վերըստին պատմուճանաւ առաքինութեան. հեղ յիս առաւելապէս զսէր, զմաքրութիւն և զխոնարհութիւն: Ո՛ Տէր, ոչ մեծ ինչ խնդրեցից 'ի քէն՝ զոր ինչ և խնդրեցից. և ոչ յանդգնութեան իցէ՝ ամենայնի ակն ունել առ 'ի քէն: Եւ իմ ոչ կալայց ակն յԱստուծոյ՝ որ յանբաւութենէ սիրոյն տայ ինձ զանձն բովանդակ: Երանի՛ է ինձ, զի աչառասիկ մերձենայ վայրկեանն խընկելի՝ յորում ընկալայց զցանկալին Յիսուս 'ի շրթունս իմ, գիրկս արկից նմա, և յագեցայց մարմնովն սրբով: Հառաչանօք անձկամ, Տէր,

մեծի պարգևիդ՝ զոր շնորհեսցես 'ի տալդ ինձ զքեզ ուղղոյն՝ հաղորդութեամբս սրբով. բայց ընդ նմին հայցեմ տալ ինձ և զշնորհս արժանի նմին լինելոյ: Վասն այսորիկ վերըստին ժտիմ վարել 'ի սրտի իմում զեռանդն ըղձից՝ որք կարևորք իցեն մերձեցելումն 'ի սեղանս սրբութ̃են:

Ո՛վ սիրեցեալ մայր Մարիամ, օգնեա ինձ բարեխօսութեամբ քով 'ի պահուս՝ յոր մատչիմս ընդունել զՈրդի քո, և տո՛ւ ինձ զշնորհս արժանապէս զնա ընդունելոյ:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Երգեա՛ հոգիդ իմ, զխորհուրդ փառաւորեալ մարմնոյ և զարեան Քրիստոսի Յ̃ի, որով եկն յայսմ առաւօտու այց առնել քեզ: Բացէք շրթունք իմ յերգս գոհութեան առ սիրտն Աստուծոյ, որ վասն իմ ծընաւ 'ի Բեթղեհէմ, մեռաւ 'ի Գողգոթա, և այժմիկ ընծայեցաւ 'ի հաղորդութեանս սրբում: Ո՛վ սիրտ

իմ , մինթէ կայցե՞ս մնայցես անփոյթ , ցուրտ և անզգայ առ այսքան գրա-ւական գերունակ սիրոյ՝ զոր ընկա-լարդ այժմիկ ։ Ո՛հ , գէթ անուազան ուրեմն սթափեաց և կանգնեաց ։ Ո՛վ Տէր , դու ինքն զգաստացո զիս և զե՛րծ յամօթոյ մնալոյ անզգայ և ցուրտ առ քեզ՝ նաև յերջանիկ վայրկենին՝ յորում ստանայ զքեզ զծածկեալդ ընդ տեսակաւ հաղոր-դութեանս ։ Ո՛վ անբաւ բարու-թիւն Աստուծոյ իմոյ ։ Ո՛վ ընթ-րիք՝ յորում բաշխի անմահական կերակուր , նորոգի պատարագն որ 'ի խաչին , լուսաւորին միտք եր-կնային փառօք , և կամք ճաշակեն ճաշակս արքայութեան՝ կանխելով 'ի վայելս Աստուծոյ ։

Ո՛հ , և զի՞ ես դանդաղեմ ես ըն-ծայել զիս բոլորովին Աստուծոյ իմոյ , որ հաճեցաւ շնորհել ինձ զինքն ողջոյն ։ Ո՛ Տէր , եթէ ոչ ան-արժան համարեցար զաղքատու-թիւն սրտիս 'ի բնակութիւն քեզ , աղէ ընկալ զսա 'ի նուէր ընծայի՝ զոր մատուցանեմ քեզ ։ Խլեա ար-

մտաւքն զվատշուէրան ունակացեալս ՚ի նմա ախտս՝ որք անհաճոյ զայն առնեն քեզ. զարդարեա զնա առաքինութեամբք, և մանաւանդ մաքրութեամբ, սիրով և հեզութեամբ: Ընդ սրտիս ընծայեմ քեզ և զանձն բովանդակ, եղեալ ՚ի մտի առնել ՚ի փառս քո և ՚ի պատիւ զամենայն զոր և առնիցեմ յամենայն կեանս իմ, և լինել յամենայնի ըստ կամաց քոց: Ընկալ Տէր զընծայս զայս, ՚ի նշանակ երախտեաց իմոց առ շնորհդ՝ զոր արարեր, մուծանելով զիս ՚ի տաճարս սրբութեան:

Ո՛վ սքանչելի հոգի Տեառն իմոյ, հիացումն երկնից, գերագոյն հրճուանք արքայութեան, մշտընջենաւոր բերկրութիւն երանեալ հոգւոց, ոսկեղէն աղբիւր սրբութեանց, միակ ճառագայթ գեղեցկութեանց, գանձ անսպառ ամենայն բարեաց, դայեակ գթալիր ամենայն հոգւոյ սրբոյ, պահպանիչ բարեպաշտիկ ընձից, լոյս մըտաց մերոց. առ քեզ դիմեմ խո-

նարհութեամբ և առ 'ի քէն ժամ զցանկալին իմ սրբակերտութիւն ։ Սուրբ արա զսիրտ և զմիտս, ըզբանս, զկիրս, և զիղձս իմ ։ Այս իցեն հառաչանք իմ և այս աղաչանք, մինչև գուցէ յիս շունչ կենդանութեան ։

Ներեա, ով Յիսուս, ամենայն թերութեանց իմոց՝ որ յընդունելն զքեզ 'ի խորհրդեանս՝ յայսմ առաւօտու. Թո՛ղ ինձ զայնոսիկ և տուր ինձ շնորհս ընդունելոյ զքեզ եռանդագինս յայսմհետէ, և մանաւանդ 'ի ժամու մահուան իմոյ ։ Ոհ, Տէր, հասցէ և ինձ վայրկեանն այն, և թէրևս չիցէ իսկ հեռի, յորում եղէց իբրև բեւեռեալ 'ի մահիճս ցաւոց և շուրջ պատեալ 'ի վտանգաց օրհասին ։ Ո՛հ, թէ քանի կարօտ եղէց յայնժամ օգնութեան քում ։ Ո՛հ, մի՛ լիցի ինձ առանց քո չուել աստուստ 'ի յաւիտենականութիւն անդր ։ Շնորհեա և ինձ սփոփիլ 'ի տագնապ օրհասին՝ քոյին քաղցր այցելութեամբ. հնչեսցեն յականջս իմ 'ի վերջին անդ ա-

ւորս՝ բանքն ուրախութեան, խա-
ղաղութեան և մխիթարութեան,
զոր բարբառի պաշտօնեայն քո:
Յանկարծ 'ի պատասխանելն խմբում-
ամբն, մեկնէր հոգիս իմ 'ի մարմնոյս.
քանզի երջանիկ և սուրբ լինէր ինձ
մահս իմ: Յայնժամ երթեալ լինէի
յարքայութիւն՝ գոհանալ զքէն
վասն սրբոյ հաղորդութեանս, և
'ի գիրկս քո մտանէի՝ առ 'ի կալ
մնալ անդէն յաւիտեան և ես:

ԻՂՁՔ

Ակն ունիմ սիրել զքեզ յաւի-
տեանս՝ ով Ած յաւիտենական:
Եւ ո՞ ոչ սիրիցէ զքեզ՝ բարու-
թիւն անբաւելի:
Ո՛ տայր ինձ՝ ով Յս, մեռանել 'ի
ցաւոց՝ վն թշնամանաց իմ առ քեզ:

ՑՈՒՇՔ

Հետաքրքիրք՝ սայթաքեն մտօք:
Որ սիրէ զԱստուած՝ գտանէ ըզ-
դրգանս իւր՝ և 'ի վիշտս անգամ:
Չիք այլ ճանապարհ հասանելոյ
յերկինս՝ բաց 'ի ճանապարհէ խաչի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. ԽՈՐՀՐԴՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ա

Փող երկնաւորին Աստուծոյ՝ ահագին ձայնիւ գոչէ ասելով. Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա։

Ձայն արարչին Աստուծոյ գոչէ ասելով. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն երկնից 'ի սկզբանէ աշխարհի։ — Ձայն արկեալ կենարարին աստուածային բարբառովն ասէ. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զկեանսն 'ի հանդերձեալ երկրին։

Ահա տեսանեմք զտէրն մեր Քրիստոս՝ որ բազմեալ կայ 'ի վերայ սըրբոյ սեղանոյս, և կոչէ առ ինքն ըզկամարարս իւր, Թէ Ուր եսն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի ։

† Բաց մեզ Տէր, բաց մեզ Տէր, բաց մեզ Տէր՝ զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ ։

Ոչ Թէ արդարք միայն մտանեն, այլ և մեղաւորք խոստովանութ՟բ և ապաշխարութեամբ արդարացեալ՝ մտանեն ընդ սա ։

Զի սա է դուռն երկնից և հովիտ տրտմութեան՝ զոր ուխտեաց Աստուած՝ Յակոբայ. արդարոց հանգիստ. մեղաւորաց քաւարան. հրեշտակաց բնակարան. Քրիստոսի արքայարան. սրբոց ժողովարան. տեղի ապաւինի. լեառն Տեառն, և տուն Աստուծոյ ։ — Սա է մեզ յոյս կենաց, և սովաւ գտանեմք զփրկութիւն հոգւոց. և սա է մեզ մայր անարատ, և 'ի սմանէ ծնանիմք որդիք լուսոյ և ճշմարտութեան. և զի սա է մեզ ճանապարհ

արդարութեան, և առաւել եղանեմք
առ Քրիստոս՝ հայր մեր երկնա-
ւոր: — Գինք եմք անապական ա-
րեան որդւոյն Աստուծոյ. ցնծու-
թեամբ օրհնեսցուք զփրկիչն մեր և
ասասցուք ամենեքեան. Փառք սոս-
կալի գալստեան քո, Տէր:

† Բացէք ինձ զդրունս արդա-
րութեան, զի մտից ընդ այն և խոս-
տովան եղէց Տեառն:

Ընդ առաջ եղանել քեզ հաւատով
'ի յօդս վերինս, աստուածազգեաց
լուսով պայծառացեալ 'ի դասս ան-
մարմնոցն, 'ի լսել զձայն երանաւէտ
կոչմանն: — Ընդ աջմէ քումմէ կա-
ցո՛ ընդ իմաստուն սուրբ կուսանսն,
'ի լուսեղէն առագաստին՝ պայծա-
ռացեալ 'ի դասս անմարմնոցն, 'ի
ժողովս անդրանկաց գրելոց 'ի յեր-
կինս: — Յորժամ կոչես զհրաւի-
րեալսն 'ի սկզբանէ աշխարհի՝ ժա-
ռանգել զպատրաստեալն, շնորհեա
մեզ ընդ նոսին զարքայութիւն քո,
Քրիստոս: — (ՇԱՐԱԿԱՆ)

Բ

Թագաւոր փառաց, քեզ սպասեսցուք պատրաստեալք արժանութեամբ՝ ընդառաջել, որ գաս 'ի դատել զերկիր։—Անաղօտ վառեալ լապտերք հաւատոյ ընդ գասս իմաստուն կուսանացն, մտանել 'ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային։ — Փութասցուք կանխեալ յառաջ քան զձայն աստուածային բարբառոյն, զի մի մնասցուք արտաքս ըստ չիջման հինգ կուսանացն։

Շնորհեա մեզ, Տէր, արժանութիւն՝ ընդ իմաստուն կուսանացն, և զհոգւոց մերոց լապտերս պայծառացո։ — Երկնչիմք 'ի քէն, Տէր, զարհուրեալք 'ի պատասխանւոյն, զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ ըզձեզ։ — Յորժամ գաս փառօք հօր դատել զտիեզերս ամենայն, շնորհեա և մեզ, Տէր, կալ 'ի յաջմէ քումէ։ — Բացցի մեզ, Տէր, դուռն ողորմութեան երկնաւոր փեսային, և մտցուք 'ի յառագաստ ընդ ի-

մաստուն կուսանան: — Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մտցուք 'ի յառագաստ նորա. զի մի մնասցուք արտաքս որպէս զյիմար կուսանան: — Պայծառասցին լապտերք հոգւոյ մերոյ, և բազմեցուսցես զմեզ ընդ հրաւիրեալսն 'ի կոչումն արքայութեան երկնից: — (ՇԱՐ.)

Գ

Մայր հաւատոյ սուրբ հարսնարան,
Եւ առագաստ գերադրական.
Տուն փեսայիդ անմահական
Որ զարդարեաց զքեզ անվախճան:
Երկրորդ երկինք դու հրաշական,
Փառաց ի փառըս բարձրական.
Որ զմեզ ծնանիս լուսոյ նըման
Աւազանաւդ որդիական:
Բաշխես ըզհացըդ մաքրական,
Զարիւնդ ըմպել տաս սոսկական.
Հանես ի վեր գերաստիճան
Յիմանալեացըն զուգական:
Եկայք որդիք Նոր Սիոնի:
Մատիք առ Տէր մեր սրբութեամբ.

Ճաշակեցէք եւ տեսէք
Զի քաղցր է տէր մեր զօրութեամբ:
Հինն օրինակ քեզ եւ նըման ,
Դու խորանին գերագրական·
Նա խորտակեաց զդըրունս անդա-
[մանդ ,
Դու զդըժոխոց դըրունսն ի հիմանց·
Նա բաժանեաց ըզՅորդանան,
Դու զծով մեղաց աշխարհական·
Նըմա Յեսու էր զօրական
Եւ քեզ Յիսուս՝ Հօր միական :
Հացս այս մարմին է Քրիստոսի ,
Բաժակս՝ արիւն նորոյ ուխտի·
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտ-
Աստուած ի սմա մեզ տեսանի·[նի:
Սա է Քրիստոս Բանն Աստուած
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի ,
Եւ աստ ի մեզ պատարագի ,
Բաշխեալ ըզմեղս աշխարհի :
Այն որ օրհնեալ է յաւիտեան
Հարբ եւ Հոգւովըն միաբան ,
Այժմ եւ յաւէտ եւ յապագայն
Եւ յանըսպառ միշտ յաւիտեան :

Դ

Ո՛րպէս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց. ցանկայ և փափագէ անձն իմ բնակել 'ի գաւիթս քո: — Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Աստուած կենդանի: — Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն, տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր: — Սեղան քո Տէր զօրութեանց, Թագաւոր իմ և Աստուած իմ: — Երանի ամենեցուն որ բնակեալ են 'ի տան Տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ: — Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր 'ի քէն է. ելս եդ 'ի մտի իւրում 'ի հովտէս տրտմութեան՝ 'ի տեղւոջ յորում ուխտեաց: . . . Ընդունելի ես դու մեր. տես, Աստուած, և նայեա յերեսս օծելոյ քո: — Վասն զի լաւ է ինձ մի օր 'ի գաւիթս քո՝ քան զհազարս: — Ընտրեցի ընդ աղբ գալ 'ի տան Աստուծոյ առաւել քան ըղ֊

ընակա՛նալ 'ի յարկս մեղաւորաց ։ — (Սաղմ. ՁԴ.)

† Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց՝ այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած ։ — Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած հզօր և կենդանի. Երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ ։ — Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապազ Թէ՝ ո՞ւր է Աստուած քո ։ — Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ յարկաւ ըսքանչելեաց տանն Աստուծոյ. 'ի ձայն ցնծութեան խոստովանութե և 'ի ձայն բարեկենդանութեան ։

Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեմ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է ։ — (Սաղմ. ԽԱ.)

Ե

Հաւատ ունելով՝ հոգւոյ խաղա-ղութեան, երթ առ Արարիչն՝ հայ-ցելով, Աստուած իմ, հանգո՛։ — Որ եւուր հոգի, Յիսո՛ւս, զնա պա-հեա․ զի քո խաչի և յարութեանդ հաւատաց։ — Թագաւոր երկնաւոր, հանգո՛ զհոգի սորա, յիշելով սորա զհաւատս։ — Ի քաղաք Տեառն զօ-րութեանց և 'ի քաղաք Թագաւո-րին մեծի, ուր ժողովք սրբոցն են 'ի խաղաղութեան, գնասցես յու-սով, և հանգիցես ընդ հրեշտակաց դասս, տեսանել զլոյսն յաւիտե-նից։

† Ճանապարհ և ճշմարտու-թիւն և կեանք Քրիստոս, առաջ-նորդեա հոգւոց մերոց յերկրէ ե-լանել յերկինս։ — Դուռն կենաց մոից, Յիսուս, մոյծ և զմեզ առ Հայր քո և Հոգի, երգել միշտ ըղ-փառս։

Ձ

Լոյս ճշմարիտ Քրիստոս Աստուած, առ քեզ հոգի իմ առաւօտէ. 'ի յերկրի երևեցո ինձ զերեսս քո: — Քոյով պատուական խաչիւ և հրաշափառ քո առաւօտու յարութեամբդ՝ երևեցո ինձ զերեսս քո:

Լոյսդ որ ընդ Հօր նախ քան ըզյաւիտեանս, եկիր լուսաւորել ըզխաւար մեղաց աշխարհի, ծագել 'ի սմա զլոյս հրամանի, առ քեզ հոգի իմ առաւօտէ: — Կեանք 'ի կենաց և լոյս յարութեան, որ արարեր խաչիւ քո զխաղաղութիւն յերկինս և յերկրի, տուր մեզ, Տէր, զքո խաղաղութիւնդ՝ որպէս սրբոց քոց առաքելոց:

† Լուայ զսքանչելի տնօրէնութեան քո զլուր. քանզի յերկնից խոնարհեալ՝ մարմնացար 'ի սուրբ Կուսէն, և խաչեցար ընդ աւազակին. և զարհուրեալ հիացայ ընդ քո ընդ անհաս մարդասիրութիւնդ:

— Երևեցար 'ի փրկել զարարածս 'ի մահուանէ, և դժոխք հիացեալ սասանեցան 'ի յահէ ամենազօր փառաց քոց։

Հիացան զօրք երկնից ընդ քո յանձն առնուլ զծառայի զկերպ. և մարգարէն զարհուրեալ ասէր. Լուայ զլուր քո և երկեայ, նայեցայ 'ի գործս քո և զարհուրեցայ։... Երևեցար 'ի փրկութիւն ստեղծուածոց քոց՝ ոչ մեկնելով 'ի Հօրէ, յանձն առեր կամաւ զխաչն և զթաղումն, և յարուցեալ 'ի մեռելոց իշխանութեամբ, քանզի լուծեալ եղեն երկունք մահու։

† Յոյս կենդանութեան և փըրկութեան իմոյ, տէր Աստուած իմ, յիշեա զիս որպէս երբեմն զԵզեկիայն, և դարձո զհոգի իմ 'ի դրաց դժոխոց։ — Յոյս և յարութիւն ազգի մարդկան, Քս̃ Աստուած, ըզհիւանդութ̃ի հոգւոյ իմոյ կենդանացո՛ որպէս երբեմն զԵզեկիայն։ — Զչարչարանս և զմահ յանձն առեր կենդանատու ամենեցուն, ըզհիւանդութիւն հոգւոյ իմոյ առող-

ջացո՛ որպէս երբեմն զԵզեկիայն: — Որ կամաւոր մահուամբ քո մեռուցեր զմահ, Քրիստոս Աստուած, և լուսափայլ յարութեամբ քո կենագործեցեր զաշխարհս, կենագործեա և զիս զմեղօք զմեռեալս:

† Ընդ Յովնանու անձն իմ ծըփեալ յալիս մեղաց ծովու, աղաղակեմ 'ի նեղութէ՟ իմում առ փրկողդ և յոյս, լուր ձայնի իմում: — Որ փրկեցեր զմարգարէն յորովայնէ կէտին, ապրեցո՛ և զըմբռնեալս 'ի ժանեաց չար վիշապին՝ կենարար խաչիւդ:

† Հոգի իմ յամենայն ժամ ըզքեզ փառաւորէ, Տէր· վասն զի լոյս են հրամանք քո 'ի վերայ երկրի: — Հոգի քո սուրբ և բարի՝ զէն ինձ, Քրիստոս, եղիցի յամենայն ժամ՝ ընդդէմ թշնամւոյն հակառակողի:

Է

Վերաձգողն երկնից մշտնջենաւոր Հօր որդին՝ ներգործեալ իմոյս

'ի վեր քան զհրաշս, ծառայի ա-
ռեալ զկերպ անկողոպտելի աս-
տուածութեամբն։ — Բաշխէ զմար-
մին իւր և զարիւն՝ Նոր ուխտ ա-
նուանեալ և յիշատակ կամաւոր
մահուանն, մերձեցելոցս 'ի նա սըր-
բութեամբ։ — Որ մարմնով և
արեամբ քով ցուցեր զթողու-
թիւն մեղաց, որ միշտ պատարա-
գիս 'ի մեզ անծախապէս, մաքրեա
'ի մէնջ զմէգ խաւարին խորհրդոց
և լուսաւորեա զմեզ։ — Որ քաւիչ
զայս Նոր ուխտ ցուցեր յետ առաջ-
նոյ քո՝ մահացելոցս 'ի ճաշակմանէ
նախահօրն, մաքրեա 'ի մէնջ զմէգ
խաւարին խորհրդոց և լուսաւորեա
զմեզ։

Որ բարեբանիս յիմանալի զը-
ւարթնոցն՝ հաճեցար մարմնով պա-
տարագիլ, արա և զիս արժանի
աստուածային շնորհին։ — Որոյ ա-
թոռ քերովբէք՝ 'ի վերնատունն բազ-
մեցար, կենարար բաժակաւն զմեզ
փրկեցեր, փրկեա և զիս 'ի յաւի-
տենից 'ի հրոյն։ — Որ կազմեցեր
սեղան խորհրդոյ և արբուցեր յան-

մանկական բաժակէն՝ որդւոց քոց առաքելոցն՝ այսօր 'ի սուրբ վերնատունն, աղաչեմք, փրկիչ, ողորմեա։ — Մաքրեա զմիտս և զխորհուրդս, զի և մեք հաղորդեսցուք սրբութեամբ ընդ որդւոց քոց առաքելոցն․ աղաչեմք, փրկիչ, ողորմեա։ — Մարդ ճշմարիտ և գառն անարատ, որ դատապարտեցեր զմեղս 'ի մարմնի․․․ Բանն Հօր և քահանայապետ ճշմարիտ, որ զաշխարհակեցոյց զմարմին և զարիւնդ քո բաշխեցեր յառաքեալսն, այսօր հաղորդին հողեղէնք աստուածային խորհրդոյդ, Որդի Աստուծոյ ողորմեա։ — Յորմէ սարսեալ սերովբէքն՝ ոչ իշխէին նայել, այսօր 'ի ծառայի կերպարանս եղեալ նախայաւիտեան Բանն, օրհնեցէք զնա հոգևոր երգով։ — Այսօր վերստին նորոգեցաք 'ի յանիծից նախահօրն, ճաշակելով զմարմին և զարիւն Որդւոյն Աստուծոյ․ օրհնեցէք զնա հոգևոր երգով։

Անապականութեան աղբիւր, զկենդանարարդ բաշխեցեր զմար-

մինդ քո, նորոգելով զմահացեալսն յանցանօք 'ի պատրանաց Թշնամւոյն. օրհնեալ եկեալդ 'ի փրկութիւն մեզ՝ Աստուած հարցն մերոց: — Ճառագայթ փառաց Հօր և պատկեր բարերարութեան, որ ըզգեցար այսօր զգեստ ծառայական կերպի, զնա ամենայն ազինք օրհնեցէք հոգևոր երգով: — Որ բաշխմամբ կենդանարար խորհրդոյ անապական Ճաշակմամբն՝ հրաւիրեաց զմեզ յերկնից յարքայութիւնն, զնա ամենայն ազինք օրհնեցէք հոգևոր երգով:

Որ 'ի խորհուրդս փրկականս եկեղեցւոյ՝ բաշխեցեր աշակերտացն զմարմինդ քո, նորոգելով զմահացեալսն 'ի Ճաշակմանէ, հաղորդս այսմ ընկալ զմեզ՝ միայն մարդասէր: — Որ յաթոռ փառաց նստիս ընդ Հօր, այսօր բազմիր ընդ աշակերտսն յանձն առեր, բաշխելով զմարմին և զարիւն քո սուրբ. օրհնեալ եկեալդ 'ի փրկութիւն ազգի մարդկան:

† Որ կանգնեաց զքառանկիւն սե-

ղան խաչին՝ յաղագս քառակողմ աշխարհի պատարագեալ, յորմէ սեղանոյ բուրեաց անուշահոտ հոգի․ բարձր արարէք զբազմեալն 'ի վերայ խաչին։ — Որ փոխանակ մեղսասէր մահացու պտղոյն՝ պարգևեաց մեզ կերակուր արդարութեան, 'ի կեանսն յաւիտենից նորոգելով զմեզ․ բարձր արարէք զբազմեալն 'ի վերայ խաչին։ — Որ ճաշակեացն զլեղի դառնութեան վասն ազգի մարդկան, և պարգևեաց զմարմին և զարիւն իւր զանապական․ օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ — (ՇԱՐԱԿԱՆ)

Ը

Որ վասն մեր յերկնից խոնարհեցար նորոգել զոխեղելս, օգնեա և ինձ, փրկիչ, ողորմութեամբ, և կեցո։ — Որ ըստ հողեղէն բնութեան մարդկան զգեցար մարմին, զվիրաւորեալս մեղօք զանձն իմ մխիթարեա ողորմութեամբ, և կե-

ցո ։ — Որ զդատակնիք մահու լուծեր զնախաստեղծին, զդատապարտեալս մեղօք զհոգիս իմ՝ նորոգեա ողորմութեամբ, և կեցո ։

† Որ ողորմութեամբ զգեցար մարմին և նորոգեցեր զհնացեալքս, նորոգեա և զմեզ հոգւով, Քրիստոս, և ողորմեա ։ — Որ ՚ի խաչին մեռար մարմնով, և զմեռեալքս դարձուցեր ՚ի կեանս, կեցո և զմեզ հոգւով, Քրիստոս, և ողորմեա ։ — Որ յարեար ՚ի մեռելոց, և յարուցեր զբնութիւնս մեր յուսով, յարո և զմեզ հոգւով, Քրիստոս, և ողորմեա ։ — Որ զսիրելին քո զՂազարոս կոչեցեր ՚ի գերեզմանէն, կոչեա և զմեզ հոգւով ՚ի կեանս, և ողորմեա ։

† Յորժամ փառօք հայրենի, Քրիստոս, ծագիս ՚ի յերկնից, և յարուցանես զմեռեալսն, յայնժամ դասեա ընդ աջմէ քումէ և կոչեա զմեզ ՚ի փառս քո ։ — Յորժամ հեծանոցաւ դատողութեան քո, Տէր, սրբես զկալ աշխարհի, յշտեմարանս արքայութեանդ ժո-

ղովէա զմեզ ընդ արդարոցն : — Յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսայիդ, ընդ իմաստուն սուրբ կուսանացն արժանացո՛ առագաստին զմեզ, ընդ նոսին երգել զփառս 'ի բարձունս : — (ՇԱՐ.)

Թ

Ի քեզ, Տէր, յուսացայ. մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութեան քում փրկեա և ապրեցո՛ զիս : — Խոնարհեցո՛ առ իս զունկն քո և կեցո զիս : — Լեր իմ Աստուած ապաւէն և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես : — Աստուած իմ, փրկեա զիս 'ի ձեռաց մեղաւորի, 'ի ձեռաց անօրինի և անիրաւի : — Դու ես համբերութիւն իմ Տէր. Տէր յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ : — Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ 'ի քէն է օգնութիւն իմ

յամենայն ժամ: — Դու ես պաշտպան իմ Տէր, և 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ: — (Սաղմ. Լ.)

Ժ

Դու ես Թագաւոր յաւիտեանս յաւիտենից, Քրիստոս Աստուած մեր:

Զքեզ, Քրիստոս, գովէ եկեղեցի փրկեալ քո սուրբ, ցնծալով առեալ զքեզ զփրկողդ եկեալ հայրական իշխանութեամբ՝ 'ի պսակել զսուրբս քո: — Քաղցրացելն քեզ, Քրիստոս, գոհութիւնք երկիւղածաց անուան քո, զոր յուսացուցեր ողորմութեամբ քո՝ 'ի խորհուրդս կենսաբեր գալստեանդ քո: — Օրհնեցից զքեզ գոհութեամբ 'ի կեանս իմ. սաղմոս ասացից քեզ Քրիստոս՝ Թագաւոր յաղթական, նոր երգով օրհնութեամբ: — Զամենայն աւուրս կենաց իմոց՝ ես ոչ դադարեցայց օրհնել զքեզ՝ Քրիստոս, փրկիչդ աշխարհի: — Ես ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել

զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ ։

† Արի Տէր օգնեա մեզ, և փրկեա զմեզ վասն անուան քո ։ — Արի, և մի մերժեր զմեզ իսպառ վասն անուան քո ։ — Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Աստուած քո, Սիովն, յազգէ յազգ ։ — Օրհնեա անձն իմ զՏէր . օրհնեցից զտէր կենդանութեան իմոյ ։

† Տուք փառս Աստուծոյ, տուք օրհնութիւն մարդասիրին՝ Թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ ։ — Դու ես Տէր մեր, դու ես Քրիստոս՝ փրկիչ մեր . զքեզ օրհնեն անձինք մեր ։ — Քրիստոս է իմ Աստուած, և փառաւոր առնեմ զնա . Աստուած հօր իմոյ, և բարձր արարից զնա ։ — — Բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ . հաստատեցաւ սիրտ իմ 'ի Տէր՝ տերամբ և հաւատով ։ — Յոյս կենդանութե՛, յոյս և ապաւէն փրկութեան, տէր Յիսուս, փրկեա և փարատեցո զցաւս անձին իմոյ ։ — (ԺԱՄԱԳԻՐՔ)

ԺԱ.

Երկիր պագանեմք քեզ... Տէր և որդի հօր միածին, Յիսուս Քրիստոս, և սուրբ որդի. տէր Աստուած, գառն Աստուծոյ և որդի հօր. որ առեր զմերս՚ի կուսէն, ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ՝ որ նստիս ընդ աջմէ հօր, ողորմեաց մեզ. զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն տէր մեր Յս Քս:... Յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր, և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից: Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն: Օրհնեալ Տէր, ուսո ինձ զարդարութիւնս քո: Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ: Ես ասացի Տէր, ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ: — Ցոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո՝ տուր մեզ:

— Տէր, ողորմութիւն քո յաւի-
տեան. զգործս ձեռաց քոց մի՛ ան-
տես առներ: — Տէր իմ, զքեզ ապա-
ւէն ինձ արարի. ուսո ինձ առնել
զկամս քո, զի դու ես Աստուած
իմ: — Ի քէն է, Տէր, աղբիւր կեն-
դանութեան, և լուսով երեսաց
քոց տեսանեմք զլոյս: — Ծագեա
զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն
զքեզ, Տէր: — (ՃԱՄԱԳ.)

ՃԲ

Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ
ոչ պակասեսցի: — Ի վայրի դա-
լարուոջ անդ բնակեցոյց զիս, և առ
ջուրս հանգստեան սնոյց զիս: —
Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջ-
նորդեաց ինձ 'ի ճանապարհս ար-
դարութեան վասն անուան իւրոյ:
— Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ըս-
տուերաց մահու, ոչ երկեայց 'ի
չարէ, զի դու Տէր՝ ընդ իս ես: —
Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխի-
թարեսցեն զիս: — Պատրաստ ա-

բարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց։ — Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս։ — Ողորմութիւն քո Տէր՝ զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան տեառն ընդ երկայն աւուրս։ — (Սաղմ. ԻԲ.)

Սա է Աստուած, Աստուած մեր յաւիտեանս յաւիտենից. և սա հովուեսցէ զմեզ մինչև յաւիտեան։

† Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի 'ի նմանէ է ինձ փրկութիւն։ — Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ՝ զի մի՛ սասանեցայց առաւել։... Բայց սակայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ, զի 'ի նմանէ է ինձ համբերութիւն։ Նա է Աստուած իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ, զի մի՛ սասանեցայց։ — ՅԱստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ. Աստուած օգնութեան իմոյ։ Յոյս իմ է առ Աստուած։ — Յուսացարուք 'ի նա ամենայն ժողովք ժողովրդոց. սփռեցէք առաջի նորա զսիրտս ձեր. զի

Աստուած օգնական է մեր յաւի-տենին ժամանակաց։ . . Աստու-ծոյ է զօրութիւն. և քո, Տէր, ողոր-մութիւն։ — (Սաղմ. ԿԱ.)

ԺԳ

Ահաւասիկ ժամանակ ընդունե-լի, ահա օր փրկութեան, յորում եղէ արժանի զձեռս իմ մեղաւոր՝ առ Քրիստոս կենաձիրդ տարածա-նել. այժմ ձրի պարգևաց բաշխումն, որում և ես արժանի գտայ ժամա-նել։ Գոհանամ զքէն Աստուած իմ և տէր, զի կցորդ արարեր զտա-ռապեալս՝ եկեղեցւոյ քում սրբոյ, 'ի ժամս յոյս աղօթել։ Օրհնեմ զքեզ Քրիստոս, զի 'ի հաղորդու-թիւն կենդանի քո պատարագին զաչս իմ պատրաստեցեր. փառա-ւորեմ զքեզ, տէր սրբոց, տէր իմ Յիսուս, և մեղաց սրբութիւն, որ ո՛չ զենման քո ընթերակայ և տե-սող զծառայս քո անարժան՝ կար-գեցեր։ Ահա չքացաւ մեղքն, տե-

զի ետ յանցանքն, փարատեցաւ խաւարն. այժմ՝ ընդ ամենայն տիեզերաց՝ ՚ի փառաց քոյ լոյս և ես վայելեմ: Սարսափմամբ ոսկերաց հայեցեալ նկատեմ զանպարտական տէրդ՝ մահապարտ ծառայիս փոխանակ մեռեալ, և հօր քոյ Աստուծոյ՝ ՚ի պատարագ միածնի Որդւոյդ ՚ի հոտ անուշից հոտոտեալ, և զգլխաւոր պարտեաց ամենայն աշխարհի արձակեաց: Յորոց մի և առաւել քան զընաւմն՝ ես պարտական մահու գտեալ յանցանօք: Եւ արդ բարեյոյս հաւատով տեսեալ զքեզ իմ՝ մեռեալ այսօր, մխիթարեցայ բերկրանօք յանմխիթար սգոյ մեղացն: Ես յամենայն չարիս զառածեալ՝ չունէի ինչ Հօր քո հաշտութեան նուէր ընծայել, ծանուցեալ զկարիս ամօթոյն. դու սիրելի Որդիդ՝ փրկանք մեղաւորիս ՚ի ձեռս նորա նուիրիս: Ո՜վ մեծի գթութեանցդ, ո՜վ անբաւ երախտեացդ, ո՜վ զեղուն սիրոյդ. որ ոչ շատացար ՚ի միանգամ մեռանելն, զի չէիր արժանի, այլ վասն թողութեան միշտ

մեղանչականացս՝ ետուր զքեզ միշտ 'ի սպանդ զենման, գառնդ բարձող զմեղս աշխարհի։ Եւ թէ մեք դադարեաք 'ի մեղանչելոյ՝ և դու լռէիր 'ի մեռանելոյ. բայց զի հանապազ աղտեղանամք թաւալեալք ընդ ախտըս չարս, միշտ և հանապազ հեղուս զարիւնդ սուրբ, Աստուած իմ Յիսուս, 'ի վերայ մեր, սրբութիւն ամենայն մեղաց։

Արդ զի Աստուած արդարացուցանէ, ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոսդ մեռանիս, և ո՞վ է որ 'ի կեանս ոչ վայելէ։ Որդիդ Աստուծոյ ես միջնորդ հաշտութեան, և ո՞վ է որ 'ի խռովութեան մնասցէ։ Հայր քո օրհնեալ 'ի փառս անուան Որդւոյդ միածնի, որ այսչափ հոգայ ընդ մեր փրկութեան մինչև զՈրդիդ սիրելի տալ մեզ նորոգութեան կենաց գրաւական։ Արդ աղաչեմ զքեզ, միջնորդ ամենեցուն փրկութեան, ընկալ 'ի մարմինդ անապական զնեխեալս անդամ, և որպէս վայելեն այսօր 'ի շնորհս քո երկինք և երկիր, մասն ընկալայց և

եւ ընդ նոսին ողորմութեան և թողութեան. և մի՛ զի կամաւ զանձն զրկեցի 'ի կենդանարար մարմնոյ քո ճաշակմանէ, դատայց զրկեալ և յողորմութենէ. զի մոլորեցայ, Տէր, խոտորեալ զհետ անմիտ ցանկութեանց՝ 'ի չար ճանապարհս, որք արկին զիս 'ի վիհս մեղաց, և եղկելուոյս չէ այսօր համարձակելի զզարշութիւն իմ 'ի սուրբդ մերձ համարձակեցուցանել. այլ նեխեալ գոլով անդամ՝ յոսկերաց քոց աստ եմ որիշ՝ առանց ընդունելոյ զազդուածն շնորհաց, որ իջանէ 'ի գըլխոյդ 'ի մարմին քո եկեղեցի, ճաշակմամբ երկնային հացի: Մի՛ լիցի, Տէր իմ, աղաչեմ, և 'ի թողութենէ մեղացն զրկել. այլ որպէս սոցա զճաշակ քաղցրութեան շնորհես, և ինձ ամաչեցեալ ծառայիս զձիր ներողութեան յանցանացն պարգևեսցես. զի յամենեցունց փառաւորեսցի անունդ, որոյ փառօք լցաւ այսօր երկինք և երկիր: Եւ մի՛ ոք 'ի մէնջ դարձցի ունայն յաստուածային սրահիցս առատաբաշխի սրից.

և մի՛ դարձայց 'ի քէն ամաչեցեալ, որ ոչ ամաչեցուցանես երբէք ըղ-յուսացեալսն 'ի քեզ, Տէր:

Ո՛վ սքանչելեացս, ո՛վ ուրախա-կան լուրս որ հնչէ յականջս իմ՝ պարարէ զոսկերս ցամաքեալս: Ար-դարև 'ի քէն լուայ, Քրիստոս, այժմ տեսացեալ, Այս է մարմին իմ և արիւն իմ բաշխեալ 'ի քա-ւութիւն ձեր և 'ի թողութիւն մեղաց: Արդ 'ի դերմ՞ ելանէ աս-տուածայինդ բարբառ, կամ հայրդ ճշմարտութեան՝ զրկե՞ս զիս յան-ձառ խոստմանէդ: Մի՛, Տէր իմ, մի՛ զանբնական քո սովորութիւն ցուց-ցես• զի անհաւատիցն է ոչ վայե-լել 'ի յայս շնորհս պարգևաց, և ան-երկբայադուացն՝ ոչ ուրախանալ 'ի սպանդ քոյս զենման: Իսկ ես մե-ղաւոր, այլ 'ի քոյոց ստեղծուա-ծոց• յանցաւոր, այլ 'ի քո սուրբ օրինացն խրատուց• ախտացեալ՝ այլ 'ի տեառնդ իմոյ անդամոց: Եւ ոչ զօրէ խաւար մեղացն առաջի լուսոյդ ծաւալման դադարել• այն-չափ հիւանդ, մինչ ոչ զբժշկիդ օգ-

նութիւն է 'ի պահանջել։ Յայնժամ գոլով մեղաւոր իմ՝ մինչ ոչ էի 'ի նմանէ հրաժարեալ. բայց այժմ թողեալ զնոյնն՝ առ քեզ հաւատով և յուսով, փրկիչ աշխարհի, ապաւինեցայ. զոր տեսեալ այսօր 'ի փրկութիւն մեռեալ՝ յուսացայ զկատարեալ թողութիւն 'ի ձեռն կենացդ աշխարհի գտանել։ Եւ այսու յուսով զձեռս տարածանեմ, զատակս տաճարիս սրբոյ համբուրեմ, զպարանոցս կորացուցանեմ և զհուր սիրոյ սրտիս բորբոքեմ, զաչս յարտասուս կաթեցուցանեմ և զհառաչս սրտիս բողոքեմ։

Հայեաց յիս այժմ 'ի փառաց աթոռոյ սրբոյ սեղանոյդ, որպէս երբեմն 'ի հեղուսմանէ խաչին՝ 'ի վէմն քո գայթակղեալ. և տուր ինձ զնոյն ներողութիւն, որպէս և առ նա ցուցեր զառատ մարդասիրութիւնդ։ Մեղայ յերկինս և առաջի քո անառակ որդիս. ընդ աւազակին առ քեզ աղաղակեմ։ Յիշեա զիս, Տէր, յորժամ գաս արքայու-

թեամբդ քո, դատաւոր աշխարհի։ Առ զհաւատս հաւատացեալ ծառայիս, և գրեա զիս 'ի դպրութիւն կենաց մատենիդ. Թերևս լիցիմ դարձեալ արժանի 'ի մաքրագործ մարմնին քո հաղորդել, և ըղկատարեալ կենդանութիւնդ 'ի հիւանդացեալ մարմինս ձգել։ Քանզի այս տենչանօք վառիմ և 'ի բաղձանս սիրոյ քո, Թագաւոր իմ, և սովա 'ի խոր խոցոտիմ. որում՝ արժանի արասցես անմահ մահուամբ և փրկագործ պատարագաւս տեսանել զքեզ աստ միշտ յուսով, և 'ի հանդերձեալ կեանսդ՝ փառաւորել զքեզ, Տէր, ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։ — (ԱՂՕԹՔ ՆԱԽՆԵԱՑ)

ԺԴ

Միայն սուրբ, միայն Տէր՝ Յիսուս Քրիստոս, 'ի փառս Աստուծոյ Հօր։ — Մեզ ուսա՛ւ սրբութիւն՝ հողածնելոցս. մեք զիա՞րդ

վկայիմք սուրբք՝ ախտից վիճակեալքս. մեզ՝ անկար է սրբութիւն, ընդ մարմին կապելոցս: Այլ սուրբ՝ միդ. մաքուր՝ միայնակդ. անախտ մարմնով՝ միդ միայն 'ի մարմնաւորացս. պարծանք մեր յերկինս երկնից՝ դա միայն վերացաւ, զոր բարձեալ կրես 'ի ձեռին. առ որ կարօտեալքս՝ նայեցեալ ցնծացաք. յոր հայեցուածովքս միայն՝ սրբեցաք. ընդ որ 'ի պշնուլս՝ երբեք ոչ յագենամք: Միայն սուրբ դա է մարմնով. միայն դոյն մեզ տիրէ, Յիսուս Քրիստոս Աստուածդ մեր և փրկիչ, որ 'ի փառս Աստուծոյ Հօր միշտ հանգուցեալ և յաւէտ է: Դովաւ հաւատամք զսրբութիւն քում սպասաւորութեան ընդունել. այդ սրբութեանդ յուսով առընթեր կացեալ դեգերիմք. նորին Տեառնդ ակն կալեալ՝ այսքան ժամանակս աստէն տաւաղիմք. 'ի Տէրդ ապաւինեալ՝ սրովբէապէս աստէն խարուկիմք. զդա սպասեմք ունելեօք ձեռինդ սրբոյ՝ մաքրութիւն սնձանից մերոց ճաշակել:

Այդ կայծակն է որ զմերս պղծեալ մեղօք զշրթունս կիզէ. իբր զայր մի տառապեալ՝ կամք բազմութիւնս ընդ սոսկալի տեսիլդ՝ որ առաջի աչաց մերոց փայլեաց: Հիացեալ ըսքանչանամք ամենեքեան, զիա՞րդ զՏէր զօրաց երկնից՝ 'ի կառս հեթեղէն ձեռացդ տեսանեմք բազմեալ: Փա՜ռք գործն անճառդ սիրոյ: — (Ն. ԼԱՄԲՐՈՆԱՑԻ)

† Փրկութիւն՝ դու ես Յիսուս, և առ ո՞ այլ յենուցումք. փորձանակից դու ես, և առ ո՞ այլ ապաւինեսցուք. ո՞չ տաճն քո է, առ ո՞ այլ ապաստանեսցուք: Ողորմած դու ես, և զո՞ւմ այլ ունից՝ նմին կարօտեալքս բուռն հարցուք: — Նայեաց, Տէր, 'ի փորձեալքս և կործանեալքս, 'ի մաշեալքս և չարչարեալքս, 'ի խոցեալքս և գիշատեալքս, 'ի յարբեալքս և յիմարեալքս: — Փրկի՛չ, որ զփրկութիւն ուսուցեր խնդրել, քոյովս զքեզ թախանձեմք, փրկեա՛ զմեզ յորսողէն. որ ես օրհնեալ յաւիտեանս. ամէն: — (ՆՈՅՆ)

ԺԵ

Զերևեալդ ինձ ՚ի փրկութիւն՝ խոստովանիմ ճշմարտապէս մարմին և արիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյ իմոյ. և աղաղակեմ առ քեզ, Մեղայ յերկինս և առաջի Աստուծոյ: Սրբեա զիս յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ: Շնորհեա ինձ ժամանակ և ցանկութիւն ապաշխարութեան: Փրկեա զիս յերևելի և յաներևոյթ թշնամեաց: Տպաւորեա զօգուտն հոգւոյ և մարմնոյ իմոյ: Պարգևեա ինձ բարեպաշտութեամբ և բարեգործութ̄բ զքեզ արժանապէս ճաշակել. և կատարել զկեանս իմ ՚ի փառս Հօր և Որդւոյդ միածնի և Հոգւոյդ քո փառակցի:

† Երկրպագեմ քեզ, Քրիստոս, փրկութիւն աշխարհի, Բան Հօր, պատարագ կենդանի, Ճշմարիտ մարմին անարատ աստուածութեան և կատարեալ մարդ. որպէս բերանովս խոստովանիմ, նոյնպէս և հոգ-

ռովս դաւանիմ և հաւատամ։ Աղաչեմ զքեզ Որդի սուրբ Աստուած, տէր ամենակալ, շնորհել մեղաց իմոց Թողութիւն. և տալ ծառայիս քո հոգի զգաստութեան. որ և փրկեցայց քև յաւիտենական հրոյն, վասն կամաւոր չարչարանաց քոց. զի դու ես ճշմարիտ գառն Աստուծոյ, որ բաշխիս 'ի փրկութիւն ազգի մարդկան, և բառնաս զմեղս աշխարհի։ — (ԱՂՕԹՔ ՆԱԽՆԵԱՑ)

ԺՁ

Առ քեզ ակնարկեմ աղբի՛ւր ջըրոյ կենդանւոյ, և աղաղակեմ, Թէ ընդէ՞ր է ինձ սրբութեան ծարաւել, երբ դու ես իմ սրբութիւն. կամ ընդէ՞ր փափագեմ մաքրութեան, մինչ դու ես իմ մաքրութիւն։ Այսուհետև ուսեալ, եԹէ դու ես իմաստութիւն մեզ յԱստուծոյ տուեալ, արդարութիւն և սրբութիւն, առ քեզ ծարաւիմ, քեզ փափագեմ, քեզ տոփամ։

Տո՛ւր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ՝ զովացուցի՛չ, աղբիւր ջրոյ կենդանւոյ խաղացելոյ 'ի կեանս յաւիտենից: — Ծարաւիմ ըմպել 'ի կըրկին վտակաց կողից, որով և սըրբեալ՝ սիրով քո զմայլիմ: Քաղցնում ուտել զմարմինդ, որով կենդանացեալ՝ անմահ ես լինիմ: Փափագեմ ողջագուրել զխոցուած ձեռացդ, որով հասեալ առ քեզ պըրսակիմ: Տռփամ ականարկել զդէմսդ, որոյ ապտակաւն 'ի վերայ իմոյ ընծըշկիմ: — Վաղվաղակի լո՛ւր ինձ տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ: Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո անձաւդ սիրոյ: Տոչորեցայ յառ քեզ տուփանացդ, ո՛վ վասն իմ խաչեալ: Թալկացայ՝ յորժամ առ քեզ ակնարկեմ, ո՛վ վասն իմ ապտակեալ: Եւ աղաղակեմ. Ցո՛յց ինձ զդէմս քո. լսեցո ինձ զբարբառ քո. զի ձայն քո քաղցր է և դէմք քո գեղեցիկ: Ե՞րբ եկից երևեցայց քեզ: Արդ լո՛ւր ինձ և արբեցո՛ զիս վաղվաղակի քո գիտութեամբդ և սիրով. զի և յինէն՝ որ հաւատամ 'ի քեզ, բըղ-

խեսցեն աղբիւրք ջրոց կենդանու-
թեան։ — (ՆԵՐՍ. ԼԱՄԲՐ.)

ԺԷ

Տո՛ւր ինձ Տէր Յիսուս, և ամե-
նեցուն քո հօտիս՝ լքանել զամե-
նայն ինչ, և 'ի քո քաղցրութիւնդ
հայել զսակաւ ընթացս նախոր կեն-
ցաղոյս։ — Խոպմ՛ո բարի, հան 'ի
սրտէ իմէ զաշխարհական ցանկութի,
և վերածեալ բարձրացո՛ միշտ 'ի
քումդ երեսաց գիտութիւն։ —
Զանիմ յանձնէ քեզ նուէր. ըզ-
քեզ՝ տո՛ւր ինձ զօրութիւն՝ տալ
քեզ, և ողորմութեան հատուցում
ընդունել։ Քեզ փառք յաւիտենից
ամէն։ — (ՆՈՅՆ)

ԺԸ

Սաղարթ եմք քո միածնիդ.
դա որթ է և մեք ուռ. դա գլուխ
է, և մեք անդամք. դա Քրիստոս

է, և մեք քրիստոնեայք. դա արուեստաւոր է, և մեք գործք: Մի՛ անտես առնէր, այլ հայեաց առ մեզ ողորմութեամբ և մշակէ գթութեամբ. և սրբեա զուռս որթոյդ քո Ճշմարտի՝ 'ի ժանգէ և յաղտոյ վիշապին. որպէս զի կարասցուք լինել քոյին տածելովդ՝ պտղաբերք: Ծաղկեցո՛ 'ի մեզ հաւատն և հաստատեա 'ի նոյն. և ազոխացո՛ 'ի մեզ զթթուութիւն երկիւղին, և ջերմացո զնոյն. և խայծեցո 'ի մեզ զքաղցրութիւն սիրոյն և Ճաշակեա զնոյն. և հար զմեզ 'ի հնձանդ երկնային և զմայլեցո վերնովդ. և ամբարեա 'ի շտեմարանս քո և զուարՃակից արա: Զի կերիցուք և արբցուք յարքայութեան քո, ըստ անսուտ խոստման միածնի քո, զխորհուրդս՝ որոց այժմ քաղցեալք մընամք անՃաշակ, և փափագեալք՝ մնամք ծարաւի: Ո՛վ մարդասէր, արա՛ զմեզ փշրանաց վերին սեղանոյդ արժանի, որպէս սորին սեղանոյս փշրանաց՝ զկինն քանանացի: Նա քեզ՝ փառք փառակից

Միածնաւդ և էակից սուրբ Հոգ-ւովդ՝ 'ի մի իշխանութիւնդ և աս-տուածութիւն, օրհնեալ յաւի-տեանս յաւիտենից․ ամէն։—(ՆՈՅՆ)

ԺԹ

Շուրջ պատեալ 'ի տարակու-սանացս յամենայն կողմանց՝ սըր-տիւ շաղախեալքս և ունկնդրու-թեան կարօտեալքս, նայիմք առ-քեզ՝ փոքր տկար բնութեանս՝ քա-հանայապետդ Յիսուս։ Ո՜վ որ վասն մեր մեղս եղեր, զի մեք լիցուք վասն քո արդարութիւն։ Ո՜վ որ վասն մեր երկրաւոր եղեր, զի մեք լիցուք վասն քո երկնաւորք։ Ո՜վ որ վասն մեր հաց եղեր, զի մեք 'ի ճաշակելն զքեզ՝ սրբեսցուք։ Տուր զպարա-րեալ վշտօք մարմին քո՝ ամենայն սրտի սրբարար կերակուր։ Մա-տուսակեա զարեան քո վտակ ան-մեղ կայլակեալ՝ որդւոց մարդկան անմեղութեան զմայլումն։ Զգեա զփրկական քո զխաչդ՝ ղօղելոցս 'ի

ծով աշխարհիս՝ առ քեզ վերածիչ։
Կարօտացաք շնորհի՝ սփռեա՛լ. լքաք
՚ի գործոց, քաւեա՛լ։ Խարխափեմք
զխաւար, ճառագայթեա՛լ. կործա-
նեցաք ՚ի հաւատոց, հաստատեա՛լ։
Դու ես յոյս, դու ես լոյս, դու ես
կեանք, դու ես քաւութիւն. դու
ինքն և անմահութիւն։ Քեզ սպա-
սեն յեցեալքս ՚ի շնորհս քո, ՚ի քէն
կարօտին առնուլ փրկութի՝ խառ-
նեալքս ՚ի մարմինդ քո. զքեզ ու-
նին քաւիչ քահանայ՝ գնեալ ա-
րեամբ հօտս քո։ Հայեաց յամե-
նեսեան, սփոփեա զտարակուսանս
մեր քոյին վստահովքդ։ Հանդար-
տացո՛ զխռովութիւնս մեր՝ քոյին
խաղաղութեամբդ. հանգո՛ զաշխա-
տանս մեր ՚ի քո օթեվանսդ, ուր
դու գնացեր, Տէր, և խոստացար։
Արժանացո՛ զքոյսս՝ փառաւորել
զքեզ այդր՝ ընդ Հօր և ընդ սուրբ
Հոգւոյդ, յաւիտեանս. ամէն։

(ՆՈՑՆ)

Ի

Խոցեա՛, ով քաղցունենիդ տէր Յիսուս, զուղեղ և զաղիս հոգւոյս՝ ամենանուշակ և կենդանարար վիրօք սիրոյդ, ճշմարիտ և սեռն և առաքելական գթութեամբ սիրով, զի նուաղեալ հալեսցի սա հանապազ լոկով սիրով քով և տարփանօք. քեզ միայնոյ փափագեսցի, և 'ի գաւիթս քո պարտասեալ՝ ցանկասցի լուծանիլ 'ի կենացս և լինել ընդ քեզ։ Տուր հոգւոյս իմոյ քեզ քաղցնուլ, ո՛վ հաց հրեշտակաց, կազդուրիչ հոգւոց սրբոց, հա՛ց մեր հանապազօրեայ, գերագոյակ, ամենահամ և ամենաքաղցր, և համօրէն լցեալ ճաշակօք անուշութեան։ Զքեզ՝ որում հրեշտակք փափագեն նկատել՝ սիրտ իմ նքողեալ կարօտանօք ճաշակեսցէ հանապազ. և 'ի համադամ ճաշակացդ լցցին ընդերք հոգւոյս։ Քեզ անդադար ծարաւեսցի հոգիս, աղբի՛ւր կենաց, աղբիւր իմաստութեան և գիտութեան, աղբիւր

մշտնջենաւոր լուսոյ, ուղխ փափկութեանց, պարարտութիւն տանն Աստուծոյ: Առ քեզ միայն նկրտիցի, զքեզ խնդրեսցէ, զքեզ գտցէ, առ քեզ ձկտիցի և առ քեզ ժամանեսցէ. զքէն խորհեսցի, զքէն խօսեսցի. և զամենայն 'ի փառս և 'ի պատիւ անուան քում գործեսցէ խոնարհութեամբ և զգաստութեամբ, զուարճութեամբ և զմայլմամբ, յօժարութեամբ և բաղձանօք, և յարատեւակն ժուժկալութեամբ: Դու միայն լիցես միշտ իմ յոյս, իմ ապաւէն, մեծութիւն իմ և հրճուանք իմ, բերկրութիւն իմ և խնդութիւն, անդորր ինձ և հանդարտութիւն, խաղաղութիւն իմ, քաղցրութիւն 'ի ճաշակ, բուրումն ինձ անուշից, սփոփանք իմ, ապաստանարան իմ և օգնական, իմաստութիւն իմ և բաժին իմ, ստացուած իմ և գանձ իմ. յորում հաստեալ և հաստատեալ և անշարժօրէն արմատացեալ կացցեն հանապազ միտք իմ և սիրտ իմ. ամէն:

(Ս. ԲՈՆԱՎԵՆԴՈՒՐԱ)

ԻԱ

Աղբերացն անապական՝
Որ յետ մահուն անմահարար
Բղխեալ ի քէն վըտակ կրկին՝
Ի նորոգումըն կողածնին,
Բաց ըզբերան իմ յարբուցումըն
Քո արեան կենարարին.
Լըւա՛ դարձեալ յաւազանին,
Թէ ոչ շնորհօք՝ այլ արտասուօք:
Ցանմահից մեռանելոյ՝
Զմեռեալ հոգիս կենդանացո.
Թաղմամբդ ի նոր գերեզմանի
Զթաղեալս ի մեղըս վերածեա.
Ի գբի ներքնումն իջանելով՝
Ի գբոյն մեղաց վերաբերեա.
Ի ստուեր մահու քո բնակելով՝
Լուսաւորեա եւ զիս հոգւով:
Սիրտ իմ առ քեզ աղաղակէ
Բան՝ որ ընդ Հօր ի սկըզբանէ,
Որ կամաւոր վասըն մարդկան՝
Կրեցեր մարմնով զայս ամենայն.
Ինձ լըսելի արա ըզձայն
Ցարքայութեանըդ քո կոչման.
Ընդ ժողովոցն անդ անդրանկացն՝
Օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան:
(Ն. ՇՆՈՐՀԱԼԻ)

ԻԲ

Գտի՛ց զքեզ Յիսուս, և գտայց 'ի քեն Քրիստոս. եթէ զիա՛րդ և կամ որպէս, աղաչեմ զքեզ բարերար, ոչ գիտեմ. 'ի քեն հայցեմ ուսանել, 'ի քեն պաղատիմ ճանաչել. դու գիտես զիմն, առաւել քան զիս, դու քննես զխորսն և խմանաս զանյայտսն: Դու բժիշկ լինութեանս ախտացելոյ և ես հիւանդ և գարշահոտեալ, նեխեալ և խըղխայթեալ. միայն ես որպէս մարդասիրի՝ զցաւս իմ պատմեցից քեզ, զառողջարարն դեղ դու գիտես. ես և ամենայնին տւեմ վասն անհնարին ցաւոյս, քոյին օժանդակութեամբ և օգնականութեամբ. եթէ խարանօք այրես, եթէ սրով հատանես, եթէ ձիթով և գինւով օծանես, եթէ զանազանօք 'ի մի խառնեալ դեղ տառուահամ և ծանրահոտ արբուցանես. միայն եթէ ցաւս յանկեսցի, միայն եթէ բոցս շիջցի, միայն եթէ մաղձս սև և այրեցեալ

՚ի բաց տարամերժեսցի յինէն , որ նեղէ զիս ։ — (ԱՂՕԹՔ ՆԱԽՆԵԱՑ)

ԻԳ

Աստուած ամենակալ և յաւիտենական , ահաւասիկ մատչիմ առ պատուական խորհուրդ մարմնի որդւոյ քո և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։ Մերձենամ որպէս հիւանդ՝ առ բժիշկ կենաց , պիղծ՝ առ աղբիւր ողորմութեան , կոյր՝ առ լոյս յաւիտենական պայծառութեան , աղքատ և կարօտ՝ առ տէրն երկնից և երկրի ։ Եւ աղաչեմ ՚ի գթութենէ քումմէ տալ ինձ շնորհս ընդունելոյ զհացն հրեշտակաց , զԱծն երկնից , զթագաւորն թագաւորաց , այնպիսի պատկառանօք և խոնարհութեամբ , այնպիսի զղջմամբ և եռանդեամբ , այնպիսի մաքրութեամբ և հաւատով , զի մի՛ հաղորդակից միայն եղէց մարմնոյ և արեան Տեառն իմոյ , այլ և զօրութեան և շնորհաց մեծի խորհրդ-

գոյ․ մինչև արժանաւորել միանալ ընդ քեզ և գտանել 'ի Թիւս որդւոյ քոյ սիրելեաց։ Ո՛ Հայր ամենասիրելի, տուր ինձ արժանի լինել յաւուր միում նկատել յերկինս բացաւ երեսօք զհաճելին քո՝ զՅիսուս, զոր այժմ ընդ քօղով ծածկեալ ընդունիմ։

Եւ արդ ընդէ՞ր յամես գալ 'ի հոգի իմ, Յիսուս սիրելի։ Ո՛վ հաց հրեշտակաց, մանանայդ արքայուԹեան, յոյս իմ, մխիթարուԹիւն իմ, կեանք իմ, ամենայն ինչ իմ։ Եկ միանգամ պարարել զիս անարատ մարմնով քով, և լնուլ զիս աստուածայնին հոգւով քով, և առնել զիս քոյին բովանդակ։ Քեզ միայնոյ անձկայ սիրտ իմ․ փափագեմ ընդունել զքեզ այնու մաքուր սիրով, այնու կենդանի հաւատով, այնու սուրբ պատրաստուԹեամբ՝ որով ընկալաւ զքեզ 'ի ծոց իւր ամենասրբուհին Մարիամ։ Զբովանդակ արժէս նորին, և զհոգւոցն առ 'ի քէն յոյժ սիրեցելոց, նաև զքոյսն իսկ, ո՛վ Յիսուս, նուիրեմ

քեզ, առ 'ի լնուլ՝ եթէ հնար է այսու՝ զպէզի անարժանութեան իմոյ։ Ե՛կ ապա, մի՛ այլ ևս յապաղեր, եկ ժառանգել զհոգի իմ, և առնել քեզ գահոյս զսիրտս զայս, և սիրովդ քով թագաւորել 'ի սմա միշտ և հանապազ։—(Ս. ԹՈՎՄ. ԱԿ.)

ԻԴ.

Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, Բան Հօր և կերպարան, կենդանի և կենդանարար, լոյս և փրկութիւն ամենեցուն որ կարդան առ քեզ. որ շնորհեւս առաւել քան զարժանն, և տաս խնդրողացն ըղձալիտոյս կարեաց. զի ոչ միայն աբարեր և սաացար վերստին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քո, այլ և միշտ զքեզ ետուր փրկանս կենաց մարդկան, թշնամեաց և ատողաց զպատուիրանս քո, մանաւանդ քան թէ բարեկամաց և սիրողաց. վասն որոյ մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո, և ամե-

նայն երկրի ցուցաւ փառք քո։ Եւ այնքան գերազանցեաց պարգեւաց քոց նշանակ, զի ոչ միայն մարդկայինս հիանան ազգք, այլ եւ երկնային զօրքն եւ առաւել մերձակայքն. ընդ որս սոսկացեալ փառաւորեն անլռելի ձայնիւ, ասելով. Սուրբ, սուրբ, սուրբ, տէր զօրութեանց։ Զոր եւ ուսեալ մեր երգեմք 'ի ժամ անմահիդ զենման, կցորդելով անմարմնոցն երջանկաց. զի առ մեզ զանճառն տեսանելով խորհուրդ եւ ընդ մեր եղեալ զօրինակ մահուն Ճշմարտի, մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնութեան։ Զի եթէ զօրինակն անգիտանան գովասանութեան, միայն զսուրբն կարդան զանուն. ուստի զերեսն ծածկեն եւ զոտսն. մեք զո՞ր ասասցուք օրհնութիւն եւ կամ զգոհութիւն. բայց միայն զքեզ օրհնեսցուք սարսափմամբ, եւ հաւատով մերձեսցուք յանտեսանելիդ, եւ 'ի տեսանելիդ անճառութեանդ։

Օրհնեմք զհայր՝ զառաքող փըր-

կողից. օրհնեմք և զհոգիդ սուրբ՝ զկատարիչ և զարբիչ գալոյն օրինակի։ Օրհնեմք զանխմանալի զքո խոնարհութիդ. Օրհնեմք և զմեծ քո քաղցրութէ կամացդ։ Օրհնեմք՝ որ կենաց զմարմինդ քո ետուր դեղ։ Օրհնեմք՝ որ զարիւն քո շնորհեցեր մեզ 'ի քաւութիւն։ Օրհնեմք՝ որ հուր աստուածութեան քո ոչ կիզու ըզբնութիւնս հողեղէն։ Օրհնեմք՝ զոր ոչ տանին երկինք ամենայն՝ տանին նիւթական եկեղեցիք։ — Օրհնեմք որ նստիս 'ի քրովբէս, և բազմիս 'ի սեղան սրբութեան։ Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին և իննեակ դասք անմարմնոցն, բառնան տասն մատունք քահանայից։ Օրհնեմք զոր և սերովբէն ունելեօք մատուցանէր 'ի շրթունս մարգարէին. իսկ արդ համարձակութեամբ ձեռօք բաշխիս հողեղինաց, և մատամբ մատչիս ճաշակելեաց։ — Օրհնեմք՝ որ ոչ գարշիս յաղտեղութենէ մարմնական կրից, այլ մաքրես սրբութեամբ քո։ — Օրհնեմք՝ որ պէսպէս յանցանս անտես առնես զազ-

դի մարդկան՝ որք հաւատով ապաւինին քեզ: — Օրհնեմք՝ որ միջնորդութեամբ մարմնոյ և արեան քո՝ հաշտեցուցանես զՀայր քո ընդ տարագրեալքս և ընդ օտարացեալքս մեղօք: — Օրհնեմք՝ որ յառաջագոյն զօրինակ սուրբ մարմնոյ և արեան քո ցուցեր զգալի օրինակօք յանցնելոց՝ 'ի դարս և 'ի ժամանակս. Աբելի և Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Սահակայ և Յակոբայ. և 'ի յելսն Եգիպտոսի՝ Մովսիսի և Ահարոնի, Յեսուայ և Դանիէլի, Դաւթի և Սողոմոնի և Նախանձաւորին Եղիայի:

Զայսոցիկ համայն լցեր զօրինակ, Բանդ Հօր Յիսուս Քրիստոս, 'ի վերնատուն, 'ի զգալեաց և 'ի նիւթականաց, յերկնաւորդ և 'ի հոգեւորդ կոչելով խորհուրդ պատարագի՝ զսուրբ առաքեալսն, ասելով. Զայս արարէք առ 'ի յիշատակ իմ, Նոր ուխտ և աւանդ քան զՄովսիսին. տալով վճիռ ոչ ուտողացն՝ ոչ ունելով կեանս. և ուտողացն և ըմպողացն՝ զօրինակին 'ի քեզ

և զքեզ 'ի նոսա։ Զոր հաւատամ լինել քաւութիւն աշխարհի արեամբ քո, ըստ Յովհաննու, թէ Արիւն Որդւոյն Աստուծոյ՝ սրբէ զմեզ 'ի մեղաց։ Քանզի տիրապէս մարմին և արիւն քո՝ կատարեալ արձակումն և ազատութիւն է կապանաց մեղաց։ Եւ ես զայս պատշաճ համարիմ խմոյս մաղթանաց ժամանակ՝ ընդ բնաւից թողութիւն, ննջեցելոց և կենդանեաց։...

Խնդրեմ այժմ, զի բաց է դուռնդ. տուր համարձակութիւն՝ զի առից։ Ընդ խաղաղութիւն աշխարհիս՝ զոր շնորհես, տուր և ինձ խաղաղութիւն յամբոխից կրից։ Ընդ հաստատութիւն եկեղեցւոյ, հաստատեա և զշարժեալ անձնս, ընդ քահանայապետից և քահանայից, սարկաւագաց և դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութեան՝ զօրութեամբ քո, և զիս ընդ հովանեաւ քո ամրացո՛։ Ընդ թագաւորաց և իշխանաց, զօրավարաց և զօրականաց, յաղթող և զիս 'ի վերայ աներևոյթ թշնամ-

ւոյն արասցես ։ Ընդ ննջեցելոցն հաւատացելոցն՝ յիշեա և զիս, Տէր, զմեռեալս մեղօք ։ Զորս 'ի խորոցն հանես անդնդոց, ընդ նոսին հան և զիս 'ի չարին բանտէ ։ Միջնորդութեամբ մարմնոյ քո և արեան՝ առ Հայր քո լցիս և ինձ բարեխօս ։ Հաւատովք և զիս արդարացուցես նման աւազակին. զի հաւատամ և ես, Տէր, արքայութեան քում. յիշեա և զիս Տէր ։ — Արա զկամս Հօր քո, զի նորա էն ախորժակ՝ զի մի՛ ոք կորիցէ ։ — Ընդ այնոսիկ մանկանցն կացուսցես և զիս՝ զորս և Հօր քում առաջի կացուսցես ։ — Մեծ է ողորմութիւն, և զնա կամիս առաւել քան զողջակէզս. արա և դու ։ Գիտեմ զի անչափ է քոյն. բայց ես յիմոցն զանգիտեմ չարեաց, եթէ հանես զիս 'ի նմանէ ։

Արժանաւորեա և այժմ գոհանալ ինձ զողորմութենէ քումէ ։ Գոհանամ զքէն Տէր, որ արժանի արարեր զիս տեսլեան սուրբ խորհրդոյ քո ։ Գոհանամ զի սոսկա-

լին և զաջաւորն լուսոյ զձայն օրհնութե։ Գոհանամ, զի զաստուածխօսութիւն քո լուսոյ։ Գոհանամ, զի ոչ եղէ քարկոծ 'ի բանէդ՝ հալածեալ իբր զգազան։ Գոհանամ, որ զհոգիս յուսով լցեր և զխրատս ուրախութեամբ։ — Զո՞ր օրհնութիւն կամ զո՞ր գոհութիւն քեզ մատուցանեմ, եթէ արժանի եղէց կենաց հացին և անմահական բաժակին։ Զոր եթէ որք տեսին՝ երանեցան 'ի քէն՝ 'ի ճշմարիտ գիտողէդ, զո՞ր երանութիւն ոչ ունիցին որք հաղորդին ես։ Զի եթէ որ ըղբանից Աստուած անճառաբար ծընաւ՝ երանեաց զանձն, որպէս և էրն տիրապէս երանելի, ո՞րքան երանութեանց ապա լցին արժանի՝ որք միշտ զմարմին քո և զարիւն ճաշակեն։ — Եւ այս պարգևք առ 'ի քէն՝ 'ի վեր է քան զմիտս և ըղբան, ոչ միայն երկրաւորաց այլ և երկնաւորաց. յորմէ գողամ և սարսափեմ, մի՛ գուցէ ըստ մեծութեան իւրին պահանջես և զպատշաճն արժանաւորութիւն։ Եւ այսուքիկ

յայտնի ցոյցք անհնարութեան ինձ. եթէ սրբոցն ահարկու՝ պարգեւօք, զինչ և պղծոյս: Եթէ հրեշտակք զերեսս ծածկեն, և որ լրբենի դիմօք հայեցայց. եթէ երկինք աթոռ քոյին և երկիր պատուանդան ոտից քոց, և որպէս բնակիլ յիս վստահացայց: Եթէ զամենայն դու լընուս, և զիա՞րդ յիս ընդունել ակն կալայց: Եթէ յերկիր հայիս և տաս դողալ սմա, մերձիս 'ի լերինս և ծխեսցին, իմ որ զօրութիւն կայցէ առաջի քո: Չար է ինձ մերձենալն չարիս, և տարակուսանք՝ հեռանալն. մանաւանդ զի անսուտ սահմանեցեր, Եթէ ոք ոչ ուտէ զմարմին իմ՝ կեանս ոչ ունիցի յանձին իւրում:

Ահա յայտնապէս խոստովանիմ, զի ես մեռեալ եմ՝ և քեզ է յարուցանելն: Չէ ինձ և ոչ բնաւ յայսոսիկ խորհել զարժանն իմ: Դու ես ծածկագէտ, տուր և յաջողեա արժանապէս՝ յետ այսորիկ առ Հայր քո առերասել. Թէպէտ և որպէս վայել է՝ չեմ արժանի, այլ

որքան և նորա պատահեցայց մարդասիրութեան ։ Եւ փառաւորեցից զքեզ ընդ Հօր քում ամենազօրի , և ընդ ամենասուրբ Հոգւոյդ ճըշմարտի · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

(Գ . ՄԽԻԹԱՐ .)

ԻԵ

Հայր երկնաւոր , որ զՈրդիդ քո ետուր 'ի մահ վասն մեր՝ պարտապան պարտեաց մերոց · հեղմամբ արեան նորա՝ աղաչեմք զքեզ , ողորմեա քո բանաւոր հօտիս ։

Որդի Աստուծոյ , որ պատարագեալ Հօր 'ի հաշտութիւն՝ հաց կենաց բաշխիս 'ի մեզ , հեղմամբ արեան քո սուրբ՝ աղաչեմք զքեզ , ողորմեա արեամբ քո փրկեալ հօտիս ։

Հոգի Աստուծոյ , որ զփառակցի քո խորհուրդ՝ իջեալ 'ի յերկնից՝ կատարես 'ի ձեռս մեր , հեղմամբ ա-

րեան սորա՝ աղաչեմք զքեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն ։

† Լոյս ճշմարիտ և ճառագայթ Հօր, ծագումն և կնիք, բան և ծը-նունդ. որ կանգնեցեր յեօթանց սեանց զեկեղեցի սուրբ, ածեալ 'ի սպանդ զեզն պարարակ. շնորհեա մեզ կերակրել յիմաստութեան սե-ղանոյ քում ։ Ողորմեա ։

Հաց կենաց և անմահութեան ճաշակ, սուրբ և անճառ սոսկալի խորհուրդ. որ 'ի յերկնից իջեր կեն-դանութիւն մարդկան, կենդանի և կենդանարար, պարգևեա քաղցե-լոցս զքաղցրութեան քում ճաշա-կումն ։ Ողորմեա ։

Դուռն երկնից և ճանապարհ ար-քայութեան, Տէր երկնի, 'ի յերկ-նայնոցն օրհնեալ դասուց, որ ըզ-մարմին քո և զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցն. մաքրեա զմեզ հաղորդել սրբութեան քում խորհրդոյ ։ Ողորմեա ։

Բան Հօր և քահանայապետ սուրբ, յանմարմնոցն գովեալ 'ի բարձունս, որ 'ի վերայ խաչին պա-

տարագեալ մարմնով՝ հեղեր զա-րիւնդ 'ի փրկութիւն. սրբեա զմեղս մեր կենարար և փրկական քաւիչ քո արեամբդ : Ողորմեա :

Վէմ հոգևոր և գլուխ անկեան օծեալ, բարեբանեալ 'ի հրեշտա-կաց, որ 'ի խաչին բացեր զկողա-հոս աղբիւրդ, զանմահութիւն ցօ-ղեալ տիեզերաց. արբո և մեզ ծա-րաւեացս զբաժակ քո փրկութե̃ : Ողորմեա :

Գառն Աստուծոյ, զենեալ միշտ և կենդանի, անմեղ, եկեալ 'ի պա-տարագս. որ 'ի հաշտութիւն Հօր պատարագեալ բառնաս զմեղս աշ-խարհի, յանմահից զօրաց փառա-ւորեալ. յիշեա զհոգիս հաւատով 'ի քեզ ննջեցելոցն մերոց : Ողորմեա :

(Ն. ՇՆՈՐՀ.)

ԻԶ

Ոչ եմ արժանի և ոչ բաւական՝ որ ընդ յարկաւ մտանես տան ան-ձին իմոյ, զի բոլորովին անապատա-ցեալ 'ի բարւոյ և անկեալ կայ. և ոչ ունիս արժանի՝ խոնարհեցու-

ցանել զգլուխ քո, Տէր իմ տէր. այլ ըստ բազում ողորմութեան քո խոնարհեցուցեր զանձն քո. չափաւորակից լեր և այժմ նուաստ և անմաքուր շրթանց իմոց: Եւ որպէս յանձն առեր 'ի յայր և 'ի մըսուր անբանից բազմիլ, արժանաւորեա և 'ի մսուր՝ անբանացեալ անձինս և յաղտեղեալ մարմինս մըտանել: Եւ որպէս արժանի արարեր մտանել և ընթրել 'ի տուն Սիմոնի բորոտի, այսպէս չափաւորակից լեր և յանձն առ մտանել յանձն և 'ի մարմինս բորոտեալ և մեռելոտոյս մեղօք: Որ ընդունեցար ըզնմանողսն իմ զպոռնիկսն՝ մատչիլ և մերձենալ 'ի քեզ, այնպէս և յիս գթա մատչելովս առ քեզ: Եւ որպէս ոչ գարշեցար յանմաքուր և յաղտեղի բերանոյ նորա մերձենալ 'ի քեզ և համբուրել, նոյնպէս մի՛ գարշիր և 'ի պղծալի շրթանց իմոց: Այլ եղիցի ինձ՝ Տէր Աստուած իմ, կայծակն սուրբ մարմնոյս 'ի լուսաւորութիւն և 'ի սրբութիւն և յառողջութիւն նուաստացեալ ան-

ձին իմոյ և մարմնոյ, և 'ի ընկճումն
բազմութեան մեղաց իմոց, և 'ի
պահպանութիւն յամենայն դիւա-
կան ներգործութեանց, և 'ի դի-
մակցութիւն և 'ի խափանումն չար
սովորութեանց իմոց, 'ի մեռելութե
ախտից, 'ի հաղորդութե բարերա-
րութե քո, յաւելումն աստուա-
ծային շնորհաց քոց: Քանզի ոչ ե-
թէ արհամարհելով մատչիմ, այլ
յուսալով 'ի բարերարութիւն և 'ի
մարդասիրութիւնդ քո, զի մի եր-
բէք հեռանալով 'ի սոսկալի և յաս-
տուածային խորհրդոցդ՝ գազանա-
կուր լինիմ չար դիւին: Այսուհե-
տև, Տէր, որպէս միայն սուրբ և
անմեղ, դու սրբեա զսիրտ իմ և
զխորհուրդս իմ. սրբեա զհոգի և
զմարմին իմ. սրբեա՛ զերիկամունս
և զամենայն զգայարանս իմ, և զա-
մենայն անդամս իմ, և բոլոր նորո-
գեա զիս: Եւ ամրացո՛ զցանկու-
թիւն քո և զերկիւղ 'ի մարմինս
իմ. և զօրութիւն անեղծանելի
պահեա առ իս. և լեր ինձ փրկիչ
և պահապան՝ ուղեորելով խաղա-
ղութեամբ զկեանս իմ:

Արժանաւորեա զիս ընդ աջմէ կանգնել քեզ, աղօթիւք և բարեխօսութեամբ այնր՝ որ 'ի վեր է քան զամենայն սուրբս, տիրուհւոյն մերոյ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու՝ ծնողին քո, և սուրբ և երկնային զօրացդ, և ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարւոք հաճոյացան. զի օրհնեալ ես յաւիտեանս. ամէն: — (Յ. ՌՍԿ.)

ԻԷ

Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և դնել առ Տէր զյոյս իմ... և ցնծացայց 'ի փրկութեան քում:

Լոյս տուր, Տէր, աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ: — Մի՛ ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց: — Ես յողորմութիւնս քո, Տէր, յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ 'ի փրկութեան քում, և օրհնեցից զՏէր զբարերարդ իմ: — Լսելի՛ արա ինձ Տէր զցնծութիւն

և զուրախութիւն , և ցնծացեն ոսկերք իմ տառապեալք ։ — Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց , և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։ — Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած , և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում ։ — Մի՛ ընկենուր զիս , Տէր , յերեսաց քոց , և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն ։ — Այլ տուր ինձ ցնծութիւն փրկութեան , և հոգւով պետութեամբ քո հաստատեա զիս ։ — Տէր Տէր զօրութիւն փրկութեան իմոյ , հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի ։ — Դիր , Տէր , պահապան բերանոյ իմոյ և դուռն ամուր շրթանց իմոց , զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան ։ — Տէր Աստուած մեր ստացիր զմեզ ․ Տէր , բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք , և զանուն քո անուանեմք ։

† Տէր , չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես ․ այլ ըստ անբաւ մարդասիրութեան քո՝ մաքրեա զհոգի և զմարմին իմ քեզ 'ի բնակութիւն ։

Մարմին քո պատուական եղիցի ինձ 'ի կեանս. և սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց իմոց. և արժանի եղէց ճաշակել զաս սրբութեամբ և արդարութեամբ:

Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնն, 'ի Հայր և յՈրդի և 'ի սուրբ Հոգին: — Հաւատով ճաշակեմ զսուրբ զկենդանարար և զփրկական մարմինս քո, Քրիստոս՝ Աստուած իմ, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց իմոց: Հաւատով ըմպեմ զանապական զսրբարար և զմեղսաքաւիչ արիւնդ քո՝ Քրիստոս Աստուած իմ, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց իմոց: — Պատուական մարմին և արիւն Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ տուեալ լիցի ինձ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց իմոց:

ԻԸ

Հոգի Քրիստոսի, սրբեա զիս։ Մարմին Քրիստոսի, կեցո՛ զիս։ Արիւն Քրիստոսի, արբե՛ զիս։ Աղբիւր կողին Քրիստոսի, լուա՛ զիս։ Քիրտն Քրիստոսի, կենագործեա զիս։ Չարչարանք Քրիստոսի, զօրացո՛ զիս։ — Մարդասէր Յիսուս, լուր ինձ. 'ի վէրս քո ամրացո զիս. և մի՛ ընկեներ զիս յերեսաց քոց. 'ի նենգութենէ չարին պահեա՛ զիս. 'ի ժամ մահուան իմոյ կոչեա զիս առ քեզ և ընկալ զիս։ Ընդ սրբոց քոց հրեշտակաց օրհնեցից զքեզ յաւիտեանս. ամէն։

† Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։— Զբերան իմ բացի և առի զհոգի. 'ի պատուիրանս քո փափագեաց անձն իմ։ — Նայեա առ իս և ողորմեա ինձ՝ ըստ իրաւունս սիրողաց անուան քում։ — Ա՛րկ 'ի բերան իմ գոհութիւն նոր, զօրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ։

— Օրհնեցից զանուն Աստուծոյ ի-
մոյ օրհնութեամբ, և բարձր արա-
րից զնա գովութեամբ: — Լցցի բե-
րան իմ գոհութեամբ՝ որպէս օրհ-
նեցից զփառս քո, զօրհանապազ
զմեծվայելչութիւնս քո: — Ես յա-
մենայն ժամ յուսացայց և յաւե-
լից յօրհնութիւնս քո: — Բերան
իմ պատմեսցէ զարդարութիւնս
քո, զօրհանապազ զգովութիւնս
քո: — Ցնծասցեն շրթունք իմ յոր-
ժամ սաղմոս ասիցեմ քեզ, և անձն
իմ՝ զոր և փրկեցեր: Ես և լեզու
իմ զօրհանապազ խօսեսցի զարդա-
րութիւնս քո: — Ցնծասցէ անձն
իմ 'ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ
փրկութեան և պատմուճան ուրա-
խութեան. իբրև փեսայի եդ ինձ
պսակ, և որպէս զհարսն՝ զարդու
զարդարեաց զիս:

† Աստուած իմ և ամենայն ինչ:
— Ինձ ամենայն՝ Աստուած միայն:
— Բաժին իմ Աստուած յաւի-
տեան:

Օրհնեալ Հայր սուրբ Աստուած
Ճշմարիտ. օրհնեալ Որդին սուրբ՝

Աստուած ճշմարիտ․ օրհնեալ հոգիդ սուրբ՝ Աստուած ճշմարիտ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ս. ԽՈՐՀՐԴՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ա

Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալն անուամբ Տեառն: Ովսաննա 'ի բարձունս:

Աստուած իմ ես դու, խոստովան եղէց քեզ. Աստուած իմ ես դու և բարձր արարից զքեզ:

Սիրելին իմ ինձ, և ես նմա: — Նա յիս բնակեսցէ և ես 'ի նմա: — Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր 'ի կեանս իմ. սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ՝ մինչև եմ ես:

Տէր բաժին ժառանգութեան ի-

մոյ և բաժակի իմոյ՝ դու ես, որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս: — Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ: — Յառաջագոյն տեսանէի զՏէր՝ առաջի իմ յամենայն ժամ. զի է ընդ աջմէ իմէ, զի մի՛ սասանեցայց: — Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ. ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով: — Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն: — Ցուցեր ինձ ըզճանապարհս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց, 'ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քոյ մինչ իսպառ: — Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և՛ աչք իմ տեսցեն զուղղութիւն: — Սքանչելի արարեր զողորմութիւնս քո. ո փրկես զայնոսիկ ոյք յուսացեալ են 'ի քեզ: — Պահեա զիս որպէս բիբ ական. ընդ հովանեաւ թևոց քոց ծածկեսցես յերեսաց ամբարըշտաց ոյք տառապեցուցին զիս:

Զմի խնդրեցի և զայն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան Տեառն զամենայն աւուրս կենաց իմոց: — Տեսանել ինձ զվայելչութիւն Տեառն, և հրաման տալ 'ի տաճարին նորա: — Շուրջ եղեց և մատուցից 'ի խորանի նորա պատարագ օրհնութեան· օրհնեցից և սաղմոս ասացից Տեառն: — Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տէր ընկալաւ զիս: — Սա է Աստուած մեր յաւիտեանս յաւիտենից, և սա հովուեսցէ զմեզ յայսմ հետէ մինչև յաւիտեան:

† Զինչ տաց տրիտուր Տեառն՝ ընդ ամենայնի զոր և ետ ինձ: — Բաժակ փրկութեան ընկալայց, և զանուն Տեառն կարդացից: — Զաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա: — Պատուական է առաջի Տեառն՝ մահ սրբոց իւրոց: — Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն Տեառն կարդացից: — Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք: — Զօրացի ա-

զօրութիւն նորա 'ի վերայ մեր · Ճշմարտութիւն Տեառն մնացէ յաւիտեան : — (Սաղմ. ՃԺԵ. ՃԺԶ.)

Բ

Լցաք 'ի բարութեանց քոց, Տէր, ճաշակելով զմարմին քո և զարիւն : փառք 'ի բարձունս՝ կերակրողիդ զմեզ : Որ հանապազ կերակրես ըզմեզ, առաքեա 'ի մեզ զհոգևոր քո զօրհնութիւն : Փառք, և այլն :

Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ · բաշխելով զմարմինդ և զարիւնդ՝ 'ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց :

† Գոհանամ զքէն, Քրիստոս, որ արժանի արարեր զիս մերձենալ 'ի սուրբ մարմին քո և յարիւն · անդատապարտ պահեա ըզմեզ աղաչեմ, որպէս բարերար և մարդասէր · Ալէլուիա :

Գոհանամք զքէն, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նա-

ւահանգիստ՝ սուրբ զեկեղեցի, սա-
ձար սրբութեան, յորում փառա-
բանի սուրբ Երրորդութիւնդ. Ա-
լէլուիա :

Գոհանամք զքէն, Քրիստոս Թա-
գաւոր, որ պարգեւեցեր մեզ կեն-
դանութիւն կենարար մարմնով և
արեամբդ քով սրբով, շնորհեա ըզ-
քաւութիւն և զմեծ զողորմութիւն.
Ալէլուիա :

Գոհանամք զքէն Հոգիդ Ճշմա-
րիտ, որ նորոգեցեր սուրբ զեկե-
ղեցի, անարատ պահեա հաւատով
Երրորդութեդ, յայսմհետէ մին-
չև յաւիտեան. Ալէլուիա :

Գ

Օրհնութիւն 'ի բարձունս անո-
րինեցելոյն 'ի կուսէն Թագաւորին
մերոյ. ալէլուիա, ալէլուիա : —
Օրհնութիւն 'ի բարձունս անսա-
սանելի և հաստատուն յուսոյն մե-
րոյ. ալ. ալ: — Օրհնութիւն 'ի
բարձունս անբաժանելի և միա-

նական սուրբ Երրորդութեանն․ ալէլ․ ալէլ․։

† Օրհնեալ է ամենասուրբ Երրորդութի̃ն յամենայն արարածոց իւրոց յերկնաւորաց և յերկրաւորաց, յիմանալեաց և 'ի զգալեաց, և յամենայն շնչոց և յամենայն եղականաց, 'ի գոյից և յոչ գոյից։ — Օրհնեալ է Հայր՝ սկիզբն և պատճառ ամենայնի։ — Օրհնեալ է Որդին միածին ստեղծիչ և արարիչ։ — Օրհնեալ է Հոգին սուրբ՝ խնամիչ և կեցուցիչ ամենայնի։ — Օրհնեալ է Հայր որ առաքեաց 'ի փրկութիւն մեզ զծոցածին Բանն իւր։ — Օրհնեալ է ամենազօր և մարդասէր Հոգին սուրբ, որ գթացեալ ծնաւ զմեզ վերստին մաքրութեամբ աւազանին՝ յորդեգրութի̃ Հօր և 'ի կեանս յաւիտենից։ — Օրհնեալ է որ արժանի արար ըզմեզ հասանել 'ի մասն ժառանգութեան սրբոցն՝ 'ի լոյս։ — Օրհնեալ է որ զմահկանացուս անմահ արար։ — Օրհնեալ է որ զհողեղէնքս՝ հոգեղինացն դասակցեաց։ — Օրհ-

նեալ է որ ետ համարձակութիւն
որդւոց մարդկան՝ ընդ որդիս լու-
սոյ կարդալ առ նա և ասել հարա-
զատաբար, Հայր մեր որ յերկինս:

(Գ. ՄԵՂՐԻԿ)

Դ

Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և
ցնծացաւ հոգի իմ յԱստուած՝
փրկիչ իմ: — Զի հայեցաւ 'ի խո-
նարհութ̅ի աղախնոյ իւրոյ, զի ահա
յայսմհետէ երանեսցեն ինձ ամե-
նայն ազգք: — Զի արար ինձ մե-
ծամեծս՝ հզօրն. և սուրբ է անուն
նորա. և ողորմութիւն նորա յազ-
գաց յազգս երկիւղածաց իւրոց:
— Արար զօրութիւն բազկաւ իւ-
րով. ցրուեաց զամբարտաւանս մը-
տօք սրտից իւրեանց. քակեաց զհը-
զօրս յաթոռոց, և բարձրացոյց
զխոնարհս: — Զքաղցեալս՝ լցոյց
բարութեամբ, և զմեծատունս ար-
ձակեաց ունայնս: — Պաշտպանեաց
Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել

զողորմութիւնս, որպէս խօսեցաւ առ հարս մեր, Աբրահամու և զաւակի նորա, յաւիտեան:

Ե

Գոհանամ զքէն, Հայր ամենակալ, Աստուած յաւիտենական, որ զմեղուցեալս և զանարժան ծառայս քո՝ ոչ ըստ իմոց ինչ բարեգործութեանց՝ այլ ըստ բազում ողորմութեան քո արժանի արարեր հաղորդակից լինել սուրբ մարմնոյ և արեան միածնի քո: Եւ այժմ աղաչեմ զքեզ, մի՛ լիցի սա՝ ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց, սպառազինութիւն հաւատոյ, և վահան ամրութեան կամաց ընդդէմ չարին: Սրբեա զիս սոքօք յամենայն ախտից. հեռացո յինէն զամենայն աշխարհական ցանկութիւնս. և տպաւորեա յիս զսէր, զհամբերութիւն, զխոնարհութիւն, զհլութիւն և զամենայն գործս ա-

ռաքինութեան։ Ամրացո զիս, Տէր, յամենայն դարանակալութեանց երևելի և աներևոյթ թշնամւոյն։ Խաղաղացո զամենայն զգնացս հոգւոյ և մարմնոյ իմոյ. յօդեա զիս ընդ քեզ անմեկնելի, և տուր ինձ մեռանել սրբութեամբ. զի արժանի եղէց ուրախութեան սեղանոյ երկնից արքայութեանդ, ուր սուրբք ամենայն լուսով քո լցեալ, միշտ և հանապազ ուրախանան յանսպառ ուրախութիւնն, երանաւետեալք 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(ԹՈՄԱՍ ԱԿՈՒԻՆԱՑԻ)

Ջ

Ասա ինձ քաղցրիկ Յիսուս, ընդէ՞ր է ինձ բազում անգամ ընդունել զքեզ 'ի սիրտ իմ, և ոչ միշտ սիրել. ընդէ՞ր ոչ բորբոքիմ սիրով քով։ Ո՛հ, մի՛ տար ինձ Տէր, ընդու֊

նել զքեզ և ոչ սիրել, զքեզ յանձին ունել և քո սիրովդ ոչ վառիլ։ Ո՜հ, երբ լիցի գտանել յանձին իմում հուր տենչանաց սիրելդ ըզքեզ անդուլ՝ որպէս բաղձամս. մինչև ցերբ ծարաւեալ և ցամաքեացի հոգիս իմ։ Այլ դու որ աղբիւրդ ես բարութեան, բորբոքեա զսիրտ իմ, զքեզ միայն սիրել, քեզ միայնոյ փափագել, և զքեզ խնդրել յամենայն ժամանակս կենաց իմոց։ Ի բաց կացէք յինէն վայրապար տեսարանք աշխարհի. չիք ինձ ճըշմարիտ բերկրութիւն առանց Յիսուսի, առանց նորա չիք ինձ քաղցրութիւն, չիք ինձ հանգիստ բնաւ։

Ո՜հ, երբ լիցի զի շիջցի յիս ամենայն տենչ երկրաւորաց. երբ լիցի ինձ, Տէր, հաճոյ լինել աչաց քոց. երանեալ է օրն՝ յորում եղէց ես քո բոլորովին և ոչ իմ. երջանիկ օր յորում դու միայն կեցցես յանձին իմում։ Ո՜վ խնդութիւն ըզւարթնոց, ո՜վ յաւերժ երանութիւն ընտրելոց, ո՜վ յաւիտենական և անբաւ բարութիւն, վառեա

յիս զքաղցր բոց սիրոյ քո, զի սի-
րեցից զքեզ յայսմհետէ և յաւէտ:

Ո՛վ Տէր իմ Յիսուս, երբև զմը-
տաւ ածեմ, զի մեղօք իմովք հես-
տեցի կամաց քոց քաղցունց և բա-
րերարաց, քեզ որ խապառ բարու-
թիւնդ ես, և լցեր և ընուս զիս հա-
նապազ պարգևօք գթութեան քո.
երբև զմտաւ ածեմ զի առ ոչինչ
մի և յանօգուտս ընդ վայր հարի
զքեզ, ընդ պատիր հեշտից զքեզ
փոխանակեցի, ո՛վ Տէր, զլաց դառ-
նութեան հարկանիմ:

Ո՛վ յիմար սրտիս, ընդէ՞ր զխա-
բեբայիւքս և զանցանելեօքս ան-
կեալ կաս. հոգի իմ, ընդէ՞ր ոչ դի-
մես առ Տէր Աստուած քո, առ
անբաւելին բարութիւն, որ ստեղծն
և փրկեաց զքեզ, որ հայրենին սի-
րով դրդաց 'ի վերայ քո, որ և յա-
մենայն ժամ օրհնէ զքեզ, և մնայ
քեզ յերկինս:

Ո՛վ քաղցունեիդ Յիսուս, ե՞րբ
իցէ ինձ տաղտկանալ յամենայն
երկրաւորաց և քեզ միայնոյ ցան-
կալ. ե՞րբ իցէ ինձ ընդ քեզ միայն

խօսել. ո՜չ, երբ լիցի ինձ քաղցրութիւն իմ. երբ լիցի միակդ իմ բարութիւն։ Եւ արդ ո՜վ Տէր գթած և ամենակարող, զերծո զսիրտ իմ յամենայն հրապուրանաց երկրաւորաց և 'ի խորհրդոց չարաց. զարդարեա զնա քո սուրբ առաքինութեամբք, զի հաճոյ լիցի յաչս քո։ Տուր ինձ Տէր իմ Տէր, տուր զյօժարութիւն կամաց՝ զամենայն ինչ 'ի փառս գործելոյ քո։

Զօրացո Տէր Յիսուս զհաւատս իմ, յաւել ինձ զյոյս, և սրբեա զսէր. լից զսիրտ իմ սիրով քով, զի զքեզ խնդրեցից և քև կեցից, և 'ի պատուիրանս քո հսկեցից։ Քեզ նուիրեալ ձօնեմ զմիտս, զսիրտ և զկեանս իմ, փոխանակ անչափ սիրոյդ՝ որով զմահ վասն իմ յանձն առեր, ևետուր զքեզ ինձ 'ի կերակուր հոգևոր։

Օրհնեա զիս Յիսուս, և զազգակիցս և զբարերարս իմ. օրհնեա զառաջնորդ հաւատոցս և զհամօրէն ուխտ եկեղեցւոյ. օրհնեա զիշխանս և զժողովուրդս նոցա. և հօ-

դւոյն հանգուցելոց տուր զերանաւէտ հանգիստն յաւիտենից։

(ՓՐ. ՍԱԼԵՋԱՑԻ)

Է

Մարմին քո պատուական լիցի ինձ 'ի կեանս, և սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց իմոց։ Եւ փոխանակ լեղւոյն զոր արբուցին քեզ վասն մեր՝ բարձցի 'ի մէնջ լեղուութիւն թշնամւոյն։ Եւ վասն քացախոյն զոր ճաշակեցեր վասն մեր, զօրասցի տկարութիւնս մեր։ Եւ վասն թքոյն զոր առեր վասն մեր, ընկալցուք մեք զցօղդ անմահութեան։ Եւ վասն հարուածի եղեգանն՝ զոր հարար վասն մեր, ընկալցուք զկատարեալ զկեանս քո։ Եւ ընդ փշեղէն պսակին զոր եդին 'ի գլուխ քո վասն մեր, ընկալցուք մեք զանթառամ պսակ սիրոյ քո։ Եւ փոխանակ պատելոյն զքեզ պաստառակալաւ վասն մեր, զօրութեամբ քով պըն-

դեսցուք մեք 'ի սէր աստուածութեան քո ։ Եւ փոխանակ մահուան քո՝ կենդանացուսցես զմեռեալս մեղօք ։ Եւ զի Թաղեցար 'ի նոր գերեզմանի՝ ընկալցուք մեք դարձեալ զնոր յաւիտեանն՝ որ 'ի քէն եղև ։ Եւ վասն յարութեան քո որ 'ի մեռելոց եղև, զի և մեզ եղիցի յարութիւն 'ի կեանս սուրբ և անմահ ։ Եւ ընդ արդար դատաստանաց քոց լիցուք փրկեալք յանհերելի տանջանաց ։ — (ԹՈՄԱՍ ՌՌԱՔԵԱԼ)

† Գոհութիւնս այս եղիցի մեզ 'ի կեանս և յուրախութիւն, առողջութիւն հոգւոց և բժշկութիւն մարմնոց, և 'ի Թողութիւն մեղաց, և 'ի փառս քո Քրիստոս Աստուած մեր ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

Ը.

Անկեալ առաջի քո բարերար փրկիչ, աղաչեմ զգթութիւն քո ․ շնորհեա ինձ քաւութիւն անարատ

մարմնով և արեամբ քով սրբով՝ զոր ընկալայ։ Զօրացո սովաւ զվը֊հատեալս, ամրացո յամենայն 'ի վիշտս կենցաղոյս. Թող զմեղս իմ, և արժանի արա զիս կալ միշտ 'ի պատուիրանի քում։ Որպէս զի ե֊ղիցի սա ինձ դեղ կենաց, և յիշա֊տակ քոց չարչարանաց, հզօրիչ տկարութեան և պաշար յամենայն ժամանակս պանդխտութեան իմոյ յերկրի։ Ուսո ինձ սովաւ գնալ 'ի ճանապարհս քո. 'ի մոլորելն իմում՝ դարձո զիս, 'ի գայթել իմում՝ մի մերժեր զիս. ձեռն տուր 'ի սայ֊թաքել իմում, կանգնեա 'ի գլո֊րելն, և 'ի կեանսդ յաւիտենից մին֊չև խոպառ առաջնորդեա։ Քրիս֊տոս Աստուած, ճաշակումն մար֊մնոյ քո և արեան՝ դառնացուսցէ ինձ զամենայն քաղցրութիւն աշ֊խարհիս, տաղտկացուսցէ ինձ զա֊մենայն գեղ երկրաւոր, և շիջու֊ցէ 'ի սրտէ իմմէ զամենայն հրա֊պոյրս ցանկութեան։ Մի քաղցրա֊ցին ինձ զբօսանք կենցաղոյս, և մի լիցին յիս աղցաւոր բերկրութիւն

խղճք ։ Տուր ինձ, Տէր, արհամարհել զփառս և զպատիւ, և աներկիւղ լինել յամենայն ահէ սպառնալեաց վասն անուանդ քում սրբոյ․ որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

† Դարձեալ բազում անգամ առաջի քո անկանիմ, և 'ի քէն հայցեմ բարերար և մարդասէր․ որպէս զի նայելով յաղաչանս մեր, մաքրեսցես զհոգի և զմարմին մեր յամենայն աղտեղութենէ, և տացես մեզ անամօթս և անդատապարտս կալ առաջի սրբոյ սեղանոյ քո ։ Շնորհեա՛, Աստուած, և աղօթակցաց մերոց յառաջադիմութի̃ կենցաղոյ և հոգևորական հանճարոյ․ տուր նոցա հանապազ երկիւղիւ և սիրով պաշտել զքեզ, և անամօթս և անդատապարտս հաղորդիլ սրբոց քոց խորհրդոցս, և երկնային քո արքայութեանդ արժանաւորիլ․ որպէս զի ընդ հովանեաւ քո պահպանեալք հանապազ՝ քեզ փառս վերառաքեսցուք Հօր և Որդ-

ւոյ և Հոգւոյդ սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Թ

Լուսով աստուածութեանդ քո, Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի․ պահեա զսա անշարժ յաւիտեան։ — Տօնէ այսօր Երուսաղէմ հաւատացելոց բազմութիւն զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ․ պահեա զսա, և այլն։ — Բացան դրունք հաւատոյ նոր Սիոնին՝ ընդունել զանմահ փեսայդ յառագաստ․ բաշխէ զմարմին քո և զարիւն․ պահեա զսա անշարժ յաւիտեան։ — Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա 'ի խաղաղութեան։

Թագաւոր Քրիստոս, էակից Հօր և Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար 'ի սուրբ կուսէն․ Թագաւոր փառաց, Քրիստոս, քեզ փառք։ — Որ կամաւոր մահուամբ քո զմահ

մեռուցեր, և անապական յարու-
թեամբդ քոնորոգեցեր զաշխարհս·
Թագաւոր փառաց Քրիստոս, քեզ
փառք: — Որ կենդանարար ա-
րեամբդ քո լուսաւորեցեր սուրբ
զեկեղեցի, երգեմք քեզ ընդ հրեշ-
տակս ասելով, Թագաւոր փառաց
Քրիստոս, քեզ փառք:

Թագաւորեաց Աստուած 'ի վե-
րայ հեթանոսաց, և լուսազարդեալ
պայծառացոյց սուրբ զեկեղեցի·
Ժողովուրդք, զՔրիստոս բարեբա-
նեցէք: — Զգեցաւ Տէր զօրութիւն
ընդ մէջ իւր ածաւ, քանզի շիջոյց
զխայթոց մահու խաչիւն իւրով սըր-
բով· Ժողովուրդք, զՔրիստոս բա-
րեբանեցէք:— Յարեաւ Աստուած,
և տիեզերք ամենայն նորափետուր
զարդարեցան· և մանկունք հաղոր-
դեցան մարմնոյ և արեան կենա-
րարին· Ժողովուրդք, և այլն:

† Թագաւորին յաւիտենից մա-
տուսցուք զօրհներգութիւն, որ 'ի
կուսէն մարմնացու, հաստատեաց
զաշխարհս 'ի հաւաստ անսասանե-
լի· փառք Նմա այժմ և յաւիտեան:

— Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած Բանն, և եհեղ զարիւն իւր սուրբ 'ի փրկութիւն տիեզերաց. փառք նմա այժմ և յաւիտեան: — Աստուածապէս յարուցեալ 'ի նորափոր 'ի վիմէն՝ լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ 'ի փառս և 'ի գովեստ անուան իւրոյ. փառք նմա այժմ և յաւիտեան:

Զթագաւորն փառաց Քրիստոս՝ որ վասն մեր մարմնացաւ 'ի սրբոյ Կուսէն, և խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք: — Որ զթաղումն րեքօրեայ յանձն էառ յարուցեալ 'ի մեռելոց իշխանութեամբ. միաբանութբ երգով բարեբանեսցուք: — Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց. եկեղեցւոյ իւրում զգեցոյց զմեծվայելչութիւն. միաբանութբ երգով բարեբանեսցուք:

Զթագաւորն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր: — Արարչին երկնի և երկրի մատուսցուք երգով գոհա-

բանութիւն ամենայն երկիր ։ — Եր-
րորդութեանն և մի աստուածու-
թեանն մատուցցուք պատիւ և եր-
կրրպագութիւն, յաւիտեանս. ա-
մէն ։

† Որ անբաւելի յաղթող զօրու-
թ͞բդ թագաւոր ես երկնի և երկ-
րի, Քրիստոս Աստուած, օրհնա-
բանեմք զքեզ ։ — Որ փառակցու-
թեամբ ընդ Հօր վերօրհնիս յան-
մահից, և խոնարհեալ մարմին զգե-
ցար, փառաց թագաւոր. օրհնա-
բանեմք զքեզ ։ — Որ կարողապէս
զմահ կոխեցեր, և յարուցեալ լու-
սաւորեցեր սուրբ զեկեղեցի, ան-
մահ էութիւն օրհնաբանեմք ըզ-
քեզ ։ — ՇԱՐԱԿԱՆ)

Ժ

Նորոգեալ կղզիք առ Աստուած՝
եկեղեցի հեթանոսաց, ՚ի գլխոց
լերանց աշխամբ ձայնի տուք ըզ-
փառս Աստուծոյ, և պատմեցէք
զքաջութիւն յարուցելոյն ՚ի մեռե-

լոյ։ — Երկնաւոր փեսային հարս֊
նացեալ եկեղեցի Աստուծոյ, զար֊
դարեալ ՚ի ներքոյ ՚ի հանդերձս յոս֊
կեհուռն պասկեալ. քանզի ահա
գայ առ քեզ Քրիստոս փառաց
Թագաւորն։ — Րախացեալ որդիք
Սիոնի ՚ի Թագաւորն Քրիստոս,
տօնեցէք ցնծութեամբ զնաւակա֊
տիս հոգւոց մերոց՝ նորոգեալ ՚ի
հնութենէ. և ընդ հրեշտակս օրհ֊
նեսցուք զՔրիստոս փառաց Թա֊
գաւորն։ — Սքանչելի է խորհուրդ֊
տնօրէնութեան քո, Քրիստոս, որ
իջէր ՚ի հօրէ ՚ի սէր հարսին եկե֊
ղեցւոյ՝ զոր ընտրեցեր. որով փա֊
ռաբանիս Քրիստոս՝ անմահ Թա֊
գաւոր։

Որ խոնարհեցար յանճառ փա֊
ռաց փեսայդ անմահ և երկնաւոր՝
՚ի սէր հարսին քո եկեղեցւոյ, զոր
մաքրեցեր աւազանին վերստին
ծննդեամբն. օրհնեմք զքեզ Աս֊
տուած հայրցն մերոց։ — Որ կեն֊
դանարար նոր յարութեամբդ քո՝
նորոգեցեր զհնացեալքս մեղօք. ո֊
րով ցնծայ այսօր եկեղեցի ընդ նո֊

րոգումն բնութեան մերոյ · օրհնեմք, ևն։ — Այսօր մանկունք առագաստի պայծառացեալք վայելչութեամբ տօնեն ընդ զօրս հրեշտակաց զնաւակատիս փրկութեան մերոյ · օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց ։

† Որ յաթոռ փառաց նստիս Բանդ Աստուած, խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, առեր մարմին ՚ի կուսէն, վերականգնելով ՚ի տեղի ստորանկեալ լուսոյն զհողացեալ բնութիւնս ։ — Որ կանգնեցեր ըզխաչ քո ՚ի մէջ երկրի, և սովաւ զքրովբէական դուռն դրախտին բացեր նախաստեղծին, կենագործելով ՚ի ճաշակմանէ մահաբեր պտղոյն ։ Եւ զօրութեամբ խաչի քո հիմնեցուցեր զկաթուղիկէ եկեղեցի՝ բնակարան սուրբ Երրորդութեանդ, լուսաւորելով զհեթանոսս ՚ի սմա կրկնակի ծննդեամբ ։ — Խաբանօք փայտին՝ ճաշակեցաք զմահ · իսկ ՚ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան · փառք յարութեան քո, Տէր ։

Քեզ Քրիստոսի՝ Թագաւորիդ անմահի երկիր պագանեմք և զյարութիւնդ քո փառաւորեմք: — Փառք փրկողիդ և միածնիդ անմահի. փրկեա զժողովուրդ քո՝ զոր ստացար պատուական արեամբդ քո սրբոյ:

† Այսօր զպասեք չարչարանաց ելիցն Իսրայելի՝ փոխեցեր 'ի փըրկութիւն հոգւոց զատիկ, սուրբ յարութեամբ քո Քրիստոս:—Այսօր ընդ արեանցն օրինակին անբան գառանցն զենմանց, պարգևեցեր մեզ գառն Աստուծոյ զարիւնդ քո փրկական: — Այսօր ընդ անդրանկացն ազատութեան՝ ազատեցեր զգերեալս, պտուղ կենաց ննջեցելոց և անդրանիկ մեռելոց:—Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի, արասցուք տօն ցնծութեամբ՝ Նորոգեալքս 'ի հնութենէ մեղաց ասելով, Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց: — Այսօր Նոր Իսրայէլ կոչեցեալք 'ի Քն̃, ազատեալք արեամբ գառինն Աստուծոյ, պարեսցուք ընդ երկնայնոցն՝ ասելով, Քրիս-

տոս յարեաւ 'ի մեռելոց : — Այսօր հրեշտակք յերկնից իջեալ տան զաւետիս մարդկան, Յարեաւ խաչեալն, և յարոյց զձեզ ընդ իւքեան, Աստուած հայրն մերոց :

† Որ կենսաբեր յարութեամբն լուրով ազատեաց զադամեանս 'ի կեանս անմահ, և սուրբ մարմնով և արեամբն հրաւիրեաց զմեզ յերկնից արքայութիւնն. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան :

ԺԱ

Ուրախ լեր եկեղեցի սուրբ, 'ի գալստեան սուրբ միածնին, ուրախ լեր և ցնծա՛ հանդերձ ամենայն որբովք : — Ուրախ լեր յոյժ դուստր Սիովնի, պայծառացիր Երուսաղէմ, զարդարեա զդրունս քո քաղաքդ Աստուծոյ : — Խնդա յոյժ դուստր վերին Սիովնի, ահա թագաւոր քո գոյ նստեալ յաւանակի նորոյ, արդար և փրկիչ, փրկէ և կեցուցանէ : — Զուարճացիր և բերկ-

րեա՛ն ժողովուրդ Աստուծոյ, մատո՛ զոստս ծաղկեալս հաւատով, և ասա՛. Օրհնեալ որ եկիրդ Թագաւոր տիեզերաց: — Ցնծացաւ սուրբ Սիոն, բերկրեցան սուրբ եկեղեցիք, և խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ, օրհնէին զգալուստ քո, փրկիչ. յաշխարհ: — Ծերք և տղայք ոստովք ձիթենեօք մխաբանութեամբ երգէին, օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

† Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով, և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք: — Խնդա յոյժ դուստր Սիոնի, քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո Նորոգմամբ. և Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակել՚ի քեզ: — Ընդ դասս երկնաւոր զօրացն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիւնս. Ուրա՛խ լեր հարսն անարատ, անքննին քո խորհրդով:

† Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ եկեղեցի, և Քրիստոս Թագաւորն 'ի նմա պատարագեալ. եկայք հաւատացեալք, երգեսցուք Քրիստոսի երգ նոր: — Դասք հրեշտակացն վայր իջեալ յերկնից՝ երգեն ասելով, հրաշալի ձայնիւն եղանակելով, երգեն զերգ օրհնութեան երրեակ սրբասաց ձայնիւ: — Ուրախ լեր բերկրեա հարսնացեալ սուրբ եկեղեցի, պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն ծագողին զշող լուսոյ 'ի քեզ, մայր եկեղեցի:

Այսօր աստուածութիւնն զըւարճանայ Նոր հաստատելով զերկիր, պարք սուրբք փառաբանեն զուարթնոց. և մեք ձայնիւ օրհնութեամբ զարդարեսցուք սուրբ ըղտոնս: — Այսօր և մեք ցնծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ, մեծապէս փայլմամբ երևեցաւ յաշխարհի. առ Աստուած գոհութիւնք ընթանան, պատմեն անդադար զբան կենդանի: — Խնդա և զուարճացիր եկեղեցի, կոյս սուրբ և հարսն

երկնաւոր փեսային. ահա տեսա-
նեմք զօծեալն զՔրիստոս, գոլով
առ քեզ լոյսն հեթանոսաց:

ԺԲ

Այսօր ուրախացեալ ցնծան
երկնից բազմութիւնքն 'ի նաւակա-
տիս սուրբ եկեղեցւոյ, քանզի շնոր-
հեցաւ մեզ քահանայապետ յա-
ւիտենից 'ի լուսաւորել զկաթու-
ղիկէ սուրբ զեկեղեցի. փառք գա-
լստեան քո, Տէր: — Այսօր սիւն
լուսոյ հովանի եղև մեզ 'ի բարձանց.
քանզի Թագաւորն երկնաւոր ե-
կաւորէ 'ի սուրբ եկեղեցի. և զօրք
հրեշտակաց ծաւալեալ տօնեն ընդ
մարդկան. փառք գալստեան քո,
Տէր: — Այսօր քահանայապետ
ճշմարիտ աստուածային օրէնօքն
պատուեալ՝ կանգնէ զքառանկիւն
սեղան խաչին, արժանապէս պա-
տարագեալ բաշխէ զմարմին և զա-
րիւնն Տեառն. մաքրապէս մերձե-
ցարուք փրկեալք նոր ժողովուրդք,

և հայցեցէք 'ի Քրիստոսէ, զի շնորհեսցէ զսա մեզ ընդ երկայն աւուրս ։

Այսօր ցնծան դասք հրեշտակաց ընդ հաստատել քո յերկրի՝ ով լուսեղէն խորան երկնանման, եկեղեցի սուրբ. ուրախ լեր վէմ պատուական, հովանի մեր և յոյս ։ — Զուարճացիր հարսն անարատ՝ ըսքօղ արկեալ վայելչապէս. զարդարեա հանդերձ փառօք, և ել ընդ առաջ երկնաւոր փեսային. ուրախ լեր ամուլ բազմածին, ահա փեսայն գայ առ քեզ ։ — Աստանօր նորոգեցաւ մեզ աւազան մկրտութեան՝ յարգանդ մօր հոգեւոյն յղացեալ. ծնանելով վերստին զհաւատացեալքս 'ի Քրիստոս. ուրախ լեր անմայր յառաջնումն, ահա որդին գայ առ քեզ ։

Այսօր հրեշտակաց բազմութիւնք տօնակից լինին ընդ մեզ. քանզի երկնաւոր Թագաւորն եկաւորի 'ի սուրբ եկեղեցի ։ — Խնդա և զուարճացիր հարսնացեալդ յԱստուծոյ՝ եկեղեցի, քանզի զքեզ Տէրն տե-

րանց ընտրեաց, և հաճեցաւ բնակել 'ի քեզ: — Լուսաւորեա լուսաւորեա կաթուղիկէ եկեղեցի, քանզի 'ի քեզ շող աստուածեղէն 'ի հօրէ լուսոյ ծագեաց. և լուսաւորեաց զմանկունս քո:

† Որք արժանաւորեցայք 'ի կոչումն փառաւորութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք զանուն նորա ձայնիւ ցընծութեամբ յօրհնութիւն 'ի նոր: — Զօրացեալքս 'ի քեզ Քրիստոս ժողովուրդք հաւատացելոց Ճշմարիտ խոստովանութեամբ, օրհնեմք զխորհուրդ աստուածային կենսաբեր տնօրէնութեան քո, փառաւորելով զահաւոր և զսքանչելի անուն քո, Տէր, տէր մեծ 'ի վերայ ամենայն երկրի: — Ուրախ լեր եկեղեցի սուրբ՝ հարսն երկնաւոր խորհրդոյն՝ 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, որ համագոյ իշխանութեամբն իւրով զարդարեաց, ծագմամբ լուսով պսակէ զքեզ 'ի պատիւ ամենայն սրբովք իւրովք:

† Այսօր պայծառ և սիւն լու-
սոյ լցեալ աստուածային շնորհիւ
սուրբ եկեղեցի. 'ի սմա զքեզ օրհ-
նեմք Աստուած հարցն մերոց: —
Հարսնարան արանց արդարոց, և'ի
սմա շող աստուածեղէն 'ի Հօրէ
լուսոյ ծագեալ. 'ի սմա, և այլն:
— Տուող ողորմութե՛, Տէր, տուր
սմա զանշարժ քո զխաղաղութիւնդ:
— Եկայք հաւատացեալք սուրբ
Երրորդութեանն, յեկեղեցիս օրհ-
նեցէք զԱստուած, արարէք տօնս
ուրախութեան մինչև յանկիւնս սե-
ղանոյ. և առաւել բարձր արարէք
զնա յաւիտեան:

† Եկայք ժողովուրդք 'ի տա-
ճարի փառաց Քրիստոսի, տուք ա-
մենեքեան օրհնութի՛ 'ի բարձունս:
— Քանզի Թագաւորն Քրիստոս
պսակեաց զսա սքանչելի փառօքն
իւրովք. տուք ամենեքեան, և այլն:
— Ի սմա և զօրք հրեշտակաց դա-
սաւորեալ տօնեն Տեառն. տուք ա-
մենեքեան, և այլն:

Սեղան քո, Տէր զօրութեանց,
հաւատով կանգնեցաւ 'ի խորանի

քում. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ։ — Վէմ պատուական 'ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք, և այլն ։ — Ի սմա մատուցաւ ճշմարիտ պատարագ և զենումն անապական. եկայք ժողովուրդք, երկրպագեսցուք ։

† Պարծեսցին սուրբքն փառօք, և ցնծասցեն յաւիտենական 'ի վատակս իւրեանց՝ յաւուր գալըստեան փրկչին. յորժամ գայ փառօք Հօր՝ փառաւոր լինել 'ի մէջ սրբոց իւրոց ։ — Սիրէ Տէր զերկիւղածս իւր և պահէ զնոսա, և բնակէ 'ի հեզս և 'ի խոնարհս 'ի գալըստեանն իւրոյ. յորժամ, և այլն ։ — Փոխանակ ճգնութեան համբերողաց՝ մատուցանէ իւրաքանչիւր զանթառամ պսակ. փայլեն որպէս զարեգակն. յորժամ, և այլն ։ — Ցնծացեալ բերկրի Սիոն՝ վերինն Երուսաղէմ, ժողովարան՝ միաբանութեամբ ընդունել յարկսն յաւիտենից. յորժամ գայ, և այլն ։ — Ուրախ լեր հանապազ սուրբ եկեղեցի, և ցնծա՛ 'ի փառս և 'ի պա-

տիւ փեսայացեալ Բանին. յոր-ժամ գայ, և այլն: — Ընդ վերին զօրսն դասակցեալ և զգեցեալ ըզ-լոյս, և զանմահութեան լուեալ զձայն կենարարին, ասելով. Եկայք վերօրհնեալք 'ի Հօրէ, ժառանգե-ցէք զանպատում զկեանսն:

ԺԳ.

Օրհնեսցուք զՏէր և զյաղթող զօրութիւն նորա՝ փառօք երգեսցուք նմա. զի փրկիչ և ապաւէն և օգնական մեր է: — Սա է Աստուած մեր որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երևեալ տեսաք. սմա փառօք երգեսցուք, զի փրկիչ, և այլն: — Որ մահու խաչին իւրոյ կենդանացոյց զմահացեալսն, և մարմնոյն իւր բևեռմամբ՝ զկապանս մահու ելոյծ. ամենեքեան երգեսցուք, զի փրկիչ, և այլն:

Զանձառդ քո, Քրիստոս, փառաւորեմք զմարդանալդ. 'ի գլխոց լերանց հրապարակեմք զքո քաջու-

թիւնդ · քանզի հարեր զպատերազմ, եկեալդ 'ի փրկութիւն մեզ: — Զ յաղթողդ քո, Քրիստոս, գովեմք զզօրութիւնդ · քանզի վանեցեր զընդդիմամարտ թշնամին, և դարձուցեր զգերութիւն՝ եկեալդ 'ի փրկութիւն մեզ: — Բղխեսցէ երկիր զողորմութիւն և նորացուսցէ զօրհնութիւն · քանզի Աստուած՝ ծննդեամբ 'ի միշտ կուսէն 'ի փըրկութիւն մեզ յայտնեցաւ, աւերեաց զդժոխս: — Նայեցան զինուորութիւնք երկնայինք յահաւոր տնօրէնութեան քո խորհուրդ, և փառաւորեցին զանպատում ըսքանչելիս քո մարդասիրութեանդ:

† Ծափս հարէք ամենայն հեթանոսք և օրհնեցէք զԱստուած · զի հուրն Աստուած Բանն՝ մարմնացաւ 'ի կուսէն, աւերեաց զդըժոխս և զզօրութիւն մահու ելոյծ: — Ընկալեալք զբաժակն ուրախութեան յայգւոյն անմահութեն սըրբոց առաքելոցն, որք ընդ հանուր ընթացան ընդ տիեզերս, լուսաւորեցին հրաւիրելով յերկնից յարքայութիւնն:

Պատմեսցեն երկինք զվայելչութիւն փառաց Քրիստոսի, և ընկալեալ լուսաձեմ տարերցն զշիթս արեան Անեղին. և օրհնութեամբ խաչելոյն լցան տիեզերք։

ԺԴ

Նայեցարուք 'ի բարբառ մարգարէին և 'ի պատգամս կենդանիս, որ քարոզեաց մեզ զցօղն կենաց 'ի յերկնից։ — Նայեցարուք ժողովուրդք 'ի սքանչելիս Աստուծոյ մերոյ. ունկնդիր լերուք հաւատացեալք Քրիստոսի, և 'ի միտ առէք զարդարութիւն Ճշմարտութեան. զի նա է լոյս հաւատացելոց։ — Էութիւն անեղ անբաժանելի Բանն Աստուած՝ կամաւորութ՟բ յանձն էառ զմահ խաչի, և թաղեցաւ 'ի նոր գերեզմանի, և յարութեամբ իւրով շնորհեաց մեզ կենդանութիւն։ — Նայեցարուք ժողովուրդք 'ի սքանչելիս փրկութեան մերոյ, որ մարդասիրապէս Բանն 'ի Հօրէ

որպէս ցօղ խոնարհեալ յերկիր․ տուք օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ։ — Որ զանարատ բազուկս իւր Միածին տարածեաց ՚ի վերայ խաչին, և զբաժանեալ որդիսն Ադամայ ժողովեաց ընդ թևօքն իւրովք․ տուք օրհնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ։

† Զեկեալն ՚ի փրկութիւն մեզ՝ զԲանն Աստուած՝ խորհրդով տնօրէնութեամբ՝ նոր երգով օրհնեսցուք զանուն նորա․ զի ՚ի բարձունս է փառաւորեալ յանմարմնոց։ — Զխաչեցելոյն պատմեսցուք զքաջութիւն, որ գուշմամբ ձայնի զպատերազմն չարին վանեաց, և մահուամբ՝ զմահացեալսն կենագործեաց, զինջելոցն ՚ի դժոխս վերածեաց զհոգիսն։ — Ուրախացան զօրք երկնից ՚ի վերուստ, քանզի ցօղն անապական ՚ի քէն հեղեալ միշտ Կոյս և մայր Բանին տնտեսութեան, լուսածին ամպ, ծագելով ՚ի մեզ զարդարութեան արեգակն։ — Զփառաւորեալն յամենայն արարածոց և ՚ի ծագաց մինչ

՚ի ծագս երկրի զերկրպագեալն , զմարմնացեալ Բանն ՚ի Կուսէն , ձայնիւ երգով օրհնեսցուք : — Աստուած , զքեզ փառաւորեմք , որ ՚ի յերկնից խոնարհեցար , ծառայի առեր զկերպարան , և զտիեզերս ազատեցեր ՚ի մեղաց :

† Անքննելի հուր ա̃ծութեան քո , Տէր , տարածեցաւ առհասարակ ընդ տիեզերս , և հրդեհեալ բոցակիզեաց զպատրանս Նախաստեղծին , զի զամենեսեան վերակոչեաց ՚ի մահուանէ յանմահութիւն : — Յայգւոյդ անմահութեան ճաշակեցին սուրբ առաքեալքն , և լցին զտիեզերս աւետեօք սուրբ յարութեանն . զի ընդ նոսին փայլեսցուք յանվախճան ուրախութիւն : — Հրով աստուածութեանդ քո , Քրիստոս , այրեցեր զդրունս դժոխոց և լուծեր զմահ , և անմահութիւն պարգևեցեր ազգի մարդկան : — Յայգւոյդ անմահութեան ճաշակեցաք և տեսաք , զի քաղցր և ուղիղ ես , Տէր , և վասն ամենեցուն փրկութեան եկիր յաշխարհս : —

Որ զհուր աստուածութեան քո, Քրիստոս, բորբոքեցեր ընդ տիեզերս ամենայն, բոցակիզեալ զբռնութիւն թշնամւոյն : — Ի յայգւոյն անմահութեան Եդեմայ ճաշակեցին դասք առաքելոց . զբաժակ կենաց քոց, Տէր, և մեզ արբուցին : — Որ տնկեցար յերկրի որթ ճշմարիտ, և ձգեցար 'ի խաչին ողկոյզդ անսպառ, յուրախութիւն ամենայն տրտմեցելոց . զքեզ բարեբանեմք ընդ հրեղէն օրհնաբանսն :

Անապականութեան աղբիւր և 'ի մահու կեանք, զքեզ ծանեան հրանիւթիցն սերոբքն և բանական կենդանիք . որ զՅովնան 'ի կիտէն կորզեալ արտաքսեցեր . գովասանական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան ներմարդացեալ Բանիդ Աստուծոյ : — Յանապաղարթաբեր արմատ փայտին մակադրեալ զքեզ անհպելի հրմամբ և սևեռեալ բևեռօք . և 'ի հրացայտ կողի քո 'ի ձեռն զինու տիգի հոսանս փրկանաց գործեցեր . գովասանական ձայնիւ, և այլն :

Ի վիմէն կենդանութեան ճաշա-
կեցաք՝ զի քաղցր է Տէր, և յիւղ
սրբութեան. օծաք հաւատով զի
զանուն Տեառն կարդացուք, և
տուք օրհնութիւն 'ի բարձունս:

Որ փոխանակ դառնութե̃ տըն-
կոյն Եդեմայ՝ զխաչ քո ետուր մեզ,
Քրիստոս, և արբուցեր 'ի կողահոս
աղբերէդ՝ զանսպառ և զանվախ-
ճան ուրախութիւն: — Որ 'ի խա-
չին մարմնով պատարագեալ՝ հե-
ղեր զարիւն քո սուրբ, և արբու-
ցեր զնետ քո յարեան խարդախո-
ղին մերոյ, զքեզ օրհնեմք՝ զեկեալդ
'ի փրկութիւն արարածոց քոց,
Տէր:

ԺԵ

Հաստատութիւն իմ լեր, Տէր,
և յոյս փրկութեան, որ զառաջին
Ադամն ազատեցեր 'ի մեղաց, նորո-
գեա և զիս զապականեալս մեղօք:
— Որ յատենի կացեր անպարտ-
կողին պատրանօք, և արբուցեր
մեզ 'ի կողահոս աղբերէդ. նորո-

գեա և զխս զապականեալս մեղօք:
— Հաստատեցաւ սիրտ իմ 'ի Տէր,
և բարձրացաւ յոյս իմ 'ի փառս
քո՝ որ նստիս 'ի քրովբէական ա-
թոռ. հաստատութիւն իմ լեր,
Տէր, քոյով յարութեամբ: — Որ
զանարատ բազուկս քո տարածե-
ցեր 'ի վերայ խաչին, ժողովել զհե-
ռացեալսն ամենակարող զօրութ̃բդ,
հաստատութիւն իմ լեր, Տէր, քոյ-
ով յարութեամբ:

Սիրտ իմ հաստատեցաւ 'ի քեզ,
Քրիստոս Աստուած, և բարձրա-
ցաւ յոյս իմ 'ի փառս քո, որ յան-
ճառելի ծոցոյ Հօր խոնարհեցար
վասն մեր, և երևեցար մարդ ճըշ-
մարտապէս: — Որ զկենդանարար
մարմին և զարիւնդ քո բաշխեցեր
քաղցելոց, և 'ի խաչին բացեր զկո-
ղահոս աղբիւրդ՝ արբուցանելով
տիեզերաց զանմահութիւն՝ 'ի ճա-
շակմանէ մահաբեր պտղոյն:

Աղեղն հզօրաց նուաղեցան, և
որք 'ի նուաստութեան էին տը-
կարքն՝ զգեցան զօրութիւն. վասն
այսորիկ հաստատեցաւ սիրտ իմ և

խորհուրդ իմ 'ի Տեառնէ իմէ : —
Զէն ընդունելութեան, Քրիստոս,
մեք ընկալաք սուրբ զխաչ քո, նը-
շան անպարտելի զօրութիւն. վասն
այնորիկ հաւատացաք մեք 'ի յորհ-
նել զքո սուրբ զչարչարանս : —
Զդրունս դժոխոց պղնձիս խորտա-
կեցեր, Քրիստոս, յորժամ յա-
րեար 'ի մեռելոց հզօր զօրութեամբ.
վասն այնորիկ հաւատացաք մեք 'ի
յորհնել զքո սուրբ զյարութիւնդ :

ԺԶ

Բարձր առնեմ զքեզ, Տէր,
զի ընկալար զիս, և ոչ ուրախ ա-
րարեր զթշնամիս իմ յիս : — Տէր
Աստուած իմ, կարդացի առ քեզ
և բժշկեցեր զիս : — Տէր, հաներ 'ի
դժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս
յայնցանէ որ իջանեն 'ի գուբ : —
Սաղմոս ասացէք Տեառն սուրբք
նորա, խոստովան եղերուք յիշա-
տակի սրբութեան նորա : — Սըրտ-
մտութիւն է 'ի բարկութեան նո-

րա, և կեանք են 'ի կամաց նորա: Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն: — Ես ասացի 'ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան: — Տէր, 'ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն և ես եղէ խռովեալ: — Առ քեզ, Տէր, կարդացի, առ Աստուած իմ աղաղակեցի. — Զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն: Մի թէ հող խոստովա՞ն առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ՞ ըզճշմարտութիւնս քո: — Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և Տէր եղև ինձ օգնական: — Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զքուրձ և ինձ զգեցոյց զուրախութիւն: — Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, և այլ մի՛ զղջացայց. տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ:

ԺԷ

Օրհնեա՛, անձն իմ, զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա: — Օրհնեա՛, անձն իմ, զՏէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա: — Ո քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո: — Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ: — Ո լնու 'ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո: — Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկելոց: — Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսիսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր: — Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ: — Ոչ 'ի սպառ բարկանայ Տէր, և ոչ յաւիտեան պահէ ոխս: — Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ: — Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրա-

ցոյց Տէր ողորմութիւն իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց: — Որչափ հեռի են արևելք յարևմտից, այնչափ հեռի արար 'ի մէնջ զանօրէնութիւնս մեր: — Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացի Տէր յերկիւղածս իւր: — Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք: — Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկէ: — Շնչէ 'ի նմա հողմ՝ և ոչ է, և ոչ ևս երևի տեղի նորա: — Բայց ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչև յորդիս: — Որք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա և առնեն զնա: — Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ: — Օրհնեցէք զՏէր, ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ, որք առնէք զբան նորա, 'ի լսել ձայնի պատգամաց նորա:

— Օրհնեցէք զՏէր , ամենայն զօրութիւնք նորա , պաշտօնեայք և արարողք կամաց նորա : — Օրհնեցէք զՏէր , ամենայն գործք նորա , ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա : — Օրհնեա , անձն իմ , զՏէր :

ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ

ԱՌ ՄԱՅՐ ԲԱՆԻՆ ԿԵՆԱՑ

Ա.

Սրբուհի Մարիամ, սափոր ոսկի և տապանակ կտակարանաց, որ զ'ի վերուստ զհացն կենաց՝ պարգևեցեր քաղցեալ բնութեանս, առ նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց:

† Աստուածատունկ խնկաբեր ծառ յանուշահոտ բուրաստանէն, որ 'ի գնացս Հոգւոյն վտակաց սընկեցար, և զանմահութեան պտուղն 'ի ժամու ետուր մեզ. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք: — Զանապական բողբոջն յա̃ծային դրախտէն՝ յորովայն քո

տնկեալ, բղխեցեր յարմատոյն Յեսսեայ ծաղիկ վայելուչ կուսական ծննդեամբ. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք : — Յարփւոյն լուսոյ ծագումն 'ի քեզ վառեաց զճրագ մարմնոյն լոյս աշխարհի, որով գտեալ զպատկերն իւրական, զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն. վասն որոյ բարեխօսեա նորոգել զմեզ 'ի հնութենէ մեղաց :

† Աստուածածին մայր լուսոյ, արեգականն արդարութեան արևելք, որ 'ի խաւար աշխարհի ծագեցեր զլոյսն գերազանց, օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք : — Ամպ թեթև լուսաւոր անընդունակ խոնաւութե, որ զցօղն կենաց 'ի ցամաքեալ բընութիւնս ցօղեր. օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք : — Սերովբէ հողեղէն և մարմնաւոր քերովբէ, որ զանտեսն 'ի նոցունց յորովայնի քում կրեցեր. օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք :

† Ուրախացիր պսակ կուսից տե-
րամայր, այսօր Որդին քո զՀայրե-
նի փայլեաց զփառս. Նմա յաւէժ
յանձն արա զանձինս մեր: — Նմա
Մովսէս և Հեղիաս սպասեն, յա-
նուն Նորա ցնծան Թաբոր և Հեր-
մոն. Նմա յաւէժ յանձն արա զան-
ձինս մեր: — Եսայիաս զքեզ թե-
թև ամպ ետես, և Հայր՝ յամպոյն
զքո որդին՝ իւր դաւանեաց. Նմա
յաւէժ յանձն արա զանձինս մեր:

† Անթառամ ծաղիկ, անդաստա-
պարտ շառաւիղ, վերաբուսեալ
յարմատոյն Յեսսեայ, զքեզ Ե-
սայիաս կանխաւ վերագուշեաց եօթն-
արփին շնորհաց Հոգւոյն ընդունա-
րան գոլ, Աստուածածին և կոյս.
զքեզ մեծացուցանեմք: Համեղա-
ճաշակ պտղոյն բանաւոր բարու-
նակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն
անսպառ՝ յուրախութիւն տրտմե-
ցելոց 'ի ճաշակմանէ ծառոյն գի-
տութեան, Սրբուհի անարատ, ա-
մենեքեան զքեզ մեծացուցանեմք:
— Քաղաքավարեալ 'ի մարմնի ան-
արատ վարուք, այսօր յառաքե-

լոյն ամփոփեալ վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարքայութիւն Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ, բարեխօսեա խոստովանողացս, զքեզ մեծացուցանեմք։

† Մայր լուսոյ Մարիամ սուրբ կոյս, որ զլոյսն առ 'ի Հօրէ ծնար մարմնով, և եղեր արևելք արեգականն արդարութեան, հոգևոր երգով՝ զքեզ սրբուհի՝ մեծացուցանեմք։ — Քերովբէից գերագոյն, Էին աթոռ, և ծառ կենաց անմահական պտղոյն, տապանակ կտակի Բանին և սափոր ոսկի երկնային մանանային․ հոգևոր երգով, ևն։ — Քև բացաւ սրովբէափակ դուռն դրախտին, և քև տուաւ մեզ փայտն անմահութեան, զոր 'ի նմա զենեալն անմահ՝ այսօր յերկնից լուսաւորեաց․ հոգևոր երգով՝ զքեզ սրբուհի՝ մեծացուցանեմք։

Բ

Յոյս մեր և ապաւէն, մայր Տեառն և կոյս սուրբ, որ հուր աստուածութեանն ոչ բոցակիզեաց զքո սուրբ զորովայն, բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութե̃ :... Ուրախ լեր Մարիամ, Նորատունկ բուրաստան, երկնաբերձ աշտանակ ձոյլ ոսկի, և Ճեմարան Բանին Աստուծոյ: — Որ 'ի վեր քան զքերովբէսն երևեցար, Աստուածածին Մարիամ, տանելով յորովայնի զանիմանալի զբնութիւնն, բարեխօսեա առ Տէր՝ վասն մերոյ փրկութեան: — Անարատ տաճար անվայրափակ Բանին Աստուծոյ Մարիամ սուրբ Կոյս, բարեխօսեա առ Տէր՝ վասն մերոյ փրկութեան:

Իմանալի բանաւոր տախտակ անտրամադրելի տառիցն մովսիսական օրինաց, որ զԱստուածն ամենեցուն իսկապէս մարմնով 'ի գիրկս քո բարձեր Մարիամ, Ներբողա-

կան ձայնիւ եղանակեմք զերգս օրհնութեան՝ ամենօրհնեալդ ՚ի կանայս։ — Տիրուհի անարատ մայր Տեառն և կոյս Մարիամ, քրովբէական աթոռ զքեզ տեսաք ՚ի յերկրի. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։

Ապաւինիմք ՚ի քո բարեխօսութիւնդ Աստուածածին Մարիամ, մայր Տեառն և կոյս սուրբ, հարսն երկնից, և դուռն կնքեալ՝ զոր մարգարէն ետես։ — Որ տարար զԲանն Աստուած յարգանդի քում, և ծնար զնա մարմնով՝ ապրեցուցիչ Աստուածածին, բարեխօսեա կեցուցանել զմեզ։ — Զի աղբիւրն կենաց Քրիստոս՝ անապական մարմնացաւ ՚ի քէն կոյս, զմեղս մեր բոցակիզեալ շիջոյց. վասն որոյ ըզքեզ անդադար բարեբանեսցուք։ Զի ՚ի քէն ցնծութիւն ծնաւ տիեզերաց Նախայաւիտեան Բանն, փառակից Հօր և սուրբ Հոգւոյն. զնա անդադար աղաչեա վասն անձանց մերոց։

Գ

Զանապական կոյսն Մարիամ՝ Աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի. ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ ուրախարար. տուք օրհնութիւն նմա հոգևոր երգով։ — Զտաճար անապական Բանին Հօր՝ բարեբանեն դասք հոգեղինացն. գովեմք և մեք ձայնակցելով երկնայնոցն։

Որ զհուրն Աստուած 'ի քեզ կրեցեր, մորենի անկիզելի, դառնաճաշակ պտղոյն քաղցրացուցիչ. անճառելի քոյին ծննդեամբդ 'ի քէն հայցեմք, մաղթեա փրկել ըզմեզ 'ի հրոյն յաւիտենից։ — Որում երկինք և երկիր ոչ բաւէին տանել լուսոյն, բնակարան բնութեան Բանին սպասաւորեցար. աղաչեա վասն մեր զմիածին քո զորդիդ։ — Ամենօրհնեալ աստուածամայր Մարիամ, քերովբէական աթոռ արարչին մերոյ տնօրէնութե՛, զոր երանեն ամենայն ազինք հանա-

պաղ։ — Քերովբէական Թեւօք պա-
րածածկեցար սրբուհի Աստուա-
ծածին, կոյս և մայր և բնակարան
աստուածութեան, վերօրհնեալ յա-
մենայն առաքելական քարոզու-
թեանց։ — Առ քեզ ապաւինիմք
խորան և տաճար Աստուծոյ Բա-
նին՝ Մարիամ մայր և կոյս, բարե-
խօսեա առ Քրիստոս վասն անձանց
մերոց։ — Աստուածածին անհարս-
նացեալ սրբուհի, զքեզ աղա-
չեմք անդադար ձայնիւ, որ՛ զէակ
Բանն Հօր 'ի քեզ կրեցեր և ծնար
անճառապէս, առ Նա միշտ բարե-
խօսեա՛ վասն անձանց մերոց։ —
Ուրախ լեր մայր անճառ լուսոյ
Մարիամ սուրբ Աստուածածին,
քանզի 'ի քեզ կրեցեր զհուր աս-
տուածութեանն՝ լուսեղէն տաճար
Աստուծոյ Բանին. առ Նա միշտ
բարեխօսեա վասն անձանց մերոց։
— Մայր Քրիստոսի և բնակարան
Բանին Աստուծոյ, անհասութեան
խորհրդոյն սպասաւորեցեր, միջ-
նորդ եղեր Աստուծոյ և մարդկան.
առ Նա միշտ բարեխօսեա վասն ան-

ձանց մերոց ։ — Անտանելւոյն տաղաւար բարձող հիցս բարձողին, որ ծնար զԱստուած մարմնով՝ զանմարմնաբար ծնունդն Հօր․ բարեխօսեա վասն մեր Աստուածածին Մարիամ ։ — Որ վառեցար 'ի յարփւոյն և ոչ կիզար ըստ մորենւոյն․ այլ ետուր զհացն կենաց՝ կերակուր բանաւորաց․ բարեխօսեա՛ առ Քրիստոս՝ ջնջել զգիր մեղաց մերոց ։

† Ծառ կենաց տնկեալ յԱդին՝ սուրբ Կոյս, որ զհայրածինն բղխեցեր զծաղիկ, և ետուր 'ի ժամու զՈրդին պտուղ մարդկան․ զորոյ զմարմինն ճաշակեալ՝ անմահացան յուսով։ — Բանաւոր երկիր, տիրուհի, և անդաստան մաքուր 'ի փշոց մեղաց, որ զբոյսն երկնային առանց սերման ծնար, որով զկենացն ետուր զհաց՝ սովեալ բնութեանս ։ — Ամպ թեթև յերկրային ցանկութեանց, սուրբ Կոյս, և վառարան աստուածային բոցոյն, որ զցօղն հայրաբուղխ անձրևեցեր 'ի բանական երկիր, որով բնութեանս

բուսան արդարութե՟ սուրբ բոյսք · վասն որոյ օրհնաբանեմք զքեզ յաւուր քո ծննդեան ։

Դ

Ուրախ լեր Մարիամ սուրբ Աստուածածին, զի 'ի տաճարիդ մաքրեցելոյ յանկարծակի եկն Տէր, զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք ։ — Ուրախ լեր դուռն փակեալ, ընդ որ ոչ ոք մտեալ, բայց Տէր Աստուած Իսրայելի · զքեզ, և այլն · — Ուրախ լեր աղբիւր կընքեալ ջրոյն կենդանութեան, զոր ծարաւելոյ բնութեանս ետուր 'ի յարբումն · զքեզ, և այլն ։

Ուրախ լեր Մարիամ, կոյս անապական, զի 'ի հայրական ծոցոյ անմեկնելի Որդին՝ 'ի քոյ յանձն առնու բնակել յորովայնի ։ — Ուրախ լեր երկին վեհագոյն, քրովբէ հողեղէն, որ զանտանելին երկնից և հրեղինաց դասուցն՝ 'ի քո ընկալար մաքրական որովայնի ։ — Ուրախ

լեր սիւն հրեղէն, լուսոյն աշտանակ, որ զարարչական եղականաց լուսոյ 'ի քեզ տանելով՝ ծագեցեր խաւարելոց: — Ուրախ լեր սափոր ոսկի երկնային հացին, որ զառ 'ի վերուստ իջեալ զմանանայն՝ Նորոյս պարգեւեալ կերակուր Իսրայելի: — Ուրախ լեր ամպ թեթեւ, գեղմն իմանալի, որ 'ի բանական երկիր հեղեր զանձրեւ կենաց, արդիւնս ընդգործոյ հաւատոյ պտղաբերեալ: — Ուրախ լեր դուստր լուսոյ, մայր անհարսնացեալ. քանզի յղացելոյն 'ի քէն՝ համախմբեալ որդեք Սիոնի՝ երգեն զփառս 'ի բարձունս:

Ուրախ լեր բերկրեալ ամենասուրբ Կոյս, որ ծնար աշխարհի զարդարութեան արեգակն, որ լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան: — Ուրախ լեր բերկրեալ դուռն կնքեալ, որ ծնար աշխարհի զթագաւորն Քրիստոս, որ նստի 'ի վերայ անարուեստ աթոռոյ:

Ուրախ լեր Աստուածածին, յոյս և փրկութեան մայր. զքեզ ընդունող լուսոյ, մեծացուցանեմք: —

Զքեզ լուսոյ մայր և կոյս, զքեզ զանձդ կենաց աստուածայնի, ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք:
— Մայր սուրբ անարատ լուսոյն, հրեշտակային օրհնութեամբ պատուեալ զքեզ մեծացուցանեմք:

Ուրախ լեր Աստուածածին, տաճար անխախտելի, զքեզ մեծացուցանեմք: — Ցլացար անարատաբար, և զԱստուած վայելչապէս ծնար. ուրախ լեր Աստուածածին, և այլն: — Երգէ մարգարէն, սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ, և դուռն երկնային. ուրախ լեր Աստուածածին, տաճար անխախտելի, զքեզ մեծացուցանեմք: — Ուրախ լեր աթոռ փրկութեան, յոյս համատաութեան մարդկան, միջնորդ օրհնաց և շնորհաց, օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացուցանեմք:

Ուրախացիր Աստուածածին, որ կուսութեանց ես պարծանք, և մայր հաստատութեան մարդկան, օգնական և շնորհս աշխարհի. Մարիամ մայր և աղախին Փրկչին մե-

րոյ ։ — Երանելիդ ամենեցուն զԱստուած տանելով զբնութեան անտանելին, զամենեցուն ամենակալն արժանի եղեր կրել յորովայնի, որ երևեցաւ ազգի մարդկան ։ — Քերովբէական աթոռ ցուցար Աստուածածին, 'ի գիրկս բառնալով զԱստուածն ամենեցուն՝ որ նստին 'ի քերովբէս․ առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ ։

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ 'ի սրովբէից, ծագելով 'ի քէն մեզ լոյս՝ մայր եղեր վերաձգողին․ ազգք և ազինք զքեզ մեծացուցանեմք ։ — Հիմն եղեր եկեղեցւոյ, խորան եղեր Հոգւոյն սրբոյ 'ի հրեշտակաց սպասաւորեալ, Գաբրիէլ քեզ աւետեաց․ ազգք և ազինք, և այլն ։ — Տեսանեմք զսոսկալի զհրաշալի խորհուրդ յայտնեալ, 'ի Հոգւոյն սրբոյ յղացեալ՝ զԲանն Աստուած մարմնով ծնար․ ազգք և ազինք զքեզ մեծացուցանեմք ։ — Զի որում ոչն հանդուրժէին բոցանշոյլ սերովբէք՝ նա բնակեցաւ 'ի քում յորովայնի․ զքեզ

բարեբանեմք Աստուածածին կոյս:

— Յորմէ սարսեալ դողային փայ-
լակնացայտ 'ի լուսոյն՝ 'ի գիրկս քո
զնա ընկալար. զքեզ բարեբանեմք
Աստուածածին կոյս:

† Առ քեզ ապաւինիմք, ամե-
նասրբուհի, գերագոյն և հրաշալի
և բաշխող բարութեանց. աղբիւր
ես ծարաւեաց և հանգիստ աշխա-
տելոց. և եղեր վերընկալ աստուա-
ծային Բանին:

Ե

Աղաչեմ զքեզ սուրբ Աստուա-
ծածին, հրեշտակ 'ի մարդկանէ,
մարմնատեսիլ քերովբէ, երկնա-
ւոր արքայուհի. անխառն իբրև
զօդ, մաքուր որպէս լոյս. անշա-
ղախ՝ ըստ նմանութեան պատկերի
արուսեկին բարձրութեան. գերա-
զանց քան զընակութիւն անկոխե-
լին սրբութեանց. երանաւոր խոստ-
մանն տեղի, Եդեմ շնչական, ծառ
կենացն անմահից՝ բոցեղէն սրուն

պարունակեալ ։ Ի բարձրեալն Հօրէ զօրացեալ և հովանացեալ, համ-գըստեամբ Հոգւոյն համդերձեալ և մաքրագործեալ. բնակութեամբ Որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ ։ Միածինն Հօր և քեզ անդրանիկ. որդի քո ծննդեամբ և տէր արարչութեամբ ։ Ընդ անաղտ մաքրութեանդ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութեանդ և խնամակալ բարեխօս ։

† Քեզ միայն տուաւ համարձակութիւն բարեխօսել վասն ազգի մարդկան ։ Ո՛վ որովայն աստուածակիրող. մայր աստուածածնող. աստուածաշօշափ ձեռք. աստուածահանգիստ գիրկ. աստուածադիեաց ստինք. աստուածաբարձ բազուկք. աստուածամերձ բերան. աստուածահամբոյր շրթունք. աստուածահայեաց աչք. աստուածախօս լեզու. աստուածընկալ խորան. աստուածաբնակ տաճար ։ Մի՛ մոռանար զխոստովանողս քո, որ քեւ փառաւորեմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին ։

Զ

Տէր Աստուած Յիսուս Քրի-
ստոս, վասն ծննդեան ծայրագոյ-
լուսոյդ, ազատիչ աշխարհիս, յա-
մենօրհնեալ կուսէն... վասն ամե-
նամաքուր մարմնոյ և հրաշափ-
ռագոյն գրկաց սրբուհւոյն՝ յորու-
գգուեցար. վասն աստուածանե-
շրթանցն՝ որ համբուրեցար. բա-
մերանեան ձեռացն՝ որ շօշափ-
ցար. երկնաբարձ բազկացն՝ յորու-
հանգեար. անպարխմանալի պար-
նոցին՝ զորով փարեցար. սուրբ ո-
սոյն՝ յորում բարձար, արփի-
բուղխ ստեանցն որով կերակրեցար.
հոգելունակ գեղոյն՝ որում ցանկա-
ցար. անհամեմատ մաքրութեանն
որում հաճեցար. և սիրաբուն մնր-
դեանն՝ որով զարգացար, գթա՛ յի-
բազմամեղս։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Մյասնիկյանի անվան